ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ
ՀԻՆ ՎՐԱՑԵՐԵՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

П. М. МУРАДЯН

ДРЕВНЕГРУЗИНСКИЕ РЕДАКЦИИ АГАФАНГЕЛА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРВАН — 1982

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

1709

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՀԻՆ ՎՐԱՑԵՐԵՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1982

ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА

9 (C43) 1 ինդեքս ԳՄԴ 63 (2 Հ) 1
Ա 17 Մ

Պատ. խմբագիր ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս
Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ.
բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Վ. ԱԲԳԱՐՅԱՆԸ
և պատմ. գիտ. դոկտ. Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆԸ

Մուրադյան Պ. Մ.

Ա 17 Մ Ագաթանգեղոսի Պատմության հին վրացերեն խմբագրությունները /Պատ. խմբ. Ս. Տ. Երեմյան.—Եր.։ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982.—269 էջ, 15 թերթ նկ.։

Ագաթանգեղոսի Պատմության նշանակալի մասը միջնադարում թարգմանվել է վրացերեն։ Աշխատության մեջ ի մի են հավաքված այդ թարգմանությունները, կազմված են դրանց գիտահամեմատական բնագրեր՝ առդիր հայերեն թարգմանություններով։

Ուսումնասիրության բաժնում ճշգրտվում են թարգմանությունների հիմքում ընկած հայերեն և հունարեն բնագրերը, լուսաբանվում է նրանց աղբյուրագիտական առնչակցությունը, քննարկվում են ինքնատիպությունները, սահմանվում է ժամանակագրությունը։ Գրքում առաջին անգամ վերծանվում ու հրատարակվում են Ագաթանգեղոսի Պատմության գրչագիր հնագույն պատառիկները։

Մ $\frac{0504020000}{703(02)-82}$ 16—81 9(C43)1 ԳՄԴ63(2Հ)1

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982

პარუირ მურადიანი
აგათანგელოსის ძველი ქართული რედაქციები
(სომხურ ენაზე)
ერევანი-1982

ԱՌԱՋԱԲԱՆ

Ագաթանգեղոսի անունով հայտնի երկի ուսումնասիրությունը զբաղեցրել և զբաղեցնում է քրիստոնյա Արևելքի մատենագրության պատմության շատ մասնագետների։ Ետպատերազմյան տասնամյակների ընթացքում ագաթանգեղագիտությունը հարստացավ բնագրական նոր հայտնաբերումներով, ձեռագրական կարևոր տարբերակներով ու ուսումնասիրության ենթակա խնդիրների հիրավի աննախադեպ ընդարձակումով։ Հայերեն, հունարեն, արաբերեն, վրացերեն, եթովպերեն, սլավոներեն և ասորերեն լեզուներով պահպանված բնագրերը միմյանց ու նախօրինակներին առնչվում են խիստ տարբեր աստիճաններով ու երկի խմբագրման-տեղայնացման յուրատիպ օղակներ են ներկայացնում։ Դրանցից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը որքան կարևոր, նույնչափ էլ բարդություններով լեցուն խնդիր է, մանավանդ եթե փորձ է արվում բացահայտելու տվյալ հուշարձանի տեղն ու դերն արծարծվող մատենագրության պատմության մեջ։

Ագաթանգեղոսի նորագույն բնագրերի բացահայտման, նրանց համակողմանի գնահատության և աղբյուրագիտական աղերսները երևան բերելու գործում, այսօրվա արևելագիտական շրջանների ընդհանրական խոստովանությամբ, մեծագույն վաստակ ունի բելգիացի պրոֆ. Ժ. Գարիտը։ Նրա «Documents pour l'étude du livre d'Agathange» (Վատիկան, 1946 թ.) մենագրությունն ամփոփեց արևելագետների նախորդ սերունդների կատարած աշխատանքը, նորօրյա հետազոտությունների սահմանագիծ դառնալով ու նորովի ուսումնասիրությունների դուռ բացելով։ Հանգուցյալ Ն. Ակինյանի գնահատությամբ «Հեղինակը հանդես կբերե այստեղ ոչ միայն անհուն հմտություն բազմազան լեզուներու, այլ և շրջահայաց ծանոթություն նյութին հայոց գրականության։ Նա գիտցած է տիրապետել նյութին և ուսումնասիրության տալ սքանչելի հորինվածք, որոնք կխլեն մեր հիացմունքը»[1]։

Հայտնաբերելով ու հետազոտելով «Վարք և վկայաբանություն Մեծ Հայքի սուրբ և փառավորյալ Գրիգոր վկայի» հունարեն խմբագրությունը[2], Ժ. Գարիտը հաստատեց ակադ. Ն. Մառի կռահումը՝ արաբերեն վարքի հունարեն բնագրի մասին, միաժամանակ ապացուցելով, որ հունարենն էլ թարգ-

[1] Ներսես Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, հատ. Ե, Վիեննա, 1953, էջ 4։

[2] Հայերեն թարգմանությունը տե՛ս Հ. Բարթիկյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը (վարքը), («Էջմիածին», 1966, Է, էջ 28—34, Ը, էջ 46—51, Թ—Ժ, էջ 79—87)։

մանություն է այժմ գիտությանն անծանոթ հայերեն վարք-խմբագրության։ Սույն հիմնարար գրքի հրատարակությունից հետո էլ գիտնականը բազմիցս արծարծել է ագաթանգեղագիտության բնագավառում ի հայտ եկող նորույթներին, դրանց նվիրելով մի քանի հոդված[3]։ Արևելագիտությունը նրան է պարտական և Ագաթանգեղոսի Պատմության արաբական խմբագրության ձեռագիրը մասնագետների ուշադրությանն առաջարկելու համար[4]։

Տարիներ անց, Սինայի ս. Կատարինեի վանքի հիշյալ գրչագրի արաբերեն տեքստի հայերեն թարգմանությանն ու բնագրագիտական քննությանը ձեռնամուխ եղավ հայագետ-արաբագետ Ա. Տեր-Ղևոնդյանը, ժամանակակից ագաթանգեղագիտությունը հարստացնելով հմուտ ու շահեկան մի նոր հրատարակությամբ[5]։ Շատ չանցած, Բեյրութի ամերիկյան համալսարանում պահվող Սինայի վանքի արաբական ձեռագրերի մանրաժապավենների մեջ Ա. Տեր-Ղևոնդյանը բացահայտեց Գրիգորի վարքի մի ամբողջական ընդօրինակություն (Sin. ar. 455), որի սկզբնական մասի հրատարակությունը (էջ 119v—131v) ամբողջականացրեց դարասկզբին Ն. Մառի կողմից շրջանառության մեջ դրված արաբական բնագիրը[6]։

Ագաթանգեղագիտության համար հաճելի անակնկալ էր Երուսաղեմի ս. Մարկոս վանքի հավաքածոյում պահպանված ասորատառ արաբերեն վարքի (քարշունի) երևան գալը։ Բելգիացի արևելագետ Մ. վան Էսբրուքը պատշաճ ջանադրությամբ ու հմտությամբ վերծանեց գրչագիրը, արաբատառ տառադարձած բնագիրն օժտելով բովանդակալից ուսումնասիրությամբ[7]։ Նա, մասնավորապես, պարզեց, որ Բեշարա վանականի ձեռքով 1732—1733 թթ. կատարված սույն արաբերեն թարգմանության բնագիրը ասորերեն է եղել՝ 1178 թվականի գրչությամբ։ Փաստորեն հավաստվեց Ագաթանգեղոսի ասորերեն թարգմանության գոյությունը, որ մինչ այդ ենթադրվում էր Գեորգ Ասորու 714 թվականի թղթից մակաբերվող տեղեկությամբ[8]։ Գիտնականի ենթադրության համաձայն, ասորերենի բնագիր ծառայած վարքի

[3] **G. Garitte,** Fragments de „l'Agathange" grec en traduction arabe, „Le Muséon", t. LIX, 1—4 (1946), pp. 413—420. Նույնի՝ Sur un fragment géorgien d'Agathange, „Le Muséon", t. LXI, 1—2 (1948), pp. 89—102.

[4] **G. Garitte,** Une version arabe de l'Agathange grec dans le Sin. ar. 395, „Le Muséon", t. LXIII, 3—4 (1950), pp. 231—247.

[5] **Ա. Ն. Տեր-Ղևոնդյան,** *Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը (արաբերեն բնագիր և ուսումնասիրություն), Երևան, 1968։*

[6] **Ա. Տեր-Ղևոնդյան,** *Ագաթանգեղոսի արաբական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1973, № 1, էջ 209—236։*

[7] **M. van Esbroeck,** Un nouveau témoin du livre d'Agathange, REArm., t. VIII (1971), pp. 139—221. Հմմտ. նույնի՝ Témoignages littéraires sur les sépultures de Saint Grégoire l'Illuminateur, „Anal. Boll.", t. 89, fasc. 2—4 (1971), pp. 387—417. *Ա. Տեր-Ղևոնդյանի գրախոսությունը տե՛ս ՊԲՀ, 1973, № 2, էջ 303—304։*

[8] **Հ. Հակովբոս Տաշյան,** *Ագաթանգեղոս առ Գեորգայ ասորի եպիսկոպոսին..., Վիեննա, 1891։*

հայերեն խմբագրությունը կազմված պիտի լինի 604—610 թթ.։ Մ. վան Էսբրուքը վերջերս հրատարակեց այդ ասորերեն բնագիրը[9]։

Ինչպես արդեն նշեցինք, Ագաթանգեղոսի այլալեզու խմբագրություն-պատումների ուսումնասիրությունը տարեցտարի ընդարձակում է արծարծվող հարցերի շրջանակը և լայն պատրաստություն ունեցող մասնագետների նոր անուններ երևան բերում։ Բելգիացի արևելագետ Գի Լաֆոնտենը ագաթանգեղագիտական իր աշխատանքն սկսեց Սինայի վանքի ձեռագրերում (Sin. gr. 376) Ագաթանգեղոսի Պատմության հունարեն մի ինքնատիպ բնագրի քննությամբ[10], շուտով ձեռնամուխ լինելով հիրավի շնորհակալ մի նոր հրատարակության։ Հ. Ստիլտինգի 1762 թ. հրապարակումից հետո, երկու հարյուր տարվա ընթացքում, եվրոպացի հայագետ-արևելագետները այլևայլ հավաքածոներում (Քեմբրիջ, Դուայ Աբբայարան, Ֆլորենցիա, Օքրիդա, Փարիզ, Վատիկան, Բեռլին) ի հայտ բերին, նկարագրեցին ու քննեցին հունարեն Ագաթանգեղոսի 9 ամբողջական ձեռագիր և 3 պատառիկ (որից երկուսը կրկնագիր), գրված կամ ընդօրինակված VII—XII դդ. ընթացքում։ Այլևս պարզ դարձավ, որ Լավրենտյան նշանավոր օրինակի հիմամբ Պ. դը Լագարդի 1888 թ. մեծ խնամքով կատարած հրատարակությունը[11] կարոտ է սրբագրության ու վերանայման։ Այդ ոչ դյուրին աշխատանքը հանձն առավ ու ակներև հաջողությամբ իրականացրեց Գի Լաֆոնտենը[12]։ Ագաթանգեղագիտությանը մատուցած այս խոշոր ծառայությունը նշանակալիորեն օժանդակելու է հայերեն բնագրի ու նրանից սերող թարգմանությունների համեմատական ուսումնասիրությանը, ոչ պակաս չափով նպաստելով և Պատմության ու վարքի ժամանակագրական, բնագրագիտական և խմբագրական աղերսը առավել խորազնին հետազոտելուն։ Ուշագրավ են գիտնականի և այն դրույթները, որոնք վերաբերում են հունարեն թարգմանության ժամանակի խնդրին (VI—VII դդ.)։

Վերջին տարիներս մասնագետները որոշակի հետաքրքրություն են ցուցաբերում նաև Ագաթանգեղոսի Պատմության հայերեն բնագրի նկատմամբ։ Այլ խմբագրությունների հետ կապված անդրադարձումներից բացի, որպիսիք կան գրեթե բոլոր թվարկված աշխատություններում, երևան են գալիս մասնավորապես հայկական բնագրին վերաբերող հրապարակումներ։ Հայագետ Ռ. Թոմսոնը 1970 թ. անգլերեն թարգմանությամբ լույս ընծայեց Պատմության «Վարդապետութիւն» ծավալուն հատվածը, այն օժտելով հանգամանալից ներածականով, աղբյուրագիտական խիստ կարևոր աղերսների

[9] **Michel van Esbroeck,** Le résumé syriaque de l'Agathange", „Anal. Boll.", t. 95, fasc. 3—4 (1977), pp. 291—358.

[10] **G. Lafontaine,** Une Vie greque abrégeé de Saint Grégoire l'Illuminateur „Le Muséon", t. LXXXVI, 1—2 (1973), pp. 125—145.

[11] **P. de Lagarde,** Agathangelus und die Akten Gregors von Armenien, Göttingen, 1888.

[12] **Guy Lafontaine,** La version greque ancienne du livre arménien d'Agathange, Louvain-la-neuve, 1973.

մատենագիտությամբ ու համապատասխան ցանկերով[13]։ Արժանվույնը պիտի հատուցել գիտնականին՝ այդ հիրավի դժվար թարգմանելի տեքստը հաջողությամբ հաղթահարելու և մանավանդ՝ բյուզանդական մատենագրության մեջ հանդիպող ընդհանուր տեղիները ճշտել-մատնացուցելու համար։

«Վարդապետության» հետ անելիքը ավարտելուց հետո, Ռ. Թոմսոնը ձեռնարկեց Ագաթանգեղոսի բուն «Հայոց պատմության» թարգմանությունը, արդարացիորեն բաց թողնելով № 259—715 պարբերությունները, որոնք «Վարդապետությունն» են բովանդակում[14]։ Աշխատասիրողը հարկ է նկատել թարգմանությանը զուգակշիռ վերատպել «Հայոց Պատմութեան» գիտական բնագրի «Ղուկասյան մատենադարան» շարքի հրատարակությունը, կարևոր այլընթերցումներին ծանոթագրությունների մեջ անդրադառնալով։ Թե՛ ներածությունը և թե՛ ծանոթագրությունները ըստ պատշաճի ծանրակշիռ են ու մատենագիտական տեղեկություններով հագեցած։

Դժվար է մատնացուցել միջնադարյան որևէ այլ մատենագիր, որի երկը Ագաթանգեղոսի չափ այլալեզու խմբագրություններ ու պատումներ ունենար և որի մասին երեք տասնամյակի ընթացքում այսքան պատկառելի գրականություն ստեղծվեր։ Եվ այնուամենայնիվ, ագաթանգեղագետներից ոչ մեկը հակված չէ կարծելու, թե իր մենագրությամբ խնդրական հարցերը սպառվում են։ Նոր խմբագրությունների ու պատումների շարունակական հայտնաբերումը, ընդհակառակը, զգուշավոր ու ոչ հավակնոտ է դարձնում նույնիսկ հիրավի կարևորագույն հրատարակությունների հեղինակներին։ Բայց որ բնագրագիտական-աղբյուրագիտական շատ ու շատ խնդիրներ լուծվում են հիմնավորապես՝ կասկածից դուրս է։

Ագաթանգեղագիտության առավել նշանակալի նվաճումները ներկայացնելիս անկարելի է շրջանցել երախտաշատ հայագետ Հ. Անասյանի կազմած մատենագիտությունը, որ ամփոփումն է հայագիտության այդ բնագավառի երկուհարյուրամյա ողջ նվաճումների[15]։ Պիտի հուսալ նաև, թե առաջիկայում մատենագիտական հիշյալ ցանկը կլրացվի նոր հրատարակությունների արտացոլումով, որի շնորհիվ համեմատաբար դյուրին կդառնա նոր ու երիտասարդ մասնագետների միջամուխ լինելը ագաթանգեղագիտության հարցերի ուսումնասիրությանը։

Հայագետները (Ա. Կարիեր, Ա. Մեյե, Ֆ. Քոնիբիր, Գ. Խալաթյանց, Գ. Տեր-Մկրտչյան և այլք) վաղուց դիտել են, որ V դ. սկսած հայ մատենագիրներից շատերն են դիմել Ագաթանգեղոսի Պատմությանը, հաճախ նրանից բառացի մեջբերումներ կատարելով կամ վերապատմելով առանձին դրվագներ։ Ամենևին տարակուսելի չէ, թե այդ մատենագիրների վկայակոչումների ու-

[13] The Teaching of Saint Gregory: An Early Armenian Catechism, Translation and Commentary by **Robert W. Thomson**, Cambridge. Massachusetts, 1970.

[14] Agathangelos, History of the Armenians, Translation and Commentary by **R. W. Thomson**, Albany, State University of New York Press, 1976.

[15] Հ. Ս. Անասյան, *Հայկական մատենագիտություն, Երևան, 1959, էջ 151—213։*

սումնասիրությունը տեքստաբանական ակներև նպաստ է բերելու Ագաթանգեղոսի հայերեն բնագրի նախնական տեսքը վերականգնելու գործին։ Հիշյալ առումով առ այսօր միայն մեկ ամփոփ աշխատանք է հայտնի, որ խղճմտորեն կատարել է Ա. Տեր-Ղևոնդյանը[16]։ Ակնկալելի է ոչ միայն Խորենացու տվյալների, այլև հաջորդ դարերի մյուս պատմիչների ու վարքագիրների ընձեռած նյութի ամբողջական ուսումնասիրություն, որ առանձին մենագրության խնդիր կարող է լինել։ Առավել նկատելի է 1909 թ. գիտական հրատարակությունից հետո հայտնի դարձած ամբողջական կամ հատվածական Ագաթանգեղոս բովանդակող ձեռագրերի հաշվառման և ուսումնասիրության անհրաժեշտությունը։ Քիչ սպասելիքներ չկան նաև պատառիկ-պահպանակների հավաքածոների ապագա քննությունից։ Այս գրքի հեղինակի վերծանած հատակտորները այդ բնույթի աշխատանքի սկիզբն են, սակայն, անտարակույս, չեն սպառում նյութը։ Նրանք վստահաբար հավաստում են, թե ձեռագրագիտության այդ մարզը կարելույն չափ հեռանկարային է[17]։

Ագաթանգեղագիտությունն այսօր իրար է շաղկապում արևելագիտության բազմաթիվ առաջատար ճյուղեր՝ հայագիտություն, բյուզանդագիտություն, վրացագիտություն, արաբագիտություն և այլն, ուստի նրանց առանձնական նվաճումներն ու ուսումնասիրության մեթոդները մեծապես լրացնում են միմյանց՝ նոր ու նշանակալի հետազոտությունների երաշխիք ստեղծելով։

Հայ-վրացական եկեղեցական-մշակութային միասնության շրջանում, երբ մեր մատենագրությունները սնվում էին ասորական ու բյուզանդական նույն աղբյուրներից, և քրիստոնյա Արևելքի գրական ազդեցությունը շատ հաճախ հայկական միջնորդավորմամբ էր Վրաստան թափանցում, Ագաթանգեղոսի երկը, բնական է, վրաց մատենագրության համար աննկատ մնալ չէր կարող։ Այդ թելադրվում էր ոչ միայն զուտ մատենագրական շարժառիթներով, այլև դավանական միասնականությամբ ու Գրիգոր Պարթևի ընդհանրական ճանաչմամբ։ Նույնիսկ VII դ. եկեղեցական շրջանների փոխհանդիմանությունների ժամանակ Գրիգորի ընդհանրական լուսավորիչ լինելը կասկածի ենթակա չէր։ Ավելին, եկեղեցական բաժանումից հետո էլ, մինչև X դ., երբ վերջնականապես ձևավորվեց Նունեի (Նինոյի) պաշտամունքը, վրաց մատենագիրները ընդգծված հետաքրքրություն էին ցուցաբերում Գրիգոր Պարթևի, այստեղից էլ՝ նրա «վարքն ու քաղաքավարությունը» պատմող Ագաթանգեղոսի երկի վերաբերմամբ։ Վրաց եկեղեցու ինքնակայության և ուղղափառ դավանության նշանավոր ջատագով Արսեն Սափարացին փորձ իսկ չի անում Լուսավորչի ընդհանրականությունը կաս-

[16] *Տե՛ս նրա՝ Ագաթանգեղոսի խմբագրությունների հարցը ըստ Խորենացու տվյալների (ՊԲՀ, 1975, № 4, էջ 129—132)։*

[17] Պ. Մ. Մուրադյան, *Ագաթանգեղոսի Պատմության հնագույն պատառիկներ («Լրաբեր», 1971, № 12, էջ 37—48)։*



ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՏԱՐԱԼԵԶՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՈՒՄՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ։ Կազմեց՝ Գ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

կածի ենթարկելու, իսկ այս պարագան նպաստավոր էր լինելու Ագաթանգեղոսի հին թարգմանությունների նորօրյա ընդօրինակմանն ու գոյություն ունեցող ավանդների հարատևմանը։ Ձեռագրից-ձեռագիր էին փոխանցվում «Հռիփսիմյանց վկայաբանությունը», «Վասն հավատո-Վարդապետությունը», Գրիգոր Պարթևին ձոնված վրացական շարականներն ու ներբողյանները։ Մատենագրական այդ երկերի շարքը լրացնելու եկավ «Գրիգոր Պարթևի վարքի» հունական մետափրասյան խմբագրության XI դ. վրացական թարգմանությունը։ Նման իրողության պայմաններում, բյուզանդական ազդեցությունը գերադասած վրաց մատենագիրները անհրաժեշտություն չէին տեսնում ի մասնավորի սրբագրել-խմբագրելու այն երկերը, որոնց վրա նկատելի է Ագաթանգեղոսի կամ նրա երկի առանձին հատվածների ազդեցությունը («Քարթլիի դարձը», «Պատմությեններ», վարքագրական այլևայլ հուշարձաններ, Մրովելու երկը և այլն)։ Հարկավ այս ավանդույթների թելադրությամբ էր, որ միաբնակությանը դիմագրավելու նպատակով հատուկ աշխատություն հեղինակած Անտոն Ա կաթողիկոսը 1769 թ. գրած «Մարտիրոսականք» վարքագրական գործում, 29 վրաց սրբերի կողքին, տեղ էր հատկացնում և Գրիգոր Պարթևին ու Հռիփսիմյանց նահատակներին՝ «ներբող և պատմություն» խորագրով (ձեռ. S—3638, էջ 97v—111r)։

XVIII—XIX դդ. Ագաթանգեղոսի երկը լայն հետաքրքրության առարկա է դառնում վիրահայոց շրջանում, ուղղակի կամ միջնորդավորված ձևով վրացերեն թարգմանության ու պատումավորման ենթարկվելով։ Առանձնակի տարածում ունեին Գրիգորի կրած տասներկու չարչարանքների նկարագրությունները (ՎՍՍՀ կենտր. պատմ. արխիվ, ձեռ. № 435, էջ 9v—14v, 15r—20v. հմմտ. A—1169, էջ 153r—157v, 157v—158v, հմմտ. H—42, էջ 276—287, հմմտ. H—1284, էջ 213r—220v, 221r—230r), Հռիփսիմյանց նորարակ վկայաբանությունը (արխիվ, № 435, էջ 20v—23r), «Գրիգորի պատմությունը» և «Գրիգորի քարոզ» պարականոն պատումները (Q—608, էջ 19r—21r, 83v—85v, հմմտ. Q—750, էջ 110r—118r) և այլն։

Հարկավ կարևոր պիտի լիներ հիշյալ բոլոր բնագրերին ու նրանց առաջադրած խնդիրներին անդրադառնալ մեկ ամբողջական ուսումնասիրություն-հրապարակումով, բայց դա առանձին հարց է և բուն ագաթանգեղագիտությանը մասնակիորեն է միայն առնչվում։ «Ագաթանգեղոսի հետքերը վրաց մատենագրության մեջ» խորագրի տակ ամփոփվող պատմա-բանասիրական հիշյալ խնդիրների քննարկումը թողնում ենք ապագային և սույն աշխատությամբ ուսումնասիրում-հրապարակում ենք Ագաթանգեղոսի հայկական և հունական խմբագրությունների ուղղակի թարգմանությունները հին վրացերեն։ Թարգմանական այդ դրվագները կամ ամբողջական երկերը կովկասագիտությանը վաղուց են հայտնի, նրանց շուրջ բավականաչափ գրականություն է ստեղծվել, բայց բնագրերից շատերը դեռ կարոտ են առանձնակի գնահատականի, իսկ ձեռագրական նոր ընթերցումները հնարավորություն են տալիս գիտա-համեմատական տեքստ կազմել (բացառությամբ «Վասն հավատոյի», որի երկու ձեռագրերն էլ նկատի են առնվել Ժ. Գարիտի կողմից)։

Բոլոր գրվածքների համար կիրառել ենք համեմատության, թարգմանության ու ուսումնասիրության միասնական սկզբունք։ Մեր համոզմամբ, նկարագրվող ձեռագրերը հայագիտական առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում, իսկ նրանցում գտնվող և հայերենից թարգմանված հուշարձանների ուսումնասիրությունը կարևոր գործ է։

Ագաթանգեղոսի հին վրացական խմբագրությունների առաջին անգամ կատարվող համահավաք սույն հրատարակությունը բխում է ագաթանգեղագիտության այսօրվա պահանջներից և աներկբայորեն ծառայում է նրան։ Ի մոտո ծանոթանալով առաջարկվող բնագրերին ու նրանց հարուցած խնդիրների ուսումնասիրությանը, հայագետ ընթերցողը մեկ անգամ ևս առիթ կունենա համոզվելու, թե որքան իրավացի էր ակադ. Ն. Մառը, երբ հին վրացերեն թարգմանությունների միջոցով զանազան հայկական բնագրերի նախնական տեսքի վերականգնման հարց էր առաջադրում։

Ուզում ենք հավատալ, թե ագաթանգեղագետները նոր ու բավականաչափ ուշագրավ նյութ կգտնեն գրքի վերջում ներկայացվող պատառիկների վերծանության մեջ։

«ՀՌԻՓՍԻՄՅԱՆՑ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Ինչպես և սպասելի էր, «Հռիփսիմյանց վկայաբանության» վրացերեն տեքստի գոյության մասին անդրանիկ տեղեկությունը հրապարակվեց ձեռագրերի նկարագրության առիթով։ Թեյմուրազ Արքայազնը 1835 թ. կազմում է իր ձեռագրական հավաքածոյի նկարագրությունը և մեկ օրինակ տրամադրում ակադ. Մ. Բրոսեին։ Վերջինս 1838 թ. թարգմանաբար հրատարակում է այդ ցուցակը՝ հավատարիմ մնալով բնագրին։

Ի թիվս այլ ձեռագրերի, այստեղ ներկայացվում է և մի «Վարք սրբոց», ուր կա նաև մեզ հետաքրքրող վկայաբանությունը[1]*։ Հետագայում, պրոֆ. Դ. Չուբինաշվիլու գրադարանն ու հավաքածոն ուսումնասիրելիս, Ա. Ցագարելին գտնում է Թեյմուրազի նկարագրության մեկ օրինակ ևս, ուր, բնականաբար, ներկայացված է և «Հռիփսիմյանց վկայաբանությունը»*[2]*։ Վրաց մատենագրությանը լավատեղյակ հեղինակը ձեռագրի նկարագրության վերջում, մեզ հետաքրքրող հուշարձանի կապակցությամբ, ավելացնում է մի ուշագրավ դիտողություն* — ესე ჩვენთ წმიდათ ქართველთ მამათაგან აღწერილ არს ძველადვე — **Այս մեր վրաց սուրբ հայրերի կողմից նկարագրված է հնուց ի վեր**[3]**։** *Խոսքը վերաբերում է ոչ թե Հռիփսիմյանց վարքի տվյալ տեքստին, այլ՝ որ նրանց նահատակության, Տրդատի արարքի և Վաղարշապատում կատարված իրողության մասին խոսում են հին շրջանի վրացական հուշարձանները ևս։ Թեյմուրազը, անկասկած, նկատի ունի Լեոնտի Մրովելու (Ղևոնդ Ռուիսեցու) և «Վրաց դարձի» հեղինակի հաղորդումներն այդ մասին։ Փաստորեն՝ հիշյալ դիտողությունը աղբյուրագիտական նախնական կռահում է։*

Այսպիսով, 1838 թ. ֆրանսերեն և 1894-ին վրացերեն լեզվով ծանուցվում է երկիս վրացերեն տեքստի գոյությունը։ Ինչպես հայտնի է, Թեյմուրազ Արքայազնի հավաքածոն 1848 թ. տեղափոխվում է Ասիական թանգարան և կազմում, մասամբ արդեն նդածի հետ, նրա վրացական բաժինը։

[1] Catalogue de livres Géorgiens tant imprimés que manuscrits anciens et modernes (*տե՛ս* **M. Brosset,** Discours prononcé a l'Assemblée Générale de l'Académie Imperiale des Sciences de St. Pétersbourg, St.-Pet., 1838, p. 73).

[2] *Ցուցակի վրացերեն բնագրի խորագիրն է* „წიგნნი საღმრთონი ქართულისა ენისანი, რომელნიცა იპოვებიან მათის უგანათლებულესობის მეფის ძის თეიმურაზ გიორგის ძის წიგნთა საცავსა შინა" (*տե՛ս А. А. Цагарели*, Сведения о памятниках грузинской письменности, т. I, вып. III, СПб., 1894, стр. 149—186).

[3] *Տե՛ս А. А. Цагарели, նշվ. աշխ., էջ 160, Մ. Բրոսեի թարգմանությամբ՝ նշվ. աշխ., էջ 73։*

Մեզ հետաքրքրող ձեռագիրը ստանում է նոր համար՝ Manuscr. Georg., 56[4]

Ա. Ցագարելու նույն գրքում 1894 թ. տպագրվում է նաև Դ. Չուբինաշվիլու գրադարանի հանգամանալի նկարագրությունը, որ կատարել է Արևելյան ֆակուլտետի ուսանող Մ. Քարթվելիշվիլին՝ Ա. Ցագարելու ղեկավարությամբ ու վերադիտությամբ[5]։ Այս ցուցակի № 17-ի տակ ներկայացված է մի «Վարք սրբոց», ուր կա նաև „წამება წმიდათა ქალწულთა რიფსიმე და გაიანესი" («Վկայաբանություն սրբոց կուսանաց Հռիփսիմեի և Գայանեի»)[6]։ Ուշագրավ է, որ այս ձեռագիրն ունի ճիշտ նույն բովանդակությունը, ինչ Թեյմուրազի հավաքածույում եղածը, բայց տարբեր է նրանից էջաքանակով (265 էջ) ու ստացողի հիշատակարանով։ Հետագայում, ի կատարումն Դ. Չուբինաշվիլու խոստման ու ցանկության, այդ հավաքածուն հանձնվեց «Վրաց մեջ գրագիտություն տարածող ընկերությանը»։ Դրանով իսկ, «Հռիփսիմյանց վկայաբանություն»-ը բովանդակող ձեռագիրը տեղափոխվեց Թբիլիսի և այժմ գտնվում է Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստիտուտում (S—3640)[7]։

Հաջորդ տարիներին բանասիրության մեջ «Հռիփսիմյանց վկայաբանությանը» անդրադառնալու առիթ չի եղել։ 1915 թ. հրապարակած մի ծանոթությունից տեղեկանում ենք, որ Ն. Մառը «վաղուց արտագրել է» Ասիական թանգարանի № 56 ձեռագրից (այժմ՝ C—12) Հռիփսիմյանց վարքը՝ հրատարակելու համար[8]։ Սակայն բազմազբաղ գիտնականը չի իրականացրել իր այդ ցանկությունը և առհասարակ հուշարձանիս մասին որևէ տպագիր հիշատակություն չունի։

Նույն 1915 թ. Լ. Մելիքսեթ-Բեկը «Христианский Восток»-ում հանդես եկավ մի կարճառոտ հաղորդմամբ (շուրջ 1/3 տպագիր էջ ծավալով), ուր ծանուցում էր «Հռիփսիմյանց վկայաբանություն»-ը բովանդակող երկրորդ գրչագրի երևան գալը. 1910 թ. Վ. Մաղաշվիլին Վրաց Եկեղեցական թանգարանին է նվիրում մի շարք վրացերեն գրչագրեր, այդ թվում մեկը՝ մեզ հետաքրքրող հուշարձանը բովանդակող, որը գրանցվում է № 1043-ի տակ[9]

[4] Այժմ՝ ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի վրացական հավաքածու, ձեռ. C—12։

[5] А. А. Цагарели, նշվ. աշխ., էջ XIV։ Ցուցակի հրատարակությունը տե՛ս նշվ. աշխ., էջ 102—148, խորագիրը՝ „Список грузинских рукописей и старопечатных книг библиотеки профессора Д. И. Чубинова".

[6] А. А. Цагарели, նշվ. աշխ., էջ 105։

[7] Ինչպես երևում է, Թեյմուրազ Արքայազնի և Դ. Չուբինաշվիլու հավաքածուներում պահված այս երկու ձեռագրի բովանդակության նույնությունը և մասամբ էլ Թեյմուրազի կազմած ցուցակի՝ Դ. Չուբինաշվիլու հնագարանում գտնվելու պարագան, շփոթության մեջ են գցել Լ. Մելիքսեթ-Բեկին, որը կարծել է, թե Ցագարելու գրքում խոսքը մեկ ձեռագրի է վերաբերում, ուստի 1915 թ. իր հաղորդման մեջ («Христианский Восток», (այսուհետև՝ Х. В.), т. III, вып. III, 1915, стр. 313) Թեյմուրազի հավաքածույի ձեռագրի մասին խոսելիս այն համարում է միակը։

[8] Х. В., т. III, вып. III, прим. 5.

[9] *Л. Меликсет-Беков*, Новый список „Жития св. Рипсимии, Гаяни и сподвижниц" на грузинском языке, Х. В., т. III, вып. III, 1915, стр. 313—314.

(խոսքը վերաբերում է այժմ ՎՍՍՀ ԳԱ Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստիտուտի A—1043 գրչագրին)։ Լ. Մելիքսեթ-Բեկի տեղեկանքը ավարտվում է հետևյալ բնութագրմամբ. «Судя по всему, рукопись является копией с более древнего подлинника, восходящего к греческой (а не армянской) редакции агиографического памятника-метафраса; причем она характеризуется удивительною непоследовательностью в орфографии, изобилует искажениями, недомолвками и прочими недостатками»[10].

«Հռիփսիմյանց վկայաբանության» նկատմամբ մասնագիտական հետաքրքրությունը առավել մեծացավ 1930-ական թվականներին, որ պայմանավորված էր Ռ. Բլեյկի մի ուշագրավ հրապարակումով. Քեմբրիջի համալսարանի գրադարանի վրացերեն ձեռագրերը նկարագրելիս նա ի հայտ բերեց «Հռիփսիմյանց վկայաբանության» հին վրացերեն թարգմանությունից պահպանված XI դ. գրչության մի պատառիկ (Add. 1890.3)։ Պատառիկի ու առհասարակ այդ հուշարձանի բնագրագիտական ուսումնասիրմամբ զբաղվելու առանձնակի նպատակ չունենալով հանդերձ՝ նա վերծանեց և հրապարակեց այն[11]։ Հետագայում երկիցս այս պատառիկին անդրադարձավ Ժ. Գարիտը, մի դեպքում այն համեմատելով Ագաթանգեղոսի հունարեն խմբագրության համապատասխան հատվածին[12], իսկ երկու տարի անց՝ տալով պատառիկի իր վերծանությունը, տեքստի նմանահանությունը, թարգմանությունն ու հունարեն-հայերենի համադրությունը[13]։ Ժ. Գարիտը, սակայն, ձեռքի տակ ամբողջական թարգմանություն չունենալու պատճառով, իր կատարած քննությունը սահմանափակել է պատառիկի տեքստի շրջանակներում։

Նույն 1930-ական թվականներից «Հռիփսիմյանց վկայաբանության» վրացերեն խմբագրության տեքստով սկսում է զբաղվել Ի. Աբուլաձեն. սկզբնապես նա ծանոթություն է հրապարակում երկիս վրացերեն խմբագրության գոյության մասին[14], իսկ ապա ծանուցում, որ ինքը Վրաստանում առկա ձեռագրերի հիմամբ, համապատասխան ուսումնասիրությամբ, հրատարակության է պատրաստել այդ տեքստը[15]։ Գիտնականը միաժամանակ որոշ նախնական դրույթներ է հրապարակում թարգմանության ժամանակի ու աղբյուրագիտական աղերսի մասին[16]։

[10] *Л. Меликсет-Беков*, նշվ. աշխ., էջ 314։

[11] *R. Blake*, Catalogue of the Georgian Manuscripts in the Cambridge University Library, "Harvard Theological Review", vol. XXV, 1932, 3, pp. 220—221.

[12] *G. Garitte*, Documents..., p. 13—16.

[13] *G. Garitte*, Sur un fragment..., "Le Muséon", t. LXI, 1—2, pp. 89—102.

[14] **ილ. აბულაძე**, ძველი სომხური ენა (ქრესტომათია წერის ნიმუშებითა და ლექსიკონით), ტფ., 1935, გვ. 180, შენიშვნა.

[15] **იაკობ ცურტაველი.** მარტვილობაჲ შუშანიკისი, ქართული და სომხური ტექსტები გამოსცა, გამოკვლევა, ვარიანტები, ლექსიკონი და საძიებლები დაურთო **ილია აბულაძემ**, ტფ., 1938, გვ. 040—041.

[16] Այդ տեղեկանքներին մասամբ անդրադարձել է ակադ. Կ. Կեկելիձեն, տե՛ս նրա „ძველი ქართ. მწერლობის ისტორია", I[3], თბ. 1953, გვ. 215.

Ի վերջո, 1960 թ. լույս տեսավ Ի. Աբուլաձեի վաղուց արդեն պատրաստած տեքստը՝ ներածական հոդվածով։ Վկայաբանության անդրանիկ հրատարակությունը նա կատարել է հիմնականում ըստ A—511 ձեռագրի, որ XVI—XVII դդ. է, պակասավոր տեղիները բաղելով ու լրացնելով Քութայիսի № 193 ձեռագրից[17]։

Երկու տարի անց, այս բնագրով վաղուց արդեն հետաքրքրվող Ժ. Գարիտը լատիներեն է թարգմանում Ի. Աբուլաձեի հրատարակած բնագիրը, համառոտակի վերապատմելով և վերջինիս ներածական հոդվածը[18]։

Այսպիսին է «Հռիփսիմյանց վկայաբանության» ուսումնասիրության ու հրատարակության կարճառոտ պատմությունը։

* * *

Պրոֆ. Ռ. Բլեյկը, ինչպես նշվեց, բավարարվել էր պատառիկի հրատարակությամբ, նրա հանգամանալից քննությունը թողնելով հետագա բանասերներին։ Մինչդեռ Ժ. Գարիտը պատառիկի ընձեռած նյութի սահմաններում համադրեց հայերեն և վրացերեն տեքստերը, հավաստելով այն հայերեն բնագրից թարգմանված լինելու պարագան։

«Հռիփսիմյանց վկայաբանության» ամբողջական տեքստը հրատարակելու ժամանակ, բնականաբար, ո՞ր լեզվից թարգմանված լինելու հարցին առավել մանրամասնությամբ անդրադարձավ Ի. Աբուլաձեն.

Ա. Վրացերենում առկա հատուկ անունները մեծ մասամբ փոխանցված են հայերենին հատուկ երանգներով և իրենց զուգահեռությունը չեն գտնում այլ լեզուներով գոյություն ունեցող խմբագրություններում։ Աշխարհագրական տեղանուններից այդպիսիք են՝ „ვალენშეა ქალაქი“ *իբրև համապատասխանություն հայերենի «Վաղարշապատ»-ին,* „არტაშა ქალაქი“ *—«Արտաշատ քաղաք»,* „ნოროქალაქი“ *—«Նորաքաղաք»։ Բայց կան նաև այնպիսի հատուկ անուններ, որոնք առկա հայերենի տառադարձությամբ չեն ներկայացնում* (კუბანი, *հմմ. Պտղոմեոսի՝* Κουβίνα?)—Ատրպատական, არშაკთა სოფელი—Պարթևաց կողմ, სარკინოზნი—Տաճկաստան, ფრომანი—Յունաց աշխարհ, სუსან —Շուշան): *Բացառությամբ* „კუბანი“ *-ի, մյուս ձևերը վկայված են նաև վրացական այլ աղբյուրներում ու տեքստերում։*

Բ. Վրացերեն տեքստն առատ է հայ-վրացական ընդհանուր գործածություն ունեցող բառերով, որ հիմնականում պայմանավորված է հայերեն բնագրով (ამბოხი, გეჰენია, ჟამი, ურაკპარაკი, ჰროვარტაკი, ქალაქი, ჰამბავი, დასი, ბილწი, პარი *և այլն)։ Ի. Աբուլաձեն այս բառերը բաժանում է չորս խմբի.*

1. Այլ լեզուներից հայերենի միջնորդությամբ վրացերենին անցած (թվով 8)։

2. Բառեր, որոնց ծագումը հայերենում ստուգաբանված չէ (թվով 5)։

[17] *Առավել մանրամասն տե՛ս ստորև՝ ձեռագրերի նկարագրությանը վերաբերող բաժնում։*

[18] *G. Garitte,* La passion des saintes Rhipsimiennes en géorgien, „Le Muséon“, t. LXXV, 1—2, p. 233—251.

3. Հայերենից եկող փոխառություն (մեկ բառ՝ սաստիկ—սաստ)։

4. Փոխառյալ բառեր, որոնք կարող են վրացերենին անցած լինել նաև անմիջականորեն՝ առանց հայերենի միջնորդավորման (թվով 11 բառ)։

Գ. Վկայաբանության հայերեն բնագրում (հրովարտակի մասում) կա մի այսպիսի արտահայտություն՝ «և ինչ համեստութիւն ոչ գոյ ի նոսա»[19]*, որ բացակայում է Ագաթանգեղոսի հունարեն ընդարձակ խմբագրությունում, իսկ վրացերենում փոխանցված է այսպես.* „არა თუ სიმტკიცე რაჲმე არს მათ თანა“*։ Վրացերեն կապակցության մեջ անհասկանալի է* სიმტკიცე *բառը և չի համապատասխանում հայերենի «համեստութիւն»-ին։ Ըստ երևույթին, թարգմանիչը շփոթել է հայերեն «համեստութիւն» և «հաստատութիւն» բառերը, որ գլուխին շփոթելի են և գրչական հիմքի վրա։*

Այս երեք կետերում տրված պատճառաբանություններից առավել ընդունելին վերջինն է՝ գրչական հիմքի վրա «համեստութիւն» բառի «հաստատութիւն» ընկալումը, իսկ մյուսներին կարելի է նաև այլ բացատրություն տալ[20]։

Թարգմանական բնագրերի հարցերով զբաղված մասնագետի համար այդ միակ կողմն իսկ բավական է՝ հայերենից թարգմանված լինելը այլևս ապացուցված ճանաչելու համար։ Բայց քանի որ այդ փաստը միակն է՝ կարող են կասկածներ առաջանալ, մասնավորապես՝ արդյոք դա պատահական բնույթ չի՞ կրում կամ գուցե՝ հայերե՞նն է աղավաղվել-շփոթվել, կապ չունենալով վրացերեն թարգմանության հետ և այլն։ Իրականում այս բոլոր առարկում-կասկածներն ավելորդ են, որովհետև վրացերեն տեքստում կան ուրիշ փաստեր ևս, որոնք, անկասկած, բխում են հայերեն բնագրից և իբրև այդպիսին՝ հայերենից թարգմանված լինելու անվերապահ ապացույցներ են։ Ստորև բնագրի ու թարգմանության համադրությամբ կաշխատենք վկայակոչել հիշյալ իրողությունները։

[19] *«Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ* Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, *Տփղիս, 1909, էջ 86 (§ 153)։*

[20] *Այսպես՝ հիմք ընդունելով մի շարք հատուկ անունների փոխանցման ու համապատասխանությունը հայերենին, կարելի կլիներ պնդել, թե թարգմանիչը որոշ դեպքերում նախընտրել է այլ աղբյուրներից ու կենդանի իրականությունից իրեն հայտնի անվանաձևերը, իսկ հիմնականում՝ առկա իրողությունները արդյունք են բնագրին հետևելու, որ այս պարագայում, բնականաբար, հայերեն չպետք է լիներ, որովհետև դրանք շատ հեռու են հայերեն տեքստի տառադարձում-փոխանցում կամ երբեմն նույնիսկ՝ ստույգ համապատասխանություն լինելուց* (კუბანი*—Ատրպատական,* არშაკთა სოფელი*—Պարթևաց կողմ,* სარკინოზი*—Տաճկաստան,* ფრომანი*—Յունաց աշխարհ)։ Հայ-վրացական ընդհանուր գործածություն ունեցող բառագանձին ևս կարելի է այլ պատճառաբանություն տալ. դրանք, ըստ մեծ մասի, միայն այս հուշարձանին չեն հատուկ, այլև V դ. սկսած հայերենից կատարված բազմաթիվ թարգմանությունների հետևանքով քաղաքացիություն-գործածություն են ստացել վրաց մատենագրության մեջ առհասարակ, դրանով իսկ դադարել են այլևս իբրև հայկաբանություն ընկալվելուց։ Ուշագրավ է, որ ոչ քիչ թվով հայ-վրացական ընդհանուր գործածություն ունեցող բառեր կարելի է գտնել, օրինակ, «Գրիգորի վարքի» մետափրասյան խմբագրության վրացերեն տեքստում, որի հունարենից թարգմանված լինելը կասկածից դուրս է* (ოხჳანი*—վախճան,* დანაკი*—դանակ և այլն)։*

ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА

1. «Դէպ եղև տեսանել ինձ յաղանդոյ ուսման նոցա **օրիորդ մի կոյս և գեղեցիկ...»** *(§ 155)։*

... და უფროჲსად ესე გიკჳრდინ, რამეთუ **ქალსახლისა ჩუენი ქმნულკეთილი...**

Հայերենի իմաստը միանգամայն հասկանալի է՝ պատկերահանների միջոցով կայսրը տեղեկացել է **մի օրիորդի** *(Հռիփսիմեի) գեղեցկության մասին, մինչդեռ վրացերենում, հակառակ նախորդ ողջ պատմությանը, Հռիփսիմեն որակվում է իբրև «մեր գեղեցիկ տանու օրիորդ»։ «Մերը» այստեղ անտեղի է, եթե չասենք՝ ավելորդ (հունարենը համապատասխանում է հայերենին՝* νεάνιδα μίαν*)։ Հայերեն և վրացերեն տեքստերում եղած այս հակասություն-տարբերությունը, կարծում ենք, գրչական սխալ ընթերցման արդյունք է. թարգմանիչը հայերեն «մի»-ն իբրև «մեր» է ընկալել և թարգմանել* „ჩუენი“։

2. «Այլ մեզ լաւ է մեռանել ի սրբութեան քում, քան թէ *ձգիցեմք զձեռս մեր յաստուածս օտարս...» (§ 194)։*

ხოლო ჩუენდა უმჯობეს არს სიკუდილი სიწმიდით, **ვიდრე არა** გან-თუ-ვიპყრნეთ ჴელნი ჩუენნი ღმერთთა მიმართ უცხოთა...

Վրացերեն թարգմանությունը միանգամայն կհամապատասխաներ հայերեն բնագրին, եթե այն չունենար ընդգծված არა *ժխտականը, որովհետև հայերենում այն չկա և չի էլ ենթադրվում։ Արդ, ինչպե՞ս է առաջացել նշածս երևույթը (ինչարկե, եթե այն ոճավորման նպատակ չունի)։ Հայերենի «քան»-ը կարող էր արտացոլվել և* ვიდრე*-ով, մինչդեռ ունենք* ვიდრე...თუ *(քան թե), որ նորից սովորական համապատասխանություն է։* არა*-ի գոյացման պատճառը թերևս որոնելի է գրաբարի «քան թէ»-ի մեջ. թարգմանիչը կարող էր այն պարզապես «չէ» կարդալ (երկաթագրի Թ-ի և Չ-ի շփոթման հետևանքով) և «քան չէ»-ն բնականաբար թարգմանել* ვიდრე არა *(հունարենում ունենք* ἵνα*)։*

3. «...յորժամ առաքեսցես զդա ի **պատրաստ լուսոյ** *բնակութենէդ հայել յամենայն բնակիչս երկրի» (§ 195)։*

...რაჟამს მოვიდეს დიდებით **ჰაეროვნებითა** ნათლისაჲთა მოხედვად ყოველთა დამკჳდრებელთა სოფლისათა.

Նախ դիտենք, որ մեզ հետաքրքրող բառը («պատրաստ») Սաղմոսից քաղված արտահայտության մեջ է գտնվում **«ի պատրաստ բնակութենէ** *իւրմէ հայեցաւ յամենայն բնակիչս աշխարհի» (Սաղմ., ԼԲ, 14) և տարընթերցումներ չունի ո՛չ Ագաթանգեղոսի մոտ և ո՛չ էլ Աստվածաշնչում (1805 թ. հրատ.), մինչդեռ վրացերենի* ჰაეროვნებითა*-ն (վայելչություն) բացարձակապես կապ չունի ոչ Ագաթանգեղոսի ընդգծված բառի և ոչ Սաղմոսում եղածի հետ (վրաց. Սաղմ. ունենք* განმზადებულით სამკჳდრებელით თჳსით მოხედნა უფალმან ყოველთა დამკჳდრებელთა სოფლისათა)։ ***Մնում է ենթադրել, թե թարգմանիչը հայերենի «պատրաստ»-ը ընթերցել է իբրև «պարարտ»*** *(?!) և թարգմանել* ჰაეროვნებითა *(հունարենում՝* ἐξ ἑτοίμου κατοικητηρίου σου*)։*

4. «Նաև նախարարք և մեծամեծք աւագանւոյն ընթացեալք ի տեսանել՝ **զմիմեամբք ելանէին»** *(§ 163)։*

«Նաև ազատակոյտն, խառնաճաղանճ ամբոխին հանդերձ, **զմիմեամբք դիզանէին ի միմեանց վերայ...»** *(§ 163)։*

... და მრავალთა მათგანნი იგიცა **ერთიერთსა** ჰხდებოდა...

... და დასდებდეს **ერთიერთსა** დასულებითა სიცოფისა...

Վրացերենում ընդգծված „ერთიერთსა“*-ն բացորոշ հայկաբանություն է, արդյունք բնագրի «զմիմեամբք»-ի պատճենման։ Բայց քանի որ հին վրացերեն տեքստերում այդ բառն արդեն արձանագրված է, ապա կարելի է նաև մտածել, թե այն այլևս լայն գործածություն է ունեցել։ Սակայն այդ բառն այստեղ վկայակոչում ենք, նկատի ունենալով համաբնույթ այլ իրողությունների առկայությունը մեր տեքստում։ Այսպես, հայերեն «որ եկեալ էին զնմանէն՝ տանել յարքունիս, և նախարարքն և* **մեծամեծք աւագանւոյն»** *(§ 173) նախադասության դիմաց վրացերենում կարդում ենք* რომელნი მოსრულ იყვნეს წარყვანებად მისა სამეფოდ, მთავარნი იგი და **დიდ დიდები მოხუცებულთა** მათ, *որ պատճենված է հայերենի «մեծամեծք»-ը։ Բառապատճենման արդյունք է նաև հայերեն «պարկեշտաժողով»-ի փոխանցումը տառացի նշանակությամբ՝* „უბიწოთ კრებულითა“, *որ ամենևին սովորական չէ վրացերենի համար։ Ավելին, հայերեն բնագիրը չիմանալու դեպքում այն ընթերցողին կարող է անհասկանալի մնալ։ Ճիշտ նման ձևով է պատճենված նաև հայերեն բնագրի «ասպաղէն»-ը՝* ცხენის ჭური, *որ կազմված է ասպ* (ცხენი)—**ղէն** (ჭური) *բառերից, մինչդեռ հին վրացերենն ունի իր համապատասխան տերմինը։ Հայերենից է բառապատճենվել նաև մեր տեքստի* სიწმიდით-ზრდილი*-ն, որ տառացիորեն համապատասխանում է «սրբասուն»-ին (բնագրում՝ սրբասնելովն), իսկ «ընդ կողմանս-կողմանս» արտահայտությունը՝ թարգմանության այդ նույն սկզբունքին ենթարկվելով, դարձել է* ადგილად-ადგილად։ *Պակաս ուշագրավ չէ և հետևյալը. վրացերենի համար միանգամայն անհասկանալի է* ერთბამად აღელო სახიობელნი *արտահայտությունը, մինչդեռ համեմատությունից պարզվում է, որ թարգմանիչը սոսկաբար պատճենել-թարգմանել է գրաբարի* **երգ առնել** *(երգել սկսել) կապակցությունը, որը որքան բնորոշ է գրաբարին, նույնքան անհասկանալի է հին վրացերենի լեզվամտածողությանը։ Եվ իրոք, Ագաթանգեղոսի մոտ ունենք՝* **«առ հասարակ երգ առնել** *բարբառեցան»։*

Թերևս կարելի կլիներ այլ օրինակներ ևս բերել, բայց այսքանն էլ բավարար է՝ բնագրի հարցը լուծված ընդունելու համար, մանավանդ որ դրանց գումարվում են Ի. Աբուլաձեի վկայակոչած փաստարկները։ Նույնիսկ կարելի է զարմանալ, որ ոչ ծավալուն այս բնագրում այդքան հայկաբանություններ են պահպանվել։

Վրացերեն թարգմանությունը, դժբախտաբար, չունի այնպիսի հիշատակարան կամ հիշատակագրություն, որից տեղեկություններ քաղեինք թարգմանության ժամանակի մասին։ Դատելով Ռ. Բլեյկի հայտնաբերած պատառիկի գրչության ժամանակից, կարելի է ընդհանուր ձևով միայն

ասել, թե թարգմանությունը կատարված է XI դ. առաջ[21]։ Ի. Աբուլաձեն կարծում է, որ թարգմանված պետք է լինի VIII դ. հետո, ելակետ ունենալով Ն. Մառի և Իվ. Ջավախիշվիլու այն տեսակետը, թե Ագաթանգեղոսի հայերեն ազգային խմբագրությունը գոյացել է VIII դ., իսկ քանի որ վրացերենը հիմնականում հետևում է հայերեն առկա խմբագրությանը, ուրեմն, բնականաբար, թարգմանվել է նրա ձևավորումից հետո միայն։

Աղբյուրագիտական նորագույն հետազոտությունները Ն. Մառի դրույթի օգտին չեն խոսում, մանավանդ եթե խոսքը քաղկեդոնականության տարածման ժամանակագրությանն է վերաբերում (ապացույց՝ Ժ. Գարիտի հետազոտությունները)։ Բացի V դ. պատմիչների մոտ եղած վկայակոչություններից, Ագաթանգեղոսի հունարեն, արաբերեն և վրացերեն խմբագրությունների գոյության փաստը ինքնին կասկածելի է դարձնում ազգային խմբագրությունը VIII դ. թվագրելու միտումը։ Բայց դա այլ հարց է, կարոտ աղբյուրագիտական համակողմանի քննության։ Կարծում ենք, առավել հիմնավոր է թարգմանության վերջնաժամկետի որոշումը, որ հնարավոր է դառնում բառագանձի ուսումնասիրությամբ։

Ընդունված և տասնյակ փաստերով ապացուցված իրողություն է, որ VIII դ. վերջերից սկսած վրաց գրական լեզուն բավական նկատելի փոխառություններ է անում արաբերենից և նոր պարսկերենից։ Նրանցից բառացիորեն զերծ են այն հուշարձանները, որոնք գրվել կամ թարգմանվել են VIII դ. ոչ ուշ։ Եվ իրոք, «Հռիփսիմյանց վկայաբանության» վրացերեն տեքստում չկա նոր պարսկերենից կամ արաբերենից եկող ոչ մի բառ, իսկ դա նշանակում է, թե թարգմանության վերջին ժամկետը VIII դ. պետք է համարել։ Կան նաև այլ կռվաններ. Ի. Աբուլաձեն արդեն նկատել է, թե վրացերեն տեքստին հատուկ են մի շարք հնաբանություններ, որոնց առկայությունը բացառում է ուշ շրջանում թարգմանված լինելու հնարավորությունը։ Այսպես, օրինակ, սովորական აღმოსავლეთი-ի փոխարեն այստեղ ունենք მზუარე, սպասվող կամ հաճախակի դարձած მღერა (სიმღერა)-ի փոխարեն գործածված է სახიობელი, որ ճշտիվ համապատասխանում է հայերենի «երգ»-ին և այլն։ Ավելի որոշակին, սակայն, տերմինների կիրառությունն է. ինչպես և պետք էր սպասել, «աշխարհ» նշանակությամբ գործածված է „სოფელი“, որ Իվ. Ջավախիշվիլու քննության համաձայն հատուկ է միայն VIII և նախորդ դարերի բնագրերին։ Պակաս կարևորություն չունի և վրացերեն տեքստի გლეხი-ն, որ համապատասխանում է հայերենի «ամբոխ»-ին. վրացերենին տակավին խորթ է նրա «գեղջուկ» իմաստը, և բառը առհասարակ գործածված է սոցիալական ստորին խավի նշանակությամբ՝ ներառյալ քաղաքային բնակչությունը։

Այսպիսով, բավականաչափ կռվաններ կան ասելու, թե «Հռիփսիմյանց վկայաբանություն»-ը վրացերեն է թարգմանվել VIII դ. առաջ, իսկ թե սկզբնական սահմանը ո՞րն է՝ տակավին մնում է քննելի։ Առանց հայերեն

[21] Տե՛ս R. P. Blake, Catalogue..., p. 216—221.

բնագրի կրած մշակում-խմբագրումների շերտերն ու ժամանակը պարզելու անկարելի է որևէ վճռական բան ասել թարգմանության ստույգ ժամանակի մասին։ Առայժմ այն զետեղելի է V—VIII դդ. շրջագծում։

* * *

Թե մատենագրության պատմության համար ինչ նշանակություն ունեն միջնադարյան թարգմանություններն առհասարակ՝ հազիվ թե կարոտ լինի բացատրության։ Թարգմանության բուն փաստն իսկ տվյալ մշակույթի ու իրականության առաջադրած պահանջի վկայություն է։ Հարակից խնդիրները՝ թարգմանության տարածումն ու ազդեցություններն ընկալող մատենագրության մեջ, նրա կատարման որակը և այլն, կարելի կլինի քննության առարկա դարձնել այն պարագայում, երբ ուսումնասիրված ու ճշգրտված է ամենակարևորը՝ բնագրի ու թարգմանության տեքստաբանական հարաբերությունը։

Ագաթանգեղոսի Պատմության դրվագների, ներկա դեպքում՝ «Հռիփսիմյանց վկայաբանության» վրացերեն թարգմանությունը թերևս պակաս նշանակալից չլիներ, եթե անգամ բառ առ բառ հետևեր մեր ձեռքի տակ եղած հայերեն բնագրին. բացի ածանցյալ խնդիրներից, այն հունարենի ու արաբերենի զուգադրությամբ կօգնի բնագրի մթագնված տեղերը ճիշտ հասկանալուն, առանձին տերմին հասկացողությունները ճիշտ մեկնաբանելուն և այլն (այստեղ չենք խոսում հուշարձանի՝ ընկալող մատենագրության մեջ ունեցած դերի ու նշանակության մասին)։

Այժմ տեսնենք, թե ինչպիսին է եղել «Հռիփսիմյանց վկայաբանության» թարգմանչի ունեցած հայերեն բնագիրը՝ մեր ձեռքի տակ եղածի համեմատությամբ։

Իսկ թագաւորին թողեալ զիւր ամօթըն կորանաց, որ պարտ էր նմա ամաչել, որ այնչափ անուանի ելեալ՝ քաջութեամբ առաւելոյր ի մարտս պատերազմացն. **Նաև յՈղիմպիադսն Յունաց հսկայազօր Երեւեալ**, բազում գործս արութեան և անդ ցուցեալ, և ոչ սակաւ մղեալ պատերազմունս յայնկոյս Եփրատ գետոյ... (§ 202)	Իսկ թագավորը, որը այնքան քաջությամբ էր անվանի՝ հաղթանակով մարտողի դեմ ու հարձակումներում հերոսական ուժ ցույց տված, թողեց իր ամոթը։ Նա բազում արիության արեց, ու ոչ սակավ ինչ կռիվներ վարեց Եփրատից այն դին...
Արդ, ելեալ դահճապետն պարծելով՝ չարամահ առնել զնա, և ետ հանել զնոսա շղթայիւք ի քաղաքէն ընդ Դուռն հարաւոյ, ընդ կողմն պողոտային, **ուր հանէր ի Մեծամօրի կամուրջն**, ի տեղին յայն, ուր սովոր էին սպանանել զամե-	Եվ պարծանքով դուրս եկավ սպասավորապետը՝ նրան սպանելու։ Հրամայեց, որ նրանց շղթայված դուրս բերեն քաղաքի Արևելյան կողմի դռներից, արքունական ճանապարհով, այն տեղը, ուր կո-

նայն մաճապարտս, ի ճախճախուտ տեղի մի, մօտ ի պարկէճ փոսին, ոռ շուրջ գայր զճաղաճւան: (§ 206)

տարվում էին բոլոր մահապարտները, արտաքին դռների մոտ։

Եւ բացեալ զդուրս տանն բանտար՝ ի դուրս ելանէր, հերձեալ զամբոխ մարդկանն. և ոչ ուրուք կարացեալ յաղթահարել զնա։ Եւ ընթացեալ ընդ քաղաքամէջսն՝ ելանէր ընդ արևելս կոյս, ընդ Արեգ դուռն քաղաքին: Երթեալ առ հնձանօքն, ուր էինն. իսկ յառաջ վանք իւրեանց... (§ 192)

Բացեց սենյակի դռներն ու բռնաբար դուրս ընկավ, ճեղքեց ժողովրդին, և ոչ ոք չկարողացավ բռնել նրան։ Սրընթաց դուրս էր գալիս քաղաքի փողոցները. դուրս եկավ ու գնաց այն հնձանները, ուր առաջ իր կացարանն էր...

Առկոչված երեք հատվածներում հինգ կարևոր տարբերություն կա, եթե չհաշվենք առանձին բառերն ու կարճառոտ արտահայտությունները։ Ընդ որում՝ այստեղ վկայակոչեցինք այնպիսի հատվածներ, որոնց բուն տարբերությունը ճայերենի ճամապատասխան տեղերի բացակայությունն է վրացերենում: Եթե կարելի լիներ պնդել, թե վրացի թարգմանիչը որևէ համառոտում է կատարել՝ ինչ-որ նկատառումից դրդված, հեշտ կլիներ բացատրել այդ տարբերությունը։ Բայց թարգմանիչն ըստ ամենայնի աշխատել է հարազատ մնալ բնագրին, երբեմն նույնիսկ բառացիության կամ պատճենման հասնելով։ Նկատելի է նաև, որ կրճատված նախադասությունները սկզբունքային (դավանաբանական կամ այլ բնույթի) նշանակություն չունեն և ոչ էլ դժվար թարգմանելի են։ Ընդսմին՝ թարգմանիչը նոր խմբագրություն կազմելու, երկը տեղայնացնելու, ընդմիջարկում-հավելելու ոչ մի միտում չի ցուցաբերում։ Ուրեմն, մնում է եզրակացնել, թե թարգմանիչի ձեռքի տակ եղել է մի այնպիսի գրչագիր-օրինակ, որը այսօր տակավին անծանոթ է ճայագիտությանը: Եվ կամ՝ վրացերեն թարգմանվելուց հետո ճայերեն բնագիրը ենթարկվել է լրացում-փոփոխումների, որոնք նոր շերտ են ներկայացնում: Դրանով իսկ՝ վրացերենը, այս պարագայում, բնագիր-սկզբնաղբյուրի արժեք է ստանում։

Ի դեպ, որպեսզի մեր ասածը ավելի նկատելի դառնա, անհրաժեշտ ենք համարում լրացուցիչ վկայակոչությունների ու այլ աղբյուրների դիմել։ Գայանեն, ըստ հայերեն Ագաթանգեղոսի, Հռիփսիմեին կոչ է անում հիշել իր՝ ի Քրիստոս կոչվածությունն ու չհանձնվել Տրդատին.

Արդ՝ զայս ամենայն խօսեցաւ սուրբն Գայիանէ ի բարբառ Հռոմայեցւոց ընդ իւրում սանուն ի դրաց սենեկին, մինչդեռ թագաւորն ոգորէր ընդ սրբոյն Հռիփսիմեայ։ Բայց գոյին անդ ոմանք ի սպասաւորացն արքունի, որ լսէին զայն ամենայն ի բարբառ Հռոմայեցւոց: (§ 189)

Եվ մինչ սուրբ Գայանեն սույն խոսքերը եբրայերեն ասում էր իր սանին՝ սենյակի դռներից ներս, իսկ թագավորը մարտնչում էր սուրբ Հռիփսիմեի հետ, այնտեղ էին թագավորի սպասավորներից ոմանք, որոնք լսում էին եբրայերեն այս բոլոր խոսք[եր]ը։

Թերևս այսօր մեզ անհայտ բնագրական տարբերակ ունենալու դեպքում թարգմանիչը կարող էր «Հռոմայեցւոց բարբառ»-ի փոխարեն «եբրայերեն» խոսեցնել Գայանեին։ Անկարելի է այդ փոփոխությունը գրչական կամ այլ բնույթի սխալմամբ բացատրել, որովհետև գրչությամբ նրանք միմյանցից հեռու են և մանավանդ՝ նույն պարբերության մեջ «եբրայերեն»-ը երկիցս է գործածված։ Նշանակում է, որ տարբերության աղբյուրը թարգմանչի ձեռքի տակ եղած հայերեն բնագիրն է։ Թերևս մեր խոսքը ենթադրական կլիներ, եթե չունենայինք նման փոփոխություններ հավաստող այլ օրինակ։ Սույն գրքում հրատարակվող Ագաթանգեղոսի Պատմության պատառիկում (№ 1235) գիտական տեքստի (առանց որևէ տարընթերցման) «Եբրայեցւոց»-ը փոխարինված է «Հռոմայեցւոց»-ով։

...մարգարէք անուանեցան ի դարս առաջինս յաստուածապաշտ յազգէն Եբրայեցւոց...
(§ 255)

...մարգարէք անուանեցան ի դարս առաջինս յաստուածապաշտ ազգէն Հռոմայեցւոց...
(պատ. № 1213)

Հարկավ, այլ խնդիր է, թե ո՞րն է ճիշտ։ Միամիտ կլիներ ենթադրել, թե մարգարեներին հռոմայեցի համարող հեղինակը, գրիչը կամ խմբագիրը ծանոթ չէ Աստվածաշնչի ծննդաբանությանը, մարգարեների ինքնությանը։ Ինչպես երևում է՝ հունասեր թե քաղկեդոնական խմբագիրը մարգարեներին անգամ պատրաստ է հունազգի կոչել՝ անշուշտ դավանաբանական դրդումով։ Գեթ այս օրինակից կարելի է դատել, թե որքան միտումնավորություն ու միջամտություն է եղել հին պատմիչների երկերը ընդօրինակել-խմբագրելիս։ Ուստի ամենևին զարմանալի չէ, որ վրացերեն թարգմանության բնագիր հայերենում Գայանեն խոսում է «եբրայերեն»։ Եթե ընդունելի համարենք, որ «եբրայեցւոց» ազգը «հռոմայեցւոց»-ով փոխարինողը հունադավան (=քաղկեդոնական) պետք է լիներ, ապա հակառակը կատարողը՝ «հռոմայեցւոց» բարբառը «եբրայեցւոց»-ով փոխարինողը, նույնքան մոլի հակաքաղկեդոնական պիտի ներկայանա։

Սակայն բնագրի ու թարգմանության տարբերությունները վկայակոչվածով չեն սպառվում։ Բերենք մեկ ուրիշ օրինակ.

Իսկ իբրև իբրն հոչակեցան զնոցանէն՝ ապա աւուրս երկուս ապարափակ արարեալ՝ տուեալ պահել զնոսա անդէն, ուր գտինն լեզէոն հետևակ զօրուն, ապա յետ երկուց աւուրցն համբաւն հռչակեալ պարկեշտութեան...
(§ 162)

Եվ երբ գտան, երկու օր վահանակիրներով շրջափակեցին և պահեցին հետևակ զորքով այնտեղ, ուր որ գտան։ Եվ երեք օր անց լուրը տարածվում էր, և լսում էին բոլորը, հռչակվում էր Հռիփսիմեի պարկեշտությունն ու գեղեցկությունը...

Այստեղ գլխավոր տարբերությունը հայերենի երկու օրվա դիմաց երեք *օր ունենալն է, որ նույնպես որևէ սխալմունքի արդյունք չէ, այլև գաղափար օրինակում այդպես է եղել։ Եվ իրոք, քննական հրատարակության տարընթերցումներում ձեռագրերի մի նշանակալի թիվ* (ad ԱԲԳՁt) *«յետ երից աւուրցն» տարբերակ է ներկայացնում։*

Հաճախ է դիտվում, թե Ագաթանգեղոսի Պատմության ներկա բնագրում կան խրթին մակդիր-հոմանիշներով հարկից ավելի ծանրաբեռնված պարբերություններ, արտահայտություններ։ Թե որքանով են նրանք սկզբնական ու ոչ ընդմիջարկված-խմբագրված՝ կարելի կլինի ճշտել կրկնագիր տեքստի, հնագույն պատառիկների քննության ժամանակ։ Սակայն հիշյալ առումով ևս վրացերեն խմբագրությունը կարող է որոշակի նպաստ բերել. Ներկա դեպքում խոսքը ոչ թե պարբերության մեջ եղած մեկ-երկու բառային տարբերության մասին է, այլ խմբագրական ղանազանության.

Իսկ զԹագաւորն հպարտացուցեալ ամբարհաւաճեցուցանէր որոգայթագիր թշնամին՝ ի գրգռել յարուցանել հալածանս ի վերայ եկեղեցեաց աստուծոյ, խելացնորեցուցեալ զնա առ ի տալ պագանել երկիր ուրուականաց մեռելոտաց, ոսկեղէն և արծաթեղէն, փայտեղէն և քարեղէն պղնձագործ պատկերաց դիցն սնոտեաց, և պղծութեանն պաշտաման։ Ու եղեալ համբառնայր հարկանել ընդ վիմին հաստատնոյ, ընդ հաւատոցն եկեղեցւոյ. վիմին ինչ ոչ ստնանել կարացեալ՝ ինքն առ վիմին խորտակեցաւ։ Սակայն յամբարհաւանութիւն մոլեգնութեանն վստահացեալ՝ բազում և անչափ էր այն, որ ի նմանէ անցանէր ընդ եկեղեցիս աստուծոյ·

(§ 142)

Իսկ Թագավորը հպարտացավ ու լցվեց ամբարտավանությամբ, քանի որ նրան հրահրում էր սատանան, և մեծ հալածանք սկսեց աստծո եկեղեցիների հանդեպ. ու անշունչ, անարժան ոսկեղեն, սին փայտեղեն և քարեղեն պատկերների ու պիղծ պաշտաման երկրպագություն կամեցավ։

Դժվար չէ կռահել, որ հայերեն բնագրի ընդգծված մասում նկարագրական հավելում է կատարված, մասամբ կրկնված է արդեն ասվածը, իսկ որ ամենակարևորն է՝ արդեն խոսվում է Տրդատի «ինքն առ վիմին խորտակեցաւ»-ի մասին, այսինքն՝ ընդմիջարկվում է դեպքերի զարգացումը իմացող գրչի կողմից (բուն Ագաթանգեղոսին հատուկ չէ ելքի կանխավ ծանուցումը)։ Նշածս իմաստով էլ սույն հատվածը հետագա ընդմիջարկություն է ներկայացնում։ Այժմ վրացերենի հիմամբ կարելի է վստահ ասել, որ թարգմանության հիմք բնագրում (=հայերենում) քննարկվող հատվածը չի եղել, ուստի

և անծանոթ է մնացել թարգմանչին։ Այս դրվագում ևս հունարենը զուգակշիռ է հայերեն բնագրին (տե՛ս Գի Լաֆոնտենի հրատ., էջ 227 $_{9-13}$*)։*

Կարծում ենք, վկայակոչված փաստերը իրավունք են տալիս եզրակացնելու, թե «Հռիփսիմյանց վկայաբանության» վրացերեն բնագրի հայերեն տեքստը նկատելիորեն տարբերվել է այժմ մեզ հայտնի խմբագրությունից, առանձին տարբերակ է ներկայացրել։

«Հռիփսիմյանց վկայաբանության» ձեռագրերի նկարագրություն

1. **A—511:** *Նուսխուրի գրչության, թղթյա, սկզբից և վերջից պակասավոր, գրիչն է ոմն Դիմիտրե, ժամանակը՝ XVII դ., երկսյուն։ Բովանդակությամբ ճաոընտիր է, ուր ներկայացված են Օնոփրոսի, Թեկղեի, Ամփիլոքոսի, Կատերինայի, Կլիմենտի, Հովհան Դամասկացու, Բարբարեի, Մելանիայի, Հովհան Ողորմածի, Բարսեղի, Դիմիտրեի, Գայանեի, Պելագիայի, Տասիի, Աբրահամի և Մարիամի, Թեոդորոսի (Ստրատելատ), Եվթիմիոսի, Եվգենիոսի, Անաստասիայի և այլ վարքեր, նաև՝ Աթանաս Աղեքսանդրացու, Հովհան Դամասկացու, Անդրեաս Կրետացու, Մաքսիմիանոս Խոստովանողի և այլոց ճառերն ու թղթերը*[22]*։*

2. **A—1043:** *Մխեդրուլի գրչության, թղթյա, 25 էջ, 20,5×16* սմ *չափի (ստացող՝ Աննա իշխանուհի, գրիչ՝ Գաբրիել աբեղա (?), հավաքածոյին է նվիրել Վլ. Մաղաշվիլին (1910)։ Բովանդակում է Գայանեի և նրա մտերիմների նահատակությունը* (წამება წმიდისა გაიანესი და მოყუასთა მისთა), XIX *դ.*[23]*։*

Հիշատակագրություն.

მაღალბრწყინვალეო კნეინავ ანნავ, არაგვის ერისთვის ასულო, მირთვი მეტაფრასი ქალწულთა ძისაგან შენისა, ბერის გაბრი[ე]ლისაგან, სახსოვრად ჩემდა.

Բարձրապայծառ իշխանուհի Աննա, դուստր Արագվի էրիթավի, ընդունիր կուսանաց մետափրասը (վարքը) քո որդուց՝ Գաբրիել աբեղայից, ի հիշատակ ինձ։

3. **A—1121:** *Մխեդրուլի գրչության, թղթյա ձեռագիր, 51 էջ, 34×22 սմ չափի, գրված 1854 թ., բովանդակությամբ ճառընտիր է, ուր ներկայացված են՝ Անդրեաս Կրետացի (1r—5v), «Վարք Թեոդորոսի» (6r—11v), «Վկայաբանություն Եվփրեմիայի (12r—16r), «Վկայաբանություն սրբոց կանանց Սոֆիայի* (სოფლისა!) *և նորին դստերց՝ Պիստի, Էլպիստի, Ագապի» (16v—22r),*

[22] *Նկարագրությունը հմմտ.* „Описание рукописей Тифлисского церковного музея Карталино-Кахетинского духовенства, составленное Ф. Д. Жордания", кн. II, Тифл., 1902., стр. 62—64. *Թ. Ժորդանիան այստեղ ներկայացված Գայանեի վարքը դիտում է իբրև հատված* (отрывок), *տե՛ս* **Ф. Жордания,** *նշվ. աշխ., էջ 63։*

[23] *Նկարագրությունը տե՛ս* საქართველოს სახელმწიფო მუზეუმის ქართულ ხელნაწერთა აღწერილობა (A კოლექცია), კორნელი კეკელიძის საერთო რედაქციით, ტ. IV, შეადგინა **ქრისტინე შარაშიძემ**, თბ., 1954, გვ. 11—12.

«Վկայաբանություն Թեկղե նախավկայի» (22v—30r), «Վկայաբանություն Հռիփսիմեի և Գայանեի ու նրանց մերձավորների» (30v—37r), «Վարք և քաղաքավարություն արժանավոր Պելագիա Անտիոքացու» (37v—40r) «Վարք և զղջումնք երանելի Տաւիա Եգիպտացու» (40v—43r), Եփրեմի՝ «Վասն Աբրահամ միանձնի և ... Մարիամի» (43v—46r), «Վասն Աստվածածնի ի տաճար գալուն»[24]։

Հիշատակագրություն[25].

წმიდაო გოლგოთაო, საფლაო ქრისტესო, ჯვარო პატიოსანო და გე[თ]სამანის ღვთისმშობელო, (და) კეთილად დაიცევ დიაკვან[ი] მეტეხისა ალექსანდრე ავალიანოვი, ამინ. (22r)

Ով սուրբ Գողգոթա, գերեզման Քրիստոսի, խաչ պատվական և Գեթսեմանի աստվածածին, բարի պահպանեք Մետեխի սարկավագ Ալեքսանդրե Ավալիանովին։ Ամեն։

4. **A—1308**: Մխեդրուլի գրչության, թղթյա, 119 էջ, 16×10,5 սմ չափի, գրված է 1816 թ., գրիչ և ստացող՝ Գրիգոր Վաչնաձե, խորագրերը՝ կարմիր թանաքով։ Բովանդակում է՝

1. «Դարձ Միրիան թագավորի և նրա՛ հետ ամենայն Քարթլիի՝ սուրբ և երանելի մորն մեր Նինո առաքյալի կողմից» (1r—84v)։

2. «Վկայաբանություն սրբոց նահատակաց Գայանեի և Հռիփսիմեի ու նրանց մերձավորների» (85r—119r)։

Առաջին մասը, փաստորեն, «Քարթլիի դարձն» է և «Նինոյի վարքը», որ, Ք. Ճարաշիձեի ճշտմամբ, հետևում է Սաբինինի հրատարակած տեքստին („საქ. სამოთხე", 1882, էջ 119—155), իսկ «Հռիփսիմյանց վկայաբանությունը» իբրև հավելված է ներկայանում[26]։

Հիշատակարան.

წმიდანო მამანო და ძმანო, რომელთა აღმოიკითხოთ წიგნი ესე, ლოცვით მომიხსენეთ ღვდელმონაზონი გრიგოლ, რომელმან აღვსწერე წიგნი ესე ჩემთჳს. და უკეთუ ცთომა იხილოთ,—შემინდევით, რამეთუ სურვილ ვიყავ ცხოვრებისა ამის აღწერად და როგორც დედანში ეწერა ისე აღვსწერე. სრულ ვჰყავ მარტის 20, 1816 წელსა.[27]

Սուրբ հայրեր և եղբայրներ, որքեր կարդաք այս գիրքը՝ աղոթով հիշեք կուսակրոն քահանա Գրիգոլին, որ գրեցի սույն գիրքը ինձ համար։ Եվ եթե սխալ տեսնեք՝ անմեղադիր եղեք, որովհետև բաղձանք ունեի գրել այս վարքը և ինչպես մայր օրինակում էր գրված՝ այնպես գրեցի։ Ավարտեցի մարտի 20-ին, 1816 թվականին։

[24] Նկարագրությունը տե՛ս անդ, էջ 126—127։

[25] Այլ հիշատակություններ տե՛ս անդ, էջ 30r, 37v, 40r։

[26] Նկարագրությունը հմմտ. նշվ. աշխ., էջ 380։

[27] Այլ հիշատակարան գրչի՝ էջ 84v, ուր և կոչված է Գրիգոր Վաչնաձե։

5. **Լենինգրադի արևելագիտության ինստիտուտի ձեռագիր C—12.** Մխեդրուլի գրչության, թղթյա, գրված մինչև 1810 թ., գրիչն ու գրչության վայրը՝ անհայտ։ Ըստ թղթի և գրչության՝ ձեռագիրը երկու խմբի է բաժանվում, հիմնականը՝ էջ 1—38, 64—156, երկրորդը՝ էջ 39—63, 157—187։ էջ 61v-ում կա հավանաբար գրչության ժամանակին վերաբերող թվական—წელსა **ჩყი** (=1810)։ Կազմի վրա կա երեք այլ համար՝ Msc. Georg. 56 (Ասիական թանգարան), 78 (Թեյմուրազի հավաքածոյի"), 30 (")։ Ստացողն է Թեյմուրազ Արքայազնը. առաջին իսկ էջում, նյութերի ցանկի վերևում, ասոմթավրուլի գրչությամբ ասված է. „ძეო ღმრთისაო იესუ, ადიდე ძე მეფისა თეიმურაზ, რომლის არს წიგნი ესე" («Որդիդ աստծո Հիսուս, փառավորիր արքայորդի Թեյմուրազին, որինն է այս գիրքը")։ 185 էջ (այդ թվում և դատարկ), 17×11 սմ չափի։ Բովանդակությամբ ճառընտիր է, այլ կերպ՝ մետափրաս, ուր ներկայացված են[28].

ա) Վարք և քաղաքավարություն Եվթեմիանեի և նրա որդի այր աստծո Ալեքսիոսի (1r—9r),

բ) Վարք սուրբ և երանելի Հովհանի (9v—24v),

գ) Վարք և քաղաքավարություն ... Քսենոփոնոսի (25r—37v),

դ) Վարք ... Օնոփրիոս ճգնավորի և այլ անապատականաց (39r—51r),

ե) Վարք... Մարկոս ճգնավորի (52r—61v),

զ) Վարք Կանոնիկե կույսի (64r—68v),

է) Վարք և քաղաքավարություն Նիսիմե կույսի (68v—74v),

ը) Ասք հոգևոր արժանաց (სათნოებათა) պահպանման մասին (დაფარვისათვის) (74v—78v),

թ) Հոգևոր ասք մեծն Սիսոյի մասին (სისოსთუის) (79r—80r),

ժ) Հոգևոր ասք մեծն արքա Կոստանդինի (80v—82r),

ժա) Վախճան ամենասուրբ Աստվածածնի, ասված՝ մեր սբ հայր Բարսեղի [կողմից] (83r—132v),

ժբ) Վկայաբանություն սրբոց կույս-նահատակաց Հռիփսիմեի, Գայանեի և նրանց մերձավորների (133r—156r),

ժգ) Բան... Գրիգոր Նյուսացու՝ Վասն կենաց սբ Մակրինայի (157r—185r)

Հիշատակարաններ և հիշատակագրություններ չունի։ Կան լուսանցագրված բառային մեկնություններ, կարմիր թանաքով ու նույն գրչությամբ։ «Հռիփսիմյանց վկայաբանությանն» են վերաբերում.

1. **გუგი** არს სახედველი (134v)
2. **მანად** ითქმის სალოლე ქალთა (137r)
3. **როჭიკი** არს ულუფა (137r)
4. **მებოძილი** არს მრავალი გზა რომ ერთად შეიყრებოდეს (139v)
5. **დედამძუძე** არს მზრდელი ქალი (138r)
6. **ურაკპარაკი** არს უბანი (140r)

[28] Ձեռագրի նոր համարը ճշտելիս տողերիս հեղինակին օժանդակել է Ռ. Օրբելին։

7. **იონი** არს ბერძენი (146v)
8. **ერთი სახმილი** სამი ჟამი არს (149r)
9. **ნითრაკი** არს მოსაქმე (151r)

6. **Քութայիսի ձեռագիր № 193.** *Մխեդրուլի գրչության, թղթյա, գրված XIX դ. երկրորդ կեսին (ըստ գրչական տվյալների), գրչության տեղը՝ անհայտ, գրիչ՝ կուսակրոն քահանա Գրիգոր, 138 էջ, 21×16 սմ չափի։ Բովանդակությունը՝ Նինոյի վարքը (էջ 48r—105r), որին նախորդում է «Շարական՝ ձոնված Նինոյին (2r—35v), «Պարակլիս» Նինոյին (36r—44v), վարքից հետո՝ «Թուղթ Աբգարի» (105v—112r), «Վկայաբանություն Գայանեի և նրա մերձավորների» (114r—136v)*[29]։

Գրչի հիմնական հիշատակարան.

აღვწერე მე ღვდელ-მონაზონმა გრიგოლმა წიგნი ესე წმიდაჲს ნინოსი ცხოვრება თავის საგალობელით და გაიანე და რიფსიმეს ცხოვრებით და ავგაროზით დაწერილნი. (137v)

Այս գիրքը՝ սուրբ Նինոյի վարքը իր շարականով ու Գայանեի և Հռիփսիմեի վարքով, [ինչպես նա]և հմայագրերը գրեցի ես՝ կուսակրոն քահանա Գրիգորս։

7. **Թբիլիսիի կենտրոնական պատմական արխիվ, ձեռագիր № 87.** *Մխեդրուլի գրչության, թղթյա, գրված 1819 թ., 73 էջ, 33,5×21,5 սմ չափի։ Արխիվ է մուտք գործել 1924 թ.՝ Թելավից։ Բովանդակությամբ «Վարք սրբոց» է, ուր ներկայացված են հետևյալ վկաներն ու երկերը. 1) Փերրոն (1r—12r), 2) Մարինա (13r—22r), 3) Քեթևան թագուհի (22r—30v), 4) Գրիգոր Մուխրանբատոնի որդու՝ Ներբող առ Դիմիտրի Բագրատիոն (31r—31v), 5) Աբգարի թուղթը (32r—35r), 6) Աթանաս Աղեքսանդրացու՝ ի Մելքիսեդեկ (36r—38r), 7) Գայանե և մերձավորք նորին (39r—50r), 8) Մարիամ Աստվածածին (50r—73r).*

Հիշատակարան կամ հիշատակագրություն չունի[30]։

8. **S—3640:** *Վարքագրական երկերի ժողովածու, գրված XIX դ., մխեդրուլի գրչությամբ, 139 էջ, 20×15,4 սմ չափի*[31]*։ Բովանդակությամբ նույնական է C—12 ձեռագրի հետ, ըստ ամենայնի՝ ընդօրինակված նրանից։ Այստեղ ևս գտնում ենք վկայակոչված ինը հնավանդ բառերի լուսանցագիր բացատրությունը։ «Հռիփսիմյանց վարք»-ը* (წამება წმიდათა ქალწულმოწამეთა...) *զետեղված է 94v—100r էջերում։ 136v էջում կա հետևյալ հիշատակագրությունը.*

[29] *Նկարագրությունը հմմտ.* ქუთაისის... ხელნაწერთა აღწერილობა, I, გვ. 357.

[30] *Նկարագրությունը հմմտ.* ცენტრალური სახელმწიფო საისტორიო არქივი, ქართულ ხელნაწერთა კოლექციის აღწერილობა, ტ. I, შედგენილია პროფ. **ს. კაკაბაძის** და **ვ. გაგოშიძის** მიერ, აკად. **კ. კეკელიძის** რედაქციით, თბ., 1949, გვ. 84—87

[31] *Նկարագրությունը տե՛ս* ქართულ ხელნაწერთა აღწერილობა, (S), ტ. V. 1967, გვ. 119—121.

წელსა **ჩყკთ** სეკდენბრის თვეში ეს პატარა სვინაქსარი და მეტაფრასი მეფის დავითის სძალმან ანასტასიამ-კონსტანტინეს ცარევიჩის მეუღლემ და აბაშიძის ასულმან მაჩუქა სახსოვრად თვისად სანკტპეტერბურღში. მეფის ასული რიფსიმა.

(გვ. 136v)

1829 թվականի սեպտեմբեր ամսին այս փոքրիկ Հայսմավուրքը և Մետափրասը թագավոր Դավթի հարս Անաստասիան՝ Կոստանդինե Արքայազնի կինն ու Աբաշիձեի աղջիկը, նվիրեց ինձ Սանկտ-Պետերբուրգում՝ ի հիշատակ իրեն։ Արքայադուստր Ռիփսիմա (Հռիփսիմե)։

* * *

Ինչպես իր տեղում նշվեց, «Հռիփսիմյանց վկայաբանությունն» ունեցել է մեկ հրատարակություն։ Անդրադառնալով այն բովանդակող գրչագրերին, պրոֆ. Ի. Աբուլաձեն գրում է. «Հիշատակված ձեռագրերի մեջ հնագույնը A—551 է, որը ըստ գրչության XVI—XVII դարերի է երևում։ Այս ձեռագիրը, ուր մուծված է և «Հռիփսիմյանց վկայաբանություն»-ը, «Ճառընտիր» կամ, ինչպես նրա ընդօրինակման ժամանակ էին կոչում, «Մետափրաս» է հանդիսանում։ Ժողովածուն, որոշ հետազոտողների կարծիքով, մի քանի ձեռագրի մասերից է բաղկացած։ Այն իր նկարագրող Թ. Ժորդանիայի ձեռքում եղել է առանց տեղակարգման ու համարակալման, ուստի նա մեզ հետաքրքրող վարքագրական երկը (գիրքը) իր նկարագրությունն է մտցրել առանց էջակալման... Երբ այս հնագույն ձեռագիրը բնագրորեն վերևում հիշատակված մյուսների հետ ենք համեմատում, պարզվում է, որ այն առավել շատ ճշտությամբ է պահպանում տեքստը, քան մյուսները, որոնց մեջ, եթե ուղղագրության մասին էլ բան չասենք, հաճախ խաթարված են հին լեզվի ձևերն ու աղճատված են որոշ բառեր՝ անհասկանալիության պատճառով։ Հրատարակությունն, ակներև է, ըստ այս հնագույն գրչագրի պատրաստեցինք (թեև մի ժամանակ այլ գրչագրերի այլընթերցումներն էլ էինք հղում (կցում), սակայն, քանի որ դրանք հիմնականում ուղղագրական բնույթի էին, այն էլ ուշ շրջանի, նրանցից ձեռք քաշեցինք)։ Հրատարակության նախընտրած գրչագրի (A—511) թերի մասը այլ, XVIII դարի ձեռագրերով լրացրինք»[32]։

Ի. Աբուլաձեին հայտնի վեց ձեռագրից բացի (A—511, A—1043, A—1121, S—3640, Քութ. № 193, Կենտրոնական պետական պատմական արխիվ № 87), երևան եկան նորերը՝ A—1308 և C—12 (պատմական արխիվի № 435 ձեռագիրը, ինչպես նշել ենք, ուշ շրջանի արտագրանք է և այլ խմբագրության, ուստի նրա վկայակոչությունն ավելորդ ենք համարում)։ Ուսումնասիրությունից պարզվեց, որ «Հռիփսիմյանց վկայաբանության» վրացերեն բնագրի հրատարակությունը նշանակալի նպաստ կարող է բերել լենին-

[32] **ილ. აბულაძე,** აგათანგელოსის „რიფსიმიანთა მარტვილობის" ძველი ქართული თარგმანი („ხელნ. ინსტ. მოამბე", II, 1960, გვ. 148).

գրադի արևելագիտության ինստիտուտի ձեռագիրը (C—12). Նրանում, ինչպես, առկա է ուշ դարերի ուղղագրության կնիքը, բայց և ունի այնպիսի ընթերցումներ, որպիսիք չեն եղել A—511 ձեռագրում, և պրոֆ. Ի. Աբուլաձեն անհրաժեշտ է համարել անկյունավոր փակագծերով լրացնել։ Այս փաստը մի կողմից խոսում է հնում հրատարակության մասին, մյուս կողմից՝ C—12-ի կարևորության։

Հռիփսիմյանց վկայաբանության առորև տրվող վրացերեն բնագիրը հրատարակելիս, բնական է, նկատի առանք C—12-ի բոլոր կարևոր տարընթերցումները՝ երբեմն իբրև տողատակ, իսկ որոշ դեպքերում էլ՝ A—511-ի համեմատությամբ նախընտրելի։

Կարծում ենք, Ի. Աբուլաձեն արդարացի է վարվել՝ ուշ շրջանի ուղղագրական ընթերցումներ տվող գրչական ընդօրինակությունները զանց առնելիս։ Մասամբ նույն սկզբունքին հետևեցինք և մենք՝ մի կողմ թողնելով A—1308 համեմատելու անհրաժեշտությունը, իսկ C—12-ից ընտրելով, ինչպես ասացինք, կարևորները։ Ինքնին հասկանալի է, այս պարագան թելադրեց Ի. Աբուլաձեի հրատարակած տեքստը միջամտելու անհրաժեշտություն։ Հստակությունը չխախտելու համար, Ի. Աբուլաձեի ընտրած ձեռագրացուցիչները պահեցինք նույնությամբ, նրանց ավելացնելով C-ն։

A=Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի A—511։

Q=Քութայիսի պատմա-ազգագրական թանգարանի № 193։

C=Լենինգրադի արևելագիտության ինստիտուտի C—12։

Հռիփսիմյանց վարքում և առհասարակ այս գրքում հրատարակվող բնագրերում ու վկայակոչություններում սուրանկյուն՝ < > փակագծերով նշել ենք հրատարակիչների առաջարկած վերականգնումները։ Քառակուսի՝ [ ] փակագծերում տրվող վերականգնումները գրքիս հեղինակինն են։ Ի. Աբուլաձեի սրբագրությունները իբրև տարընթերցում արտացոլելիս գործածել ենք a ցուցիչը։

Այստեղ և հաջորդ բնագրերում համեմատության առնվող վրացական ձեռագրերի նշանակալի մասի մանրաժապավենները շնորհակալությամբ ստացել ենք ՎՍՍՀ ԳԱ ակադ. Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստիտուտի տնօրինությունից՝ Մատենադարանի տնօրեն ակադ. Լ. Ս. Խաչիկյանի միջոցով օժանդակությամբ։

*

* *

Իբրև գեղարվեստական ստեղծագործություն «Հռիփսիմյանց վկայաբանությունը» հիրավի արժանի է գեղեցիկ կոչվելու[33], բայց և պատմականության ու վավերականության առումով այն մերժելի չէ։ Duchesne-ի ու P. Peeters-ի պես Մ. Աբեղյանը ևս կարծում է, որ «Հռիփսիմյանց վկայաբա-

[33] Տե՛ս Մանուկ Աբեղյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 183։

նության մեջ դժվար թե որևէ իրական պատմական բան լինի, բայց եթե այն, որ իբրք Վաղարշապատում նահատակված են եղել կույսեր, քանի որ 5-րդ դարում արդեն եղել են այնտեղ նրանց վկայարանները։ Դա էապես մի գրույց է՝ վկայաբանության ձևով գրված»[34]։ Նահատակության փաստը պատմական իրողություն նկատելը ինքնին վերանայելի է դարձնում զրույթն ամբողջությամբ։ Հայոց դարձի թվականը 314-ին հաստատելուց հետո հայագետ Պ. Անանյանը վերաքննության առավ և Հռիփսիմյանց նահատակության ժամանակի ու պարագաների խնդիրը[35]։ «Հռոմայեցի» կույսերի փախուստն ու Հայաստան աշխարհում սպաստանելը լիովին բացատրելի և պատճառաբանված է Մաքսենտիոսի օրոք (306-ից հետո, բայց մինչև 314 թվականը), որը, Եվսեբիոս Կեսարացու խոսքերով, «ի շնութիւնս և ի բռնաքարութիւնս հանապազորդէր նա միշտ»[36]։ Հետևաբար, այս վերջինիս ժամանակ տեղի ունեցած հալածումները վարքագիրը կարող էր վերագրել Դիոկղետիանոսին, որի հարուցած հալածանքներն ու կատարած նահատակությունները քրիստոնյա մատենագիրները սոսկումով են հիշում։

Միայն «Հռիփսիմյանց վկայաբանության» ազդեցությամբ չէ, որ 5-րդ դարի մեր մատենագիրները խոսում են նրանում պատմվող եղելության մասին։ Փավստոս Բուզանդը «կանոնաւ ի հայրապետացն և ի թագաւորացն պատուեալք» տեղիները թվարկելիս հիշում է «սոյնպէս և ի գաւառն Այրարատեան զնախավկայսն Քրիստոսի, ուր Գայիանէն և Հռիփսիմէն կային իւրեանց հանդերձ գործակցօքն»[37]։ Սոսկ գրական արձագանք չէ և Փարպեցու տեղեկությունը. «Ըստ սովորութեան իւրում սպարապետն Հայոց Վահան» ուխտակիցներով այցելում է Վաղարշապատի Կաթողիկե եկեղեցի «և ապա՝ յիւրաքանչիւր տեղիս նահատակելոց կուսանաց...»[38]։ Վկայության փաստն ու այն պատմող վկայաբանությունը 5-րդ դարի 80-ական թվականներին այնքան հանրածանոթ էին, որ «Շուշանիկի վկայաբանության» հայկական խմբագրության հեղինակը Հռիփսիմեի ու Գայանեի «աղոթք-դիմումների» նմանողությամբ է շարադրում Շուշանիկի «ինքնախոսությունը»[39], ուր ասվում է. «Եւ արդ ի քեզ եմ յուսացեալ, որ զսուրբն Հռիփսիմէ փրկեցեր ի բռնութենէ թագաւորին և յամօթ արարեր զհսկայազօրն»։

Հռիփսիմյանց կույսերի վկայության պատմականության խնդիրը այլևս կարելի է լուծված համարել, քանի որ Հռիփսիմե վանքի պարսպի տակ գտնված մատուռ-դամբարանում նորերս հայտնաբերվեցին «գերեզմաններ, ածյուններով գլխատված մարմինների»[40]։

[34] Նույն տեղում, էջ 185։

[35] Հ. Պօղոս Անանեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը և պարագաները, Վենետիկ—Ս. Ղազար, 1960, էջ 175—181։

[36] Նույն տեղում, էջ 179։

[37] Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 47։

[38] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց..., Տփղիս, 1904, էջ 176։

[39] Տե՛ս «Սոփերք Հայկականք», Թ, էջ 24—26, հմմտ. Ի. Աբուլաձեի հրատ. էջ 17—18։

[40] Տե՛ս «Էջմիածին», 1979, Դ, էջ 3։

წამებაჲ წმიდათა რიფსიმესი და გაიანესი და მოყუასთა მათთასა*

I და[1] იყო მათ ჟამთა ოდენ[2] ეძიებდა ცოლსა დეოკლიტიანე კეისარი, და წარავლინნა ყოველთა მიმართ საბრძანებელთა მისთა გამომხატვარნი[3] ჭეშმარიტად ჰასაკისა ფიცარსა ზედა, რაჲთა ვითარცა იყოს ჰასაკი და ქმნულკეთილობაჲ პირისაჲ და ხატი წარბთაჲ[4] მსგავსად[5] ქმნულკეთილობისა მისისა, ვინცა იგი იყოს, და მიუპყრან[6] იგი.

II მას ჟამსა პოვეს[1] ჰრომეს ქალაქსა საწყდობილე[2] ერთი ქალწულთა, განშორებულნი[3] ყოვლისაგან, თესლის[4] მჭამელნი, მღჳძარენი და უბიწონი და წმიდანი დედანი ქრისტჱს მიმართ მორწმუნენი[5], რომელნი დღე და ღამე და ყოველსა ჟამსა დიდებასა და ქებასა მისცემდეს ღმერთსა. და ლოცვაჲ მათი ისმოდა ღმრთისა და შეიწირვოდა მისა მიმართ, რომელთა[6] მთავარსა ერქუა გაიანე, და ძუძეული მისი ასული ღმრთის მსახურეთაჲ[7], რომელსა სახელი ერქუა რიფსიმე.

III და ვითარცა მიიწინეს[1] მძლავრნი[2] იგი და შევიდეს წმიდათა მათ მჴნეთა საყოფელსა, და იხილეს ქმნულკეთილობაჲ იგი რიფსიმესი, დაუკჳრდათ[3] და დასულბეს[4] შუენიერებასა[5] მას ზედა ჰასაკისა მისისასა, გამოხატეს იგი ფიცართა[7] ზედა და[8] მიუპყრეს[9] წინაშე კეისრისა.

IV და ვითარცა იხილა[1] შუენიერებაჲ[2] იგი და ქმნულკეთილობაჲ რიფსიმესი, აღიმღრუა[3] გულის-თქუმითა ტრფიალებისაჲთა, და დასულბა[4] იგი გულის-თქუმითა, და მისიცა ჟამი სიხარულისაჲ[5] და მიისწრაფდა გულს-მოდგინედ სიხარულით ქორწილისა მის[6] აღსრულებად[7]. მას ჟამსა წარავლინნა მოციქულნი ყოვლისა მიმართ სოფლებისა[8] და მოაწჳა[9] ყოველნივე საწევნელითურთ. აწ გებულნი ადრე მოიწინეს[10] აღსრულებად სიხარულსა მას ქორწილისასა განმზადებულნი შჯულითა[11] მით, ვითარცა წესი არნ[12] შარავანდედთაჲ.

---

* **Խորագիր.** წამებაჲ წმიდისა რიფსიმესი და გაიანესი და მოყუასთა მისთაჲთა (ა მისთაჲ) A; წამება წმიდათა ქალწულ-მოწამეთა რიფსიმე და გაიანესი და მოყვასთა მათთასა C.

I 1 და] C 2 ოდეს C 3 გამომხატველნი 4 წარბთა AC 5 მსგავსად] C 6 მოიყვანონ C.

II 1 ჰრომს C 2 საწყდობელი C 3 განშორებული C 4 თესლისა C 5 მორწმუნენი] მოღვაწენი C 6 რომელთასა A 7 მსახურთა AC.

III 1 მიიწივნეს C 2 მძლავრნი] მთავარნი C 3 დაუკჳრდა A; დაუკვირდათ C 4 და დასულბეს] C 5 შუენიერებასა] შუჱნიერებასა მას ზედა A; შვენიერება C 6 მისისა C 7 ფიცარსა A 8 და] A 9 + იგი C.

IV 1 იხილაჲ A 2 შუჱნიერებაჲ A; შვენიერება C 3 აღიმღურა C 4 დასულბაჲ A 5 სიხარულისა AC 6 მას C 7 აღსრულებად] A (ა-ն *վերականգնում է*) 8 სოფლისა C 9 მოაწჳა A, მოიწვია C 10 მოიწივნენ C 11 სჯულითა C 12 არს C.

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵԻ ԵՎ ԳԱՅԱՆԵԻ ՈՒ ՆՐԱՆՑ ՄՏԵՐԻՄՆԵՐԻ

I (§ 137) Եվ այդ իսկ ժամանակներում կին էր փնտրում Դիոկղետիանոս կայսրը. [նա] իր տերության բոլոր կողմերը տախտակների վրա հասակաչափ ճշգրիտ պատկերահաններ ուղարկեց, որպեսզի ինչպիսին էլ լինի հասակը, երեսի գեղեցկությունը և հոնքերի նկարենը՝ [պատկերեն] նրա բարետեսությանը համանման, ով էլ նա լինի, և տանեն նրան։

II (§ 138) Այդ ժամանակ Հռոմեից քաղաքում կույսերի մի արգելավանք գտան՝ ամեն ինչից հեռացած, ընդեղենով սնվող, զգոն ու անբիծ, Քրիստոսի հանդեպ հավատացյալ ու սուրբ կանայք, որոնք օր ու գիշեր և ամենայն ժամ փառք ու գովք էին հղում աստծուն։ Եվ աստված լսում էր նրանց աղոթքն ու ողորմած դառնում նրանց հանդեպ։ Նրանց գլխավորի անունը Գայանե էր, իսկ նրա սանը՝ աստվածապաշտների դուստր, որի անունն էր Հռիփսիմէ։

III (§ 139) Երբ առաջացան բռնացողները և մտան այս սրբոց-քաջակրոնների կացարանը՝ տեսան Հռիփսիմեի վայելչությունը, զարմացան ու սքանչացան նրա հասակի գեղեցկությամբ, պատկերեցին նրան տախտակների վրա և հասցրին կայսեր առաջ։

IV (§ 140) Երբ տեսավ Հռիփսիմեի գեղեցկությունն ու վայելչությունը, մոլեգնեց տռփողական ցանկությամբ և ոգևորվեց բաղձանքով. ուրախության ժամ տվեց և ջերմեռանդորեն փութաց հարսանեկան ուրախություն կատարել։ Այն ժամանակ առաքյալներ ուղարկեց դեպի բոլոր աշխարհներ և բոլորին հրավիրեց՝ ընծայատարությամբ։ Արդ, [հրավեր] ընկալածները թող շտապեն հասնել հարսանիքի ուրախություն կատարելու՝ պատրաստված այն օրինությամբ, ինչպես թագակիրների ծեսն է։

V ვითარცა იხილნეს[1] მჴნეთა მათ იდუმალ ტყორცებულნი იგი ისარ-ნი ეშმაკისანი, რამეთუ ვითარცა-იგი იდუმალ ჩუეულებაჲ[2] აქუს ტყორცებად წმიდათა მიმართ ქრისტესთა, ცხადადცა ჭურჭელ უკეთურებისა[3] პოვა მეფე იგი, ვითარცა სამოთხესა მას საჭედარ იყო[4] გუელი[5] იგი და აცთუნა დედაკაცი იგი პირველი, ეგრე[6] სახედ აწ მეფე ესე უკეთური გუთუფარ[7] იყო[8] და მით ჰბრძავს ეკლესიათა და მსახურთა ღმრთისათა.

VI ხოლო მეფე იგი განლაღნა[2] და აღჰყვა[2] ამპარტავანებასა, რამეთუ აზრზენდა მას ეშმაკი, და აღადგინა დევნაჲ დიდი ეკლესიათა ზედა ღმრთისათა და ინება თაყუანის-ცემად გამოხატულთა უსულოთა ჟნდოთა ოქროჲსათა, ცუდთა მათ ძელისა და ქვისათა[3] და ბილწსა მას სამსახურებელსა.

VII ხოლო ნეტარი იგი გაიანე სიწმიდით-ზრდილისა მის რიფსიმეთურთ[1] და სხჳთ მოყუსებითურთ მოიჴსენა აღთქუმაჲ[2] იგი სიწმიდისაჲ და წესებისა მის[3] მსახურებისაჲ, მღჳძარე იყვნეს სიწმიდისათჳს[4], გოდებდეს და ტიროდეს გამოხატვისა მისთჳს მეფისა მიერ, იურვოდეს, ილოცვიდეს და ითხოვდეს მრავალმოწყალისა ღმრთისაგან[5], რაჲთა შეეწიოს და იჴსნნეს იგინი განსაცდელისა მისგან, რომელ[6] მოწევნულ იყო მათ ზედა. ილოცვიდეს და იტყოდეს ესრეთ:

VIII „უფალო უფალთაო და ღმერთო ღმერთთაო, ღმერთო საუკუნეო[1], ღმერთო[2] ცათაო, რომელი დამკჳდრებულ ხარ ნათელსა მაგას შინა[3] შეუხებელსა, რომელმან განამტკიცენ ყოველნი სიტყჳთა შენითა, რომელმან შეჰქმენ ცაჲ და ქუეყანაჲ[4] და ყოველი სამკაული მათი, რომელმან შეჰქმენ კაცი მიწისაგან და გონიერად დაადგინე იგი ყოველსა ქუეყანასა ზედა, და შემწე ექმენ[5] ყოველთა, რომელნი გესვიდეს[6] შენ."

IX „შემეწიენ ჩუენცა, უფალო, ღუაწლსა ამას შინა, რომელი გუბრძავს ჩუენ, რაჲთა ვსძლოთ მტერსა მას[1] და ზაკულებასა[2] ეშმაკისასა[3], რაჲთა სახელი შენი, უფალო, იდიდოს და რქაჲ ეკლესიისა შენისაჲ[4] ამაღლდეს, რაჲთა ჩუენ მყოფ ვიყვნეთ სასუფეველსა შენსა მცნებისა შენისა[5] დამარხვითა. და ნუ მოაკლდებინ ზეთი სანთელთა ჩუენთა[6] და ნუმცა დაშრტებიან სანთელნი სარწმუნოებით აღთქუმისა სიწმიდისა ჩუენისანი, და ნუმცა გუეწევის ბნელი იგი დამაბნელებელი და წარმწყმედელი განათლებულთა გზათა[7] ჩუენთა, და ნუმცა გარდააქცევენ ფერჴნი ჩუენნი ბრწყინვალეთაგან ალაგთა შენთა, და ნუმცა დაბრმდებიან გუგანი თუალთა ჩუენთანი ხილვისაგან მღჳძარებისა და ბრწყინვალისა

V 1 იხილეს C 2 ჩუჳულებაჲ A; ჩვეულება C 3 უკეთურებისა] ეშმაკისა C 4 სახედარ ჰყო C 5 გუწლი A; გველი C 6 ეგრეთვე C 7 გუთუფარ] C 8 ჰყო C.

VI 1 განლაღნა C 2 აღიყვანა C 3 ქვისაჲთა A.

VII 1 რიფსიმესთვის C 2 აღთქმა C 3 წესისაებრ ღმრთის C 4 სიწმიდისა A (Ա-ն վերականգնում է) 5 მრავალმოწყალისაგან ღმრთისა C 6 რომელი C.

VIII 1 საუკუნო ღმერთო C 2 ღმერთო] C 3 შინა] C 4 ქუეყანა A; ქვეყანა C 5 +შენ C 6 გესვენ A.

IX 1 მას მტერსა C 2 ზაკულებაჲსა A 3 ეშმაკისასა] მწერისასა C 4 შენისა AC 5 შენისა] A (Ա-ն ունի) 6 შენთა A(Ա-ն ուղղում է) 7 გზაჲთა A

V (§ 141) Քաջակորովները տեսան սատանայի գաղտածածուկ նետերը, որ [նա] սովորություն ունի ծածուկ նետել դեպի Քրիստոսի սրբերը, [իսկ այժմ]՝ բացեիբաց էլ չարի գործիք գտավ թագավորին: Ինչպես որ դրախտում անդրավար էր օձը և մոլորեցրեց առաջին կնոջը, այդպես էլ այժմ այս չար թագավորը երեսի վահանակ էր, և [սատանան] նրանով էր կռվում եկեղեցիների ու աստվածապաշտների հետ:

VI (§ 142) Իսկ թագավորը հպարտացավ ու լցվեց ամբարտավանությամբ, քանի որ նրան հրահրում էր սատանան, և մեծ հալածանք սկսեց աստծո եկեղեցիների հանդեպ. ու անշունչ, անարժան ոսկեղեն, սին փայտեղեն և քարեղեն պատկերների և պիղծ պաշտաման երկրպագություն կամեցավ:

VII (§ 143) Մինչդեռ երանելին այն Գայանե, իր սրբասուն Հռիփսիմեի և այլ մտերիմների հետ հիշեց սրբության և ծեսերի պաշտաման այն ուխտը, զգաստացած ի սրբություն՝ ողբում ու լալիս էին թագավորի կողմից իրենց պատկերման համար, թախանձում, աղոթում ու խնդրում էին ամենագութ աստծուն, որպեսզի օգնի և փրկի իրենց այդ փորձությունից, որ հասել էր նրանց: Աղոթում էին և ասում այսպես.

VIII (§ 144) «Տեր տերանց և աստված աստվածոց, աստված հավիտենական, աստված երկնից, որ բնակված ես անմատչելի լույսի մեջ, որդ հաստատեցիր ամենայն ինչ քո Բանով, որդ արարեցիր երկինք և երկիր ու նրանց ամենայն զարդ, որդ ստեղծեցիր մարդուն հողից և բանական դարձրիր նրան ողջ երկրի վրա և օգնական եղար բոլորին, ովքեր ի քեզ հուսացին:

IX (§ 145) Մեր դեմ կռվող այս նեղության մեջ, տեր, օգնիր և մեզ, որպեսզի հաղթենք թշնամուն և սատանայի խարդավանքին, որպեսզի քո անունը, տեր, փառավորվի, և բարձրանա քո եկեղեցու եղջյուրը, որպեսզի մենք արժանանանք քո արքայությանը՝ քո պատվիրանը պահելով: Թող չպակասի մեր լապտերների ձեթը և ոչ էլ հանգչեն մեր հավատով ուխտի սրբության ճրագները, և ոչ էլ հասնի մեզ մթամածող ու մեր լուսավոր ճանապարհները կործանող խավարը, և ոչ էլ սայթաքեն մեր ոտները քո լու-

ჭეშმარიტებისა შენისა, და ნუმცა[8] აღჰკრებს მფრინველი თესლსა მას ცხორებისასა, რომელ დასთესა ჩუენ შორის ძემან შენმან მხოლოდ შობილმან უფალმან ჩუენმან[9] იესუ ქრისტემან, და ნუმცა მიგჳღებს მღჳძარებასა წმიდისა ამის სამწყსოჲსა შენისასა განდგომილი იგი, და ნუმცა მიგუტაცებს კრავსა სამწყსოჲთ შენით აღთქუმულთა ამათგან განმრყუნელი იგი მგელი[10], რამეთუ ვართ სამწყსონი სამოციქულოჲსა ეკლესიისა წმიდისანი“.

X „უფალო ღმერთო ჩუენო, რომელმან მოავლინე მხოლოდ შობილი ძე შენი, რომელი მოვიდა და განავსნა ყოველნი ცის-კიდენი სულითა მეცნიერებისაჲთა, რაჲთა ყოველთა ერქუას სახელი ისრაჱლ, რომელი გამოითარგმანების ღმრთის-მხილველ, და ჩუენ გუესმა[1], რამეთუ თქუა[2]: დაღათუ გდევნიდენ[3] თქუენ ქალაქითი-ქალაქად, ვერ დაასრულოთ ქალაქები ისრაჱლისაჲ მოსლვადმდე ჩემდა.“

XI „და აწ, უფალო, მოგუხედენ ჩუენ, რომელნი გევედრებით შენ, რაჲთა არა შევიგინნეთ უშჯულოვებითა და ბილწებითა წარმართთაჲთა, და ნუ მისცემ განსარყუნელად სიწმიდესა ჩუენსა როსკიპთაებრ, რომელნი[1] შეკბენულ[2] არიან ძაღლთაგან უგულისჴმოთა; და ნუ მისცემ მარგალიტსა ამას სიქალწულისასა დატკებნად ღორთა; და ნუმცა წარგურღუნის სისასტიკებაჲ წყალთა მრავალთაჲ[3], და ნუმცა შემსულებს ჩუენ ქარი იგი ბორბალად მავალი; და ნუმცა შესძრავს[4] საძირკუელსა წმიდისა ეკლესიისასა, რომელი მრავალთა მართალთა აღაშენეს ზედა ლოდსა მას მყარსა, რომლისა თავ აღსრულების იქმნა უფალი ჩუენი იესუ ქრისტე განკაცებითა მით და სისხლთა დათხევითა მით სიკუდილითა[5] და აღდგომითა და ამაღლებითა მით ზეცად, და დაჯდომითა მით მარჯუენით ღმრთეებისა შენისა, რომელი-იგი წინავე იყო შენ თანა“.

XII „და აწ, უფალო, მოიხილე ზეცით სიწმიდისა შენისაგან, და ნუმცა ვიყოფვით ვითარცა სახლი იგი, რომელი ქჳშასა[1] ზედა დაშენებულ[2] იყო, რომელსა ვითარცა[3] ეცნეს ქარნი,[4] დაემჴუა; და იყო დაცემაჲ იგი მისი დიდ. არამედ განმამტკიცენ ჩუენ ჭეშმარიტებითა და სახარებითა მით მშჳდობისაჲთა, და მიძღოდე ჩუენ ნებითა შენითა, და ღირს მყვენ ჩუენ ხუთთა მათ თანა ქალწულთა, რომელთანი არა დაუშრტეს[5] სანთელნი მათნი ქორწილსა მას, და ღამესა ვითარცა დღისი გჳძღოდე გამობრწყინვებასა ჩუენ ზედა პირისა შენისასა დიდებითა. დამიფარენ ჩუენ საფარველსა ფრთეთა შენთასა, რაჲთა ჩუენცა ღირს ვიქმნნეთ[6] მიწევნად განსასუენებელსა ნებისა შენისასა, და ღირს მყვენ ჩუენ, რაჲთა შევსუათ სასუმელი სიმჭნისაჲ და რაჲთა მოვიღოთ გჳრგჳნი[7] დღესა მას მართლისა საშჯელისა შენისასა, რაჟამს გამოსჩნდე დიდებით.“

---

8 ნუცა A 9 უფალმან ჩუენმან] C 10 მგელი] A (A-ն վերականգնում է); მგელი იგი განმრყუნელი C.

X 1 გუწმაჲ A; გვესმა C 2 რამეთუ თქუა] C 3 გდევნენ C.

XI 1 რომელმან (რლნ) C 2 შეკბენილ C 3 მრავალთა AC 4 შესძრავნ C 5 მით სიკუდილითა] მოსიკუდილითა A.

XII 1 ქჳშა A; ქვიშასა C 2 დაშენებულ] დაფუძნებულ C 3 ვათარცა] C 4 + და C 5 დაშრტეს C 6 ვიქმნეთ C 7 გვირგვინნი C.

սաշող շավիղներից, և ոչ էլ կուրանան մեր աչքերի բիբերը՝ արթնության ու քո պայծառ ճշմարտությունը տեսնելուց, և ոչ էլ հավքը ժողովի կենաց այն սերմը, որ մեր մեջ ցանեց միածին որդիդ՝ տերն մեր Հիսուս Քրիստոսը, և ոչ էլ ապստամբը մեղանից առնի քո հոտի սուրբ զգաստությունը, և ոչ էլ քո ուխտյալ հոտի գառին հափշտակի ապականիչ գայլը, քանի որ հոտ ենք առաքելական սրբազան եկեղեցու։

*X (§ 146) Տեր աստված մեր, առաքողդ քո միածին որդուն, որը եկավ ու ողջ տիեզերքը լցրեց իմաստության հոգով, որպեսզի ամենք Իսրայել անունով կոչվի, որ մեկնաբանվում է՝ աստվածատես։ Եվ մենք լսեցինք, որովհետև ասաց. «Թեպէտ հալածեսցեն զձեզ քաղաքէ ի քաղաք՝ ոչ կարասջիք սպառել զքաղաքս Իսրայէլի ցգալն իմոյ»**։*

XI (§ 147) Եվ արդ, տե՛ր, խնայիր մեզ՝ քեզ աղաչողներիս, որ չանարգվենք հեթանոսների անհավատությամբ ու պղծությամբ։ Եվ մի՛ տուր խառնակության մեր սրբությունը՝ իբրև անառակների, որոնք վարակված են անմիտ շներից, մի՛ տուր կուսության մարգարիտը խոզերին կծոտման, և ոչ էլ հեղեղիր բազում ջրերի սաստկությունը մեր հանդեպ, և թող ոչ էլ հարի մեզ գալարեկ հողմը, և ոչ էլ շարժվի սուրբ եկեղեցու հիմքը, որ բազում արդարներ շինեցին հաստատ վեմի վրա, իսկ գլուխ ավարտին մեր տեր Հիսուս Քրիստոսը եղավ՝ մարդեղացմամբ ու արյան մահացու հեղմամբ, հարությամբ ու համբարձմամբ դեպի երկինք, աստվածությանդ աջ կողմը նստելով, որը և առաջ իսկ քեզ մոտ էր։

XII (§ 148) Եվ արդ, տե՛ր, հայի՛ր երկնի քո սրբությունից, և չդառնանք այն տան պես, որը ավազի վրա էր կառուցված, [իսկ] երբ հողմերը դիպան՝ խորտակվեց. և մեծ էր նրա այդ փլուզումը։ Այլ հաստատի՛ր մեզ ճշմարտությամբ ու խաղաղության Ավետարանով և առաջնորդիր մեզ ըստ քո կամքի, արժանի արա մեզ այն հինգ կույսերի հետ, որոնց մոտ չհանգեցին հարսանեկան իրենց ճրագները, և գիշերն իբրև ցերեկվա՝ հղի՛ր մեզ վրա ճառագայթումդ՝ երեսիդ փառքով։ Պահպանիր մեզ քո թևերի հովանու տակ, որպեսզի մենք էլ արժանանանք հասնելու քո կամքի հանգրվանին, և արժան արա մեզ, որ ըմպենք նահատակության բաժակը, որպեսզի քո արդար դատաստանի օրը պսակ առնենք, երբ հայտնվես փառքով»։

---

* *Հմմտ. Մատթ. ժ, 33։*

XIII და ამისა შემდგომად წმიდაჲ იგი გაიანე და რიფსიმე უბიწოდ[1]-კრებულითა მით მოყუსებითურთ წარმოვიდეს ოტებულნი, რაჲთა თავნი თჳსნი წმიდად დაიმარხნენ ბილწთა მათგან და უკეთურთა და შებღალულთა მათგან უშჯულოებისათა, რაჲთა უფროჲსი სასოებაჲ დასდვან[2] ცხორებისა მის მიმართ საუკუნოჲსა მოწამეთა თანა, რომელნი ღირს იქმნნეს[3] მოღებად გჳრგჳნისა, რაჲთა განერნენ განმზადებულთა მათ სატანჯველთაგან და ღირს იქმნნენ მარჯუენით მდგომარეთა მათ თანა, რომელთათჳს აღთქუმულ არიან[4] დაუჭნობელნი გჳრგჳნნი, შემკულნი ხუთთა მათ თანა ქალწულთა ბრძენთა[5], საქმითა კეთილითა განათლებულნი შუენიერებასა მას შინა სამოთხისასა სიძისა მის თანა სამარადისოჲსა ზოგად კრებასა[6] მას მართალთასა, წიაღთა[7] მათ აბრაჰამისთა, მოუკლებელთა მათ სიხარულთა, რაჲთა იყვნენ ზიარ, ვითარცა-იგი უფალმან თქუა[8], ვითარმედ: „რომელმან დაუტეოს სამკჳდრებელი თჳსი სახელისა ჩემისათჳს, მერმესა მას მოსლვასა ჩემსა ცხორებაჲ საუკუნოჲ დაიმკჳდროს[9]." არა თუ საწუთროჲსა ამის სიკუდილისაგან[10] ვივლტით, არამედ შეგინებისაგან უშჯულოჲსა მის, და არა თუმცა ჴორცნი ჩუენნი არა მივსცენით[11] ტანჯვად, არამედ რაჲთა არა დაითრგუნოს სიწმიდე ჩუენი და რაჲთა წმიდად და შეუგინებელად სულნი ჩუენნი განვირინნეთ[12] უშჯულოჲსა მის და ბილწისა შემაგინებელისა კაცისაგან. ამისთჳს მივსცნეთ თავნი ჩუენნი ჭირსა და ტანჯვასა, კრულებასა და სიკუდილსა სახელისათჳს უფლისა ჩუენისა, რაჲთა მოვიღოთ სიმართლისა იგი გჳრგჳნი. ამისთჳს დაუტევებთ[13] ქუეყანასა ამას, რომელსა ვიშვენით, ნაყოფსა, მონაგებთა[14] და მახლობელთა თჳსთა[15] მათ და ტომთა სიტყჳსაებრ უფლისა, რომელ ჰრქუა მოციქულთა, ვითარცა მათ მღჳძარეთა თანა განწესებულთა შრომითა სიმჴნისაჲთა[16], რაჲთა ღმერთი ვიხილოთ".

XIV მას ჟამსა წარმოემართნეს და მოიწინეს[1] ქუეყანასა მას სომხეთისასა[2], არარატად სოფლად, ვალენშია ქალაქად[3], რომელსა ჰრქჳან ნოროქალაქი[4], საყოფელსა მას მეფეთა სომხეთასა. და შევიდეს და იყოფვოდეს სასაწნეხლეთა[5] მათ, რომელნი-იგი იყვნეს შორის ვენაჴოვანსა მას მზის[6] აღმოსავალით[7] კერძო. და იზარდებოდეს სყიდით ვაჭართაგან მის ქალაქისათა, და არარაჲ აქუნდა მათ თანა, გარნა ერთი მათგანი იყო მემანე და იქმოდა მძივსა მანისასა და ურეწვიდა მათ როჭიკსა დღისასა.

XIII 1 უბიწოჲთა C 2 დადვან C 3 იქმნეს C 3 რომელთა A (a-ն վերականգնում է) 4 არს AC (a-ն ուղղում է) 5 ბრძენთა] A; (a-ն վերականգնում է) 6 კრებულსა C 7 სიმჴნეთა A (a-ն ուղղում է) 8 სთქუა C 9 დაიმკჳდროჲს A; დაიმკვიდროს C 10 სიკუდილისაგან] სიკვდილისაგან C 11 მივსცნეთ C 12 განვარინნეთ C 13 დაუტეობთ C 14 მონაგებსა C 15 თესლთა A 16 სიმჴნისათა A; სიმხნეთა C.

XIV 1 მოიწევნეს C 2 სომხითისასა AC 3 ქალაქად] ქუეყანად C 4 ნოროქალაქი AC (a-ն ուղղում է) 5 სასაწნეხელთა C 6 მზისა C 7 აღმოსლვით A (a-ն ուղղում է)։

XIII (§ 149) Այնուհետև սուրբն այն Գայանե և Հռիփսիմեն, պարկեշտաժողով ընկերներով հանդերձ, փախստական ճամփա ընկան, որպեսզի իրենց անձը անարատ պահեն այն պիղծերից ու չարերից, այն անօրեն [մեղա]թաթախներից, որպեսզի առավել հուսան դեպի հավիտենական կյանքը՝ վկաների մոտ, որոնք պսակ ընդունելու արժանի եղան, որպեսզի փրկվեն պատրաստված տանջանքներից և [տիրոջ] աջակողմյան գտնվողների հետ [լինելու] արժանանան, որոնց համար անթառամ պսակներ են խոստացված, զարդարած՝ այն հինգ կույսերի հետ, բարի գործով լուսավորյալ՝ դրախտի վայելչության մեջ, հավիտենական փեսայի մոտ՝ արդարների հանրաժողովում, Աբրահամի գրկում՝ ուրախությունից անպակասների հետ, որպեսզի մասնակից լինեն, ինչպես տերն ասաց, թե «Ով թողցէ զբնակութիւն իւր վասն անուան իմոյ՝ ի միւս [անգամ] գալստեան իմում զկեանս յաւիտենական ժառանգեցուցից նմա»։*

«Ոչ թե անցավոր կենաց մահվանից ենք փախչում, այլ այն անօրենի անարգումից, ոչ թե մեր մարմինները տանջանքի չհանձնելու [համար], այլ որպեսզի չաղտեղվի մեր սրբությունը և որպեսզի մեր հոգիները սրբությամբ ու առանց աղտեղության պահենք այդ անօրեն ու պիղծ, անարգող մարդուց։ Ուստի մեր անձը հանձնում ենք նեղության ու տանջանքի, կապանքի ու մահվան՝ հանուն մեր տիրոջ, որպեսզի արդարության պսակ առնենք։ Այդու՝ թողնում ենք այս երկիրը, ուր ծնվեցինք, ինչքը, ունեցվածքներն ու մեր մերձավորներին, տոհմակիցներին՝ տիրոջ խոսքին համապատասխան, որ ասաց առաքյալներին՝ որպես քաջության չարչարանքով այն զգոնների հետ կարգվածների, որպեսզի աստծուն տեսնենք»։

XIV (§ 150) Այն ժամանակ ուղևորվեցին և եկան հասան Հայոց երկիրը՝ Արարատ աշխարհ, Վաղարշապատ քաղաքը, որ Նորաքաղաք են կոչում, Հայոց թագավորների նստավայրը։ Մտան ու կենում էին այն հնձաններում, որոնք գտնվում էին այգեստանի մեջ՝ արևելյան կողմում։ Կերակրվում էին այդ քաղաքի վաճառականներից գնածով և իրենց հետ ոչինչ չունեին, բայց մեկը նրանցից ապակեգործ էր և ապակե ուլունքներ էր պատրաստում ու հայթայթում նրանց՝ օրվա ռոճիկով։

* *Համտ. Մատթ. ԺԹ, 28—29։*

XV მას ჟამსა არა[1] მცირედ რაჲ[2] ამბოხი იქმნა სოფელსა მას იონთასა, ადგილად-ადგილად მეძიებელნი წარავლინნა, მოციქულნი თრდატ მეფისანი. და შეემთხჳნეს მოციქულნი ნორქალაქსა. და ვითარცა მიუპყრეს წიგნი, მოიღეს ჴელთა მათთაგან[3] სიხარულით, რომელსა წერილ იყო ესრეთ:

XVI „უძლეველი დიოკლიტიანე კეისარი საყუარელსა ძმასა და საყდრის[1] მოდგამსა[2] ჩემსა თრდატს გიკითხავ!"

XVII „უწყებულ იყავნ[1], ძმაო, ძჳრისა[2] მისთჳს, რომელ შეგუემთხუევის[3] ჩუენ[4] მარადის მაცთურისა ამის ნათესავისა ქრისტეანეთაჲსა[5], რამეთუ ყოველსა ჟამსა გინებულ არს უფლებაჲ ჩუენი მათ გამო და არა თუ სიმტკიცე (!) რაჲმე არს მათ თანა, რამეთუ იგინი[6] მომკუდარსა ვისმე ჯუარცუმულსა ჰმსახურებენ და ძელსა თაყუანის-სცემენ და ძუალთა მკუდართასა ჰმსახურებენ[7]. და თჳსი სიკუდილი არად შეურაცხიეს ღმრთისა მათისათჳს[8], არამედ დიდებად და პატივად შეურაცხიეს[9]. და ჩუენთა ამათგან სამართალთა განშორებულ არიან, რამეთუ წინათა მათ მამათა ჩუენთა მეფეთა მოაწყინეს, და მახჳლნი ჩუენნი დაბრყჳლდეს[10]. და იგინი არა შეშინდეს სიკუდილისაგან. და შეცთომილ არიან კუალსა ჰურიაჲსა[11] ერთისა ჯუარცუმულისასა და უფლებასა ამას შეურაცხ-ჰყოფენ და ღმერთთა ამათ მსახურებასა არა თავს-იდებენ".

XVIII „და დიდი ნათელი მზე და მთოვარე და ბრწყინვალენი ვარსკულავნი ღმრთად არად[1] შეურაცხიან და დაბადებულით ხადიან[2] და იტყჳან, ვითარმედ შეუქმნიან იგინი ჯუარცუმულსა მას. და სოფელი ყოველი მიიქციეს[3] და მსახურებაჲ ღმრთთაჲ დააყუდნეს[4], ვიდრემდის[5] ცოლნი ქმართაგან და ქმარნი ცოლთაგან[6] ცოცხლივ განაშორნეს. დალათუ პირად-პირადი ტანჯვაჲ მათ ზედა მოვაწინეთ, უფროჲსღა განმტკიცნებიან ქრისტეანეობასა ზედა. დალათუ შიში დიდი მათ ზედა მოვაწიე[7], დათხევამან სისხლთა მათთამან მრავალნი მათ თანა[8] მიაქცინა.

XIX „და უფროჲსად ესე გიკჳრდინ, რამეთუ ქალსახლისი ჩუენი ქმნულკეთილი, რომელი ზრდილ იყო მათ თანა, და მინდა მისი ცოლებაჲ[1], და იგიცა მი-ვე-იქციეს[2] და წარიყვანეს. და არა შეიშინეს, რაჲთამცა აღასრულეს ნებაჲ მეფისაჲ[3]. და თქუმულნი ჩემნი შეურაცხ-ყვნეს[4], არამედ უფროჲსღა აღთქუმისა მათისათჳს ბილწად და საძაგელად შეპრაცხეს და დედამძუძითურთ[5] წარიყვანეს და მიიპლტოდეს უფლებასა მაგას შენსა".

XV 1 არა] A 2 რაჲ] C 3 მათგან C.
XVI 1 საყდრისა C 2 მდგომსა C.
XVII 1 იყავ A 2 ძჳრისა C 3 მოვალს A; შეგვემთხვევის C 4 + ზედა a 5 ქრისტიანეთასა AC 6 იგი A 7 და ძელსა... ჰმსახურებენ] C 8 მათისათჳს] მათისა თანა C 9 შეურაცხიეს] C 10 დააბრყოლნეს C 11 ჰურიისა A; ჰურიათასა C.
XVIII 1 არა C 2 ჰხადიან C 3 მიიქცეს C 4 დააყუდეს C 5 ვიდრემდის] ვითარცა (ვ˝ა) C 6 და ქმარნი ცოლთაგან] C 7 მოვაწივნეთ C 8 მათ თანა] მათა A.
XIX 1 ცოლობაჲ C 2 მიიქციეს C 3 მეფისა AC 4 -ჰყვეს C 5 დედამძუძითურთ C 6 უფლებაჲსა A.

XV (§ 151) Այդ ժամանակ ոչ սակավ ինչ շփոթ եղավ Հունաց աշխարհում. [կայսրը] այս ու այնտեղ որոնողներ ուղարկեց, դեսպաններ՝ Տրդատ թագավորի մոտ։ Դեսպանները [նրան] հանդիպեցին Նորաքաղաքում։ Եվ երբ մատուցեցին հրովարտակը՝ ուրախությամբ առան նրանց ձեռքերից, որի մեջ գրված էր այսպես.

XVI (§ 152) «Անհաղթ կայսր Դիոկղետիանոս. իմ սիրելի եղբայր և գահակից Տրդատին ողջույն եմ հղում.

XVII (§ 153) Տեղյակ եղիր, եղբա՛յր, այն չարության, որ միշտ գալիս է մեզ քրիստոնյաների մոլար ցեղից, քանի որ մեր տերությունն ամենայն ժամ պարսավյալ է նրանց կողմից, և ոչ իսկ նրանց մոտ որևէ համեստություն կա, քանի որ նրանք ոմն խաչյալ մահացածի են պաշտում, փայտի երկրպագում ու մեռյալների ոսկորներ պաշտում։ Իսկ իրենց մահը առ ոչինչ են համարում՝ հանուն իրենց աստծո, այլև փառք ու պատիվ են համարում։*

Նրանք հեռացած են մեր օրենքներից, ուստի մեր նախնի հայր թագավորներին դառնացրին։ Մեր սրերը բթացան, և նրանք չվախեցան մեռնելուց։ Մի խաչված հրեայի հետքով են մոլորվել և արհամարհում են այս տերությունն ու [մեր] աստվածները պաշտելուն չեն ենթարկվում։

XVIII (§ 154) Մեծ լույս արևը, լուսինն ու պայծառ աստղերը ոչինչ աստված են համարում, ստեղծված կոչում և ասում, թե խաչյալն է նրանց արարել։

Ողջ աշխարհը դարձի բերին և աստվածներին պաշտելը դադարեցրին, նույնիսկ կանանց ամուսիններից և ամուսիններին կանանցից կենդանության օրով բաժանեցին։ Թեպետ տեսակ-տեսակ տանջանք հասցրինք նրանց, [բայց] առավել ևս հաստատվում են քրիստոնեության հանդեպ. Թեկուզ նրանց վերաբերմամբ մեծ արհավիրք գործադրեցի, [սակայն] դրանց արյան հեղեղումը շատերին նրանց [կողմը] դարձրեց։

XIX (§ 155) Եվ առավել այսու զարմացիր, թե մեր գեղեցիկ տանու օրիորդին, որ նրանց սննդակիցն էր և որին կնության էի ուզում, նրան ևս դարձի բերին ու տարան։ Եվ չսարսեցին նրանք՝ գոնե թագավորի կամքը կատարելու. իմ ասածները [ոչ միայն] արհամարհեցին, այլև դեռ ավելին՝ իրենց ուխտի համար պիղծ ու զարշելի համարեցին և դայակով հանդերձ տարան ու փախան քո տերությունը։

* Բնագրում՝ հաստատություն։

XX „აწ გულს-იდგინე, ძმაო ჩემო, და სადაცა[1] იყვნენ, მოიძინენ[2] და მისთანანი იგი დედამძუძითურთ სიკუდილით[3] აღასრულენ. და შუენიერი[4] იგი და მისებრ არა ყოფილი ჩემდავე მოაქციე[5]. უკუეთუ არა და შენდა რაჲმე სათნო გიჩნდეს ქმნულკეთილობაჲ იგი მისი, შენდა საჭმარ იყავ, რამეთუ არავინ იპოვა მსგავსად ქმნულკეთილობისა მისისა შორის ფრომინთა"[6].

XXI და ვითარცა წარიკითხა ჰროვარტაკი[1] იგი, ბრძანებაჲ მისცა მეფემან დიდითა სასტიკებითა მცნებისაჲთა[2], რაჲთა ყოველთა ადგილთა, უფლებისა მისისათა მსწრაფლ ეძიებდენ. მოციქულნი წარავლინნა ადგილად-ადგილად, რაჲთა ვითარცა პოვონ,[3] ადრე მოაწიონ მისა,[4] და რომელმან პოვოს[5] ნიჭსა და პატივსა დიდსა აღუთქუმიდა.

XXII და ვიდრე-იგი ძებნა[1] იყო მათთჳს სოფელსა მას საზღვრითი-საზღვარად,[2] წმიდანი[3] იგი მოსრულ იყვნეს და დამალულ საყოფელსა მას მეფეთასა, დამალულ მისვე[4] მეფისაგან ვალენშეა[5] ქალაქსა. და შემდგომად მცირედთა დღეთა იპოვნეს და გამოჩნდეს.[6]

XXIII რამეთუ არა ეგებოდა დამალვად ჭეშმარიტთა მათ მჴნეთა მოწამეთა[1], და არცა სანთლისა მის დადგომაჲ ქუეშე[2] ჴჳმირსა, და არცა დაფარვად აჩრდილსა ქუეშე[3] გარდართულთა მათ სასაწრეხლეთა[4] შინა არამედ ზედა ოქროჲსა სასანთლეთა[5] შემკულნი, და ოქროჲსა სასანთლეთა[6] ზეთსა სიპოხისასა და სულნელებისასა[7] სარწმუნოებითა და სიმართლითა აღჭურვილნი, ნათლითა ბრწყინვალედ გამოჩინებულნი, ვითარცა-იგი წინავე ილოცვიდეს, და ვითარცა-იგი უფალმან ჰრქუა თჳსთა მათ მოყუარეთა, რაჲთა „ჰხედვიდენ საქმეთა თქუენთა კეთილთა და ადიდებდენ მამასა თქუენსა ზეცათასა".

XXIV იხილეთა[1] აწ, რამეთუ კეთილის-მოქმედნი ჭეშმარიტმან ძემან ღმრთისამან არა იძაგნა[2] თანამკჳდრ-ყოფად სამკჳდრებელსა თჳსსა თჳსნი იგი მოყუარენი და მსახურნი? რომელ ბუნებით ძე არს, ადრე-ადრე მიიზიდნის მისა[3] თჳსნი იგი მცნებისა დამმარხველნი, გარნა ვიმარხავთ[4] ხოლო მცნებათა მისთა, და ვითარცა მარგალიტნი პატიოსანნი გამოვჩნდეთ, სიხარულით მივისწრაფოთ განმზადებულსა[5] პატივსა[6] მას სამეუფოსა სასუფეველსა შინა და[7] გამოვჩნდეთ[8] აქაცა პატიოსანნი ბრწყინვალედ წარმართთა ამას სოფელსა სომხეთისასა,[9] რომელთა დიდებისა და ღმრთისმსახურებისა წილ აღუვსებიეს[10] სოფელი ესე კერპებითა.

XX 1 სადაც C 2 მოიძიენ C სიკუდილითა C 4 შუქნიერი A; შვენიერი C 5 მოაწიე A 6 შორის ფრომიანთა] C.

XXI 1 ჰროვარტაკი] წიგნი C 2 მცნებისათა A; მცნებისათჳს C 3 ჰპოვონ C 4 მისსა C 5 ჰპოვოს C.

XXII 1 ძიება C 2 საზღვრადმდე C 3 წმიდანი] წინა(!) C 4 მასვე C 5 ვალეშია C 6 გამოსჩნდეს C.

XXIII 1 მოწამეთაჲ A 2 ქუქშე A; ქვეშე C 3 ქუქშე (?) A 4 საწნეხელთა C 5 სასანთლესა C 6 შემკულნი... სასანთლეთა] C 7 სუნნელებისასა C.

XXIV 1 იხილეთღა Q; იხილეთაა C 2 მოიძაგნა Q 3 მისსა CQ 4 გამოვსჩნდეთ C 5 განმზადებულნი C 6 პატივსა] Q; პატიოსანნი C (Ձ-ն վերականգնում և ուղղում է) 7 სამეუფოსა... და հատվածը C-ում խճճված կցագիր է 8 გამოვსჩნდეთ CQ 9 სომხითისასა C. 10 აღუვსიეს Q.

XX (§ 156) Արդ, ջանացի՛ր, եղբայր իմ, և որտեղ էլ լինեն՝ գտիր ու նրա հետ եղածներին, դայակով հանդերձ, մահվան հանձնիր, իսկ այն գեղեցիկին և աննմանին վերատին ինձ մոտ հասցրու։ Եթե ոչ, և քեզ համար հաճո կթվա նրա գեղատեսությունը՝ քեզ պահիր, քանզի հոռմա[ստան]ցիների մեջ նրա գեղատեսությանը նման ոչ ոք չգտնվեց»։*

XXI (§ 157) Երբ կարդաց այդ հրովարտակը, թագավորը պատվիրանի մեծ սաստկությամբ հրաման արձակեց, որպեսզի նրա տերության բոլոր տեղերում փութով որոնեն։ Տեղ առ տեղ դեսպաններ ուղարկեցին, որ գտնելուն պես՝ շուտ բերեն նրա մոտ, իսկ ով գտնի՝ պարգև ու մեծ պատիվ էր խոստանում նրան։

XXII (§ 158) Մինչ նրանց որոնում էին այդ աշխարհի սահմանից-սահման, սրբերը եկել և թաքնվել էին թագավորների նստոցում, թաքնված հենց թագավորից՝ Վաղարշապատ քաղաքում։ Սակայն օրեր անց՝ գտնվեցին ու հայտնվեցին։

*XXIII (§ 159) Այդ ճշմարիտ արի վկաներին պետք չկար թաքնվել, և ոչ էլ ճրագը գրվանի տակ դնել, և ոչ էլ՝ հնձաններում պահոցների ստվերի տակ ծածկել, այլև [պատշաճ էր] ոսկե աշտանակների վրա դնել զարդարուն, իսկ ոսկե ճրագարանները՝ ձեթը պարարտ և անուշահոտ, հավատով ու արդարությամբ օժտած, լույսով՝ պայծառ երևելիք, ինչպես որ առաջ իսկ աղոթում էին և ինչպես որ տերն ասաց իր սիրելիներին, թե «Տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցին զՀայր ձեր որ յերկինս է»**։*

XXIV (§ 160) Տեսնո՞ւմ եք արդ, որ սատծո ճշմարիտ որդին բարի գործողներին՝ յուրային սիրելիներին ու ծառաներին, չի զարշում համաբնակ անել իր ժառանգության։ Որ բնությամբ որդի է՝ իր պատվիրանապահներին վաղվաղակի իր հատկությունների է մատուցում, բայց միայն պահպանենք նրա պատվիրանները և իբրև պատվավոր մարգարիտներ հայտ առնենք, ուրախությամբ անապարենք նրա արքայության մեջ պատրաստված տերունական պատվին և այստեղ էլ ցուցաբերենք մեզ [որպես] պայծառ պատվականներ՝ այս հեթանոսների Հայաստան աշխարհում, որոնք փառավորության ու աստվածապաշտության փոխարեն այս աշխարհը լցրել են կուռքերով։

* Բառացի՝ փրոմինացիների։

** Մատթ. Ե, 16։

XXV და იპოვნეს იგინი სასაწნეხლეთა[1] მათ[2] შინა, შორის ვენაჴოვანსა მას, რამეთუ ვითარცა მოიწია ჰროვარტაკი[3] იგი დიდისა მის კეისრისა სომხეთად[4] თრდატ მეფისა, არა მცირედ რაჲ<მე>[5] აღრევა[6] იყო შორის სომეხთა, რამეთუ სცვიდეს ყოველთა გზათა და მებოძირთა და ყოველთა ადგილთა. და იხილა ვინმე ერთმან და უთხრა მათთჳს.

XXVI და ვითარცა იპოვნეს, ორ დღე ფაროსანნი მოადგინნეს[1] და სცვიდეს მკჳრცხლითა ერითა მით[2] მუნვე, სადაცა-იგი იპოვნეს. და შემდგომად სამისა დღისა ჰამბავი იგი განმრავლდებოდა, და მიესმა ყოველთა; განითქუმოდა შუენიერებაჲ იგი და ქმნულკეთილობაჲ[3] იგი რიფსიმესი, და იძრვოდეს[4] ურაკპარაკნი მათნი და კაცად-კაცადისა თანა[5] დაკჳრვება იქმნებოდა.

XXVII და ხილვასა მას კეთილისასა მიკრბებოდა სიმრავლე დიდი[1], და მთავართა მათგანნი იგიცა[2] ერთიერთსა ჰკლდებოდა და სრბით მივიდოდეს ხილვად სიკეთესა მისსა[3]. და აზნაურნი იგი აღრეულად გლეხითურთ ეტენებოდეს და დასდებდეს ერთიერთსა დასულებითა[4] სიცოფისა გონებისაჲთა[5] შეცთომილნი იგი[6] და აღმღურეულ<ნი>[7] გულის-თქ<უ>მითა ჩუეულებისა სახისა წარმართთაჲსა.[8]

XXVIII ხოლო ნეტართა მათ ვითარცა იხილეს უგუნურებაჲ იგი კეთილის-მოძულეთა მათ კაცთაჲ, ცრემლ-სავსედ და მოდინებით[1] აღიპყრნეს ჴელნი მათნი ზეცად და ითხოვდეს ჴსნასა ყოვლისა მპყრობელისაგან, ვითარცა წინასა მას ჟამსა განარინნა იგინი უშჯულოჲსა[2] მის და ბილწისა და უკეთურისაგან და შეგინებულებისაგან წარმართთაჲსა, რაჲთა მანვე სცეს ძლევაჲ და განამტკიცნეს[3] იგინი სარწმუნოებითა, და დაცვნეს[4] იგინი[5] და იხსნეს ქუეყანასა სირცხჳლისათჳს უგუნურთა მათ მხილველთაჲსა და მათთჳს[6]...

XXIX... რომელნი-იგი[1] შინაგან იყვნეს მეფისანი, რაჲთა არა იხილონ შუენიერებაჲ იგი და ქმნულკეთილობაჲ[2] და რაჲთა არა უთხრან[3] წინაშე მეფისა. და მერმესა[4] დღესა, ვითარცა განთენებოდა[5], ბრძანებაჲ გამოჴდა მეფისა მისგან, რაჲთა ნეტარი იგი[6] რიფსიმე ადრე-ადრე შეიყვანონ სამეფოდ და წმიდა გაიანე უბიწოჲთ[7] მოყუსებითურთ მუნვე დამარხნენ[8].

XXV 1 საწნეხელთა C; სასაწნეხელთა Q 2 მათ] Q 3 ჰროვატიკე Q (a-ն *ուղղում է*); წიგნი C 4 სომეხთად C 5 რაჲ Q რა C 6 აღრღვევა C: აღძრვა Q (a-ն *ուղղում է*)։

XXVI 1 მოადგ–ს C 2 მით] Q 3 ქმნულკეთილობა C; ქმნილკეთილობა Q 4 იძროდეს Q 5 თანა] Q.

XXVII 1 დიდძალი Q 2 იგიცა] Q 3 მისისა Q 4 და სულებისა Q 5 გონებისათა CQ 6 იგი] Q 7 აღმღურეულ C; აღმრღვეულ Q 8 წარმართთასა C; წარმართასა Q.

XXVIII 1 დამოდინებითა Q 2 უშჯულოსა Q, უსჯულოსა C 3 განამტკიცეს Q 4 დაიცვნეს CQ 5 იგინი] თავნი თჳსნი CQ (a-ն *վերականգնում է*) 6 *բնագիրը խաթարված է*։

XXIX 1 -იგი] C 2 ქმნილკეთილობა Q 3 სთქვან Q 4 მერმესა] მესამესა Q 5 განთენდებოდა C 6 იგი] Q 7 უბიწოდ Q 8 დამარხნეთ Q.

XXV (§ 161) Նրանց գտան հնձաններում՝ այգեստանի մեջ, որովհետև երբ մեծն կայսեր հրովարտակը հասավ Հայաստան՝ Տրդատ թագավորին, ոչ սակավ ինչ իրարանցում եղավ հայոց մեջ։ Քանի որ հսկում էին բոլոր ճանապարհներն ու խաչմերումները և ամենայն տեղերը՝ ինչ որ մեկը տեսավ և հայտնեց նրանց մասին։

XXVI (§ 162) Եվ երբ գտան, երկու օր վահանակիրներով շրջափակեցին և պահեցին հետևակ զորքով այնտեղ, ուր որ գտան։ Եվ երեք օր անց լուրը տարածվում էր, և լսում էին բոլորը, հռչակվում էր Հռիփսիմեի գեղեցկությունն ու պարկեշտությունը, շարժվում էին նրանց [լեցուն] հրապարակները, ու մարդ առ մարդ զարմանում էին։

XXVII (§ 163) Նրա գեղեցկությունը տեսնելու համար մեծ բազմություն էր հավաքվում։ Նրանց իշխաններն անգամ իրար էին հրում, սուրալով գնում նրա գեղեցկությունը տեսնելու։ Ազնվականները խառնիճաղանջ ամբոխի հետ կիտվում էին և դիզվում միմյանց վրա՝ մոլորված ցոփության մտքի ագահությամբ և մոլեգնած ցանկությամբ՝ հեթանոսների սովորության համաձայն։

XXVIII (§ 164) Իսկ երբ երանելիները տեսան բարին ատող այդ մարդկանց անմտությունը, արտասվալից հեղումով ձեռները պարզեցին երկինք և ամենակալից փրկություն էին խնդրում՝ ինչպես որ այն նախորդ անգամ նրանց ազատեց անօրեն ու պիղծ հեթանոսների չար[ությունն]ից ու գազրությունից, որպեսզի [այժմ] էլ հաղթություն տա և հաստատի նրանց հավատով։ Ընկել էին նրանք ու լպիրշ դիտողների ամոթից [երեսները] գետին դրել, և նրանցից,

XXIX (§ 165) ովքեր թագավորի պալատականներ էին՝ որպեսզի չտեսնեն [նրանց] գեղեցկությունն ու պարկեշտությունը և չպատմեն թագավորին։ Հաջորդ օրը վաղ լուսաբացին հրաման եղավ թագավորից, որ երանելի Հռիփսիմեին շուտափույթ արքունիք տանեն, իսկ սուրբ Գայանեին, պարկեշտ ընկերներով, տեղում էլ պահեն։

XXX და მეყსეულად ადრე-ადრე ოქროჲთა[1] შემოსილნი გაფალაკნი მოიხუნეს მეგაფალაკეთა კართა მის სასაწნეხლისათა[2], სადა-იგი[3] იყოფვოდეს გარეშე ქალაქსა მას. და სამკაულნი კეთილნი და ჩჩჳლნი შესამოსელად[4] მიუპყრნეს[5] მას, რაჲთა სამეფოდ[6] შეიმკოს, ჰაეროვნად და ბრწყინვალედ შევიდეს ქალაქად და ეგრეთ შეემთხჳოს მეფესა. რამეთუ, ვიდრე არა ეხილვა, იზრახა ცოლობაჲ მისი, რამეთუ უთხრობდეს მას, ვითარმედ შუენიერ არს და ქმნულკეთილ[7].

XXXI და ვითარცა იხილნა იგინი წმიდამან გაიანე, იწყო სიტყუად ძუძეულისა მის თჳსისა და ჰრქუა: „მოიჴსენე, შვილო, რამეთუ დაუტევე დიდი იგი[1] პატივი, შუენიერი სამკაულები[2], ოქრო-ქსოვილები და საყოფელი იგი შენი მამული და სამკაული იგი[3] ძოწეული შარავანდედთაჲ, და გულმან გითქუა წარუვალისა მის ბრწყინვალისა შარავანდედთა მოცემისა ქრისტესისა, რომელ არს შემოქმედი და განმაახლებელი და მაცხოვარი და გამოუთქუმელთა კეთილთა მომცემელი თჳსთა მოსავთა, და შენ, შვილო, შეურაცხ-ჰყავ საწუთოჲ[4] იგი[5] სამკაული ძოწეული და აწ მი-მე-სცეა სიწმიდე შენი კბენად ძაღლთა ამათ წარმართთა სოფელთა? ნუ, შვილო, ნუ იყოფინ, ვითარმცა იყო ეგრე[6], არამედ დაგჳცვნეს ჩუენ შენითურთ, რომელი-იგი გჳძლოდა ჩუენ სიყრმით ჩუენითგან მოდღეინდელად დღედმდე, და აწ შემწე იყოს[7] ჩუენი[8] ჟამსა ამას".

XXXII და ვითარცა იხილა რიფსიმე ყოველი იგი ამბოხი და ესმა სიტყუაჲ იგი დედამძუძისა[1] თჳსისაჲ, შეიჭურა სულითა წმიდითა და განძლიერდა უფლისა მიმართ, რამეთუ შეემოსა სარწმუნოებაჲ სიყრმით თჳსითგან. ვითარცა ახოვანი[2] შეიჭურა, ჴმა-ყო[3] ჴმითა დიდითა და განიპყრნა ჴელნი ჯუარისა[4] სახედ, და იწყო სიტყუად მაღლითა ჴმითა და თქუა[5]:

XXXIII „უფალო ღმერთო, ყოვლისა მპყრობელო, რომელმან დაამტკიცენ დაბადებულნი ჴელითა საყუარელისა[1] ძისა შენისაჲთა და განაწყსენ გამოჩინებულნი და გამოუჩინებელნი დაბადებულნი მადლითა სულისა წმიდისაჲთა, შენ ხარ, რომელმან არარაჲსაგან არსად ყოველნი დაბადებულნი[2] გამოაჩინენ, რამეთუ შენითა ბრძანებითა ყოველნი ძალნი იქმნნეს გამოჩინებულნი და გამოუჩინებელნი, რომელ არიან ცათა და ქუეყანასა, ზღუათა და ჴმელსა, რამეთუ შენ ხარ, უფალო, რომელმან მისცენ წყლით-რღუნასა უშჯულონი იგი და ბილწნი კაცნი, და[3] იჴსენ[4] საყუარელი იგი შენი[5] ნოე, რომელმან დაიმარხა ბრძანებაჲ სიტყჳსა შენისაჲ, განარინე იგი ჯუარის სახედ მსგავსითა მით ძელითა წყალთა მათ რღუნისა

XXX 1 ოქროჲთ C 2 სასაწნეხელისათა CQ 3 -იგი] Q 4 შესამოსელად] შესამკობელად Q 5 მიუპყრეს Q 6 სამეფოსა Q 7 შვენიერ და ქმნილკეთილ არს Q.

XXXI 1 იგი] Q 2 შვენიერები სამკაულები C 3 + შენი Q 4 საწუთრო Q 5 ჩუენ Q 6 ეგრეთ Q 7 შემწე •ყოს] შემეწიოს Q 8 ჩუენ Q.

XXXII 1 ღედისმძუძისა Q 2 ახოვანი] იხილნა C 3 -ჰყო C 4 ჯუარის C 5 ჰსთქუა C.

XXXIII 1 საყვარელისა C; სიყუარულისა Q 2 დაბადენ C 3 + იმიერვე Q 4 დაიხსნენ Q 5 შენი] Q

XXX (§ 166) Գահավորակիրները անմիջապես շտապ-շտապ ոսկեզարդ գահավորակներ էին հնձանի դռները բերում, ուր գտնվում էին [նրանք]՝ քաղաքից դուրս։ Եվ ազնիվ ու նուրբ զարդեր տարան նրան հագցնելու, որպեսզի հարքունիս զարդարվի, վայելչությամբ ու շուքով մտնի քաղաք և այդպես հանդիպի թագավորին, քանզի, դեռևս նրան չտեսած՝ [թագավորը] կնության առնել խորհեց, որովհետև նրան ասել էին, թե գեղեցիկ է ու պարկեշտ։

XXXI (§ 167) Երբ նրանց տեսավ սուրբն Գայանեն, սկսեց խոսել իր սանի հետ և ասաց. «Հիշի՛ր, որդյա՛կ, որ թողեցիր մեծ պատիվը, գեղազարդ ոսկեկուռ [հանդերձ]ները և քո հայրենի կացարանն ու թագակիրների ծիրանի պաճույճը և ցանկացար Քրիստոսի անանց պայծառ պսակները առնել, որ արարիչ է ու նորոգիչ, փրկիչ ու իրեն հասուցողներին անպատմելի բարյաց տվող։ Եվ դու, որդյա՛կ, արհամարհեցիր այդ անցավոր ծիրանազգեստը, իսկ արդ կտա՞ս արդյոք քո սրբությունը՝ այս հեթանոսների աշխարհի շներին կծոտելու։ Ոչ, որդյա՛կ, մի արասցե, որ այդպես լինի, այլև թող պահպանի մեզ քեզ հետ՝ ով առաջնորդում էր մեզ մեր մանկությունից մինչև այսօրվա օրը և արդ թող մեզ օգնական լինի այս ժամին»։

XXXII (§ 168) Երբ Հռիփսիմեն տեսավ այդ ամբոխն ու լսեց իր դայակի խոսքը, զրահավորվեց սուրբ հոգով և զորեղացավ առ տերը, որովհետև հավատով էր զգեցված [տակավին] իր մանկությունից։ Խրոխտացած ինչպես խիզախ, ճչաց մեծաձայն, բազուկները խաչի նմանությամբ տարածեց և սկսեց խոսել բարձր ձայնով ու ասաց.

XXXIII (§ 169) «Տեր աստված, ով ամենակալ, հաստատողդ արարածոց ի ձեռն քո սիրելի որդու, երևելի ու աներևույթ արարածների կարգողդ սուրբ հոգու շնորհիվ, դու ես, որ ոչնչից բոլոր արարածներին էությամբ ստեղծեցիր, ուստի քո հրամանով բոլոր զորությունները երևելի ու աներևույթ դարձան՝ որ կան երկնքում ու երկրում, ծովում ու ցամաքում։ Քանզի դու ես, տեր, որ ջրհեղեղի հանձնեցիր այն անօրեն ու պիղծ մարդկանց ու փրկեցիր սիրելուդ այն Նոյին, որը պահեց խոսքիդ հրամանը, խաչանման

გან[6]. რომელმან მათ ჟამთა ჯუარის სახითა ჰყავ ჴსნაჲ მათი, ხოლო აწ-ცა[7] ჰყავ ჭეშმარიტითა მაგით ჯუარითა, რომელსა აღჰჴედ[8] და დასთხიენ[9] სისხლნი[10] შენნი[11] კურნებისათჳს წყლულებათა ჩუენთასა".

XXXIV „რომელმან დიაცვე აბრაჰამ შორის ნათესავსა მასა უშჯულოთასა, რომელმან სირცხჳლისაგან ქანანელთაჲსა და ყუედრებასა უშვილობისასა შვილიერ ჰყავ სარრა, მჴევალი შენი, რომელმან შეიწყალე ისაკ[1] და დაიცევ მჴევალი შენი რებეკა უშჯულოთა მათ ფილისტიმელთაგან — ნუ განგჳშორებ ჩუენ[2] ჴელისაგან შენისა სახელისა შენისათჳს წმიდისა, რომელმან გუასწავე და გჳმოძღურე, და მოგუცენ სიტყუანი შენნი პირსა ჩუენსა[3], რაჲთა მით განვერნეთ მახეთაგან მტერთასა, რამეთუ სთქუ: სახელი ჩემი წოდებულ არს თქუენ ზედა, თქუენ ტაძარნი ხართ ღმრთისანი და[4] სიწმიდენი ჩემნი გულთა თქუენთა.

და მოგუეც სიწმიდე გონებასა ჩუენსა,[5] რაჲთა ვითხოვოთ[6] შენგან და რაჲთა სახელი შენი იყოს ჩუენ ზედა წერილითა მით თხოვად შენგან, ვითარმედ: „წმიდა იყავნ სახელი შენი, მოვედინ სუფევაჲ შენი, იყავნ ნებაჲ შენი ჩუენ ზედა, რომელნი-იგსე ვითხოვთ შენგან. აჰა მოკრებულ არიან უკეთურნი მრავალნი შებილწებად[7] ჩუენდა, რომელნი წოდებულ ვართ ტაძრად სახელისა შენისა, დაღათუ ჩუენ უძლურ და არა ღირს ვართ, ხოლო შენ და-ვე-იცვენ თავნი ჩუენნი არა ღირსთა ამათგან და ბილწთა და მიჴსენ ჩუენ განსაცდელისა ამისგან."

XXXV „და მომეც ჩუენ ძლევაჲ ძლიერებითა შენითა, რამეთუ შენი არს ძლევაჲ,[1] და ვსძლოთ სახელითა შენითა, და რაჲთა დავიცვათ სასოებაჲ შენი უბიწოებით, და შევერთნეთ რიცხუსა ნაწილსა მას[2] მართალთასა და მოვიღოთ სასყიდელი შრომისაჲ, რომელი მისცე და მიაგო თითოეულად მათ, რომელნი დაადგრნენ[3] შიშსა შენსა და რომელთა დაიმარხნენ[4] ბრძანებანი შენნი".

XXXVI „რომელმან განარინე ნოე წყლისა მისგან რღუნისა, განმარინენ ჩუენცა უშჯულოთა ამათგან ნაღუარევთა, რომელ-ესე მოდგომილ არს და მოუცავთ. რამეთუ მჴეცი და პირუტყჳ[1] განარინე კიდობანსა მას შინა, რავდენ უფროჲს[2] არა შეგჳწყალნე ქმნულნი ესე შენნი, რომელნი[3] შენ გადიდებთ?[4] და რომელმან ქუეწარმავალნი და მფრინველნი დაიფარენ კიდობანსა მას შინა, რავდენ არა უფროჲს შეგჳწყალნე ჩუენ[5], რომელთა-ესე გჳწოდე ტაძრად ნებისა შენისა?".

---

6 რღვნისაგან C; რღვნისათა Q 7 აწ Q 8 აღჰჴედ] აღხდა ძე შენი C 9 დასთხია C 10 სისხლი C 11 შენნი] თუისი C.

XXXIV 1 ისაკი C 2 ჩუენ] Q 3 + ზედა C 4 + სთქუ, ვითარმედ Q 5 გონებისა ჩუენისა Q (C-ում գրված է եղել նույնը, բայց գրիչը ուղղել է) 6 ვთხოვოთ Q 7 შებღალვად C.

XXXV 1 ძლიერებითა შენითა... ძლევაჲ] Q (a-ն լրացնում է) 2 ნაწილისა მას] Q (a-ն վերականգնում է) 3 დაადგრეს C 4 დაიმარხნეს CQ(a-ն ուղղում է):

XXXVI 1 მჴეცნი და პირუტყუნი Q 2 უფროსს Q 3 რომელმან C 4 გბ˜ით C 5 ჩუენ] Q.

փայտով ազատեցիր նրան ջրհեղեղից։ Դու, որ այն ժամանակ հանձին խաչի փրկեցիր նրանց, այժմ էլ արա այդ ճշմարիտ խաչովդ, որին ելար ու հեղեցիր քո արյունը՝ մեր ցավերի բժշկության համար։

XXXIV (§ 170) Դու, որ պահպանեցիր Աբրահամին անօրենների այն ցեղի մեջ, քանանացիների ամոթից և անզավակության նախատինքից [փրկելու համար] զավակավոր արիր քո աղախին Սառային, որ ողորմացիր Իսահակին և պահպանեցիր քո աղախին Հռեբեկային անօրեն փղշտացիներից, մի՛ թող մեզ քո ձեռքից՝ հանուն քո սուրբ անվան, դո՛ւ, որ ուսուցեցիր և վարդապետեցիր մեզ և քո խոսքերը մեր բերանը ավեցիր, որպեսզի նրանցով ազատվենք թշնամիների որոգայթներից, քանզի ասում ես. «Անուն իմ ի վերայ ձեր կոչեցեալ է», «դուք տաճարս եք աստուածութեան»**, և ասում ես, թե «սրբութիւնք իմ ի սիրտս ձեր»***։ Եվ սրբություն տվիր մեր մտքին, որպեսզի խնդրենք քեզնից, և որպեսզի քո անունը մեր հանդեպ լինի՝ ըստ գրվածին խնդրելու քեզնից, թե «Սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո»**** մեր հանդեպ, որ և խնդրում ենք քեզնից։ Ահա հավաքվել են բազում չարեր՝ մեզ պղծելու, որ քո անվան տաճար ենք կոչված։ Թեև մենք տկար ու անարժան ենք, սակայն դու պահպանի՛ր մեր անձերը այս անարժաններից ու պիղծերից և փրկի՛ր մեզ այս փորձությունից։*

XXXV (§ 171) Եվ քո զորությամբ տո՛ւր մեզ հաղթություն, որովհետև քո է հաղթություն, և հաղթենք քո անվամբ, որպեսզի քո հույսը անեղծությամբ պահենք, միանանք արդարների թվին և առնենք վաստակի վարձը, որը կտաս ու կհատուցես նրանց յուրաքանչյուրին, ովքեր կմնան քո ահին և ովքեր կպահեն քո հրամանները։

XXXVI (§ 172) Դո՛ւ, որ ազատեցիր Նոյին ջրհեղեղից, ազատիր և մեզ անօրենների այս հեղեղից, որ շուրջկալել ու պատել է մեզ։ Քանի որ գազան ու անասուն ազատեցիր այն տապանում, [ապա] որքա՜ն առավել կգթաս [մեզ]՝ քո արարածներին, որ քեզ ենք փառաբանում։ Եվ դու, որ սողուններին ու թռչուններին պահպանեցիր տապանում, միթե առավել չե՞ս գթա մեզ՝ որոնցս քո կամքի տաճար կոչեցիր»։

---

* Գործք, ժե, 17։
** Ա Կորնթ. Գ, 16, Զ, 19։
*** Ա Պետր. Գ, 15։
**** Մատթ. Զ, 9—10։

აზნ—**ազն** (აზნაურები, აზნაური) В 399^2, $_7$, В 408^2, $_{20}$
დასი—**դաս** (დასთა) сонм, В 408^1, $_{27}$
პატიჟი—**պատիժ** (პატიჟება) наказание, В 404^2, $_{18}$
პეტობა—**պետ** (ერთი პეტობაჲ, სული პეტობაჲ), главенство, начальство, В 393^1, $_{22}$, В 395^2, $_6$
ტომი—**տոհմ** (**նաև՝** თესლტომი—**ազգատոհմ**), род, родня, В 400^1, 4–5
ქანდაკი—**քանդակ** (გამოქანდაკებული) изваянный В 404^1, $_{14}$

հուշարձաններին մասնավոր ուշադրություն չի դարձրել։ Այնուամենայնիվ, նա մեկ առ մեկ թվարկում է այդ երկերը, վրացերեն ու զուգադիր թարգմանությամբ տալիս խորագրերը, սկզբի և վերջի պարբերությունները, փորձելով ճշտել նաև, թե տվյալ երկը կա՞ Հիպողիտեսի երկերի բուն ցանկում կամ՝ հայտնի՞ է նրա այլ թարգմանություն-բնագիր։ Այստեղ նկատի է առնըվում, հարկավ, և հայերենը՝ վրացերեն թարգմանության անմիջական բնագիրը։ «Վասն հաւատոյի» նկարագրական վկայակոչությունից հետո (էջ XXVII—XXVIII) նա ավելացնում է. «Признать это слово *(իմա՛ Վասն հաւատոն—Պ. Մ.)* в известных творениях Ипполита мне не удалось. Это — вероизложение с беглыми полемическими замечаниями об евреях и Савеллии» (*էջ* XXVIII).

Որքան էլ կարճառոտ, փաստորեն հուշարձանիս բնութագրման նախնական փորձը Ն. Մառն է կատարել։ Նրա հաղորդումը, ինչպես և պետք էր սպասել, չվրիպեց Հիպողիտեսի մատենագրությամբ զբաղվող գիտնականների ուշադրությունից։ 1907 թ. Գ. Բոնվեչը Ա. Հառնակի և Կ. Շմիդտի հրատարակած „Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Literatur...“ *մատենաշարի 31-րդ հատորի 2-րդ պրակում տպագրեց «Վասն հաւատոյ»-ի գերմաներեն թարգմանությունը*[7]*։ Ներածական մասում Գ. Բոնվեչը հայտնում է, որ իր հրապարակած գերմաներեն թարգմանությունը կատարված է Վ. Կարբելովի (Կարբելաշվիլու) ռուսերեն թարգմանության միջնորդությամբ։ Որքան մեզ հայտնի է, այդ ռուսերեն թարգմանությունը հրապարակված չէ (կատարված է գերմաներենի վերածելու մղումով)։ Ավելորդ է նշել, թե այս կրկնակի թարգմանության ընթացքում պիտի լինեին անխուսափելի վրիպումներ ու նույնիսկ աղավաղումներ, մանավանդ որ վրացերեն բնագիրը տակավին անտիպ էր մնում, իսկ X դ. ձեռագրի վերծանությունն այնքան էլ դյուրին գործ չէ։*

Թարգմանիչ-հրատարակիչը հիշյալ ներածության մեջ (էջ 1—12) անդրադարձել է մի շարք հարցերի, որոնցից առանձնապես կարևոր է երկիս՝ Հիպողիտեսին պատկանել-չպատկանելու խնդիրը։ Նրա եզրակացմամբ «Հիպողիտեսի հեղինակության մասին խոսք անգամ լինել չի կարող, չնայած՝ հիմունքների (դրույթների) մեջ Հիպողիտեսի մտքերն ի սպառ չէ, որ բացակայում են»[8]*։ Նա ուշադրավ աղբյուրագիտական-քրիստոսաբանական քննություն է կատարում, հավաստելով հուշարձանիս՝ վաղ շրջանի (IV դ.) պատկանելը, ինչպես նաև նրանում եղած որոշ հոդվածների առնչությունը Սեբելիանոսին կամ նույնիսկ՝ արիանոսական վեճերին։*

Գ. Բոնվեչի հրապարակմանը հաջորդած տարիներին, որքան կարողացել ենք հետևել գրականությանը, Հիպողիտեսին վերագրված «Վասն հաւատոյ» երկի մասին մասնագիտական որևէ խոսք չի եղել։ Այդ ընդմիջումը պետք է բացատրել նրանով, որ երկիս Հիպողիտեսին պատկանելը համոզիչ կերպով ժխտվեց, իսկ նոր պատկանելություն էլ դեռ առաջադրված չէր։ Հարցը, փաստորեն, մնաց առկախ՝ մի նոր պատեհության սպասելով։

[7] Die unter Hippolyts Namen überlieferte Schrift „Über den Glauben“ nach einer Übersetzund der in einer Schatberder Handschrift vorliegenden georgischen Version, herausgegeben von **G. Natanael Bonwetsch,** Leipzig, 1907, S. 1—36.

[8] „Von einer Abfassung durch Hippolyt kann keine Rede sein, obgleich es an Berührungen mit Gedanken Hippolyts nicht völlig fehlt“ *(նշվ. աշխ., էջ 6)*։

1965 թ. անվանի արևելագետ պրոֆ. Ժ. Գարիտը հանդես եկավ մեզ զբաղեցնող հուշարձանի հետ կապված հարցերի նորովի քննությամբ[9]*. գիտնականը հաջողել էր ճշտել, որ «Շատբերդյան ժողովածույում» Հիպողիտեսի անունով ներկայացվող «Վասն հաւատո»-ն փաստորեն Ագաթանգեղոսի Պատմություն մուծված «Վարդապետության» համառոտված թարգմանությունն է, ընդ որում՝ մեծ մասամբ բառացի համապատասխանությամբ։*

Ինքնին հասկանալի է, այս ճշգրտումը բազմաթիվ նոր հարցեր է առաջադրում, որոնց պատասխանելը Ժ. Գարիտի հիշյալ աշխատության նպատակը չէ։ Թե ինչո՞վ է պայմանավորված հայերեն «Վարդապետության» ընդարձակ և «Վասն հաւատոյ»-ի համառոտ լինելը՝ առանձին ուսումնասիրելի հարց է, ինչպես նաև՝ առանձնակի քննության նյութ են Վարդապետություն—Վասն հաւատոյի հեղինակային պատկանելության, Ագաթանգեղոսի Պատմություն մուծվելու և այլ խնդիրներ։ Այժմ ճշտված է առաջնահերթ մի առեղծված՝ այդ երկը նույն «Վարդապետությունն» է, ուստի միանգամայն ճիշտ էր Գ. Բոնվեչը, երբ եզրակացնում էր, թե Հիպողիտեսին պատկանելու մասին խոսք անգամ չի կարող լինել։ Պրոֆ. Ժ. Գարիտը կազմել է այդ երկու բնագրերի համապատասխանության տախտակ, որից կարելի է հավաստիանալ, թե միջնադարյան վրացի անհայտ թարգմանիչը չէր կարող «Վարդապետություն»-ից քաղագրողն ինքը լինել, քանի որ այդ դեպքում կպահպանվեր բնագրի հերթականությունը կամ նրա արձագանքը։ Մինչդեռ, իրականում, ունենք նույն հիմքի վրա ձևավորված երկու գրեթե անկախացող բնագրեր. նրանցից մեկի անկախանալուն նպաստել է հետագա ընդմիջարկում-խմբագրումը, մյուսին՝ մասնակի համառոտումն ու նախնական վիճակի պահպանությունը։

Ժ. Գարիտի երկրորդ կարևոր ծառայությունը վրացերեն բնագրի հրատարակությունն էր՝ վաղ շրջանից պահպանված երկու ձեռագրերի (Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի S—*1141 և Երուսաղեմի հունական պատրիարքարանի № 44) համեմատությամբ ու լատիներեն թարգմանության զուգադրմամբ։ Հոդվածի վերջում (էջ 164—172) գիտնականը անհրաժեշտ է նկատել տալ նաև Ագաթանգեղոսի Պատմության համապատասխան պարբերությունների լատիներեն թարգմանությունը* (Traduction des passages parallèles d'Agathange)*, հավանաբար, մտադիր լինելով ապագայում անդրադառնալ տեքստաբանական-աղբյուրագիտական քննությանը կամ դյուրացնել նման աշխատանքի ձեռնարկումը։*

[9] **Gérard Garitte**, Le traité géorgien „Sur la foi“, attribue à Hippolyte, „Le Muséon“, t. 78, 1—2 (1965), pp. 119—172.

Վերևում, Ն. Մառի ուսումնասիրության մասին խոսելիս, դիտեցինք, որ «Վասն հաւատոյ»-Վարդապետությունը պահպանվել է առանձնակի կարևորություն ներկայացնող մի ժողովածույում։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում մասնավորեցնել մեր խոսքը։

«Շատբերդյան ժողովածու» (S—1141)[10] *գրված է 973—976 թթ., սկզբի մասը (էջ 1v—126r) ասոմթավրուլի և հաջորդը՝ նուսխուրի գրչությամբ (էջ 126v—286v)։ Պահպանված վիճակում կան էջերի կորուստներ, քայքայում-խաթարումներ։ Ընդամենը 287 էջ, 28×22 սմ չափի, երկսյուն։ Մեզ հետաքրքրող երկը գտնվում է 193v—203v էջերում։ Խորագիրն է՝* „სიტყუაჲ წმიდისა იპოლიტჱსი სარწმუნოვებისათჳს“ *—«Բան (ճառ) սուրբ Հիպողիտեսի՝ Վասն հաւատոյ»։*

Ձեռագիրն ունի Բերայ գրչի ու այլոց մի շարք կարճառոտ հիշատակարաններ՝ էջ 59r, 88v—89r, 105v, 107r, 118r, 215r, 230v, 234r, 285r։ Ստորև անհրաժեշտ ենք համարում բերել գրչի հիմնական հիշատակարանից մի քաղվածք[11].

ამისთჳს მეცა არა დავფარ<ე> სწრაფაჲ სულისა ჩემისაჲ მიზეზითა ნაკლულევანებისჲთა და შეუდეგ კეთილისა გულისმოდგინებასა მე, ცოდვილი და უნარჩევესი ყოველთა მოწესთაჲ იოვანე ბერაი, და გავასრულე წმიდაჲ ესე წიგნი კაცისა შესაქმჱ და მეორედ წიგნი თუალთაჲ და სახისმეტყუელი და იპოლიტე და ქართლისა მოქცევაჲ და ცხორებაჲ ნეტარისა მის და დიდებულისა მღდელთ-მოძღურისაჲ იაკობ ნისიბ<ინე>ლისაჲ და თარგმანებაჲ ზოგთარე ფსალმუნთა დავითისაჲ მოღუაწებითა <და თანადგომითა> დედის ძმისა ჩემისა მიქაელისა და ძმისა ჩემისა დავითისთა, და სხუაჲ <არაჲ> არავის ჰრთავს, თჳნიერ <სიგლახა>კისა ჩემისა. და შევწირე <შატბე>რდს საყოფელსა წმიდისა <ღმრთისმშობლისასა>, რომელსაცა შინა აღ<ვიზარ-

... Ուստի ես էլ չթաքցրի իմ հոգու բաղձանքը՝ պակասության պատճառով, և ես՝ մեղավոր ու խոնարհագույն ամենայն կարգավորաց Հովհան (Յովանե) Բերայս, բարի ջերմեռանդություն ցուցաբերեցի և ավարտեցի այս սուրբ գիրքը՝ Կազմություն մարդու, և ապա՝ Գիրք ականց ու Բարոյախոս, և Հիպողիտես ու Վրաց դարձ, և Վարք երանելի ու փառավորյալ քահանայապետ Հակոբ Մծբնացու, [ինչպես նա]և՝ Մեկնություն Դավթի որոշ սաղմոսաց, հոգացողությամբ և ընդակցությամբ իմ մորեղբայր Միքայելի և իմ եղբայր Դավթի։ Եվ ուրիշ ոչինչ ոչ ոքի է՝ բացի խեղճիցս իմ։ Եվ մատուցեցի Շատբերդում սուրբ Աստվածամոր կացարանին, որի մեջ և սնա, հա-

10 *Նկարագրությունը հմմտ.* თ. ჟორდანია, ქრონიკები..., I, გვ. 99—107, *նաև՝* **Е. С. Такайшвили**, Описание рукописей „Общества распространения грамотности среди грузинского населения“, т. II, вып. IV, стр. 632—651, *նաև՝* „ქართულ ხელნაწერთა აღწერილობა“ (S), ტ. II, თბ., 1961, გვ. 36—40.

11 *Հիշատակարան-հիշատակագրությունների լրիվ տեքստերը, Ն. Թաղայշվիլու ճշգրտմամբ, բերված են ձեռագրի նկարագրության մեջ* (ქართ. ხელნ. აღწ., S, ტ. II, გვ. 38—40)։

დე>, სალოცველად სულისა <ჩემისა> ცოდვილსა და მშობელ<თა ჩემითა> და სალოცველად მეფეთა <ჩუენთა> ბაგრატ მეფისა და ყოველთა შე<ილთა> მაჲთათჳს და გვედრები ყოველთა, ვინცა იმსახურებდეთ წმიდასა ამას...

ղոթս իմ մեղավոր հոգու և ծնողաց իմ ու հաղոթս թագավորաց մեր՝ Բագրատ արքայի և նրա բոլոր որդոց։ Եվ աղերսում եմ բոլորիդ, ովքեր որ կգործածեք այս սուրբ... (էջ 285v)

Ձեռագրում պահպանվել է IX դ. վերջի և X դ. սկզբի գործիչ-թարգմանիչ Դաչիի ուղերձը Ստեփան Տբեթցուն, գրված Կիպրացու Սաղմոսաց մեկնության հայերենից վրացերեն թարգմանելու առիթով[12]*։ Ուղերձ-հիշատակարանը հրատարակվել է երկիցս*[13]*, ինչպես նաև՝ քաղվածաբար թարգմանվել հայերեն*[14] *և ռուսերեն*[15]*։ Սակայն, ինչպես պրոֆ. Ի. Աբուլաձեն է նկատել, այդ թարգմանությունները խիստ թյուր են, բնագրի սխալ ընկալումներով*[16]*։ Ստորև անհրաժեշտ համարեցինք բերել ուղերձի սկզբի հատվածը*[17].

ღირსო მამაო, წმიდაო ეპისკოპოს (!) სტეფანე, ქრისტჱს გამ<ორ>ჩეულო მამფალო, კურთხეულ არს ღმერთი, რომელმან გამოგაჩინა შენ კეთილად მწყემსად ჩუენდა და მკურნალად სულიერად, აღმაშენებელად ჩუენდა. მრავალგზის მინდა ხილვაჲ შენი კურნებისათჳს <სალ>მობათა სულისა ჩემისათა, არამედ სიშო<რისაგან და რუდუნებისაგან> უცალოვებისა ჩემისა ვერ ღირს <ვიქმენ თაყუანისცემად შენდა. ა>წ შენდობა იყ<ავნ ჩემდა> ამისთჳს, რომელ წიგნითა <მოგიძღ>უნებ გან<საკითხავსა> ამას ჩემსა, წმიდაო ღმრთისაო. მრავ<ლით ჟა>მითგან <გულ>მოდგინედ ვეძიებდ<ი> თარგმანებას<ა> ფსალმუნთასა, წიგნსა მას, რომელი დაწერა <წმიდამა>ნ

Արժանավոր հայր, սրբազան եպիսկոպոս Ստեփան, քրիստոսընտիրդ մամփալ.

Օրհնյալ է աստված, որը կարգեց քեզ բարի հովիվ մեր հանդեպ և հոգևոր բժիշկ, շենացնող մեր։ Բազմիցս ուզում էի քո տեսակցությունը՝ իմ հոգու ցավի բժշկության համար, սակայն հեռավորության ու անպարապության հոգսերի պատճառով չկարողացա արժանանալ քեզ երկրպագելու։

Արդ, թողություն արա ինձ, որ թղթով (նամակով) եմ արծարծում իմ սույն հարցնելիքը, ով սուրբդ աստծո։ Շատ վաղուց եռանդագին փնտրում էի Սաղմոսաց մեկնությունը, այն գիրքը, որը գրեց մեր

12 *Դաչիի մասին տե՛ս* კ. კეკელიძე, ქართ. ლიტ. ისტ., ტ. I, 1960, გვ. 142—143.

13 ილია აბულაძე, ქართ. და სომხ. ლიტ. ურთიერთობა IX—X სს-ში, თბ., 1944, გვ. 197—198 *(քննությունը տե՛ս էջ 0182—0186), նաև՝* ქართ. ხელნ. აღწერილობა, (S), II, გვ 39—40։

14 Լ. Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Երևան, 1934, էջ 88։*

15 **Е. С. Такайшвили**, *նշվ. աշխ., էջ 642։*

16 ილია აბულაძე, *նշվ. աշխ., էջ 0183, ծան. 1։*

17 *Բնագրական վերականգնումները պատկանում են Ն. Թաղայշվիլուն։*

მამამა<ნ ჩუენმან> ეპიფანე <კჳპრელ ებისკოპოსმან და არა ვპოვე ქართულად>. ბერძენთა ენითა ვპოვე და ვერ შე<უძლე ცნობად>, ვითარცა წყაროსა მიუწუდ<ომელ>სა და ფასსა <დაფარ>ულსა. მერმე ვპოვე სომხურითა ენითა წე<რილი>,სრულიად მითვე ბერძულითა განგებითა და მითკე <რიც>ხჳთა. შემშურდა სომეხთათჳს და შემეშინა თარ<გმ>ანებად, რამეთუ დიდი ბ<რ>ალობაჲ შეემთხ<უევის თარგ>მანთა, რომელნი არა განეკრ<ძალნენ, და სრულად უკუეთუ ვისმე პირველად ეთარგმანოს, მეორედ თარგმანებული წინაღმდგომად გამოჩნდების, ვითარცა აკჳლაჲსი იგი და სჳმაქოსისი>, <და ამით არა ჯერ-არს. ხოლო მე არა ვპოვე პირველ თარგმანებული და ამის>თჳს მცირედ ესე გემ<ოჲს ხილვაჲ> გამოვთარგმნე, და წინაშე ღმრთისმოყუარებისა <შენისა გან>საკითხავად მოგიძღუნე. <ხოლო> შენ მსგავსად მოცემულისა მაგის სიბრძნისა შენისა <განიკითხე> და ჯერ თუ იყოს, შენ მიერ დაენერგენ შორის ეკლესიასა და უკუეთუ არა ღირს რაჲმე იყოს, წიგნი ესე დაწჳ და სიუცბჱ ჩემი დაფარე და მე მამხილე, და შევინანო.

սուրբ հայր Եպիփանոս Կիպրացի եպիսկոպոսը, և չգտա վրացերեն։ Գտա հույների լեզվով և [սակայն] անկարող եղա ճանաչել (հասկանալ)՝ ինչպես աղբյուր անմատչելի և արժե թաքուցյալ։ Հետո գտա հայերեն լեզվով գրված՝ կատարելապես հունարենի նույն հերթակարգով և նույն էլ թվով։ Նախանձեցի հայերին ու վախեցա թարգմանել, որովհետև մեծ զանցանք են կատարում թարգմանիչները, որոնք չեն զգուշանում. և եթե մեկը կատարյալ նախապես թարգմանել է՝ երկրորդած թարգմանությունը հակառակություն է հանդիպանում, ինչպես Ակյուղայինն ու Սիմաքոսինը, և դրանով՝ ոչ է պատշաճ։

Իսկ ես չգտա նախկին թարգմանություն, ուստի այս փոքր համտեսը թարգմանեցի և աստվածասերիդ առաջ հարցման (քննության) առաքեցի։ Իսկ դու ունեցածդ այդ քո իմաստությամբ քննիր և թե պատշաճ լինի՝ քո կողմից մուծիր եկեղեցի, իսկ թե ոչ արժանի բան լինի՝ այրիր գիրքն այս և անգիտությունն իմ ծածկիր ու հանդիմանիր ինձ, և ես զղջամ[18]: (էջ 256rv)

Ի վերջո, դիտելի է, որ սույն ձեռագրում կան որոշ հայերեն հիշատակարան-հիշատակագրություններ (էջ 277v, 278r, 281v, 282v), որոնք արժեքավոր են թե՛ ձեռագրի պատմության, թե՛, մանավանդ, տեղի հայոց բարբառը ուսումնասիրելու համար[19]։

[18] Հիշատակարանիս որոշ տերմինների ու նրանց նշանակության մասին տե՛ս ქ. კეკელიძე, კულტურულ-ისტორიული მნიშვნელობა უძველესი ქართული „დავითნის" ტერმინოლოგიისა და ტექსტუალური თავისებურებისა (տե՛ս նրա՝ „ეტიუდები ძველი ქართული ლიტერატურის ისტორიიდან", ტ. III, თბ., **1955** გვ. 120—126).

Մասնավոր ուսումնասիրության է արժանի Դաչիի երկրորդ ուղերձը (էջ 285r)՝ հասցեագրված Թուխի եպիսկոպոս Անտոնին. ճարտասանական ու բանաստեղծական հմտության հետ, այստեղ առկա է վրաց-հայ-հույն միջավայրից քաղված որոշ բառերի գիտավորյալ ու ճշտագիր գործածություն։

[19] Վկայակոչվածների նմանահանությունն ու մասնակի գնահատությունը տե՛ս **Н. Марр.**, Ипполит..., стр. XVIII—XX, բարբառագիտական արժեքավորումը՝ Ի. Աբուլաձե, 10-րդ դարի վրացերեն մի ձեռագրի հայերեն հիշատակագրությունները և նրանց նշանակությունը հայ բարբառագիտության համար, «Բանբեր մատենադարանի», № 4, էջ 40—42։ Հմմտ. նույնի „შრომები", ტ. II, თბ., 1976, გვ. 275—281:

Ն. Մառի արդարացի գնահատությամբ, վրացի գրիչը՝ Բերայ, առանձնապես հմուտ չէ գրական հայերենին, «несмотря на его умение каллиграфически выводить армянские буквы»[20]: *Այդուհանդերձ, հիշատակագրությունների արժեքն ավելին է, քան այդ բացահայտված է նշված գրականության մեջ*[21]։

Ինչպես արդեն նշվեց, Հիպողիտեսի անունով հայտնի «Վասն հաւատոյ»-ն պահպանվել է վրացական երկրորդ ձեռագրում ևս, մասնավորապես՝ Երուսաղեմի հունական պատրիարքարանի № 44 գրչագրում (էջ 226r—235r)։ Ըստ առկա նկարագրությունների[22]*, XII—XIII դդ. գրչություն է, թղթյա։*

Ժ. Գարիտի հրատարակած «Վասն հաւատոյ»-Վարդապետության բնագիրը, ինչպես նշեցինք, հենված է այս երկու ձեռագրերի վրա (S—1141=T, Երուս. հուն. պատր., № 44=J), արդարացիորեն գերադասությունը տալով T-ին։ Բնագիրն այստեղ տպագրվում է առանց փոփոխությունների. եթե իսկ ունեցել ենք տատանում-տարակարծություն, ապա ջանացել ենք դուրս չգալ ձեռագրական առկա ընթերցումների սահմաններից։ Հարմար նկատեցինք տողատակի տարընթերցումները նշանակել վերանայումով՝ մեր աշխատության ընդհանուր սկզբունքից ելնելով։ Պարբերությունների համարակալումն ու ներքին տրոհումը պահպանեցինք նույնությամբ, ինչպես Բոնվեչի ու Գարիտի մոտ է։ Դրանով հեշտանում է երեք հրատարակությունների համապատասխան մասերի համեմատությունը։ Երկու ձեռագրի ընթերցումների տողատակ իջեցման դեպքում բնագրում առաջարկվողը Ժ. Գարիտինն է պատկանում։ Կարևոր չնկատեցինք արտացոլել գրչագրի միջտողյա հավելումներն ու որոշ այլ մանրամասներ։ Անհրաժեշտության դեպքում ընթերցողը կարող է դիմել Ժ. Գարիտի հրատարակությանը։

Ստորև տալիս ենք «Վասն հաւատոյի» և Ագաթանգեղոսի Վարդապետության պարբերությունների համապատասխանության աղյուսակը, որ կազմել է Ժ. Գարիտը։

[20] **Н. Марр**, նշվ. աշխ., էջ XX:

[21] Հմմտ. **П. М. Мурадян,** Грузинские приписи и записи..., „Кавказ и Византия", вып. 1, Ереван, 1979, стр. 82—84.

[22] **Н. Марр,** Краткое описание грузинских рукописей Библиотеки греческого патриархата в Иерусалиме, Тб., 1955, стр. 81—82. Ռ. Բլեյկի նկարագրությունը տե՛ս ROC 24 (1924), էջ 208—210։ M. Brière-ինը՝ Patr. Orient., XXVII, 1—2, p. XVII—XVIII. Ժ. Գարիտը ձեռագրիս մասին խոսում է իր „Fragments arméniens du traité d'Hippolyte sur David et Goliath" հոդվածում (տե՛ս „Le Muséon", t. 76, 3—4 (1963), p. 277, 279)։

Համապատասխանության աղյուսակ*

Վասն հաւատոյ	Ագաթանգ.	Վասն հաւատոյ	Ագաթանգ.	Վասն հաւատոյ	Ագաթանգ.
I,1*	էջ 472,№1—2	X,3	§ 380, 381, 377	XIV,2	հմմ. § 436—441
I,2	էջ 472,№3			XIV,3	—
II,1	§ 354	X,4	§ 381,378	XIV,4	հմմ.643—648
II,2	§ 367	X,5*	§ 378	XV,1	հմմ. 496
II,3*	§ 355	X,6*	§ 378,385	XV,2*	§ 708
III,1*	§ 356,358	X,7	§ 385—3 87	XV,3	—
III,2*	§ 254,358	X,8*	§ 387, 394	XV,4—5*	§ 708,700
III,3	§ 756,359	X,9*	§ 391	XV,6	§ 704
IV,1	§ 361	X,10	—	XVI,1	§ 705
IV,2	§ 362	X,11*	§ 391—392	XVI,2*	§ 705
IV,3	§ 362,366, էջ 473, § 362——363	XI,1	§ 394	XVI,3*	§ 705—706
		XI,2	§ 395	XVI,4	§ 706
		XI,3	§ 395	XVI,5	§ 706
V,1	էջ 473, №9, 18	XI,4	§ 381—382	XVI,6	§ 706—707
V,2	—	XI,5	§ 368,378	XVI,7*	§ 708
VI,1	էջ 473, №10	XI,6	§ 379	XVII,1*	§ 713
VI,2*	էջ 473, №11	XI,7	§ 368	XVII,2	§ 714
VI,3	—	XI,8	§ 369	XVII,3	§ 714
VII,1*	էջ 474, №18	XI,9	§ 369	XVII,4	—
VIII,1	—	XII,1*	389	XVII,5	—
VIII,2	—	XII,2*	էջ 473,№17	XVIII,1	—
VIII,3	—	XIII,1	—	XVIII,2	—
IX,1	—	XIII,2	—	XVIII,3	—
IX,2	հմմ. էջ 473 №11	XIII,3	§ 460	XVIII,4	—
IX,3	—	XIII,4*	§ 460—461	XIX,1	—
X,1	§ 363—364	XIII,5	§ 480—481	XIX,2	§ 383
X,2	§ 364, 379, 380	XIV,1	հմմ. § 81—85, 585	XIX,3	§ 384

* * *

Հիպողիտեսի անունով պահպանված «Վասն հաւատոյ» Ագաթանգեղոսի Պատմության այսպես կոչված կանոնական խմբագրության «Վարդապետութիւն» հատվածին հարաբերելիս առաջ են գալիս մի շարք բարդ խնդիրներ. արդյո՞ք Պատմության V դարի երկրորդ կեսի խմբագրությունը ընդգրկել է և «Վարդապետութիւն» հատվածը. եթե վրացերենի թարգմանողը V—VII դարերի սահմանագծում իր տրամադրության տակ Պատմությունն է ունեցել և այնտեղից քաղել թարգմանելիք հատվածը, ապա ի՞նչը նրան կարող էր ստիպել այն վերագրել Հիպողիտեսին և ոչ Ագաթանգեղոսին։ Պատմության տեքստից քաղելու դեպքում կունենայի՞նք, արդյոք, պարբերությունների այն հաջորդականությունը, որն այժմ առկա է վրացերեն թարգմանության մեջ և ամենևին տարբեր՝ հայերեն բնագրից։ Բնագրական առնչությունները ստուգելիս ի՞նչ ելակետ պիտի ընտրել՝ հայերեն նախնական բնագիրն այն տեսքն է ունեցել, ինչ մեզ հասած վրացերեն թարգմանությամբ է ներկայանում, ապա ենթարկվել փոփոխության, թե՞ նրանք իրարից անկախ սերում են այսօր գիտությանն անհայտ որևէ բնագրից։ Ի վերջո, Պատմության ձևա-

* Աստղանիշով մատնացուցվում են այն պարբերությունները, որոնք մասամբ են համապատասխանում Վարդապետության վկայակոչվող դրվագին։

վորման ու խմբագրության տարբեր օղակներում ինչո՞վ պիտի բացատրել երկու՝ «ընդարձակ» և «համառոտ» վարդապետությունների առանձնակի առկայությունը։ Պատահակա՞ն է, արդյոք, որ «Վասն հաւատոյում» գտնում ենք և «համառոտ» վարդապետության առանձին պարբերությունների համապատասխանություն։ Այս ամենից բացի՝ դեռ արծարծելի է այն խնդիրը, թե «Վարդապետութիւնն» ինքնին թարգմանակա՞ն երկ է, թե՞ հայկական իրականության մեջ ձևավորված և ապա Պատմություն մուծված ջատագովական աշխատություն։

Այս հարցերին պատասխանելու անհրաժեշտությունը նշանակալի է, բայց դուրս է ներկա աշխատության հնարավորության շրջանակներից։ Կարելի ենք նկատում աղբյուրագիտական-մեթոդական մի քանի դիտարկում կատարել։ Մովսես Խորենացու Պատմության Ագաթանգեղոսին առնչվող գլուխների ու ակնարկումների քննությամբ Ա. Տեր-Ղևոնդյանը եկել է այն եզրակացության, թե «V դարում գոյություն է ունեցել Ագաթանգեղոսի երկու խմբագրություն։ Դարի առաջին կեսում կազմավորվել է այն հին խմբագրությունը, որը ինչ-ինչ պատճառներով դուրս է մղվել ասպարեզից։ Հաղթել է դարի կեսերին կազմավորվածը, որը Ն. Մառի և Ն. Ադոնցի արտահայտությամբ կարելի է իրոք համարել ազգային եկեղեցու խմբագրություն»[23]։ Հիրավի, Ղազար Փարպեցու ճանաչած Ագաթանգեղոսը այսօրվա մեզ ծանոթ բնագրի ընդգրկումն է ունեցել, ուր ներկայացված է եղել և «Վարդապետութիւնը». «...զյորդորումն յայնմնետէ վարդապետութեան կենաց աշխարհիս Հայոց. զկտակս մկրտութեան լուսոյ, զոր փրկիչն Քրիստոս ի ձեռն մեծի նահատակին Գրիգորի, բարեխօսութեամբ և սուրբ կուսանացն, ծաւալեցոյց յաշխարհիս մերում»[24]։

Մենք, իհարկե, չենք բացառում Պատմության կազմում «Վարդապետության» կրելիք փոփոխությունների, մանավանդ լրացումների հնարավորությունը, բայց անկարելի է այդ պատճառաբանությամբ հարթել «Վասն հաւատոյի» հետ ունեցած տարբերությունը։ Ուստի կարծում ենք, որ «Վասն հաւատոն» գոյություն է ունեցել մինչև կանոնական խմբագրության ձևավորումը և չի դադարել ինքնուրույն երկ լինելուց՝ խմբագրումով Ագաթանգեղոսի Պատմություն մուծվելուց հետո ևս։ Վրացերենի թարգմանիչը այն Պատմությունից չի քաղել, իսկ «Վարդապետութիւնը» ժամանակի ընթացքում աճել-ընդարձակվել է հայրախոսական գրականությունից քաղումներ ու վերաշարադրումներ անելու հաշվին։ Ռ. Թոմսոնը նրանում բացահայտել է ս. հայրերի երկերին առնչվող բազմաթիվ տեղիներ։ Հենց այդ տեղիները ներկայացնող բնագրերի հունարենն ու հայերեն թարգմանությունները բաղդատելու ճանապարհով կարելի կլինի ասել, թե ե՞րբ և ի՞նչ թելադրանքով է «Վարդապետութիւնն» ընդարձակվել։ «Վասն հաւատոն», փաստորեն, V դարի կեսի պատկերն է ներկայացնում և դրանով իսկ ելման կետ է ծառայում՝ «Վարդապետութիւնը» քննելիս։

23 ՊԲՀ, 1975, № 4, էջ 138։

24 Ղազարայ Փարպեցւոյ՝ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 3։

სიტყუაჲ წმიდისა იპოლიტჱსი სარწმუნოებისათჳს*

I 1 გურწამს ვითარცა ნათელ-ვიღეთ, და ვადიდებთ ვითარცა განვნათლდით ნათლისღებითა მით ემბაზისაჲთა. გურწამს სახელი მამისაჲ და ძისაჲ და სულისა წმიდისაჲ[1], ვითარცა ჰრქუა მჴსნელმან სახარებასა შინა მოწაფეთა მათ, ვითარმედ: „წარვედით აღიერითგან და მოიმოწაფენით ყოველნი წარმართნი, და ნათელ-სცემდით მათ სახელითა მამისაჲთა და ძისაჲთა და სულისა წმიდისაჲთა"; რაჲმეთუ[2] ერთ არს არსებაჲ საკჳრველისა სამებისაჲ. 2 გურწამს და აღვიარებთ მამაჲ უშობელი[3], ღმერთი სრული და ძჱ შობილი[4] მამისაგან ნათლისა, ღმერთი სრული[5] და სული წმიდაჲ, მომცემელ მადლთა[6], ღმერთი სრული[5], ერთღმრთეება, ერთბუნება, ერთნება, სამი სახელი სამებისაჲ სრული.

II 1 ხოლო რავდენ[1] რაჲ არს არსებაჲ სიმდიდრისა მისისაჲ! ვინ იყოს კაცთაგანი, რომელი შემძლებელ იყოს ღმრთეებისა ვითარ არს ჭეშმარიტად გამოთქუმად? არამედ ზომით რავდენ[1] შემძლებელ არს უძლურებაჲ ესე ჩუენი, თჳთ ინება და გჳჩუენა ჩუენ, რაჲმეთუ: „არა ვინ იცის ღმერთი, გარნა სულმან[2] მან[3] ღმრთისამან და ძემან, რომელი მოვიდა და გჳთხრა და გამოგჳცხადა და გჳჩუენა ჩუენ"; რაჲმეთუ[4] იტყჳს: „რომელმან მიხილა მე იხილა მამაჲ ჩემი". ხოლო ჩუენ ვითარ შემძლებელ ვართ[5] თხრობად, რომელნი შემშჭუალულნი ვდგათ სახესა ხატისა ამის ჩუენისასა ვითარცა შეგუქმნნა ჩუენ შემოქმედმან? 2 აწ ჩუენითა ამით ხატითა ღმერთი ვითარმე ვქადიგოთ შენაწევრებულნი და შეძერწულნი შესუარულნი[6] მიწისაგან? თითოეულად[7] ასოებ<სა> თითოეულად[8] საქმჱ თანააქუს; ვერ შემძლებელ არს მოყუსისა[9] მას საქმესა: არა თუალსა ესმის და არცა ყური ხედავს, და არცა ენაჲ იყნოსს, არცა ჴელნი ვლენან[10], არცა ფერჴნი ლალადებენ; პირი[11] ჭამადთათჳს, ცხჳრნი ყნოსისათჳს, ქიმნი[12] გემოჲს სახილველად[13]; თითოეულად[14] თჳსსა მას ბუნებასა გამობმულ არს და დგას. 3 გარნა ესთენ ხოლო გურწამს და უწყით, რაჲმეთუ იგი არს ღმერთი ჭეშმარიტი, და არა თუ ვითარ არს შემძლებელ ვინ[15] არს თხრო-

* **Խորագիր.** თქუმული წმიდისა მამისა ჲპოლიტესი სარწმუნოებისათჳს, თავი 3 J. სარწმუნოვებისათჳს T.

I 1 წმიდისა სულისაჲ T 2 რამეთუ T 3 უშობელ T 4 შობილ T 5 ღმერთ სრულ J 6 მადლ მარადის J.

II 1 რაოდენ J 2 სულმანვე T 3 მან] T 4 + და J 5 ვართ] J 6 და შესუარულნი, შეძერწულნი T 7 თითოვეულად T 8 ასოებ თითოეულად] T 9 მოყუსისასა J 10 + და J 11 პირნი J 12 ქიმნი] ცხჳრნი T 13 გემოჲს სახილავად J 14 თითოვეულად T 15 ვინმე J

ԲԱՆ ՍՈՒՐԲ ՀԻՊՈՂԻՏԵՍԻ՝ ՎԱՍՆ ՀԱՎԱՏՈ

I 1. Հավատում ենք՝ որպես և մկրտվեցինք, փառավորում՝ որպես և լույս առանք կնքավազանի մկրտությամբ։ Հավատում ենք հանուն հոր և որդու և սուրբ հոգու, ինչպես և Ավետարանում Փրկիչն ասաց աշակերտներին, թե «Գնացե՛ք այսուհետև և աշակերտեցե՛ք զամենայն հեթանոս, և մկրտեցե՛ք զնոսա յանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյ սրբոյ», որովհետև մեկ է էությունը հրաշալի երրորդության։*

2. Հավատում ենք ու խոստովանում հորն անծին, աստված կատարյալ, և որդուն՝ ծնված լույս հորից, աստված կատարյալ, և սուրբ հոգուն՝ շնորհատու, աստված կատարյալ. մի աստվածություն, մի բնություն, մի կամք, երեք անուն՝ կատարյալ երրորդության։

*II 1. Իսկ որքա՜ն է հոր հարստության էությունը. ո՞վ կլինի մարդկանցից, որ կարող լինի աստվածությունն ինչպես է՝ ճշմարիտն ասել։ Այլև այնչափ, որքան կարող է անզորությունս մեր՝ ինքը կամեցավ և ցույց տվեց մեզ, որովհետև «Ոչ ոք գիտէ զաստուծոյ, եթէ ոչ Հոգին աստուծոյ և Որդին, որ եկն և պատմեաց և յայտնեաց և եցոյց»**, քանզի ասում է. «Որ ետես զիս՝ ետես զՀայր իմ»***։ Իսկ մենք ինչպե՞ս կարող ենք պատմել, որ գամված ենք մեր պատկերի այս տեսքին՝ ինչպես մեզ արարիչն արարեց։*

2. Արդ, մեր այս պատկերով ինչպե՞ս աստված քարոզենք, [մենք]՝ կազմավորվածներս ու հոդածներս, հողից խմորվածներս։ Յուրաքանչյուր անդամ իր գործն ունի և անկարող է զուգընկերոջ գործին. ոչ աչքն է լսում և ոչ էլ ականջը տեսնում, ոչ էլ լեզուն հոտոտում, ոչ էլ ձեռքերը գնում, ոչ էլ ոտքերը աղաղակում։ Բերանը ուտելիքի համար [է], հոտոտելիքը՝ հոտոտելու համար, քիմքը՝ համտեսի։ Ամեն մեկը իրեն հատուկ բնությանն է կապված ու մնում է։

3. Սակայն այսքանը գոնե հավատում ենք ու գիտենք, որ նա է ճշմարիտ աստված և ոչ թե՝ ինչպես կկարողանա մե՛կը պատմել աստծու [մասի]ն, որը ամենայնիվ լույս է, ամենայնի լսող, ամենայնի տեսնող, ամենայնի՝ ինչքան ինքն[ություն] կա. ամենայն զորություն է, ամենայն իմաստություն, հոգի կենդանի, հուր կիզիչ, անչափելի ու անփոփոխ, փառք ան-

* Մատթ., ԻԸ 19։

** Հմմտ. Առ կորնթ., I, Բ, 11, Մատթ., ԺԱ, 27, Ղուկ., Ժ, 22։

*** Հովհ., ԺԴ, 9։

ბად ღმერთი; რომელი ყოვლითავე ნათელ არს, ყოვლითავე მსმენელ[16], ყოვლითავე მხედველ[17], ყოვლითავე რავდენცა[18] თჳთ არს; ყოვლითავე ძალ არს, ყოვლითავე სიბრძნე არს, სული ცხოველი, ცეცხლი შემწუველი, განუზომელ და გარდაუცვალებელ, დიდება გამოუთქუმელ, ძალ აღუთუალველ, სიმდიდრე, სიკეთე, მსგავს, საკჳრველ, მიუწევნელ გონებათა[19] და ზრახვათა, გარეშე ყოველთა სიტყუათა. არა თუალთა ხილვა და[20] არცა სასმენელთა სმენა, და არცა მოგონებათა გულისათა შეუძლონ მიწევნად[21] რაჲ არს; ცანი ყოვლითავე და სოფელი[22] ყოვლითურთ და ცისკიდეთა ყოველთა ზეაღპყრობად[23] ვერ შეუძლონ; და სიტყუასა მისსა ზე[24] უტჳრთავს და უპყრიეს ყოველი, და ძალსა ბრძანებისა მისისასა დამოჰკიდავს, და დგას თჳთ. და ჰხუევიეს ყოველსა, ქუესკნელ[25] ყოველსა და ზემო ყოვლისა, გარეშე ყოვლისა; და ყოველი მის თანა არს და ყოველი მისა, და ყოველი დიდება მისა.

III 1 და ჟამად ჟამად ეტყოდა წმიდათა მათ მამათა ჩუენთა ჩუენებათა შინა გამოუთქუმელთა, მიუგულებელთა ცვალებათა, რომელ არა თუ ღმრთეებაჲ იგი ეგრე იყოს, არამედ ჩუენისა ამის ოდენ უძლურებისაებრ გუეჩუენის; და თჳთ თჳსსა მას ღმრთეებასა ჰგიეს, და არს საუკუნე, ცეცხლსა განსაკჳრვებელსა, სიკეთესა და შუენიერებასა ქებულსა, ღმრთეებისა ხატსა. 2 რამეთუ ღმერთი მიუწდომელ არს და განუზომელ, და განუყოფელ, და გამოუძიებელ, და შეუხებელ, და ვერ გულისხმისსაყოფელ[1] არს ყოველთა დაბადებულთა გამოუჩინებელ ხილვად, და[2] მახლობელ ყოველთა; და სახელი მისი არა ვინ იცნა, და არა ვინ არს მისა უწინარჱს[3] სხუაჲ[4], რომელმან მიერითგან მოაქამდე მას სახელსდვას: რამეთუ ყოველივე მის მიერ არს, ხოლო იგი თჳთ თავადი არსებით არს. უხილავ არს მოგონებით[5] გულთაგან, და[6] გამოუძიებელ[7] ბუნებაჲ პოვნიერებისა მისისაჲ; ყოველთა შეუძლებელთა მიმართ შეძლება იპოვის მის თანა. აწ ვინ შემძლებელ არს ხილვად და გამოძიებად ესევითარისა ძლიერებისა? არამედ თჳთ ეჩუენის ეგოდენ, რავდენცა[8] შემძლებელ ვინ[9] არნ ხილვად. 3 აწ ყოვლისა[10] შემოქმედმან, ყოვლისა[10] დამბადებელმან, ყოვლისა[10] მბრძანებელმან, ყოვლად მეცნიერმან, ყოვლად უფალმან, ყოვლისა მპყრობელმან, ყოველთა პოვნიერმან, ყოვლად მკურნალმან, ყოვლად სიბრძნემან, გამოჩინებასა თჳსსა მართალთა მიმართ საშინელებაჲ იგი თჳსი თჳთ[11] დაიფარის, რაჲთა ღმრთეებისა თჳსისა ესენი მახლობელ ყვნეს; და კაცთა[12] ხატად და ანგელოზთა[13] მსგავსად ეჩუენის, რაჲთა გონებათა[14] თუალითა შემძლებელ იქმნნენ[15] წმიდანი იგი ხილვად მისა.

---

16 ყოვლითავე მსმენელ] T 17 მხედვარ J 18 რაოდენცა J 19 +გან T 20 და] J 21 მიწევნად] მოგონებად J 22 სოფელი] ქუეყანაჲ J 23 ზეაღყრობად] აპყრობად J 24 + უპყრიეს და J 25 ქუესკნელს J.

III 1 გულისჴმისსაყოფელ J 2 და] T 3 უწინარეს მისა J 4 სხუა J 5 მოგონებილთა J 6 და] J 7 გამოუძიებელთაგან J 8 რაოდენცა J 9 ვინ] J 10 ყოვლის J 11 თჳთ] J 12 კაცთ J 13 ანგელოზთ J 14 გონებითა და J 15 იქმნენ JT.

պատմելի, անբավ զորություն, հարստություն, գեղեցկություն, [ան]նման, զարմանալի, անհասանելի մտքերին ու խորհուրդներին, դուրս ամենայն խոսքից։ Ո՛չ աչքերի տեսողությունը, ոչ ականջների լսողությունը, ոչ էլ սրտի դատումները կարող են հասնել՝ ինչ է՛. ամենայնի երկինք, աշխարհ ամենայնիվ, և բոլոր տիեզերքները չեն կարող վեր բարձրացնել նրան։ Նրա Բանն է ի վեր բարձել ու պահել բոլորը, կախյալ՝ ի զորություն նրա հրամանի։ Եվ կա ինքը՝ և՛ պատված բոլորով՝ ամենայնի ներքև ու ամենայնի վերև, արտաքս ամենայնի, և՛ ամենայն նրա մոտ է, և ամենայն՝ նրա՛։ Եվ ամենայն՝ ի փառս նրա։

III 1. Եվ ժամանակ առ ժամանակ ասում էր մեր սուրբ հայրերին՝ անպատմելի տեսիլներում, աներևակայելի փոփոխումներում, որ ոչ թե աստվածությունն է այդպիսին, այլև՝ սոսկ մեր անկարողությանը համապատասխան է երևում։ Իսկ ինքը՝ իր աստվածային բնությանն է նման և է՛ հավիտենական՝ հուր զարմանահրաշ, տեսք ու գեղ գովելի, աստվածային պատկեր։

2. Ուստի աստված անհաս է ու անչափելի, անբաժանելի ու անքննելի, անշոշափելի, և ոչ ամենայն արարածներն են հասու աներևույթը տեսնելու, և մերձ՝ ամենայնի։ Եվ նրա անունը ոչ ոք իմացավ, ու նրանից առաջ այլ մեկը չկա, որը այն ժամանակվանից մինչ այս անվաներ նրան, որովհետև ամենայն ինչ նրա կողմից է [ստեղծված], իսկ նա ինքը՝ ինքյան գոյ է։ Անտեսանելի է սրտամտություններին և անքննելի՝ նրա տիրության էությունը, ամենայն անկարելիների հանդեպ կարելիություն կա նրա մոտ։ Արդ, ո՞վ կարող է տեսնել ու որոշել այսպիսի զորությունը։ Այլ ինքն է ցույց տալիս այնքան, որքան որ կարող են տեսնել։

3. Արդ, ամենայնի արարիչը, ամենայնի ստեղծողը, ամենազորը, ամենիմաստը, ամենայն տերը, ամենակալը, ամենագտիչը, ամենաբժիշկը, ամենայն իմաստունն արդարների վերաբերմամբ ինքն է հայտ անում, իր ահեղությունից ինքն է պահպանում, որպեսզի նրանց իր աստվածությանը մերձավոր դարձնի։ Եվ մարդկանց տեսքով ու հրեշտակների նմանությամբ է երևում, որպեսզի սրբերը կարողանան մտքի աչքով տեսնել նրան։

IV 1 ესე წმიდაჲ სარწმუნოებაჲ[1] ჭეშმარიტად დავიმტკიცოთ, რომელი ცხადად და პირსპირ[2] გუმოძღურიან[3] ჩუენ წმიდათა წიგნთა[4] წმიდითა სულითა საუკუნოჲსა მისთჳს სასუფეველისა ღმრთისაჲსა, რომელ გამოეცხადა ზრახვით[5] მართალთა მათ მამათა ჩუენთა. და იტყოდა ძითა თჳსითა და სულითა წმიდითა, და ეხარა სოფელსა წმიდითა წინაჲსწარმეტყუელებითა და მოციქულებითა და მოგუეცა ჩუენ სიმტკიცჱ სარწმუნოებისაჲ[6], რაჲთა სარწმუნოებითა[7] ვეგნეთ ჭეშმარიტებასა. 2 ერთ ღმერთ მამაჲ და უფალ შემოქმედ ყოვლისა, და მხოლოდშობილ ძე, რომელ მამისა მიერ და მამისა თანა და მამისა მიმართ, და წმიდაჲ სული მისი, რომელ არსებისა მისისა მიერ და ერთობით ყოველი შექმნა; რომელ არს ერთი უფლებაჲ, ერთი ძალი, ერთი ფლობილებაჲ, ერთი ჴელმწიფებაჲ, ერთი პეტობაჲ, ერთი სიმდიდრჱ, ერთი მეცნიერებაჲ, ერთი დაუსაბამოჲ ძლიერებაჲ, ერთი სამებაჲ სრული, ერთი სრული ნებაჲ გამოუთქუმელსა და გამოუძიებელსა ერთსა ერთობასა სამებისასა, ერთი არსებაჲ, ერთი ბუნებაჲ, ერთი ღმრთეებაჲ, მამაჲ და ძჱ და სული წმიდაჲ, სამი სახელი, ერთი ძალი ღმრთეებისაჲ. 3 მამაჲ თჳთ,[8] ძჱ მამისაგან, და სული წმიდაჲ მამისა მიერ და ძისა თანა[9], ბუნებითა არსებისაჲთა წრფელ, მოდგამ, სწორ სიღრმეთა, სიმაღლეთა[10], სივრცეთა, სიგრძეთა; რომელმან ყოველთა დაბადებულთა განვლის ცისათა და ქუეყანისათა, ნივთა და ქართა, ცეცხლსა და წყალსა, ნათელსა და ბნელსა, უფსკრულთა[11] სიღრმეთა და სიმაღლეთა[12], რომელ გამოუჩინებელთა დაბადებულთა და ძალთა ნათლითა თჳსითა მყის მიიწიის და განვლის; და შეუპყრობელ არს ყოველთაგან ბუნებაჲ მისი, ერთ გჳრგჳნ სამებისაჲ; და სავსე არიან ცანი და ქუეყანაჲ დიდებითა მისითა, ვითარცა იტყჳს მეფჱ სოლომონ, ძჱ იგი წინაჲსწარმეტყუელისაჲ სულითა წმიდითა ლოცვასა შინა თჳსსა, ვითარმედ: „ცანი და ქუეყანაჲ ვერ შემძლებელ არიან დატევნად ღმრთისა“; და სხუაჲ წინაჲსწარმეტყუელი ცათა საყდრად იტყჳს და ქუეყანასა კუარცხლბერკად[13] ფერჴთა მისთა. და აწ რომელსა ვერ შემძლებელ არიან ყოველნი დაბადებულნი დატევნად, განსუენებასა თჳსსა ყუდროთა და მდაბალთა თანა, რომელნი ძრწიან სიტყუათა მისთაგან და რომელთა ეშინის სახელისა მისისა, მათ თანა განაჩინებს საყოფელსა თჳსსა.

V 1 ესე არს სიმდიდრჱ ერთობისა წმიდისა სამებისაჲ სახელდებით და ესე არა დაფარულ არს ბრძენთაგან ამით, რაჲმეთუ მამაჲ არა შობილ არს და ძჱ არა მშობელ და შობილ არს მამისაგან, და სული წმიდაჲ არცა მშობელ, არცა შობილ, არამედ გამომავალ და მიმომფენელ[1], მსგავსად სიტყჳსა მის, რომელ თქუა: „სული იგი ჭეშმარიტი რომელი მამისაგან გამოვალს“. 2 და არა ითქუმის ძმა ძისა, რაჲმეთუ[2] არა არს ნაშობ და არცა უცხო

IV 1 სარწმუნოებაჲ T 2 პირისპირ J 3 გუმოძღურენ J 4 წმიდანი წიგნნი T 5 ზრახვითა J 6 სარწმუნოებისაჲ T 7 სარწმუნოებითა T 8 + და T 9 მათ მიერ და მათ თანა J 10 სიმაღლეთა] სიღრმეთა J 11 + და J 12 და სიმაღლეთა] J 13 კუარცხლბეკად J T (*ձ. Գարիտի վերականգնում*)։

V 1 მიმფენილ J 2 + არა ითქუმის ძმა ძისა, რაჲმეთუ J

IV 1. Այս սուրբ հավատը ճշմարիտ հաստատենք, որը բացեիբաց ու դեմհանդիման վարդապետում են մեզ սուրբ գրքերը՝ սուրբ հոգով, հանուն աստծո մշտնջենական արքայության, որ խորհրդով հայտնվեց մեր արդար հայրերին։ Եվ խոսում է իր որդու ու սուրբ հոգու միջոցով, և ավետեց աշխարհը սուրբ մարգարեներով ու առաքյալներով, և տվեց մեզ հավատի հաստատություն, որպեսզի հավատով ընկալենք ճշմարտությունը։

2. Մի աստված հայր և տեր՝ արարիչ ամենայնի, և միածին որդի, որ հոր կողմից, հոր հետ ու հոր հանդեպ [է], և նրա սուրբ հոգին, որ նրա էությունից [է] և միասին ամենայն արարեց, որ մեկ տերություն է, մեկ զորություն, մեկ իշխանություն, մեկ պետություն, մեկ հարստություն, մեկ իմացություն, մեկ անսկզբնական զորություն, մեկ կատարյալ երրորդություն, մեկ կատարյալ կամք՝ անպատում ու անքննին միություն երրորդության, մեկ գոյություն, մեկ բնություն, մեկ աստվածություն՝ Հայր և Որդի և Սուրբ Հոգի, երեք անուն՝ աստվածության մեկ զորություն։

*3. Հայրն ինքյան, որդին՝ հորից և սուրբ հոգին՝ հոր կողմից ու որդու հետ, էության բնությամբ պարզ, [հարա]կից, հավասար՝ խորություններում, բարձրություններում, լայնություններում, երկայնություններում, որը ամենայն արարածներին միջամուխ է՝ երկնայիններին թե երկրայիններին, հողերին թե հողմերին, կրակին ու ջրին, լույսին ու խավարին, անդունդներին ու բարձունքներին, որ աներևակ արարածներին ու զորություններին իր լույսով շտապ հասնում է ու անցնում։ Անկարելի է բոլորի համար նրա՝ միապսակ երրորդության, բնությունը։ Եվ երկինք ու երկիր լի են նրա փառքով, ինչպես որ մարգարեի որդի Սողոմոն արքան էր սուրբ հոգով ասում իր աղոթքում, թե «երկինք և երկիր անկարող իցեն բովանդակել զաստուած»**։ Իսկ մյուս մարգարեն երկինքը աթոռ է համարում, իսկ երկիրը՝ նրա ոտների պատվանդան։ Եվ արդ, որին անկարող են ամենայն արարածք բովանդակել՝ իր հանգիստը հեզերի ու խոնարհների մոտ [է], որոնք դողում են նրա խոսքերից և որոնք ահ ունեն նրա անունից՝ նրանց մոտ է կարգում իր հանգրվանը**։

V 1. Այս է անվանադիր մեծությունը սուրբ երրորդության միության, և այն ծածուկ չէ իմաստուններից, այն որ՝ Հայրը ոչ ծնյալ և ծնող է, որդին

* Հմմտ. III Թագ., Ը, 27։

** Հմմտ. Եսայի, ԿԶ, 1—2։

ღმრთისაგან, რაჲმეთუ მამისაგან გამოვალს, ვითარცა[3] ევა და აბელ არა ძმა ითქუმიან ურთიერთას, დაღათუ ორნივე ადამისგან არიან, ერთი იგი შესაქმით და ერთი იგი შობით; და არა თუ ადამი ევაჲსა მამა ითქუმის, დაღათუ მისგან გამოილო გუერდი იგი. ამისა[4] სახედცა დაღათუ ღმრთისაგან არს ძჱ და სული წმიდაჲ, არა ითქუმიან ურთიერთას ძმა, რაჲმეთუ ცხადად[5] არიან განწესებანი ურთიერთას[6] სავსებისაჲ მის ერთისაგან არსებისა მამისა.

VI. 1 აღვიარებთ და უწყით მამაჲ დაუსაბამო, გამოუჩინებელ, მიუწდომელ, გამოუთქუმელ, განუხრწნელ, განუზომელ, განუყოფელ, მარტივ, წრფელ, უნაწევრო, უშობელ, შეუზომელ[1], დაუსაბამო[2], უსაზღვრო, ურეველ, უსხეულო, წინავე მოგონებულ, უწინარჱს ცნობა ყოველთა დაბადებულთა და ქმნულთა. 2 და ძჱ შობილი მხოლოდშობილ, თჳნიერ დასაბამისა, თჳნიერ ჟამისა, გამოუთქუმელ, თჳნიერ განყოფისა, განუყოფელ, განუშორებელ, თჳნიერ გუემათა, განუწვალებელ, თჳნიერ შუამდგომელებისა[3] უწინარჱს ყოველთა ჟამთა და მის მიერ სამარადისოჲსა მამისაგან შობილ, რაჲმეთუ ღმერთებრ[4] ღმრთისა მიერ შობილი და არა კაცებრ ჟამთა განწესებითა და[5] არცა თესლწარმოცემულ აღძრვით წარმოჩნდა ანუ ჴირით რაჲმე, რომელ[6] შორავნ[7] ღმრთეებასა, არამედ სიწმიდით და სიწრფოებით ვითარცა ღმრთეებასა შეაშუს შობად ეგრე მსგავსად, ვითარცა თჳთ არს, ვითარცა მზისთუალმან ნათელი, ვითარცა წყარომან წყალი. 3 უკუე ჩას[8] რაჲმეთუ ღმრთისაგანი იგი შობილი მისისა არსებისაგანავე არს, და მსგავს მისა არს[9] და მისებრ არს, და თჳთ ღმერთ არს; იშვა და არა განეშორა, მოვიდა მამისაგან და არა განეყენა; არამედ მამისაგან არს და მარადის არს და ყოველსა ჟამსა[10] არს და სრული დგას თჳსსა თავადსა არსებასა. და ვინ არს, რომელმან ესე გამოცხადებულად განგჳმარტოს, არამედ მახარებელმან და ღმრთისმეტყუელმან[11] იოვანე, რომელ თქუა, ვითარმედ: „ღმერთი ვერ ვინ სადა იხილა, გარნა მხოლოდშობილმან ღმერთმან[12], რომელ არს წიაღთაგან მამისათა მან გჳთხრა“.

VII და სული წმიდაჲ გამომავალ, სამარადისო, საუკუნო მამისაგან, ამიერითგან სული წმიდაჲ, სული პირისა ღმრთისასაჲ, სული წრფელი, სული პეტობისაჲ, სული სახიერებისაჲ, სული აზნაურებისაჲ, სული სიბრძნისაჲ და[1] ცნობისაჲ, სული ზრახვისა[2] ძალისაჲ, სული ჭეშმარიტებისაჲ, რომელ მამისაგან გამოვალს მისვე არსებისაჲ მამისაჲ და ძისაჲ არს. არა თუ ქმნულ არს და არცა მონა, არა ბრძანების მიმღებელ, არამედ ბრძანების მიმცემელ, არა ბრძანებასა ქუეშე და არცა საქმესა, არამედ თანამოქმედ; რაჲმეთუ ერთ საქმე არს მამისაჲ და ძისაჲ და სულისა

3 + სახე J 4 ამის J 5 ცხად J 6 ურთიერთარს J.

VI 1 უზომელ J 2 უდასაბამო J 3 შუვამდგომელებისა T შუამდგომელობისა J 4 ღმრ თეებრ J 5 და] J 6 რომელი J 7 ჰშორავს J 8 ჩანს J 9 და მსგავს მისა არს] J 10 ყოველთა ჟამთა J 11 ღმრთისგამომთქუმელმან J 12 + მან J.

VII 1 და] J 2 ზრახვისაჲ J

չծնող և ծնյալ է Հորից, իսկ սուրբ հոգին՝ ոչ ծնյալ և ոչ էլ ծնող, այլև ելնող ու սփռող, նման բանին, որ ասաց. «Հոգին ճշմարիտ, որ ի Հօրէ ելանէ»*։

2. Եվ չի կոչվում եղբայր որդու, որովհետև ծնյալ չէ և ոչ էլ աստծուն օտար, քանզի հորից է սերում, ինչպես որ Եվան ու Աբելը միմյանց [քույր ու] եղբայր չեն կոչվում, թեև երկուսն էլ Ադամից են՝ մեկը ստեղծմամբ և մեկը՝ ծնունդով։ Եվ Ադամը Եվայի հայր չի կոչվում, թեև նրանից առավ կողը։ Այդպես էլ, թեև աստծուց են Որդին ու սուրբ Հոգին՝ միմյանց եղբայր չեն կոչվում, որովհետև հայտնապես կարգված են միմյանց՝ հոր մեկ էության կատարելությամբ։

VI 1. Խոստովանում ենք ու ճանաչում հայր անսկիզբ, աներևույթ, անհաս, անճառ, անեղծ, անչափելի, անբաժանելի, հասարակ, պարզ, անմասն, անծնունդ, անպարփակ, անսկիզբ, անսահման, անխառն, անմարմին, նախակարծ, առաջիմաց ամենայն ծնյալներից ու արարածներից։

2. Եվ ծնյալ որդին՝ միածին, առանց արարչության, առանց ժամանակի, անճառելի, առանց բաժանման, անբաժանելի, անհեռանալի, առանց չարչարանքների, անտանջելի, առանց միջնորդության, առաջագույն բոլոր ժամանակներից և նորին հավիտենական հորից ծնված։ Ուստի՝ աստվածաբար աստծուց ծնված և ոչ մարդու պես՝ ժամանակների կարգմամբ ու ոչ էլ սերմնարկ շարժմամբ հայտնվեց կամ ինչ որ ցավով, որ հեռու թող լինի աստվածությունից, այլ սրբությամբ ու մաքրությամբ՝ ինչպես աստվածության է վայել ծնել, այնպես՝ ինչպես ինքն է, ինչպես արեգակը լույս [ծնի], ինչպես աղբյուրը՝ ջուր։

3. Ակներև է այլևս, որ աստծուց ծնվածը նաև նրա էությունից է, նման նրան, նույնինքյան է և ինքն աստված է, ծնվեց ու չօտարացավ, եկավ հորից ու չբաժանվեց, այլև հորից է և հավիտենական է, մշտաժամ է և կատարյալ՝ ինքյան իր բնության էությամբ։ Եվ ո՞վ կա, որը այս հայտնապես մեկնի մեզ, թե ոչ ավետարանիչն ու աստվածաբանն Հովհանը, որ ասաց, թե. «Զաստուած ոչ ոք ետես երբէք, բայց միածինն աստուած։ Որ է ի ծոց Հօր՝ նա պատմեաց»**։

VII Եվ սուրբ հոգին բխող, հավիտենական, հավերժական հորից, այնուհետև՝ սուրբ հոգի, հոգի աստծու բերանի, հոգի ուղիղ, հոգի պետության, հոգի գթության, հոգի ազատության, հոգի իմաստության ու իմացության, հոգի խորհրդի զորության, հոգի ճշմարտության, որ բխում է Հորից՝ վերստին հոր

* Հմմտ. Յովհ., ԺԵ, 26։

** Յովհ., Ա, 18։

წმიდისაჲ; რამეთუ ღმერთ არს სული წმიდაჲ[3], მასვე საქმესა მამისა და ძისასა[4] თჳთ ნებითა თჳსითა ჴელმწიფედ იქმს; რამეთუ განმათავისუფლებელ არს და მაცხოვარ, მისცემს[5] შჯულსა[6], განუყოფს[7] ნიჭსა[8] ვითარცა ჰნებავს, აღავსნის ყოველნი; რამეთუ ზესკნელნი იგი ძალნიცა[9] ღაღადებენ და იტყჳან: „წმიდა, წმიდა წმიდა“: სამჯერ „წმიდა“ თქჳან და ერთჯერ „უფალი“, რამეთუ ერთ არს უფლებაჲ წმიდისა სამებისაჲ.

VIII 1 ჰხედავა[1] ერთობასა და სამებასა ჭეშმარიტსა? და არა თუ თჳსთჳსა[2] ღმერთთა ვიტყჳთ; არა ითქუმიან სამ ღმერთ, რამეთუ არა სხუა და სხჳსა[3] არსებისაგან არიან. არა ითქუმის კუალად ერთ ხოლო, რაჲთა არა ჰურიაებასა და საბელიანოზთა[4] გონებასა მივსდრკეთ, არამედ გურწამს სამებაჲ თავადი, ერთობით სავსება. და არა ვიტყჳთ სამსა ღმერთსა, რაჲთა არა წარმართთა ვემსგავსნეთ, რომელნი იგი მრავალს ღმერთს იტყჳან. 2 და რომელნი[5] ამას ჭეშმარიტსა სარწმუნოებასა[6] მიაქცევს, მისდრკეს იგინი ცთომილებად, ვითარცა იტყჳს მაცხოვარი სახარებასა შინა ვითარმედ: „მე მოვედ სახელად მამისა ჩემისა, და მე არა შემიწყნარებთ[7]; სხუაჲ[8] მოვიდეს სახელითა თჳსითა, და იგი შეიწყნაროთ“. 3 ამასვე წამებს[9] პავლე და იტყჳს: „მისთჳს[10] რამეთუ სიყუარული ჭეშმარიტებისაჲ არა შეიწყნარეს რაჲთა განერნენ, მოუვლინოს[11] მათ ზედა ცთომაჲ[12] ცთომილებისაჲ, რაჲთა ჰრწმენეს მათ მაცთურისაჲ მის და დაისაჯნენ ყოველნი, რომელთა არა ჰრწმენა ჭეშმარიტებაჲ“.

IX 1 ხოლო ჩუენ მტკიცედ ვიპყრათ ჭეშმარიტი იგი და კეთილი აღსაარებაჲ, რამეთუ არა ყოველთა მიცემულ[1] არს სარწმუნოებაჲ[2], არამედ რომელთა მიმადლებულ[3] არს მამისაგან ნათლისა[4] და თავითა თჳსითაგან შეწევნულ და შეწირულ, ვითარცა თქუა წინაჲსწარმეტყუელმან სულითა წმიდითა, ვითარმედ: „იყვნენ ყოველნი სახელდებულ ღმრთისა მიერ“. და მერმე იტყჳს: „მივსცნე შჯულნი ჩემნი გონებათა[5] მათთა[6] და[7] გულთა[8] მათთა[9] გამოვწერნე იგინი; და იყვნენ იგინი[10] ჩემდა ერად, და მე ვიყო მათ ღმერთ“. 2 და იგი თავადი, საუკუნოჲ იგი[11], შობილი დაუსაბამოჲ იგი მამისაგან, და ძლიერებაჲ იგი, და ღმრთეებაჲ და სიტყუაჲ იგი, ღმერთი შობილი მამისაგან, უწინარესი იგი ყოველთა საუკუნეთაჲ, იგივე ნაშობ ღმრთის, იგივე ღმრთეება[12], იგივე ძჱ ღმრთისაჲ ჩუენისა ჴსნისათჳს მოვიდა და შეიმოსა კაცი ესე და იშვა წმიდისა მისგან ქალწულისა ჴორცითა დასასრულსა[13] ჟამთასა, ხოლო არა თუ აღრევით ანუ აღშფოთევით. 3 მამაჲ და ძჱ და სული წმიდაჲ ღუწოლილისა[14]

3 რაჲმეთუ ღმერთ არს სული წმიდაჲ] T 4 ძისა J 5 მისცეს J 6 შჯული J 7 განუყოს J 8 ნიჭი J 9 იგიცა ძალნი J.

VIII 1 ჰხედავ J 2 თჳსთჳსსა J 3 სხუა J 4 საბელეანთა J 5 რომელთა იგი J 6 სარწმუნოვებასა J 7 შემიწყნარეთ T 8 სხუაჲ] ხოლო სხუაჲ J 9 ეწამების J 10 მისთჳს] მის წილ J 11 მოიევლინოს J 12 ცთომაჲ] ცნობაჲ J.

IX 1 და მიცემულ T 2 სარწმუნოვებაჲ T 3 და მიმადლებულ T 4 ნათლისა] J 5 გონებასა J 6 მათსა J 7 + ზედა J 8 გულსა J 9 მათსა J 10 იგინი] J 11 იგი საუკუნოჲ T 12 + შობილი იგი მამისაგან, უწინარესი იგი ყოველთა საუკუნეთაჲ T 13 აღსასრულსა J 14 sic JT

և որդու էությանն է։ Ոչ արարյալ է և ոչ էլ ծառա, ոչ հրամանառու, այլև՝ հրամանատու, ոչ ենթակա հրամանի, և ոչ էլ գործի, այլև գործակից, որովհետև մեկ է հոր և որդու և սուրբ հոգու գործը։ Քանզի ասված է սուրբ հոգին՝ հոր և որդու նույն գործը ինքն իր կամոք է վարում, քանզի ազատարար է և կենարար՝ օրէն (հավատ) է տալիս, շնորհ բաժանում՝ ինչպես կամենա, լցնում ամենին, երկնային զորությունները իսկ բարբառում են և ասում. «Սուրբ, սուրբ, սուրբ», երիցս «սուրբ» են ասում և մեկ անգամ՝ «տէր», որովհետև մեկ է տերությունը սուրբ երրորդության։

VIII 1. Տեսնո՞ւմ ես ճշմարիտ միությունն ու երրորդությունը։ Եվ ոչ թե առանձին-առանձին աստվածներ ենք ասում՝ երեք աստված չեն կոչվում, որովհետև այլ և այլ էության չեն։ Չի կոչվում նաև միայն մեկ, որպեսզի հրեության ու սաբելիանոսների կարծածին չհակվենք. այլև հավատում ենք ինքյան երրորդության, միությամբ կատարյալ։ Եվ չենք ասում երեք աստված, որպեսզի չնմանվենք հեթանոսներին, որոնք բազմաստված են կոչում։

2. Եվ ովքեր այս ճշմարիտ հավատից շեղվեցին՝ նրանք մոլորության հակվեցին, ինչպես որ Փրկիչն է ասում Ավետարանում, թե. «Ես եկի յանուն հօր իմոյ, և ոչ ընդունիք զիս։ Այլ որ եկեսցէ յիւր անուն՝ զնա ընդունիցիք»։*

*3. Նույնն է վկայում և Պողոսն ու ասում. «Փոխանակ զի զսէրն ճշմարտութեան ոչ ընկալան՝ զի ապրեսցին, առաքեսցէ ի վերայ նոցա մոլորութիւն ստութեան, զի հաւատան անօրէնութեանն, և դատապարտեսցին ամենեքեան, որ ոչ հաւատացին ճշմարտութեան»**։*

*IX 1. Իսկ մենք ամուր պահենք այդ ճշմարիտ ու լավ խոստովանությունը, որովհետև ոչ բոլորին է տրված հավատ, այլ ովքեր օրհնյալ են լույս հորից և անձամբ իրենք՝ հասու և նվիրված, ինչպես որ մարգարեն ասաց սուրբ հոգով, թե «Եղիցին ամենեքեան անուանակոչեալք յաստուծոյ»***, և ապա՝ «տա՛ց զօրէնս իմ ի միտս նոցա և ի սիրտս նոցա գրեցից նոսա. և նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ, և եղէց ես նոցա աստուած»****։*

2. Եվ նա՝ ինքյան, հավերժական, նա՝ ծնված անսկզբնական հորից, նա՝ զորություն, նա՝ աստվածություն և Բան, աստված՝ ծնյալ հորից, նա՝ առաջնական ամենայն հավիտենականաց, նույն նա՝ ծնյալն աստծո, նույն ինքն աստվածություն, նույն ինքն որդին աստծո, մեր փրկության համար եկավ և մարդեղացավ ու ժամավարտին ծնվեց սուրբ կույսից մարմնով, սակայն ոչ խառնությամբ կամ հուզումով։

* Յովհ., Ե, 43։

** II Առ. Թեսաղ., Բ, 10։

*** Յովհ., Զ, 45։

**** Երեմ., ԼԱ, 33։

მის ჟამსა ქალწულისა მის წმიდისა[15] ჴორცთა შინა მოვიგონებდეთ გულისხმისყოფად, არამედ განუშორებელობისა და განუყოფელობისათჳს არსებისაჲსა, ერთობისა მისთჳს ნებისა და ერთ.ბისა—ჰე, ხოლო თითოეულისათჳს[16] არა. რაჲმეთუ ვითარცა შობასა მას მამისაგან გულისხმა ვჰყოფთ, და შობილსა მას ძესა ვსცნობთ, და გამომავალებასა მას სულისა წმიდისასა[17] მის მიერ აღვიარებთ, ეგრეცა მოვლინებასა მას ძისასა მამისა მიერ მხოლოჲსა, და მეორედ შობაჲ იგი ქალწულისა მისგან ძისა ღმრთისაჲ თჳსად და მხოლოდ, და[18] განწმედაჲ იგი საშოჲსა მის ქალწულისაჲ და განწმედაჲ ტაძრად წმიდისა სულისა[19] მხოლოდ; რაჲმეთუ არა თუ ერთ სახელ არს წმიდაჲ იგი სამებაჲ, არამედ სამი თავადი სრული სახელი ჭეშმარიტად.

X 1 აწ რომელსა[1] ცანი და ქუეყანაჲ ვერ შემძლებელ არიან დატევნად, ვითარმე დაიტიოს იგი გულმან კაცისამან? ნუ უკუე[2] უფროჲს არს კაცი ცისა და ქუეყანისა ანუ თუ ყოველთა დაბადებულთა? აწ გულისხმა-ყავ, რაჲმეთუ ღმერთსა რაჲცა ჰნებავნ და არნ, და რაჲცა უნდა და ქმნა, და რასაცა უნებს და იქმს, და რაჲ ჰნებავნ არა გარე-წარჰჴდის[3], არამედ დაიმცირა თავი თჳსი და[4] დაიკნინა, და იქმნა რაჲცა[5] უნდა. 2 მოავლინა ღმერთმან ძჱ თჳსი სოფლად, რომელი მოვიდა და იშვა დედაკაცისაგან წმიდისა; მოივლინა უფალი ღმრთისაგან და წმიდისა სულისაგან[6]; თჳთ ძჱ მოვიდა, და იშვა ქალწულისაგან თჳთ, თავით თჳსით ჴელმწიფედ, ვითარცა უნდა, მსგავსად სიტყჳსა მის, ვითარმედ: „ფლობა მაქუს მე დადებად თავისა ჩემისა, და ფლობა მაქუს მერმე აღებად მისა". მოვიდა და აღასრულა ნებაჲ მომავლინებელისა თჳსისაჲ, მსგავსად სიტყჳსა მის, რომელ თქუა, ვითარმედ: „მოვედ აღსრულებად ნებასა[7] მამისა ჩემისასა"[8], რაჲთა გჳჩუენოს ერთობაჲ იგი სამებისაჲ, განუშორებელ და განუყოფელ თჳთ ერთობითა მით არსებითა, ნებითა მამისაჲთა. 3 და შევიდა მუცელსა მას ქალწულისასა და არა დაიძაგა, რაჲმეთუ თჳთ თავადი იყო განმწმედელ ყოვლისა, და თჳთ ნებითა[9] თჳსითა შეიხჳა სახუეველთა[10]; და ძუელი იგი ღმრთეებაჲ ჩუენთჳს ყრმა იქმნა; და რომელ იგი განუზომელ და მიუწდომელ იყო სავსებასა ღმრთეებისასა ჩუენთჳს გარდამოჴდა, და დაიკნინა თავი თჳსი, და დაიტია ჴორცთა შინა; სრულად გამოჩნდა ჭეშმარიტად ჴორციელად, მსგავსად სიტყჳსა მის, რომელ თქუა[11], ვითარმედ: „არა ზომით მისცა მას სული იგი". 4 დალათუ შეიმოსნა ჴორცნი იგი და იშვა ჩუენდა მსგავსად, ხოლო ღმრთეებაჲ იგი არა იცვალა, არამედ დგას დიდებასა მას მამულსა, ბუნებასა[12] მას ღმრთეებისა თჳსისასა[13]; ვითარცა იყო, ეგრეცა არს[14] და დგას უკუნისამდე. მამისა თჳსისა თანა არს მაღალთა შინა თჳსსა მას ბუნებასა, ვითარცა თჳთ[15] იტყჳს, ვითარმედ: „მე თჳთ იგივე ვარ, და

15 წმიდისა] J 16 თითოეულისათჳს T 17 წმიდისასასა T 18 და] T 19 სულისა წმიდისა J.
X 1 რომელს J 2 უკუე]თუ J 3 გარე წარჰჴდის J 4 და] T 5 რაჲცა] ვითარცა T 6 სულისა წმიდისა J 7 ნებისა J 8 ჩემისა J 9 ნებსითა J 10 სახუცველითა J 11 + მოციქულმან T 12 ბჳნებასა T 13 თჳსისისასა T 14 არს] J 15 + უფალი T

3. Հայր և որդի և սուրբ հոգի սուրբ կույսի մարմնական տքնության ժամին պիտի խորհենք հասկանալ, այլև՝ էության անանջատության ու անբաժանության առումով, նրա կամքի միության ու միասնության, այո, իսկ առանձնականի համար՝ ոչ։ Ուստի ինչպես որ ծնունդն ընկալում ենք հորից, ծնյալին որդի ենք ճանաչում և սուրբ հոգու բխումը նրա կողմից խոստովանում, այդպես էլ որդու գալուստը՝ հոր կողմից միայն և դարձյալ որդու ծնունդը կույսից՝ աստծո որդու բնության և միա՛յն, և կույսի արգանդի սրբումը՝ սրբումն սուրբ հոգու տաճարի միայն, որովհետև սուրբ երրորդությունը ոչ թե մեկ անուն է, այլև՝ երեք ինքյան կատարյալ անուն ճշմարտապես։

X 1. Արդ, նրան, ում երկինքն ու երկիրը չեն կարող կրել, ինչպե՞ս կբովանդակի նրան մարդու սիրտը, միթե՞ մարդը մեծ է երկնից ու երկրից կամ թե ամենայն արարածներից։ Արդ, ընկալիր, որ աստված ինչ կամենա՝ կլինի, և ինչ ուզում էր՝ արեց, ինչ կամենում է՝ կատարում է, և ինչ կամենա՝ չի շրջանցի։ Այլև խոնարհեց իր անձն ու նվաստացրեց, և կատարվեց՝ ինչ ուզում էր։

2. Աստված իր որդուն աշխարհ ուղարկեց, որը եկավ և ծնվեց սուրբ կնոջից. ուղարկվեց տերն աստծուց և սուրբ հոգուց։ Ինքը որդին եկավ, կույսից ինքը ծնվեց, ինք ըստ ինքյան՝ որպես տիրակալ, ինչպես և կամենում էր, նման այն խոսքին, թե «իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ, և իշխանութիւն ունիմ՝ դարձեալ առնուլ զնա»: Եկավ և կատարեց իրեն ուղարկողի կամքը, համապատասխան այն խոսքին, որ ասաց, թե «Եկի կատարել զկամս Հօր իմոյ»**, որպեսզի մեզ ցույց տա երրորդության միությունը՝ ինքը անքակտելի ու անբաժանելի, միավորությամբ, էությամբ, հոր կամոք։*

*3. Եվ մտավ կույսի արգանդն ու չպղծեց, որովհետև ինքն անձամբ սրբիչ էր ամենայնի և իր կամքով պատվեց խանձարուրներով։ Եվ հինավուրց աստվածությունը մեզ համար մանուկ դարձավ. և որը անչափելի ու անհաս էր աստվածության կատարելությամբ՝ մեզ համար վար իջավ, նվաստացավ անձով և մարմնականի մեջ ամփոփվեց, ամբողջովին երևաց ճշմարտապես մարմնավոր, նման այն խոսքին, որ ասաց, թե «Ոչ չափով ետ զնա հոգի»***։*

*4. Թեպետ մարմին առավ և ծնվեց մեզ ի նմանություն, սակայն աստվածությունը չփոխվեց, այլ մնում է հայրենի փառքին, իր աստվածային բնությանը։ Ինչպես էր՝ այնպես էլ է և կմնա հավիտյան. իր հոր հետ է՝ յուր բնության բարձունքներում, ինչպես ինքն է ասում, թե «ես նոյն ես եմ, և ոչ փոխեցայ»****։*

* Յովհ., Ժ, 18։
** Հմմտ. Յովհ., Զ, 38։
*** Հմմտ. Յովհ., Գ, 34։
**** Հմմտ., Մաղաք., Գ, 6։

բ) Թարգմանիչը «ինչպես երևում է, ձեռքին ունեցել է Ագաթանգեղոսի որոշակի (=հայտնի—Պ. Մ.) խմբագրության ինչ-որ չափով տարբերվող պատումից (վարիանտ) քաղված տեքստ»[18]։

Այլ խոսքով, IX—X դդ. կատարված վրացերեն թարգմանության հայերեն բնագիրը, որ մասամբ է միայն բացահայտված անկախ «Վկայաբանության» տեսքով, եթե նույնիսկ քաղված է Ագաթանգեղոսի վերջին (=ազգային) խմբագրությունից, այնուամենայնիվ՝ քաղված է Ագաթանգեղոսի մեզ հայտնի ձեռագրերից շատ ավելի հին և որոշակի այլընթերցումներ ունեցող ձեռագրից։ Դրանով իսկ՝ «Վկայաբանության» սկզբի հատվածը որոշակի արժեք ու նշանակություն ունի Ագաթանգեղոսի Պատմության համապատասխան դրվագը (§ 859, § 860, § 862, § 866) գիտական-քննական հրատարակության պատրաստելիս։

* * *

Աթոսի Իվերոն մայրավանքի № 57 (=№ 8) ճառընտիրը, գրված X դ. վերջերին, ինչպես վերևում գիտվեց, հայագիտության համար մի շարք առումներով ուշագրավ ու ուսումնասիրելի ժողովածու է. նրանում և՛ հայերենից կատարված թարգմանություններ են զետեղված, և՛ քաղկեդոնական հայոց միջավայրում վրացերեն ստեղծված հուշարձաններ։ Երկու խումբն էլ հայագիտական կարևորություն են ներկայացնում, ուստի ստորև անհրաժեշտ համարեցինք տալ գրչագրի բովանդակած նյութերի ցանկը՝ քաղելով Ն. Մառի և Ռ. Բլեյկի նկարագրություններից։

1. Անխորագիր, սկզբից պակաս (ս. Ստեփանոս Նախավկայի վարքի վերջի հատվածը), էջ $3r_1$։

2 პოვნაჲ ნაწილთა წმიდისა სტეფანესთა პირველ-დიაკონისა და პირველ-მოწამისაჲ.

Գյուտ նշխարաց նախասարկավագ և նախավկա սուրբ Ստեփանոսի, էջ $3r_1$—$9r_1$

3 მიცვალებაჲ ნაწილთა წმიდისა სტეფანწესთაჲ პირველ-დიაკონისა და პირველ-მოწამისათაჲ იჱრუსალემით კოსტანტინეპოლის(!).

Փոխադրումն նշխարաց նախասարկավագ և նախավկա սուրբ Ստեփաննոսի Երուսաղեմից Կոստանդնուպոլիս, էջ $9r_1$—$17r_2$

4 თქუმული წმიდისა გრიგოლი ხუცისა ანტიოქელისაჲ წმიდისა პირველ-მოწამისა სტეფანწესთჳს.

Սուրբ Գրիգոր աբեղա Անտիոքացու ասացյալ՝ Վասն սուրբ Նախավկա Ստեփանոսի, էջ $17r_2$—$21v_1$

[18] ილია აბულაძე, նշվ. աշխ., էջ 0140։

15 თქუმული წმიდისა გრიგოლ ხუცისაჲვე, ქებაჲ პირველ-მოწამისა წმიდისა სტეფანჱსი.
Նույն սուրբ Գրիգոր արեղայի ասացյալ՝ Ներբող առ նախավկա սուրբն Ստեփանոս, էջ 21v1—24r1

6 ქებაჲ წმიდისა სტეფანჱსი პირველ-დიაკონისა და პირველ-მოწამისაჲ.
Ներբող սուրբ Ստեփանոսի՝ նախասարկավագի և նախավկայի, էջ 25r1—29r1

7 ჴსენებაჲ წმიდათა მოციქულთაჲ პეტრჱსი და პავლჱსი ჰრომის შინა უწინარჱს რვისა დღისა ვარდობის: წამებაჲ პეტრჱსი.
Հիշատակ սուրբ առաքյալներ Պետրոսի և Պողոսի Հռոմում՝ վարդորայից (վարդավառից) ութ օր առաջ. Վկայաբանություն Պետրոսի, էջ 29r1—33v2

8 წამებაჲ წმიდისა პავლჱ მოციქულისაჲ ჰრომს შინა.
Վկայաբանություն սուրբ Պողոսի Առաքյալի՝ Հռոմում, էջ 33v2—36r2

9 წამებაჲ წმიდათა და ყოვლად ქებულთა მოციქულთაჲ პეტრჱსი და პავლჱსი ჰრომს შინა ნერონის მიერ კეისრისა.
Վկայաբանություն սուրբ և ամենայն գովելի առաքյալներ Պետրոսի և Պողոսի՝ Հռոմում Ներոն կայսեր կողմից, էջ 36v1—51r2

10 ცხოვრებაჲ წმიდისა დიონისიოსი ეპისკოპოსისაჲ, რომელი იყო ძჱ სოკრატისი მთავარი ათენელთაჲ, რომელსა ეწოდა ქალაქი ბრძენთაჲ.
Վարք սուրբ Դիոնիսիոս եպիսկոպոսի, որ որդին էր աթենացոց իշխան Սոկրատի, որը կոչվում էր իմաստնոց քաղաք, էջ 51r2—57v1

11 ებისტოლჱ დიონისიოჲსი ბრძენთ-მთავრისაჲ და ათენელთა ეპისკოპოსისაჲ- რომელი მიუწერა ტიმოთეს საყუარელსა თჳსსა და მოწაფჱსა მოძღურისა პავლჱსსა.
Թուղթ իմաստունների գլխավոր և աթենացիների եպիսկոպոս Դիոնիսիոսի, որը գրեց իր սիրելի Տիմոթեոսին և Պողոս վարդապետի աշակերտին, էջ 57v1—64r1

12 წამებაჲ წმიდისა იაკობ მოციქულისა ძისა ზებედჱსი და ძმისა იოვანე მახარებლისაჲ.
Վկայաբանություն սուրբ Հակոբ Առաքյալի՝ որդի Զեբեդայի և եղբայր՝ Հովհան Ավետարանչի, էջ 64r1—65v2

13 წამებაჲ წმიდისა და კეთილად მძლისა ბასილი ჰამელ ეპისკოპოსისაჲ.
Վկայաբանություն սուրբ և բարեհաղթ Բարսեղ Եմեսիացի եպիսկոպոսի, էջ 65v2—70v2

14 წამებაჲ წმიდისა მოწამისა ჰაბოჲსი, რომელი იწამა ქართლსა შინა, [აღწერილი] ბრძანებითა ქრისტჱს მერ სამუელ ქართლისა კათალიკოზისაჲთა.
Վկայաբանություն սուրբ վկա Հաբոյի, որ նահատակվեց Քարթլիում, գրված Քրիստոսով Քարթլիի կաթողիկոս Սամուելի հրամանով, էջ 70v2—92r2

15 ცხოვრებაჲ წმიდათა და ნეტართა მამათაჲ, რომელნი მოისრნეს მთასა წმიდასა სინასა და რაჲთს, რომელი აღწერა წმიდამან ამონიოს.
Վարք սուրբ և երանելի հայրերի, որոնք կոտորվեցին սուրբ լյառ Սինայում և Ռայթում, որը գրեց՝ սուրբ Ամոնիոս, էջ 92r2—102v2

16 წამებაჲ წმიდისა ბაბილაჲსი და სამთა ყრმათა მოწაფეთა მისთაჲ.
Վկայաբանություն սուրբ Բաբիլայի և նորին աշակերտ երից մանկանց, էջ 103r1—107v1

17 ცხოვრეაჲ და წამებაჲ წმიდისა ანტონი რავახისაჲ, რომელი იგი ჰმონებდა შჯულსა ისმაიტელთასა.
Վարք և վկայաբանություն սուրբ Անտոն Ռավախի, որ պաշտում էր Իսմայիլացիների կրոնը..., էջ 107r1—115v1

18 წამებაჲ წმიდათა მოწამეთაჲ სპევსიპჱსი, ელასიპჱსი და მელასიპჱსი.
Վկայաբանություն սուրբ վկաներ Սպևսիպոսի, Ելասիպոսի և Մելիասիպոսի, էջ 115v1—121v2

19 წამებაჲ წმიდისა ტიმოთჱსი და ცოლისა მისისა მავრაჲსი.
Վկայաբանություն սուրբ Տիմոթեոսի և նրա կնոջ Մավրայի, էջ 121v2—128v1

20 წამებაჲ წმიდისა ტიმოთე მოწაფისა მის წმიდისა პავლჱ მოციქულისაჲ დ პირველისა ეპისკოპოსისა ეფესელთა ეკლესიასა.
Վկայաբանություն սուրբ Տիմոթեոսի՝ սուրբ առաքյալ Պողոսի աշակերտի և Եփեսացոց եկեղեցու առաջին եպիսկոպոսի, էջ 128v1—131v1

21 წამებაჲ წმიდათა მოწამეთაჲ კჳროსისი და იოვანესი და მათ თანა სამთა წმიდათა ქალწულთაჲ და დედისა მათისაჲ.
Վկայաբանություն սուրբ վկաներ Կյուրոսի ու Հովհաննեսի և նրանց հետ՝ երից կուսից ու նրանց մոր, էջ 131v1—139r2

22 წამებაჲ წმიდისა მოწამისა ბოჲსი ქუეყანისა ბორგილთისა, ქალაქსა იარაპოლისსა.
Վկայաբանություն սուրբ Բոայի, [որ նահատակվեց] ցասկոտների (!) աշխարհում, Հիերապոլիս քաղաքում, էջ 140r1—145v2

23 წამებაჲ წმიდისა ევსიგნიოსისი.
Վկայաբանություն սուրբ Եվսիգնիոսի, էջ 145v2—152v2

24 წამებაჲ წმიდისა ივლიანე ემეწელისა(!) მკურნალისაჲ.
Վկայաբանություն Հուլիանոս Եմեսիացի բժշկի, էջ 152v2—159r2

25 საჴსენებელი წმიდისა და ღუაწლით შემოსილისა თევდორესი ევქაიტელ ახლად სტრატიოტად მოყვანებულისაჲ. ცხოვრებაჲ და სიმჴნე მისი.
Հիշատակ սուրբ և հաղթապսակ Թեոդորոս Եվքայիտացու՝ նոր զինակոչյալի, վարք և նահատակություն նրա, էջ 159v1—161r1

26 წამებაჲ წმიდისა თევდორჱსი.
Վկայաբանություն սուրբ Թեոդորոսի, էջ 161r1—166r1

27 საჴსენებელი წმიდისა ევფროსინჱსი. ცხოვრებაჲ და სიმჴნე მისი.
Հիշատակ սուրբ Եվփրոսինեի. վարք և նահատակություն նրա, էջ 166r_1—173r_1

28 წამებაჲ ყრმათა წმიდათა რიცხჳთ ცხრა, რომელნი იყვნეს სულითა ძჱანი ნათლისღებისაგან ემბაზისა, არამედ...
Վկայաբանություն թվով ինը սուրբ մանկանց, որոնք կնքավաղանի մկրտությամբ հոգևոր եղբայրներ էին, սակայն..., էջ 173r_2—175r_2
Ծան. Գիտությանը հայտնի է «Վկայաբանություն ինն կողայեցի մանկանց» խորագրով։ Հայերեն թարգմանությունը տե՛ս Պարույր Մուրադյան, Հայերեն բնագրով չպահպանված վարքագրական երկու հուշարձան, «Բանբեր մատենադարանի», № 12, էջ 186—188։

29 წამებაჲ წმიდისა დავითისი დვინსა შინა
Վկայաբանություն Դավթի՝ Դվինում, էջ 175r_2—178r_2

30 მარტჳლობაჲ წმიდისა ივლიანჱსი.
Վկայաբանություն սուրբ Հուլիանոսի, էջ 178r_1—180v_1

31 წამებაჲ წმიდათა ორმეოცთაჲ, რომელნი სებასტია ქალაქსა შინა იწამნეს, სახელები მათი ესე არს...
Վկայաբանություն սրբոց քառասնից, որոնք նահատակվեցին Սեբաստիա քաղաքում. նրանց անուններն են..., էջ 180v_1—186v_2

32 თქუმული ნეტარისა მამისა ჩუენისა ბასილი მთავარეპისკოპოსისაჲ კესარია კაპადუკელისაჲ წმიდათა ორმეოცთათჳს ქებაჲ, რომელნი სებასტია ქალაქსა იწამნეს..'
Կապադովկիական Կեսարիայի արքեպիսկոպոս երանելի մեր հոր՝ Բարսեղի՝ ներբող առ սուրբ քառասնից, որոնք նահատակվեցին Սեբաստիա քաղաքում, էջ 187v_1—194v_2

33 წამებაჲ წმიდისა ფელექტემონისი.
Վկայաբանություն սուրբ Փիլեկտիմոնի, էջ 194v_2—223r_2

34 წამებაჲ წმიდისა მიქაელისი, რომელი იყო ლავრასა წმიდისა მამისა ჩუენისა საბაჲსსა.
Վկայաբանություն սուրբ Միքայելի, որը մեր սուրբ հայր Սաբայի մայրավանքում էր, էջ 223r_2—231r_2

35 წამებაჲ წმიდისა ვარდანისი და სხუათა ნახარართა და ძალთა სომხეთისათა.
Վկայաբանություն սուրբ Վարդանի և այլ նախարարների ու զորաց Հայոց, էջ 231v_1—233v_1
Ծան. Խորագիրը ավելի ընդարձակ է, բնագիրը՝ երկիցս հրատարակված։

36 წამებაჲ წმიდისა ატომისი და შვილისა მისისა და მოყუასთა მისთაჲ.
Վկայաբանություն սուրբ Ատոմի, նրա որդու և մերձավորաց, էջ 233v_1—237v_1

37 წამებაჲ წმიდათა მოწამეთა მესუკავეთაჲ.
Վկայաբանություն սուրբ նահատակաց Սուքիասյանց, էջ 237r_1—247v_1

38 წამებაჲ წმიდისა შუშანიკისი, წმიდისა ვარდანის ასულისა...

Վկայաբանություն սուրբ Շուշանիկի՝ սուրբ Վարդանի դստեր, էջ 247v_1—249r_1
Ծան. Բնագրում խորագիրն ընդարձակ է։ Հրատ. Ի Աբուլաձեի։

39 აღსრულებაჲ წმიდისა საჰაკისი პართევისაჲ, ძისა დიდისა ნერსესი...
Կատարումն սուրբ Սահակ Պարթևի՝ Մեծն Ներսեսի որդու..., էջ 249r_1—250v_2
Ծան. Ն. Մառի նկարագրության մեջ նշվում են 247b—249a' էջերը (նշվ. աշխ., էջ 64)

40 წამებაჲ წმიდისა იზიდბოზიდისი მეფობასა ხვასროჲსასა ძისა კავადისა მეფეთა სპარსთასა.
Վկայաբանություն սուրբ Յիզիտբուզիտի, պարսից թագավոր Կավադի որդի Խոսրովի թագավորության օրոք, էջ 250v_2—257r_1

41 წამებაჲ წმიდათა მღდელთ-მოძღუართა სომხეთისათა არისტაკესი, ორთანესი, ოსკისი, გრიგორისი, დანიელისი.
Վկայություն հայոց սուրբ հայրապետներ Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորի, Դանիելի, էջ 257r_1—259v_2

42 წამებაჲ წმიდისა და დიდებულისა მოწამისა გიორგისი.
Վկայաբանություն սուրբ և փառավորյալ նահատակ Գևորգի, էջ 259r_2—267v_2

43 საკითხავი თქმული ნეტარისა თეოდოლა(!) ხუცისაჲ, ქებაჲ შესხმისაჲ წმიდისა გიორგისი.
Ճառ երանելի Թեոդուլոս աբեղայի՝ Գովք ներբողման սուրբ Գևորգի, էջ 267v_2—271r_1

44 წამებაჲ წმიდისა ლონგინოზ ასისთავისაჲ.
Վկայաբանություն սուրբ Ղունկիանոս հարյուրապետի, էջ 271r_1—272v_2

45 წამებაჲ მარკოზ მახარებელისაჲ ალექსანდრია ქალაქსა შინა.
Վկայաբանություն Մարկոս Ավետարանչի՝ Աղեքսանդրիա քաղաքում, էջ 275v_2—279v_2

46 წამებაჲ წმიდისა რომანოზ ახლისა მოწამისაჲ... რომელი აღწერა ნეტარმან სტეფანე დამასკელმან.
Վկայաբանություն սուրբ Ռոմանոս Նորավկայի..., գրեց երանելի Ստեփանոս Դամասկացին, էջ 279v_1—293r_2

47 წამებაჲ წმიდისა დედოფლისა საგდუხტისი.
Վկայաբանություն սուրբ Թագուհի Սա[հա]կդուխտի, էջ 293r_2—294v_2

48 წამებაჲ წმიდისა ფილემონ მენესტჳსაჲ.
Վկայաբանություն սուրբ Փիլիմոն փողհարի, էջ 294v_2—302v_2

49 წმიდათა ყრმათა ორთა ძმათა დავითისი და ტირიჭანისი საკითხავი.
Ընթերցումն երկու սուրբ տղաներ Դավթի ու Տիրիճանի, էջ 302v_2—307r_1
Ծան. Հայերեն թարգմանությունը տե՛ս Պ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 181—186։

50 წამებაჲ წმიდისა თ-ლელწოსისი, საკითხავი.
Վկայաբանություն սուրբ Թալիլեոսի, ընթերցումն, էջ 307r_1—312r_2

51 ცხოვრებაჲ წმიდათა კჳპრიანჱსი და იუსტინასი, მათ ორთავე ერთად.
Վարք սուրբ Կիպրիանոսի և Հուստինայի, նրանց երկուսինը՝ միասին, էջ 312v1—321v2

52 წამებაჲ წმიდისა და კეთილად მძლისა ქრისტეფორესი და მოყუასთა მისთაჲ
Վկայաբանություն սուրբ ու բարեհաղթ Քրիստափորի և նրա մերձավորների, էջ 322r1—332r2

53 წამებაჲ წმიდისა და დიდებულისა მოწამისა კონონისი.
Վկայաբանություն սուրբ և փառավորյալ Կոնոնոսի, էջ 332r2—334v2

54 წამებაჲ წმიდისა მოწამისა ლეონტისი.
Վկայաբանություն սուրբ նահատակ Ղևոնդիոսի, 334v1—335v1

55 წამებაჲ წმიდისა მოწამისა მამაჲსი.
Վկայաբանություն սուրբ նահատակ Մամասի, 3352v—342v2

56 წამებაჲ წმიდისა მოწამისა ფოკაჲსი.
Վկայաբանություն սուրբ նահատակ Փոկասի, 342v2—349r2

57 სიტყუანი წამებისათჳს წმიდისა ოსკისი და მოყუასთა მისთა.
Ճառք վկայության սուրբ Ոսկիի և նրա մերձավորների, էջ 349r2—351r2

58 წამებაჲ წმიდისა გეორგისი ზოროვარისა. თქუმული წმიდისა ბასილისი.
Վկայաբանություն սուրբ Գևորգ Զորավարի, ասք սուրբ Բարսեղի, էջ 351r2—354v1

59 წამებაჲ წმიდისა ნერსჱ მთავარეპისკოპოსისა სომხეთისაჲ და ხადისა ეპისკოპოსისაჲ მოწაფისა მისისაჲ.
Վկայաբանություն սուրբ Ներսես հայոց արքեպիսկոպոսի և նրա աշակերտ Խադ եպիսկոպոսի, էջ 354v1—358r2

60 სიმჴნე და მოღუაწებაჲ ნეტარისა გულანდუხტისი სპარსეთს.
Երանելի Գուլանդուխտի (Գորանդուխտի) խիզախությունն ու ճգնությունը Պարսկաստանում, էջ 358r1—368r2

61 წმიდათა და კეთილად მძლეთა მოწამეთაჲ ტარაქოს, პროპოს და ანდრონიკესი, წამებანი მათი.
Սուրբ և բարեհաղթ նահատակներ Տարագոսի, Պրոբոսի և Անդրոնիկոսի վկայաբանությունը, էջ 368r2—383r1

Ձեռագրում կարևոր հիշատակարան-հիշատակագրություններ չկան, բացառությամբ 349r2 էջում եղած սույն տեղեկության. ესე [წამებ]ანი სომხუროთგან თარგმნილ არიან—*այս վկայաբանությունները հայերենից են թարգմանված*[19]։

Մեզ հետաքրքրող վկայաբանությունը, ինչպես արդեն նշել ենք, պահպանվել է X դ. վերջերի սույն ծառընտիրում և ուրիշ ձեռագրերում դեռ վկայված չէ։ Ունեցել է երկու հրատարակություն (**А. Хаханов**, Материалы по груз. агиологии, М., 1910, стр. 57—60, *նաև՝* **ილია აბულაძე**, ქართ. და სომხ. ლიტერატურული ურთიერთობა IX—X სს-ში, თბ., 1944, გვ. 62—

—68). *Թարգմանության համար մենք նախընտրեցինք Ի. Աբուլաձեի հրատարակությունը, որ գերադասելի է իր բնագրային ճշգրտությամբ։ Ալ. Խախանաշվիլու հրատարակության տարբերությունները նկատի չենք առել, քանի որ բխում են ոչ թե բուն ձեռագրից* (Athos—57), *այլ նրա ոչ հմուտ ընդօրինակությունից։*

Թարգմանում ենք «Վկայաբանության» սկզբի մասը միայն, որ քաղված է Ագաթանգեղոսից և իր համապատասխանությունը չունի Ի. Աբուլաձեի հրապարակ բերած «Վկայաբանության» հայերեն բնագրում, բացառությամբ մեր թարգմանության վերջին նախադասությունից, որը հայերենի սկիզբն է. «Իսկ մեծ արքեպիսկոպոսն Գրիգորիոս, սուրբ որդւովն իւրով Արիստակիսաւ և ամենայն երևելի ազնականաւքն, զամենայն աշակերտելովքն շրջէր, և հաստատէր կալ ի պատուիրանին ճշմարտութեան»։

წამებაჲ წმიდათა მღდელთ-მოძღუართაჲ სომხითისათა
არისტაკჱსი[1], ორთანჱსი, ოსიკისი, გრიგორისი, დანიელისი

I და ესმა ვიეთგანმე მეფესა[2] თრდატს წმიდისა გრიგორისთჳს, რამეთუ ზედა მიაწიეს იგი, ვითარმედ დღეთა სიჭაბუკისა მისისათა, ოდეს იყო იგი ერისკაცობასა შინა, ესუა ცოლი და ესხნეს მას ორნი ძენი. პირმშოსა მას ეწოდა ორთან და ცხონდებოდა იგი ერისკაცობით, ხოლო უკანაჲსკნელ პატივი მღდელობისაჲ მიიღო. ხოლო მეორესა მას ეწოდა არისტაკე, რომელი სიყრმითგან ღმრთის-მსახურებით ცხონდებოდა მარტოდ-მყოფებით, მთათა ზედა იქცეოდა ყოვლითა წესიერებითა და მრავალთა ნათესავთა თანამზრუნველ ექმნის, სულიერითა წურთილებითა ყოველთა თანა ევნებინ, და ყოველსა ღუაწლსა თავი თჳსი მისცა შიმშილთა და წყურილთა და მხლისა ჭამითა, და შესაყენებელთა ბნელთა შინა იყო. ჯორჯ-მოსილი ქუეყანასა ზედა წევნ, და ყოვლადვე განუსუენებელ იყო და მღჳძარე ღამით, და ძილისა ხარკი ზედგომით გარდაიჴადის და წამსა შინა თუალისასა განიშორის. და ამისა შემდგომად პოვნა ვიეი თნიემე რომელნი შეეყვნეს მას და დაემოწაფნეს, და ესრჱთ სათნოდ ღმრთისად და კაცთა ცხონდებოდეს.

II და ვითარცა ეუწყა ესე მეფესა თრდატს, ადრე-ადრე წარავლინნა კაცნი შერაცხილნი და პატიოსანნი, რაჲთა ორნივე ძენი გრიგორისნი მწრაფლ მოიყვანნენ მისა. და მი-რაჲ-იწინნეს მივლინებულნი იგი სოფლად კაპადუკიაჲსა, და პოვეს დიდი ორთან ქალაქსა კესარიაჲსასა, ხოლო არისტაკე უდაბნოსა მარტოდ-მყოფებით თჳსსა მონასტერსა, და არა ერჩდა მათ გარდამოსლვად უდაბნოჲთ. და შეკრბა კრებული მრავალი ქრისტიანეთაჲ და ეტყოდეს მას: „უმჯობჱს შენდა მუშაკობაჲ სულიერი, ვიდრე დამკჳდრებაჲ შენი მარტოებით." და ესევითარითა სიტყჳთა არწმუნეს მას და წარმოგზავნეს ორნივე.

III და მოიწინეს ქუეყანად სომხითისა, და წარადგინნეს ორნივე წინაშე მეფისა. და მეფჱ განვიდა ძიებად გრიგორისა, სადაცა იპოვოს, და ორნივე

[19] *Տեղեկության վիճակի և նշանակության մասին խոսում է Ն. Մառը* (Агиогр. мат., стр. 68—69)։

Ձեռագրում՝ 1 არისტაკესი; 2 მეფეთა.

იგი ძენი გრიგორისნი ჰყვანდეს მის თანა. და პოვეს წმიდაჲ გრიგორი ქუეყანასა დარანალისასა, მთასა, რომელსა უწოდიან მანეს ქუაბი.

IV და ევედრებოდა ნეტარი იგი მეფჱ წმიდასა გრიგორის და ეტყოდა მას, ვითარმედ: „შენ არა ინებე ჩუენ შორის ყოფაჲ და გამოირჩიე უდაბნოჲს-მოყუარებაჲ, აწ ნაცვალად შენსა დაასხენ ჴელნი არისტაკეს ძესა შენსა“; რომელსაცა დაასხნა ჴელნი ნაცვალად თჳსა მსგავსად წერილისა, ვითარმედ: „მამათა წილ იყვნენ შვილნი, და დაადგინენ იგინი მთავრად ყოველსა ქუეყანასა ზედა“*, რომელი უფროჲს მამისა თჳსისა აჩუენებდა მოძღურებასა თჳსსა მამისავე თჳსისა ზჱ.

V და წმიდაჲ გრიგორი წმიდით შვილით მისითურთ და ყოველთა საჩინოთა შემწეთა მისთაჲთა, დამოწაფებულთა მისთაჲთურთ იქცეოდა ყოველთა ადგილთა და დაამტკიცებდა სარწმუნოებასა ზედა ჭეშმარიტსა ქრისტჱსსა.

Վկայություն հայոց սուրբ հայրապետներ Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորիսի, Դանիելի

I (§ 859) Եվ Տրդատ թագավորը ոմանցից լսեց սուրբ Գրիգորի մասին, քանի որ վերահասու արին նրան, թե պատանեկության տարիներին, երբ նա աշխարհակյաց (զինվորական) էր, ուներ կին և երկու որդի։ Անդրանիկի անունը Վրթանես էր, և ապրում էր աշխարհակեցությամբ, իսկ հետո քահանայության (երիցության) պատիվ (աստիճան) ստացավ։ Իսկ երկրորդը կոչվում էր Արիստակես, որը մանկությունից աստվածապաշտությամբ էր ապրում՝ միայնակեցությամբ, լեռներում կենում ամենայն կարգով ու բազում ազգականների հոգսակից դառնում՝ հոգևոր կրթությամբ, բոլորի հետ չարչարվում և իր անձը ամենայն ճգնության էր տվել՝ քաղցությամբ ու ծարավով և բանջարակերությամբ և մութ արգելանների մեջ էր։ Խարազնազգեստ գետնին էր պառկում և ամենևին անհանգիստ էր ու գիշերն արթուն. քնի հասանելիքը հոտնկայս էր անցկացնում և [քունը] աչքի թարթումով վանում։ Եվ այնուհետև գտավ ոմանց, որոնք հարեցին նրան ու աշակերտեցին, և այսպես՝ հաճո աստծուն և մարդկանց, ապրում էին։

II (§ 860) Եվ երբ թագավոր Տրդատը լսեց այս, անմիջապես համարումավոր ու պատվական մարդիկ ուղարկեց, որպեսզի Գրիգորի երկու որդիներին էլ շտապ իր մոտ բերեն։ Ու երբ ուղարկվածները գնացին-հասան Կապադովկիայի աշխարհ, մեծն Վրթանեսին Կեսարիա քաղաքում գտան, իսկ Արիստակեսին՝ անապատում մենակեցությամբ՝ իր մենաստանում։ Եվ չէր հնազանդվում նրանց՝ թողնել-գալ անապատից։ Քրիստոնյաների մեծ բազմություն ժողովվեց և ասին նրան. «Ավելի լավ է քեզ համար հոգևոր մշակություն, քան բնակությունդ մենավորությամբ»։

* ფსალ. 44, 17.

III (§ 861) Եվ այսպիսի խոսքով համոզեցին նրան, ու երկուսին էլ ուղարկեցին։ Եկան-հասան Հայոց երկիր. և երկուսին էլ ներկայացրին թագավորի առաջ։ Իսկ թագավորը դուրս եկավ Գրիգորին փնտրելու՝ ուր էլ գտնվի։ Ու Գրիգորի երկու որդիները ևս նրա հետ էին։ Եվ սուրբ Գրիգորին գտան Դարանաղի երկրում, լեռում, որին Մանեի այր են կոչում։

IV (§ 862) Եվ աղաչում էր երանելի թագավորը սուրբ Գրիգորին ու ասում նրան, թե «Դու չկամեցար մեր մեջ լինել և անապատասիրություն նախընտրեցիր. արդ՝ քո փոխարեն ձեռնադրիր քո Արիստակես որդուն»։ Որին և ձեռնադրեց՝ իր փոխարեն ըստ գրվածին, թե «փոխանակ հարց եղիցին որդիք՝ և կալ իշխան ի վերայ ամենայն երկրի»։ Նա իր հորից առավել իր վարդապետությունն էր հայտ ածում՝ իր իսկ հոր օրոք։*

V (§ 866) Իսկ սուրբ Գրիգորը իր սուրբ որդու և ամենայն երևելի իր օգնականների, իրեն աշակերտների հետ շրջում էր բոլոր տեղերը և հաստատում Քրիստոսի ճշմարիտ հավատի հանդեպ։

* Հմմտ. Սաղմ. ԽԴ, 17։

«ՎԱՐՔ ԳՐԻԳՈՐԻ»

Բանասիրության մեջ «Գրիգորի վարք»-ի վրացերեն խմբագրության գոյության մասին անդրանիկ տեղեկությունը հրապարակել է հայագետ Վ. Լանգլուան. Աթոսի վրաց մայրավանքի ձեռագրական հավաքածոն ներկայացնելիս նա արձանագրում է. Vie du saint prêtre Grégoire, évêque d'Arménie, commencant: „Quand l'empire des Perses fut divisé par les Parthes“, իսկ ապա ծանոթագրում, որ C'est la traduction en géorgien de l'histoire du roi Tiridate et de la prédication de saint Grégoire l'Illuminateur, par Agathange“[1].

Ձեռագրերի նկարագրությունը պատկանում է վանական Իլարիոնին, որ Լանգլուան իր հոդվածում հրատարակել է Մ. Բրոսեի թարգմանությամբ, սակայն մեր վկայակոչած երկրորդ ծանոթագրությունը արդեն գիտնականի կռահումն է։ 1836 թ. կազմված Իլարիոնի ցուցակը վրացերեն բնագրով լույս տեսավ 1886 թ.՝ երբև հավելված Ա. Ցագարելու «Сведения о памятниках грузинской письменности» աշխատության առաջին պրակի[2]։

Հետագայում Աթոսի վրացական մայրավանք այցելեցին ու ձեռագրական հավաքածոյի ուսումնասիրությամբ զբաղվեցին այլ գիտնականներ ևս՝ Ա. Ցագարելի, Ն. Մառ, Ա. Խախանաշվիլի, բայց Գրիգորի վարքը նրանց մոտ այլևս չի հիշատակվում։ Այս փաստից ելնելով՝ հանգուցյալ Լ. Մելիքսեթ-Բեկը տակավին 1915 թ. եզրակացրել է. «Следовательно, текст этот должен считаться утраченным еще до посещения Афона упомянутыми лицами»[3]. Ակադ. Ն. Մառը, երբև «Христианский Восток»-ի խմբագիր, հենց տեղում առարկել է այս եզրակացությանը. «что названные лица не напали на искомый памятник, это еще не свидетельствует о его гибели. **Ред.**»[4].

---

[1] **Victor Langlois**, Notice sur le couvent Ibérien du Mont Athos, „Journal Asiatique“, t. IX, 1867, p. 342.

[2] ქართული წიგნების სახელები ივერიის მონასტერსა შინა მდებარეთა მთა-წმიდასა“ (տե՛ս **А. А. Цагарели, Сведения....., вып., I, СПб.. 1886, Приложение, стр. 1—16**). Մեջբերվածը ըստ բնագրի. „რაჟამს იგი სპარსთა მთავრობა პართად განიყო, ხოლო ბართთა ჴელმწიფება..“, էջ 7։

[3] **Л. Меликсет-Беков**, Грузинская версия Агафангела и ее значение для грузинской историографии, Х. В., IV, вып. I (1915), стр. 156, прим 3.

[4] Նույն տեղում։ Սակայն Լ. Մելիքսեթ-Բեկից առաջ այդ կարծիքը հայտնել է Ն. Թաղայշվիլին (տե՛ս նրա՝ ახალი ვარიანტი წმ. ნინოს ცხოვრებისა, ტფ. **1891**, გვ. XXXI—XXXII)։

Բարեբախտաբար, Ն. Մառի դիտողությունը հետագայում արդարացավ. 1933—1934 թթ., ինչպես արդեն ասել ենք նախորդ բաժնում, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ռ. Բլեյկը հրատարակեց Աթոսի վրաց մայրավանքի ձեռագրերի գիտական նկարագրությունը, ուր պատշաճ ձևով ներկայացված է և մեզ հետաքրքրող գրչագիրը (№ 20)՝ Գրիգոր Պարթևի վարքի ընդգրկմամբ։ Պարզվեց, որ Իլարիոն վանականի արձանագրած բնագիրը իրողություն է և, որ կարևորն է, պահպանվել է տեղում[5]։

Վ. Լանգլուան ձեռագրիս գոյությանը երկրորդ անգամ, երբև հավելված, անդրադառնում է նույն 1867 թ., մասամբ ընդարձակելով իր նախորդ ծանոթագրությունը[6]։

Մատենագիտական այս ծանոթագրումները, հարկավ, օժանդակեցին բուն տեքստի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելուն, և հիրավի՝ 1892 թ. Թ. Ժորդանիան «Վրաց մեջ գրագիտություն տարածող ընկերության» հավաքածոյի № 384 գրչագրում գտնում է Լանգլուայի հիշատակած բնագրի նոր ընդօրինակություն և մի ընդարձակ հատված հրապարակում իր «Քրոնիկներ»-ի առաջին գրքում[7]։ Տողատակի երկու ծանոթությամբ նա անդրադառնում է հարակից խնդիրների, մասնավորապես՝ մեզ հետաքրքրող բնագիրը գտնվում է XI դ. գրչություն ունեցող ձեռագրում, որ «գրված պետք է լինի 1089—1112 թթ., Եփրեմ Կրտսերի կենդանության օրոք»[8]։

Նկատված է նաև, որ Գրիգոր Պարթևին վերաբերող տեքստը փաստորեն Ագաթանգեղոսի «Հայոց դարձն» է ներկայացնում, որ Լանգլուան գտել է Աթոսի վրաց մայրավանքում։ Այլուր Ժորդանիան գրում է. «նույն պատմությունը (խոսքը Հռիփսիմեի և Գայանեի նահատակության, Տրդատի խոզակերպ դառնալու, Գրիգորի՝ վիրապից դուրս գալու և հայոց կողմից քրիստոնեություն ընդունելու մասին է—Պ. Մ.) համառոտագրությամբ մտցրած է «Քարթլիս ցխովրեբա», ինչպես երևում է՝ «Հայոց դարձ»-ից, որի մասին ինքը մատյանն է իբրև իր աղբյուր հղում»[9]։ Տեքստի հրատարակությունը կատարված է ձեռագրի ուղղագրության ու կետադրության նույնական պահպանմամբ։

Ինչպես տեսնում ենք, վրացերեն թարգմանության գոյությունը երևան բերելուց հետո, որի համար բանասիրությունը Իլարիոն վանականին, նրա

---

[5] **R. Blake**, Catalogue des manuscrits géorgiens de la Lavre d'Iviron au Mont Athos, ROC, XXIX (1933—34), 1—2, p. 126.

[6] **V. Langlois**, Collection des historiens anciens et modernes de l'Armenie, t. I, Paris, 1867, p. 194.

[7] ქრონიკები და სხვა მასალა საქართველოს ისტორიისა და მწერლობისა, შეკრებილი, ქრონოლოგიურად დაწყობილი, ახსნილი და გამოცემული თ. ჟორდანიას მიერ, ტფ., I, 1892/93, გვ. 19—27. Այսուհետև՝ ქრონიკები. Թ. Ժորդանիան ձեռագրի համարը սխալմամբ 350 է նշում, մինչդեռ, ինչպես Լ. Մելիքսեթ-Բեկն է ժամանակին նկատել, պետք է լինի № 384 (հմմտ. **Л. Меликсет-Беков**, նշվ. աշխ., էջ 156, ծան. 4)։ Թ. Ժորդանիան, սակայն, հիշյալ գրչագիրը ճիշտ է հղում այլուր (ქრონიკები, I, էջ 322, ծան. 59)։

[8] ქრონიკები, I, էջ 19, ծան։

[9] ქრონიკები, I, էջ 27, ծան։

գործի թարգմանիչ Մ. Բրոսեին ու հրապարակող Վ. Լանգլուային է պարտական, Թ. Ժորդանիան կատարում է երկրորդ կարևոր քայլը՝ նոր գրչագիր հրապարակ հանելուց բացի անդրանիկ հրատարակություն է նախաձեռնում, թեկուզ հատվածաբար։ Սակայն հուշարձանիս վրացերեն թարգմանության հետ կապված պատմա-բանասիրական, աղբյուրագիտական հարցերը տակավին մնում էին չքննված։

1915 թ. այդ խնդիրներին նվիրված ուսումնասիրությամբ հանդես է գալիս երիտասարդ Լ. Մելիքսեթ-Բեկը[10]*։ Հինգ տարի անց նա հրապարակում է «Գրիգոր Պարթևի վարք»-ը՝ ըստ* S—*384 ձեռագրի, որից և քաղվածներ էր տպագրել Թ. Ժորդանիան։ Լ. Մելիքսեթ-Բեկի հրատարակությունը* «Monumenta Georgica» *մատենաշարի* «Scriptores ecclesiastici» *№ 2 պրակն է, իրականացված ակադ. Կ. Կեկելիձեի խմբագրությամբ*[11]*։*

*1912 թ. Գելաթի ձեռագրական հավաքածոն ուսումնասիրելիս ու նկարագրելիս Կ. Կեկելիձեն ի հայտ է բերում Գրիգորի վարքի մի նոր գրչագիր (№ 4, էջ 321*v*—350*v*), սակայն նրա կազմած ցուցակը մնաց անտիպ, իսկ մեզ հետաքրքրող գրչագրի գոյությունը արձանագրվեց Կ. Կեկելիձեի ավելի ուշ լույս տեսած «Վրաց թարգմանական վարքագրություն» աշխատության մեջ*[12]*։ 1953 թ. Քութայիսի ձեռագրական հավաքածոյի նկարագրության մեջ լույս տեսավ նախկինում Գելաթում գտնվող այդ ձեռագրի պատշաճ նկարագրությունը*[13]*։*

1883 թ. Սինայի ու Պաղեստինի վրացական հնությունների ու հավաքածոները ուսումնասիրելու մեկնեց Ա. Ցագարելին[14]*։ Հինգ տարի անց նա հանդես եկավ ընդարձակ ուսումնասիրությամբ՝ միաժամանակ հրապարակելով ս. Խաչի ու Սինայի ձեռագրերի նկարագրությունը (իբրև հավելված)*[15]*։ Սակայն Ա. Ցագարելու նկարագրությունը շատ ընդհանուր բնույթ ունի, ուստի ձեռագրերի հիմնական բովանդակությունը երբեմն մնում է չբացահայտված։*

1902 թ. Ն. Մառն ու իր աշակերտ Իվ. Ջավախիշվիլին ուղևորվեցին Սինա և Պաղեստին։ Բացի բազմաթիվ կարևոր բնագրագիտական հայտնագործություններից ու իբրև հաշվետվություն ներկայացված ուսումնասիրություն-

[10] **Л. Меликсет-Беков,** *նշվ. աշխ., էջ 155—170։*

[11] ცხორებაჲ წმ. გრიგოლ პართელისაჲ, გამოცემული **ლეონ მელიქსეთ-ბეგის** მიერ, ტფ., 1920.

[12] *Տե՛ս* კ. კეკელიძე, უცხო ავტორები ძველ ქართულ მწერლობაში, „ეტიუდები...", ტ. V, გვ. 166.

[13] [ქუთაისის სახელმწიფო ისტორიული მუზეუმის] ხელნაწერთა აღწერილობა, ტ. I, შედგენილი... **ე. ნიკოლაძის** მიერ, რედაქტორი... კ. კეკელიძე, თბ., 1953, გვ. 25—35 *(Գրիգորի վարքը՝ էջ 30, § 37)։*

[14] **А. А. Цагарели,** Грузинские помягники в Святой земле и на Синае, СПб., 1884, стр. 57—82.

[15] **А. А. Цагарели,** Каталог грузинских рукописей Синайского монастыря, *տե՛ս նրա՝* Памятники грузинской старины в Святой земле и на Синае, СПб., 1888, стр. 216

ներից[16]*, Ն. Մառը կազմեց և Սինայի վանքի վրացական հավաքածոյի նկարագրությունը (երկրորդ կես)*[17]*, առաջին կեսը հանձնարարելով Իվ. Ջավախիշվիլուն*[18]*։ Մառի ցուցակը լույս տեսավ հետմահու և, հարկավ, ոչ այն տեսքով, ինչպես կկամենար տեսնել հեղինակը։ Սակայն այդ իսկ նկարագրությունից էլ պարզվեց, որ Սինայի № 91 ձեռագրում պահպանվել է Գրիգորի վարքը, դժբախտաբար, թերթերը ընկած լինելու պատճառով կեսից ավելին կորած։*

1956 թ. պրոֆ. Ժ. Գարիտը ի նորո և առավել հանգամանորեն նկարագրեց նշյալ հավաքածոյի մի մասը[19]*, այդ թվում և № 91 գրչագիրը։*

Այսպիսով, առ այսօր զանազան հավաքածոներում երևան է բերված «Գրիգորի վարք»-ի հին վրացերեն թարգմանության չորս գրչագիր՝

1. Աթոսի վրաց մայրավանքում (№ 20),

*2. Թբիլիսիի Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտում (*S—*384)։*

3. Քութայիսի պատմական թանգարանում (№ 4),

4. Սինայում (№ 91)։

Կատարված է, ինչպես ասվեց, մեկ հատվածական և մեկ ամբողջական հրատարակություն։

* * *

Ինչպես արդեն նշեցինք, «Գրիգորի վարք»-ի վրացերեն խմբագրության ուսումնասիրությամբ զբաղվել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը։ «Грузинская версия Агафангелия и ее значение для грузинской историографии»[20] *հոդվածում նա հանգամանորեն անդրադարձել է հուշարձանիս հետ կապված մի շարք կարևոր խնդիրների։ Նախ դիտենք, որ Լ. Մելիքսեթ-Բեկը* S—*384 ձեռագրի գրության ժամանակ է համարում ոչ թե XI դ. վերջը և XII-ի սկիզբը (1089—1122 կամ 1089—1091 թվականներ), ինչպես Թ. Ժորդանիան էր ենթադրում, այլ XII—XIII դդ.։ Գիտնականի համոզմամբ՝ հիշատակարանում վրաց Գեորգի և Դավիթ Շինարար թագավորների հիշատակությունը վկայում է, թե այն ընդօրինակված է այդ թագավորների ժամանակին պատկանող հին ձեռագրից։ Առավել կարևորը, սակայն, թարգմանության հիմք ծառայած բնագրի ու կատարման ժամանակի հարցն է։ Վրացական խմբագրության հատուկ անունների ինքնատիպությունները մատնացուցելիս նա*

[16] **Н. Я. Марр,** Предворительный отчет о работах на Синае, веденных в сотрудничестве с И. А. Джаваховым, и в Иерусалиме в поездку 1902 г. Сообщ. Имп. Правосл. Палест. Общ., 14,2 (1903), стр. 31—32, 45).

[17] **Н. Марр,** Описание грузинских рукописей Синайского монастыря, М.-Л., 1940, стр. 255—264.

[18] ივ. ჯავახიშვილი, სინის მთის ქართულ ხელნაწერთა აღწერილობა, თბ., 1947.

[19] **G. Garitte,** Catalogue des manuscrits géorgiens littéraires du Mont Sinaï, Louvain, 1956, pp. 263—282.

[20] ХВ, т. IV, вып. II (1915), стр. 155—170.

վերջիններս բաղդատում է հունարեն անվանաձևերի հետ և արդարացիորեն եզրակացնում, թե հունարենի կնիք են կրում։ Այդ ապացուցում է նաև քաղաքների ցանկի (իմա՝ թվի) համեմատությամբ. վրացերենում, հունարենի նմանողությամբ, 10 է (հայերենում՝ 12, արաբերենում՝ 13)։ Հունարենից թարգմանելու օգտին է խոսում և մետափրասյան խմբագրության պատկանելն ու այդ կարգի նյութերի շարքում գտնվելը[21]։ Լ. Մելիքսեթ-Բեկը զանց չի առել նաև այն տեղիները, որոնցով միմյանցից տարբերվում են հունարեն բնագիրն ու նրա վրացերեն թարգմանությունը։ Այդ բնույթի մի հատված վկայակոչելուց ու քննելուց հետո, նա եզրակացնում է. տարբերությունները արդյունք են վրացի թարգմանչի միտումի, որը չի կիսում գոյություն ունեցող ավանդական պատկերացումները Գրիգոր Պարթևի ազգության ոլորտի վերաբերյալ։

Անդրադառնալով թարգմանության ժամանակին, գիտնականը Ա. Ցագարելու նկարագրությունից վկայակոչում է Աթոսի Իվերոն մայրավանքի ձեռագրի հիշատակարանը, ուր խոսվում է սեպտեմբեր ամսվա վարքերի թարգմանության ժամանակի, տեղի ու թարգմանչի մասին։

Լ. Մելիքսեթ-Բեկի հոդվածում գտնվում է նաև (թեև անցողակի), որ վրացերենի մայր հունարեն մետափրասյան խմբագրությունը իր հերթին թարգմանություն է հայերեն VIII դ. (?) ազգային խմբագրությունից, կատարված, հավանաբար, IX դ.։ Վերջում նա քննության է առել Գրիգորի վարքի վրացերեն խմբագրության և «Քարթլիս ցխովրեբա»-ում Գրիգորի ու Հռիփսիմյանց մասին պահպանված տեղեկությունների հարաբերակցության հարցը։ Նրա եզրակացությամբ՝ վերջինիս աղբյուրը «Գրիգորի վարք»-ի հենց արծարծված վրացերեն թարգմանությունն է։

«Գրիգորի վարք»-ի վրացերեն խմբագրության ինքնատիպությունն ու գիտական նշանակությունը չեն վրիպել ակադ. Իվ. Ջավախիշվիլու ուշադրությունից[22]։ Նա գտնում է, որ վրացերեն ամկա տեքստը չի կարող հունարեն առաջին (իմա՛ ընդարձակ) բնագրի անմիջական կամ միջնորդավորված թարգմանություն լինել[23]։ Այստեղ, ինարկե, Իվ. Ջավախիշվիլին իրավացիորեն է առարկում է Լ. Մելիքսեթ-Բեկին, որի հունարենից վկայակոչած հատվածը իսկապես քաղված է Պ. Լագարդի հրատարակած առաջին կամ ընդարձակ տեքստից (ըստ երևույթին, Իվ. Ջավախիշվիլին ևս ձեռքի տակ հունարեն բնագիր չի ունեցել և քաղումները կատարել է Վ. Լանգլուայի ու Ն. Մառի վկայակոչումներից)։ Եթե Իվ. Ջավախիշվիլին վրացերենի և հունարեն

---

[21] Հովհան Քսիֆիլինին նվիրված աշխատության մեջ ակադ. Կ. Կեկելիձեն ձեռագիրս համարում է XIII դ. (ХВ, т. I, вып. III (1912), стр. 336)։ Սակայն նույն երկի վերահրատարակության ժամանակ, այլ հատվածների հետ, այս ձեռագրի ժամանակին վերաբերողն էլ է կրճատված („ეტიუდები...", ტ. V, გვ. 232)։ Նորագույն նկարագրության մեջ ձեռագիրը XI—XII դարերով է թվագրված (տե՛ս „ქართულ ხელნაწერთა აღწერილობა", S, I, გვ. 462).

[22] ივანე ჯავახიშვილი, ძველი სომხური საისტორიო მწერლობა, ტფ. 1935, გვ. 76—83։

[23] ივ. ჯავახიშვილი, նշվ. աշխ. էջ 78։

երկրորդ բնագրի (Լագարդի հրատարակություն, էջ 90—118) համեմատության հնարավորություն ունենար, ապա կհամոզվեր, որ նրանք իսկապես ծածկում են միմյանց։ Փաստորեն հունարենից թարգմանված լինելու Լ. Մելիքսեթ-Բեկի եզրակացությունը ճիշտ է, բայց ոչ այն բնագրից, որ նա նկատի է ունեցել, այլ երկրորդից[24]։ Նկատելու է, սակայն, որ Իվ. Ջավախիշվիլին կասկածանքով է նայում և երկրորդ բնագրին՝ առ այդ վկայակոչելով վերջինիս և վրացերեն թարգմանության խորագրում եղած մեկ տարբերություն. հունարենում Գրիգորը **Մեծ Հայքի** լուսավորիչ է կոչված (τῆς Μεγάλης Ἀρμενίας), մինչդեռ վրացերենում այն չկա, այլ միայն՝ Պարթևացի։ Եթե Իվ. Ջավախիշվիլին ձեռքի տակ ունենար Գելաթի № 4 ձեռագրի նկարագրությունը, ապա կհամոզվեր, որ վրացերեն խորագրի տարբերությունը հետագա գրչական միջամտության արդյունք է. այստեղ, հունարենի բառական համապատասխանությամբ, ունենք „დიდისა სომხითარისა"։ Ուստի չի հաստատվում գիտնականի այն եզրակացությունը, թե «Այստեղ ևս, ինչպես տեսնում ենք, ակներև տարբերություն կա։ Անմիջական, ուղղակի թարգմանություն եթե լիներ, հենց խորագրում իսկ այսպիսի փոփոխություն չէր ներածվի»[25]։

Ակադ. Իվ. Ջավախիշվիլու համոզմամբ վրացերեն խմբագրությունը, ի տարբերություն այլ լեզուներով պահպանվածների, կարող է մեծապես նպաստավոր լինել հուշարձանիս սկզբնական ընդգրկումն ու կառուցվածքը ուսումնասիրելիս[26]։ Թե բնագրերի համեմատական ուսումնասիրությունը որքանով է արդարացնում նման եզրակացությունը՝ կանդրադառնանք առանձին։ Նախ տանք ձեռագրերի նկարագրությունը։

1. Աթոսի № 20[27]։ Մանր նուսխուրի գրչության ձեռագիր, 27×21 սմ մեծության, երկսյուն, 189 էջ։ Բովանդակում է սեպտեմբեր ամսին տոնելի սրբերի վարքերը, մետափրասյան խմբագրության։ Հունարենից թարգմանիչն ու ձեռագրի գրիչը Թեոփիլեն է (Թեոփիլոս), գրչության-թարգմանության վայրը՝ Կ. Պոլիս, 1081 թ., իսկագիր։

Ընդգրկում է.

1 ცხორებაჲ და მოქალაქობაჲ წმიდისა მამისა ჩუენისა სჳმეონ მანდრელისაჲ
Վարք և քաղաքավարություն (գործունեություն) սուրբ հորն մեր Սիմեոն Մանդրացու, էջ 4r_1—18v_2

2 წამებაჲ და ღუაწლი დიდებულისა ქრისტეს მოწამისა მამაჲსი

---

[24] Ընդարձակ խմբագրությունից թարգմանված լինելու դեպքում երկու տեքստերի միջև եղած տարբերությունն անկարելի էր բացատրել միայն թարգմանչի միտումով ու նպատակադրումով, ինչպես ենթադրել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը։

[25] ივ. ჯავახიშვილი, նշվ. աշխ., էջ 78։

[26] ივ.ჯავახიშვილი, նշվ. աշխ., էջ 80—83։

[27] Նկարագրությունը քաղում ենք Ռ. Բլեյկի աշխատությունից (Catalogue..., 78—91)։ Ցագարելու ցուցակում կրում է 29 համարը։ Այս ձեռագրի ներկայացումը պայմանական է, քանի որ հրաշխիք չկա մտածելու, թե նրանում եղած բնագիրը նույնական է մյուս երեքի հետ։

Վկայաբանություն և ճգնություն Քրիստոսի փառավորյալ նահատակ Մամայի, 18v$_2$—24v$_2$

3 ღუაწლი და სიმჴნე წმიდისა მამისა ჩუენისა მღდელთ-მოწამისა ანთიმოზისი ნიკომიდიელთა ეპისკოპოსისაჲ
Գործ (ճգնություն) և խոստովանություն մեր սուրբ հոր՝ Նիկոմիդացիների եպիսկոպոս Անթիմոս հայրապետի, էջ 25r$_1$—29r$_1$

4 ღუაწლი წმიდისა მამისა ჩუენისა ბაბილა ანტიოქელ მთავარ-ეპისკოპოსისაჲ
Գործ մեր սուրբ հայր Բաբելաս Անտիոքացի արքեպիսկոպոսի, էջ 29r$_1$—33v$_2$

5 წამებაჲ წმიდათა მოწამეთა ევდოქსიუ, რომჳლუ, ზინონოს და მაკარისი
Վկայաբանություն սուրբ նահատակներ Եվդոքսիմոսի, Ռոմելոսի, Զենոնի և Մակարոսի, էջ 34r$_1$—38r$_1$

6 ღუაწლი წმიდისა და დიდებულისა მოწამისა სოზონისი
Գործ սուրբ և փառավորյալ նահատակ Սոզոնի, էջ 38r$_2$—40r$_2$

7 წამებაჲ წმიდისა მოწამისა სევერიანოზისი
Վկայաբանություն սուրբ նահատակ Սևերիանոսի, էջ 40r$_2$—57r$_1$

8 თქუმული წმიდისა და ნეტარისა მამისა ჩუენისა იოვანე დამასკელისაჲ შობისთჳს... მარიამისა
Սուրբ և երանելի մեր հոր՝ Հովհան Դամասկացու ասացյալ՝ Վասն ծննդյան... Մարիամի, էջ 57r$_2$—63v$_2$

9 მისივე წმიდისა მამისა ჩუენისა იოვანე დამასკელისაჲ საკითხავი შობისათჳს ყოვლად წმიდისა ღმრთისმშობლისა... მარიამისა
Նորին մեր սուրբ հոր՝ Հովհան Դամասկացու՝ Ճառ վասն ծննդյան ամենայն սուրբ աստվածածին... Մարիամի, էջ 64r$_1$—70r$_1$

10 თხრობაჲ* და მოქალაქობაჲ და წამებაჲ წმიდისა და დიდებულისა მღდელთ--მოწამისა გრიგოლი დიდისა სომხეთისა ეპისკოპოსისაჲ
Պատմություն և քաղաքավարություն ու վկայաբանություն սուրբ և փառավորյալ նահատակ, Մեծ Հայքի եպիսկոպոս Գրիգորի, էջ 70r$_2$—74v$_1$

11 ღუაწლი წმიდისა და დიდებულისა, კეთილად მძლისა ქრისტეს მოწამისა თეკლა იკონიელისაჲ
Գործ սուրբ և փառավորյալ, Քրիստոսի բարեհաղթ վկա Թեկղե Իկոնիացու, էջ 74v$_1$—83v$_2$

12 ცხორებაჲ და მოქალაქობაჲ წმიდისა დედისა ჩუენისა ევფროსჳნესი
Վարք և քաղաքավարություն մեր սուրբ մոր Եփրոսինեի, 83v$_2$—90r$_1$

13 შესხმაჲ და ჴსენებაჲ წმიდისა და დიდებულისა მოციქულისა და მახარებლისა იოვანე ღმრთის-მეტყუელისაჲ
Ներբողյան և հիշատակ սուրբ ու փառավորյալ առաքյալ և ավետարանիչ Հովհան Աստվածաբանի, էջ 90r$_1$—98r$_1$

14 წამებაჲ წმიდისა და დიდებულისა მოწამისა კალისტრატესი და მოყუასთა მისთა

* Այս տերմինի գործածությունը խիստ կասկածելի է, պետք լիներ ცხოვრებაჲ-վարք։

Վկայաբանություն սուրբ և փառավորյալ նահատակ Կալիստրատոսի և նրա մերձավորների, էջ 98r$_1$—105r$_1$

15 ცხორებაჲ და მოქალაქობაჲ წმიდისა მამისა ჩუენისა და აღმსაარებელ-მოღუაწისა ხარიტონისა
Վարք և քաղաքավարություն մեր սուրբ հայր և խոստովանող-ճգնավոր Խարիտոնի, էջ 105r$_1$—113r$_1$

16 ცხორებაჲ და მოქალაქობაჲ და მოღუაწებაჲ წმიდისა მამისა ჩუენისა კჳრიაკოს განმშორებელისა
Վարք և քաղաքավարություն և ճգնություն մեր սուրբ հայր Կիրակոս անապատականի, էջ 113r$_1$—121r$_2$

17 ასტ<ე>რიოს ამასიელ ეპისკოპოსისა მიერ აღწერილი შესხმაჲ წმიდისა და დიდებულისა მოწამისა ფოკაჲსი
Աստերիոս Ամասիացի եպիսկոպոսի կողմից գրված՝ Ներբողյան սուրբ և փառավորյալ նահատակ Փոկասի, էջ 121v$_1$—126r$_1$

18 წამებაჲ წმიდათა დედათა სოფია და ასულთა მისთა პისტი, ელპიდი და აღაპისი
Վկայաբանություն սուրբ կանանց՝ Սոփիայի և նրա դուստրեր Պիստիսի, Էլպիսի ու Ագապեի, 126r$_2$—132r$_1$

19 წამებაჲ წმიდათა მოწამეთა ტრო<ფიმი>, სევატი და დორიმენდოჲსი
Վկայաբանություն սուրբ նահատակներ Տրոփիմոսի, Սաբատիոսի և Դորիմեդոնի, էջ 132r$_2$—138r$_1$

20 წამებაჲ წმიდისა და დიდებულისა და დიდისა მოწამისა ევსტატი სტრატილატისაჲ...
Վկայաբանություն սուրբ և փառավորյալ ու մեծավկա Եվստաթեոս զորականի, էջ 138r$_2$—151r$_1$

21 წამებაჲ წმიდათა დედათა მინოდორა, მიტროდორა და ნჳმფოდორაჲსი
Վկայաբանություն սուրբ կանայք Մինոդորայի, Միտրոդորայի և Նիմփոդորայի, էջ 151r$_1$—155v$_1$

22 ცხორებაჲ და მოქალაქობაჲ და ღუაწლი ღირსისა და ნეტარისა დედისა ჩუენისა თეოდორა ალექსანდრიელისაჲ
Վարք և քաղաքավարություն և ճգնություն արժանավոր և երանելի մեր մոր՝ Թեոդորա Աղեքսանդրացու, էջ 155v$_1$—164r$_1$

23 ღუაწლი წმიდისა და დიდებულისა მღდელ-მოწამისა ქრისტესისა ავტონომოჲსი
Ճգնություն սուրբ և Քրիստոսի փառավորյալ նահատակ Ավտոնոմոսի, էջ 164r$_1$—166v$_1$

24 საქმე სასწაულთაჲ და აღსრულებაჲ წმიდისა და დიდებულისა კორნილიოს ასისთავისაჲ
Հրաշագործություն և կատարումն (մահ) սուրբ և փառավորյալ Կոռնելիոս հարյուրապետի, էջ 166v$_1$—172v$_2$

25 წამებაჲ წმიდისა და დიდებულისა მოწამისა ნიკიტაჲსა

Վկայաբանություն սուրբ և փառավորյալ նահատակ Նիկիտայի, էջ $172v_1$—$174v_2$

26 წამებაჲ წმიდისა და ყოვლად ქებულისა მოწამისა ევფიმიაჲსი
Վկայաբանություն սուրբ և ամենագովելի վկա Եվփիմիայի, էջ $175r_1$—$184r_2$

27 თქუმული წმიდისა ბასილისი ამაღლებისათჳს პატიოსნისა და ცხოველმყოფელისა ჯუარისა
Սուրբ Բարսեղի ասացյալ՝ Վասն կանգնեցման պատվական ու կենդանարար խաչի, էջ $184v_1$—$187r_2$

Հիշատակարան[28]

ვინაჲთგან უკუჱ მდიდარმან დიდებითა და უმრავლჱსმან წყალობითა ღმერთმან, მეოხებითა ყოვლად წმიდისა ღმრთისმშობლისაჲთა და მადლითა მოძღურისა და გამზარდელისა ჩუენისა გიორგი მთაწ[მი]დელისაჲთა (რამეთუ კმა არს ჴსენებაჲ ოდენ სახელისა მისისაჲ შესხმად მისა), რომელსაცა ჴმამაღლად ოხრიან ყოველნი ეკლესიანი ქართველთანი, აღაღო პირუტყუთ სახჱ ესე პირი ჩემი. და კუალად მეცა უღირსმან ამან ვყავ მრავალი მოსწრაფებაჲ ამისთჳს და სიყუარულისათჳს ამათ წიგნთა და ყოველთა ქართველთა ნათესავისა, დაუტევე ზრუნვაჲ სულისა ჩემისაჲ და ტირილი ცოდვათა ჩემთაჲ და შევჰკადრე საქმესა უზეშთაესა ძალისა ჩემისასა, რომელ არს თარგმანებაჲ წიგნთა ბერძულისაგან ქართულად. ამისთჳსცა უნებლიეთ თანამაც, რაჲთა გაუწყო ყოველთა მიზეზი წიგნთაჲ: და თუ ვინა აღიწერნეს ანუ ვის მიერ, და თუ სადა რა ითარგმნნეს ძუელთა მიერ თარგმანთა...

ესრეთ უკუჱ აღიწერნეს ძუელნი იგი ცხოვრებანი წმიდათანი. და უკანაჲსკნელ მწვალებელთა მიერ განიხრწნ-

Քանզի փառաշատ ու բազմողորմ աստված, բարեխոսությամբ ամենայն սուրբ Աստվածածնի և մեր վարդապետ (ուսուցիչ) ու սնուցիչ Գորգի Սուրբսարեցու շնորհով (որովհետև միայն անունն իսկ հիշատակելը բավական է նրան ներբողելու), որին բարձրաձայն հիշատակում են վրաց բոլոր եկեղեցիները, բացեց անասունի պես իմ բերանը (=լեզուն), այլև անարժանս ես էլ բազում ջանացի հանուն այս գրոց և ամենայն վրաց ազգի։ Թողի հոգուս համար հոգալն ու մեղքերիս համար լալը և իմ ուժից վեր գործ հանդգնեցի, որ է՝ գրքերի թարգմանություն հունարենից վրացերեն։ Ուստի և ակամա պարտավոր եմ բոլորիդ հաղորդել գրոց պատճառը. թե որտե՞ղ գրվեցին կամ ո՞ւմ կողմից կամ թե՝ ուր ի՞նչ թարգմանվեց հին թարգմանիչների կողմից...

Այսպես արդեն գրվեցին սրբերի այդ հին վարքերը, իսկ հետագայում աղանդավորների կողմից եղծ-

[28] *Տալիս ենք բնագիրը՝ համառոտումների բացումով։ Նրանում եղած տեղեկությունները վերաբերում են Թեոփիլոսի թարգմանությանը և տարածելի չեն մյուս ձեռագրերի բնագրի վրա։*

ნეს, რომელსაც ამას ზედა ფრიად იხარებდა ეშმაკი. ხოლო არა ვინ იპოვა ესევითარი კაცი, რომელსამცა აქუნდა მადლი და სიბრძნე სულიერი და დიდებაჲ და ჴელმწიფებაჲ ჴორციელი, რაჲთამცა გამოეხუნეს იგინი საგანძურთაგან სამეუფოთა და შეეწყვნეს იგი და შეეკაზმნეს და ქრისტეანთა ეკლესიისა (და) მიეცნეს ვიდრე დღეჲსადმდე ბასილი მეფისათა.

უკანაჲსკნელღა-სამე შემდგომად ჟამთა გამოჩნდა კაცი იგი საკჳრველი სჳმეონ სანატრელი, რომელი შემკობილ იყო სიბრძნითა საღმრთოჲთაცა და კაცობრივითა და აქუნდა მას ჴელმწიფებაჲცა ფრიადი პალატსა შინა, რამეთუ იყო ლოღოთეტი.

ამან სანატრელმან აღუწერნა ქრისტეანეთა ათორმეტნი ესე წიგნნი მეტაფრასნი და მიანიჭა ეკლესიათა საბერძნეთისათა უსასყიდლოჲ ესე მარგალიტი, რომლისათჳსცა ყოველნი ეკლესიანი მას იკითხვენ და მით განათლდებიან და სწორად სახარებისა პატივსცემენ.

ხოლო უკუჱთუ* ვინმე იტყოდის, თუ ვინაჲთგან ესოდენ საწადელ არიან ათორმეტნი ესე წიგნნი მეტაფრასნი-რაჲ არა** თარგმნნეს წმიდათა მამათა ჩუენთა ეფთჳმი და გიორგი? მე ვაუწყო ჭეშმარიტი მიზეზი: რამეთუ კაცი რაჟამს სიყმილითა პურისაჲთა მომყმარ იყოს—მას ძიებად ხილთა და სანოვაგეთა არა სცალს. რამეთუ უფრო[ჲ] საჭიროთაგან არა სცალდა, და ამისთჳს დაშთეს უთარგმნოდ, რომელთაგან მე უღირსსა ამას თეოფილეს რეცა ხუცეს-მონაზონსა, მოწაფესა გიორგი მთაწმიდე-

վեցին, որի համար հույժ ուրախանում էր սատանան։ Սակայն մինչև Վասիլ կայսեր օրերը չգտնվեց այնպիսի [մի] մարդ, որը ունենար շնորհ ու հոգևոր իմաստություն, փառք ու մարմնավոր իշխանություն, որպեսզի հաներ այդ [վարքերը] աղանդական գանձարաններից, կարգավորեր դրանք և զարդարեր, տար քրիստոնյաների եկեղեցուն։

Հազիվ, ի վերջո, ժամանակներանց, հայտնվեց այդ հրաշալի մարդը՝ Սիմեոն Երանելին, որ օժտված էր աստվածային ու մարդկային իմաստությամբ և ուներ նաև մեծ իշխանություն արքունիքում (պալատում), քանզի լոգոթետոս էր։

Այս երանելին գրեց քրիստոնյաների մետափրասյան տասներկու սույն գրքերը և Հունաստանի եկեղեցիներին ընծայեց այս անգին մարգարիտը։ Ուստի և բոլոր եկեղեցիները այն են կարդում ու նրանով լուսավորվում, Ավետարանին հավասար պատիվ տալիս։

Իսկ եթե մեկը ասի, թե քանի որ այդքան բաղձալի են այդ տասներկու գրքերը՝ մետափրասները, ինչո՞ւ չթարգմանեցին մեր սուրբ հայրեր Եվթիմեոս ու Գեորգին, ես հայտնեմ ճշմարիտ պատճառը. մարդ երբ հացի կարոտով սոված լինի՝ պտուղ ու խորտիկ ուտելու ժամանակ չի ունենա։ Քանի որ առավել անհրաժեշտներից չէր ազատվում, այդու մնացին առանց թարգմանության։

Ես՝ անարժանս Թեոփիլոս (Թեո-

* *Տեքստում՝* უკუ.

** *Տեքստում՝* რა და რა *(ինչ և ինչ)։*

ღისასა, რომელი არა ღირს ვარ მოწაფე წოდებად მისა, ათორმეტთა მათგან ერთი ესე გამომილია. უკუეთუ გამოჰმარჯოს ღმერთმან სხუათათჳსცა—კეთილ, და უკუეთუ არა—ამისთჳს ლოცვა ყავთ.

სივერაგემან ჟამთამან, შეუწევნელობამან კაცთამან და სიგლახაკემა-ჴორციელმან სიძჳრესა თანა ეტრატისანსა დამიხრწიეს, რამეთუ ორ(ა)ნი ქსელანი მოვიღოდეს დრაჰკანად, თუ არმცირეთა შინა ჟამთა მრავალი კეთილი იქმნებოდა.

აწ, ღმრთისთჳს, უკუეთუ ვინმე წერდეს ამას, რაჲცა აქა ჰპოოთ, სად დასწერდით და შეუცვლებლად, და აღიდებდეთ ღმერთსა* უკუჱ.

(გვ. 3_{rv})

ვინცა ესე ჩემი წიგნი დასწეროთ ჰყავთ სიყუარული და ამას ჩემსა ანდერძსა ნუ დააგდებთ, რამეთუ თქუენთჳს მადლ არს და წიგნისათჳს უმტკიცეს არს, ეგრეცა შესავალსა მას თავისასა.

ხოლო ამას წიგნსა შინა ქართულითგან ანუ პირველთა თარგმანთა თარგმანებულისა ყოვლადვე არა რაჲ წერილ არს, თჳნიერ ჯუარისა საკითხავისა სხუაჲ ყოველივე ახალი არს.

ითარგმნა წიგნი ესე მეტაფრასი ქალაქსა შინა სამეფოსა კონსტანტინეპოლეს, მონასტერსა შინა ყოვლად შუენიე-

փիլե), անունով միայն կուսակրոն աբեղա, Գեորգի Սուրբսարեցու աշակերտս, որ արժանի չեմ նրա աշակերտ կոչվելուն, այդ տասներկու [ամսվա գրքերից] միայն այս եմ թարգմանել. թե աստված հաջողի նաև մյուսների [թարգմանության] համար՝ բարի, իսկ եթե ոչ՝ սրա համար ողորմի տվեք։

Ժամանակների անպատեհությունը, մարդկանց անօգնականությունը և մարմնավոր խեղճությունը, մագաղաթի թանկության հետ միասին, խաթարեցին ինձ, քանզի երկու քսելանը (ձողա՞նը) մի դահեկան էին գալիս, թե չէ՝ քիչ ժամանակվա ընթացքում բազում բարիք կլինեին։

Արդ, հանուն աստծո, եթե որևէ մեկը գրի (օրինակի) այս՝ ինչ այստեղ կգտնեք, լրիվ գրեք և անփոփոխ։ Եվ այլևս փառք տվեք աստծուն։

Ով էլ այս գիրքս գրեք (օրինակեք), սիրալիր եղեք ու իմ սույն հիշատակարանը դուրս մի թողեք, քանզի ձեզ համար շնորհ է, իսկ գրքի համար՝ հաստատություն։ Այդպես և սկզբի ներածականը։

Սույն գրքում վրացերենից կամ առաջին թարգմանիչների թարգմանածներից ամենևին որևէ բան գրված չէ, բացառությամբ խաչին նվիրված ճառի՝ մնացած բոլորը նոր է։

Սույն Մետափրաս գիրքը թարգմանվեց արքայական քաղաք Կոստանդնուպոլսում, Տրիանտափու-

* Տեքստում՝ აღბდთ ღა.

** Տեքստում՝ უკჱ (უკუჱ— այլև ԹԵ° უკუნისამდე—հավիտյանս)։

რისა ტრიანდაფლივს დედისა ღმრთისასა, უღირსისა მიერ თეოფილეს რეცა მხუცეს-მონაზონისა და მითვე ჴელთა იერ დანუსხა დასაბამითგანთა წელთა ექუსათას ხუთას ოთხმეოც და მეცხრესა, ინდიკტიონსა ოთხსა ბერძულად, მეფობასა ბერძულად, მეფობასა აღმოსავლეთს გიორგი კესაროსისა ბაგრატის ძისა, რომლისა ბრძანებითა და მოღუაწებითა ვიწყე თარგმანად წიგნთა საღმრთოთა ელენურისაგან ქართულად. მიეცინ ღმერთმან სრულებაჲ კეთილთაჲ აქაცა და საუკუნოდ. ხოლო საბერძნეთს დედოფლობასა მართა მისვე გიორგის დისასა და მეფობასა ნიკიფორე ბოტონიოტისა და ალექსი კომნიანოსისა, მას ჟამსა, ოდეს ბაგრატის ასული მარიამ დედოფალი აღმოსავლეთით კონსტანტინეპოლეს შემოვიდა, და ჩუენ ზედა მეფობასა იესუ ქრისტეს ძისა ღმრთისასა...

լոսի (Τριανταφύλου) Աստվածածին ամենագեղ վանքում, անարժան Թեոփիլոսի կողմից՝ անունով կուսակրոն աբեղայի, և նրա իսկ ձեռքով գրվեց արարչագործությունից 6589 (=1081) թվականին, հունական ինդիկտիոնի չորսին, Արևելքում Բագրատի որդի Գեորգի Կեսարոսի թագավորության ժամանակ, որի հրամանով ու հոգացողությամբ սկսեցի աստվածային գրոց հունարենից վրացերեն թարգմանելը։ Աստված բարյաց կատարումն տա աստ և ընդմիշտ։ Հունաստանում՝ նույն Գեորգիի քույր Մարթայի թագուհության և Նիկեփորոս Բոտոնիատի և Ալեքսիոս Կոմնինոսի թագավորության օրոք, այն ժամանակ, երբ Բագրատի դուստր Մարիամ թագուհին Արևելքից Կոստանդնուպոլիս եկավ, և մեր վրա թագավոր էր աստծո որդին՝ Հիսուս Քրիստոս...

2. S—384[29]։ Նուսխուրի գրչության, թղթյա, գրված XI—XII դ. սահմանագլխին, 888 էջ, 30,5×25 սմ մեծության, գրիչն ու գրչության վայրը՝ անհայտ, խորագրերը՝ ասոմթավրուլի։ Բովանդակությունը՝ ժողովածու, ուր ամփոփված է 53 վարք, վկայաբանություն ու ճառ, Գրիգորի վարքը՝ 213—257 էջերում։

Ձեռագրում կան հիշատակարան-հիշատակագրություններ, որոնք գերազանցապես վերաբերում են համապատասխան գրվածի թարգմանության պարագաներին (տե՛ս էջ 121—122, 488, 612, 643, 678—679, 728), գրչության ժամանակը որոշելու համար արժեքավոր է հետևյալ հիշատակարանը.

[29] Նկարագրությունը տե՛ս ქართულ ხელნაწერთა აღწერილობა, ყოფილი ქართველთა შორის წერა-კითხვის გამავრცელებელი საზოგადოების (S) კოლექციისა, ტ. I, თბ., 1959, გვ. 462—469.

იესუ ქრისტე, მფლობელო ყოველთა სუფევათაო, ადიდე ორკერძოჲთავე დიდებითა შენ მიერ გჳრგჳნოსანი, ბრწყინვალე და უძლეველი მეფეთა-მეფე გიორგი და მაღალი კესაროსი, და განამრავლენ წელნი მეფობისა მათისანი ნებისაებრ მათისა და <შენ> მიერ მონიჭებული ძე მათი დავით მეფე და პანიპერ სევასტოსი ადიდე და მძლე ყავ ყოველთა ზედა მტერთა და წინააღმდგომთა, ამინ.

(გვ. 535)

Հիսուս Քրիստո՛ս, տիրակալ ամենայն արքայության, փառավորիր ի երկու կյանս փառք՝ քեզնով թագակիր, պայծառ ու անհաղթ արքայից-արքա Գեորգիին ու բարձր կեսարոսին և բազմացրու նրանց թագավորության տարիները՝ ըստ իրենց կամքի, և քո կողմից շնորհված նրանց որդի Դավիթ թագավորին և ամենակար սևաստոսին փառավորիր ու հաղթող դարձրու ամենայն թշնամիների և հակառակորդների հանդեպ։ Ամեն[30]։

3. Քութայիսի (=Գելաթի) ձեռ. № 4[31]: *Նուսխուրի երկսյուն գրչության, թղթյա, գրված 1565 թ. Գելաթում, գրիչ՝ Ինանիկի որդի Մանվել, պատվիրատուն և ստացողն է Աբխազքի կաթողիկոս Եվդեմոնը։ 669 էջ, 42×28 սմ մեծության, խորագրերը կարմիր թանաքով։ Բովանդակությունը՝ ճառընտիր, ուր ամփոփված են սեպտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 31 տոնվող սրբերի վարքեր ու վկայաբանություններ։ Վերջիններիս մետափրասյան խմբագրության լինելու պատճառով նմանատիպ ժողովածուները միջնադարյան գրիչների ու երբեմն էլ նկարագրողների կողմից կոչվում են «Մետափրաս» (տե՛ս առաջին ձեռագրի հիշատակարանը)։ Ամփոփվում է 68 վարք, վկայաբանություն ու ճառ, Պարթևի վարքը՝ էջ 321v—350v։ Կան մի շարք հիշատակարաններ ու հիշատակագրություններ, որոնցից համեմատաբար կարևոր են.*

I... ნებითა ღმრთისაჲთა და ბრძანებითა და ჯერჩინებითა ყოვლისა საქრისტიანოსა დიდისა მამამთავრისა აფხაზეთისა ქათალიკოზისა ევდემონისათა, საუკუნო იყავნ საჴსენებელი და კურთხევაჲ მისი. დ<ა> აწ კუალად ოკდომბრის ნახევარი იწერების ჴელითა ფრიად ცოდვილისა მანოელისაჲთა. ქორონიკონსა **სნგ** დაიწყო წმიდაჲ ესე წიგნი.

(გვ. 484v)

Կամոքն աստծո և հրամանով ու պատշաճահարկությամբ ամենայն քրիստոնեից մեծ հայրապետի՝ Աբխազքի կաթողիկոս Եվդեմոնի։ Հավիտյան թող լինի նրա հիշատակն ու օրհնությունը։ Եվ արդ վերստին՝ հոկտեմբերի կեսին է գրվում հույժ մեղապարտ Մանուելի ձեռքով։ Քրոնիկոնի 253-ին (=1565) սկսվեց այս սուրբ գրքի [ընդօրինակումը]։

[30] *Խոսքը վերաբերում է Գեորգի թագավորին (1072—1089) և նրա որդի Դավիթ Շինարարին (1089—1125)։*

[31] *Նկարագրությունը տե՛ս* „ხელნაწერთა აღწერილობა“, ტ. I, თბ., 1953, გვ. 25—35, *համմտ. ծան. 13։*

II... ადიდენ ღმერთმან ორთავე შინა ცხორებაჲთა ქრისტეს მიერ კურთხევით კურთხეული, საქრისტიანოს ზღუდე და მაკურთხეველი ტომნათესავობით ჩხეტისძე, დიდი მამათმთავარი აფხაზეთისა ქათალიკოზი ევდემონ... რომელსა ფრიად სურვილი აქუნდა ეკლესიაჲთა და საღმრთოჲთა წერილთათჳს, რომლისა ბრძანებითა და ჯერჩინებითა გათავდეს წმიდაჲ ესე თუჱ ოკტომბერი ყოვლითურთ სრული და უნაკლული დიდებულსა საყდარსა გელათს, სავანესა წმიდისა ღმრთისმშობლისსა, ინდიქტიონსა მეფობისა ჩუენისასა მეფეთ მეფისა გიორგისსა, ძისა ბაგრატ მეფისასა, ქორონიკონსა **სნგ**, მაისსა **გ**. ... ამისსა უცებად მიხრეკელსა ფრიად ცოდვილსა ინანიკას შვილს მანოელს და მშობელთა მისთა შეუნდოს ღმერთმან. ამინ.

Աստված փառավորի ի երկու կյանս Քրիստոսի օրհնությամբ օծյալ, քրիստոնեության պատնեշ (իմա՛ պահապան—Պ. Մ.), ազգատոհմով օրհնելի Չխետիձեին՝ Աբխազքի մեծ հայրապետ, կաթողիկոս Եվդեմոնին,... որը հույժ բաղձանք ուներ եկեղեցիների ու աստվածային գրոց նկատմամբ, որի հրամանով ու պատշաճահարկությամբ ավարտվեց հոկտեմբեր [ամսվա] այս սուրբ «Հայսմավուրք»-ը՝ ամենայնիվ լրիվ ու անթերի, Գելաթի հոյակապ տաճարում, սուրբ աստվածածնի հովանու տակ, մեր արքայից արքա Գեորգիի՝ արքայից արքա Բագրատի որդու, թագավորության ինդիկտոնին, քրոնիկոնի 253-ին, մայիսի 3-ին։ ...Սույնի անվարժ գրիչ հույժ մեղապարտ Ինանիկի որդի Մանուելին և նրա ծնողներին աստված թողություն տա։ Ամեն։

...უცებად ჩხრეკისათჳს ნუ დამწყევთ ღმრთისათჳს, გევედრები. დიდი წიგნი ამის მეტად არ მეწერა და რაჲცა ჩემგან იქნებოდა სიმართლეს მოვიჭირვე, უფალო ჩემო.

ჩუენსა განმგესა და ზედამდგომელსა სჳმონ ჯაფარიძესა და მშობელთა მისთა შეუნდოს ღმერთმან, ამინ.

სულიერს დედასა ჩემსა მაჭავარიანის ქალსა ანტონინეს და მშობელთა და ძმათა მისთა შეუნდოს ღმერთმან, ამინ.

(*էջ 668* r)

...Աղերսում եմ, անվարժ գրելուս համար, ի սեր աստծո, մի՛ անիծեք։ Սրանից ավելի մեծ գիրք չէի գրել, և ինչ էլ ինձնից էր կախված՝ արդարը ջանացի, տե՛ր իմ։

Մեր կառավարիչ ու վերակացու Սիմեոն Ջափարիձեին և նրա ծնողներին աստված թողություն տա, ամեն։ Իմ հոգևոր մորը՝ Մաճավարիանիի աղջիկ Անտոնինեին և նրա ծնողներին ու եղբայրներին աստված թողություն տա, ամեն։

4. Սինայի լեռան վրացական հավաքածո, ձեռ. № 91 (=Sin. 91)[32]:

[32] *Նկարագրությունը տե՛ս* **А. А. Цагарели**, Каталог грузинских рукописей Синайского монастыря, *տե՛ս նրա՝* Памятники грузинской старины в святой земле и на Синае, СПб., 1888 стр. 216, *նաև՝* **Н. Я. Марр**, Описание грузинских рукописей Синайского монастыря, М.—Л., 1940, стр. 255—264, *նաև՝* **Gérard Garitte**, Catalogue des manuscrits géorgiens littéraires du Mont Sinaï, Louvain, 1956, p. 263—282: *Ցագարելին ձեռագիրը նկարագրել է № 49-ի տակ, Ն. Մառը և Ժ. Գարիտը՝ № 91։*

Նուսխուրի գրչության, երկսյուն, ըստ հնագրական տվյալների՝ XIV դարի, թղթյա, 324 էջ, 35×25 սմ չափի։ Խորագրերը՝ կարմիր թանաքով։ Գրիչ՝ Օքրոպիր, տեղը՝ Գարեջայի վանք, բովանդակությամբ՝ Վարք սրբոց (մետափրասյան խմբագրություն, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար ամիսների ընդգրկմամբ)։ Սեպտեմբերի վարքերից, ձեռագրի պակասավորության պատճառով, պահպանվել է միայն Գրիգոր Պարթևին վերաբերողը (էջ 1r—12r), այն էլ վերջին էջերը (սկսվում է Լ. Մելիքսեթ-Բեկի հրատարակության էջ 26_{13}-ից՝ [ფე]რჯით და საბელნი იგი მ.ა. ნეს შემათა ალმართებულთა...)[33].

Հիշատակարան [34]

წმიდანო მამანო და ძმანო, დიდად მელმის და მტკივის, რომელ წინაუკუმოდ და არა მიწყებით სწერია ესე საკითხავები, და მიზეზი ესე არს: ოთხისა თუ ხუთისა დედისაგან ვწერდი, ნათხოვისა სხჳსა და სხჳსა მონასტრისაგან, და ჟამსა თჳსსა ვერ ვიპოვნი დედაჲ.

Սուրբ հայրեր և եղբայրներ, մեծապես կսկծում ու ցավում եմ, որ խառնաշ ու ոչ կարգավոր են գրված այս ընթերցվածները, և պատճառն այս է. չորս թե հինգ մայր [օրինակ]ից եմ գրել, խնդրած (ճարած) այլ և այլ վանքերից։ Եվ իր ժամանակին չէի կարողանում մայր [օրինակ] գտնել։

აწ ვევედრები სიწმიდესა თქუენსა ამით ზანდუკითა და რიცხჳთა მოიძევდით და რომელსაცა დღესა საგალობელი თჳსაჲ ამათ წმიდათაჲ მიხუდებოდის—მასვე დღესა ამათ საკითხავთა მოიძევდით და თანავე საგალობელსა მის დღისასა წარიკითხევდით. არა თუ ამას ვიტყჳ, თუ ერთობით მას დღესა დაასრულებდით მის წმიდისასა, ამათ რომელ ზოგთაჲ დიდი არს და სამსაცა დღესა ეყოფის საკითხავად, და ესე საქმე ადვილ არს წინაშე გონიერთაჲსა.

Արդ, աղաչում եմ ձերդ սրբություններին՝ այս ցանկով և թվով որոնեցեք ու այս սրբերին վերաբերող շարականը որ օրը որ պատահի՝ այս նույն օրն էլ նրանց ընթերցվածքը փնտրեք և օրվա շարականի հետ միասին էլ կարդացեք։ Ոչ թե այն եմ ասում, թե միանգամից նույն օրը կատարեք այդ սրբին վերաբերող [եղածը], քանի որ ոմանց [սրբերինը] մեծ է և երեք օր էլ կբավականացնի ընթերցմանը։ Եվ այս գործը խելամիտների համար (առաջ) դժվար չէ։

ხოლო თუ ჩემისა სახელისა და უღირსებისაჲ გინდეს ცნობის—არა ღირსისა ცისა და ქუეყანისა და უცოდველესისა ყოველთა ცოდვილთაჲსაჲ ოქროპირი, იოვანე ანჩელისა დისწული, რომელმან ესე წიგნნი დავჩხრიკენ თერთმეტი თუე. დეკენბერი არა ჩემი დაწერილი არს.

Իսկ թե իմ անունս ու անարժանությունս կուզենաք իմանալ—ոչ արժանի երկնին ու երկրին, մեղավորագույն բոլոր մեղավորներից Օքրոպիր՝ Հովհան Անչեցու քրոջ որդի, որս այս գրքերը (իմա գիրքը— Պ. Մ.) գրեցի՝ տասնմեկ ամիս. դեկտեմբերը իմ գրածը չէ...

(էջ 323)

[33] Ձեռագրի 322v—323r էջերում պահպանվել է ընդգրկված նյութերի ցանկը, որտեղից և տեղեկանում ենք, որ Գրիգոր Պարթևի վարքից առաջ եղել է վեց այլ վարք՝ 1. Մամայ, 2. Բաբիլա, 3. Նիկիտա, 4. Եվփեմիա, 5. Եվստաթիոս, 6. Թեկղե։

[34] Հապավումների բացումը Ժ. Գարիտի (նշվ. աշխ., էջ 280—281)։ Հիշատակարանիս վերաբերող գրականության մատենագիտությունն տե՛ս G. Garitte, նշվ. աշխ., էջ 282։

* * *

Վերևում արդեն նշեցինք, որ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի 1920 թ. հրատարակությունը իրացվել է ըստ S—384 ձեռագրի։ Վրացերեն բնագիրը ուսումնասիրելու և ի նորո կազմելու ընթացքում անհրաժեշտ եղավ Լ. Մելիքսեթ-Բեկի հրատարակության մեջ բավականաչափ փոփոխություններ ու սրբագրություններ կատարել։ Կարևոր ենք համարում այստեղ ներկայացնել այդ սրբագրությունների բնույթն ու աղբյուրը։

1) Հրատարակիչը մի քանի տեղում փակագծերի մեջ տեքստի պակասավորությունը մատնացույց բազմակետեր է դրել։ Վրացերենի և նրա բնագիր հունարենի համադիր քննությունից պարզվեց, որ իրականում տեքստը պակասավոր չէ, այլ՝ գրչական հիմքի վրա խաթարված. და სუეტი ცეცხლისაჲ ფერთა ოქროვანთა [...] და მწთოლვარე წინაშე მათსა ვიდოდა—բառացի թարգմանությամբ՝ Հրո սյունը ոսկե գույների (.....) և կարկրելով (=ճեպով) նրանց առաջ էր գնում։ Իհարկե, եթե հիմք չունենայինք ենթադրելու, որ ფერთა ოქროვანთა [...] და կապակցությունը խաթարված է, ապա Հ. Մելիքսեթ-Բեկի հետևողությամբ արդարացիորեն պակասավոր պիտի համարեինք։ Բայց հունարենի առկայությունը կանխում է նման եզրակացությունը. այստեղ կարդում ենք. καὶ στῦλος πυρὸς ἐπὶ βάσει χρυσῇ ἱδρυμένος εἰς ἐκείνους ἀνέτρεχε (Lagarde, 108, 31—32), բառացի թարգմանությամբ՝ Եվ հրո սյունը ոսկե խարսխի վրա հաստատված դեպի նրանք էր ճեպում (սուրում)։ Ուրեմն՝ վրացերենում նախադասությունը պակասավոր չէ, այլ ფერთა ოქროვანთა [...] და կապակցության մեջ պիտի ունենանք «ոսկե խարսխի վրա» համապատասխանությունը։ Դժվար չէ կռահել, որ ფერთა-ի տակ թաքնված է նախնական ფუძეთა (խարիսխ) ընթերցվածը։ Հիմնական աղավաղումը առաջացել է նուսխուրի ძ-ի և რ-ի գլխագիր գրչական շփոթումից, հունարեն ἐπί-ի դիմաց վրացերենում պիտի լիներ ზედა (վրա)։ Եվ իրոք, բառս վերջին մասը (და) պահպանվել է, բայց գրչի թե հրատարակչի կողմից ընկալվել է իբրև და—և շաղկապ. ուստի պակասավոր տեքստի կերպարանք է ընդունել։ Իրականում պակասում է միայն բառիս առաջին երկու տառը՝ [ზე]და։ Այսպիսով, բնագիրը վերականգնվում է՝ და სუეტი ცეცხლისაჲ ფუძეთა ოქროვანთა ზედა მწთოლვარე წინაშე მათსა ვიდოდა—իսկ(և) հրո սյունը ոսկե խարիսխների վրա՝ ճեպով նրանց առաջ էր գնում (§ 85)։

Այլ օրինակ. ხოლო ეკლესიანი არა თუ სამნი ესოდენ აღაშენნეს, არამედ სხუაჲცა იგი, რომელი ფრიად ჰმატს ამათ სიდიდითა, რომლისა თუალით ხილვაჲ [...] ხოლო კათოლიკედ სახელ-სდებს, թարգմանաբար՝ «Մինչ եկեղեցիներ

ոչ թե ընդամենը երեքը շինեցին, այլև ուրիշ էլ, որ մեծությամբ հույժ գերազանցում է սրանց, որին աչքով տեսնելը [...], իսկ կաթողիկե անունը կաա։» *Թվականը համարելը արդյունք է* ხოლო-*ի սխալ ընկալման (և սրբագրման). Հրատարակիչը նկատի է ունեցել բառիս «իսկ» նշանակությունը, ուստի կիսավարտ է համարել նախորդ արտահայտությունը, մինչդեռ եթե նկատի առներ* ხოლო-*ի երկրորդ և նույնքան հաճախադեպ նշանակությունը՝ «միայն», ապա ամեն ինչ իր տեղում կլիներ՝ «որին միայն աչքով տեսնելն [անգամ] կաթողիկե անուն կտար»* (§ 101)*։ Ընդգծված նախադասության դիմաց հունարենում կարդում ենք.* ὃν καθολικὴν ἐκκλησίαν καὶ ἡ θέα μόνον ὠνόμαζε (Lagarde, 112, 59—60) *որ բառացի թարգմանությամբ կլինի «որին միայն տեսքը կաթողիկե եկեղեցի կանվաներ»։*

Բերենք այս կարգի մեկ օրինակ ևս. და ესოდენსა სისრულესა სათნოებათასა მოიყვანნა იგინი ფრიადის... ღირს იქმნნეს დიდსა მასცა საყდართსა მღდელთ-მოძღურებისასა. *Հրատարակիչը անտեսել քերականական վերջավորության ու շարունակությամբ չբացատրվող* ფრიადის *(հույժ-ի) բառին հանդիպելով, կարծել է, թե տեքստը պակասավոր է։ Բնականաբար, այդ ճիշտ եզրակացություն կլիներ, եթե աղավաղման հետ գործ չունենայինք։ Հունարենում կարդում ենք* ὡς καὶ εἰς αὐτοὺς δήπου τοὺς μεγάλους τῶν ἐπισκοπῶν ἀναβιβάσαι θρόνους (Lagarde, *116, 15—16*)*։ Հունարենի և վրացերենի տեքստերը համապատասխանում են միմյանց (եթե չհաշվենք* եպիսկոպոսական *և* քահանայապետական *աթոռ տարբերությունը), ուստի* ფრიადის *աղավաղումը ակնհայտ է* ὡς-*ով (մինչև իսկ, նույնիսկ, անգամ և այլն)։ Ինքնին այլևս հասկանալի է, որ այդ բառի տակ* ვიდრემდის-*ն է թաքնված, նախորդ գրչության հիմքի վրա աղավաղված* (§ 120)*։ Ուրեմն տեքստը պակասավոր չէ, իսկ վերականգնումը՝ կասկածից դուրս։*

2) Կան դեպքեր, երբ տեքստում առկա հունաբանությունները իբրև տեղանուն են ընկալվել, ուստի տպվել են ընդգծումով և մտցվել հատուկ անունների ցանկի մեջ. რამეთუ ჟამსა ზამთრისასა და განძლიერებასა სომხეთს ყინულისასა ფრიად განისუენებდიან ადგილთა მათ **რასტონისათა** და შუენიერებაჲ იგი არეთაჲ მიინიჭებდა მათ სიტკბოებასა (§ 15). *Ճիշտն ասած, վրացի թարգմանիչն այնպես է կապակցել (Ռաստոնաց վայրերում), կարծես իսկապես տեղանվան հետ գործ ունենք։ Բայց հունարենի ուսումնասիրությունը ցրում է այդ կասկածը՝* ὁ μὲν οὖν χειμὼν ἐν πολλῇ τοὺς Ἀρμενίους διανέπαυε τῇ ῥαστώνῃ, καὶ τὸ ἔαρ αὐτοῖς παραπλησίους ἐν τῇ οἰκείᾳ τὰς ἡδονὰς ἐχαρίζετο (Lagarde *93, 16—18*)*։ Հունարենում* ῥαστώνη *նշանակում է «թեթև, հեշտ, հարմար, բարեկեցիկ, թեթևացում, հանգիստ, ընդմիջում, անհոգություն, ապահով, խաղաղ»։ Ակներև է արդեն՝ վրացերենում բառս կիրառված է «հարմարավետ, ապահով տեղ» իմաստով և հատուկ անուն չէ։ Նույն կարգի թյուրընկալում է տեղի ունեցել մեկ այլ հունարեն բառի հետ.* და მოივლტოდეს მახ-

ლობელად ადგილთა **ამმოდისათა** და მუნ... (§ *64*)*։ Այնպես է ստացվել, որ կարծես նորից իսկապես տեղանուն է. կույսերը տեղեկանում են Հռիփսիմեի հաղթության Տրդատի պալատում (Վաղարշապատում) և իրենց հնձաններից փախչում մոտակա «ամմոդական վայրերը»։ Նախ՝ Վաղարշապատի մոտակայքում այդպիսի տեղանուն չի եղել և ապա՝ հունարենում ունենք* ἐπί τινός τε ἀμμώδους πλησίον ἐγένοντο τόπου... (Lagarde, *104, 83*) *ուր* ἀμμώδης *նշանակում է «ավազոտ» և շատ բնական կլիներ կարդալ և «անապատեցին (փախան) մոտակա ավազոտ վայրերը», ուր և նրանք գտնվեցին ու նահատակվեցին։*

Վրացերեն տեքստի մեկ ամբողջական տպագրության մեջ կա և հակառակ երևույթը, երբ հատուկ անունը իբրև հասարակ է ընդունվել։ Թագավորի ննջարան տարված Հռիփսիմեն դիմում է Քրիստոսին՝ նրան հիշեցնելով საკჳრველებათა **ზღჳსა მის მეწამულისათა** და იონანს შორის შემოიყვანებდა საკჳრველითურთ დანთქუმით მისით (§ 59), *բառացի՝ „... հրաշքները* მეწამულისათა *ծովի և մեջ էր բերում Հովնանին՝ նրա կուլ գնալու հրաշքով“։* მეწამული *հին վրացերենում նշանակում* կարմիր, *իսկ* ზღუა მეწამულისა*—Կարմիր ծով (տե՛ս Սաղմ., ՃԵ, 7, 9, 22)։ Բնականաբար, մեզ հետաքրքրող տեքստում խոսքը վերաբերում է իսրայելացիների՝ հրաշքով Կարմիր ծովն անցնելու պատմությանը (տե՛ս Ելից, Ժ, 19, ԺԳ, 18, Սաղմ. ՃԵ, 7, 9, 22)։ Ուրեմն, վրացերենում կարդալու ենք՝ Կարմիր ծովի հրաշքները։ Հունարենում այսպես է.* τῶν κατὰ τὴν **ἐρυθρὰν** τε καὶ τὴν ἔρημον αὐτὸν ἀνεμίμνησκε θαυμασίων... (Lagarde, *102, 39—40*)*։ Վրացի թարգմանիչը կռահել է, որ խոսքը* Ἐρυθρὰ θάλασσα-*ի մասին է, թեև* θάλασσα—ზღუა—*ծով բառն այստեղ չի եղել։*

3) Հրատարակության մեջ պատահում են ոչ ճիշտ բառանջատման-տրոհման դեպքեր, որոնք մեր կողմից նույնպես ուղղված են։ Բերենք մեկ-երկու օրինակ და ამისსა შემდგომად იწყო თჳთ მეფისაჲთ და დედოფალსა და სამეფისასა და ყოველთა მთავართა ნათელ-სცა. *Ուղղելի է* და დასა მეფისასა*—և թագավորի քրոջը*—καὶ τῆς ἀδελφῆς.

Համոզված ենք, այս կարգի վրիպումները զուտ հրատարակչական են, ինչպես որ, ասենք, მელად *պ. լ.* მგლად (§ *88*), და საჭმარ უფალთა ჩუენთა მისდა, დაუყენებლად *պ. լ.* და საჭმარ უფალთა ჩუენთა, მისდა დაუყენებლად (§ *25*), ვიდრე არა მარგებელ *պ. լ.* ვიდრე არს მარგებელ (§ *9*) *և այլն***։*

4) Վրացերենում չորս անգամ խոսվում է Արարատի քաղաք, Արարատի ճոր *հասկացությունների մասին (§ 46, 47, 75, 77), մինչդեռ հունարեն բնագրի համեմատությունից պարզվում է, որ խոսքը* Ἀρταξάτ *(=Արտաշատ)-ի մասին է, որ վրացերենում դարձել է* არარატი (არარატისასა)*—Արարատ, մինչդեռ սպասելի էր* არტაქსატ-ი (არტაქსატისასა), *թեև մեզ զբաղեցնող բնագրին խորթ չէ նաև* ს-*ի* შ *փոխանցումը (հմմ.* Μασσαγέται—მაშშაგეტნი, §*1*)*։*

---

* *Թեև բացառված չէ* ვიდრე არა—*Տան չէ ոճի գործածությունը։*

Համոզված ենք, Արտաշատ-ի არარატ-ი *վերածումը տեղի է ունեցել հունարեն գրչագրի ընդօրինակության ընթացքում, թեև հունարենը նման տարընթերցում չունի (հմմ.* Lagarde, 106, 63, 73)։

5) Անհրաժեշտ համարեցինք վրացերեն տեքստը պարբերությունների բաժանել, քանի որ դրանով հեշտանում է վկայակոչության պարագան, թարգմանությունը առավել ստուգելի է դառնում և, ի վերջո, պահպանվում է հայերեն բնագրի գիտական հրատարակության ավանդույթը։

Մյուս բոլոր միջամտությունները արտացոլված են համապատասխան նշում-նշանով, ինչպես նախորդ բնագրերում ու նրանց թարգմանության մեջ է։ Լ. Մելիքսեթ-Բեկի առանձնացրած մի քանի ձեռագրական սխալ ընթերցումները (Նրա հրատ., էջ 48) արտացոլել ենք վրացերենի տողատակին, եթե այդ ընթերցումը նախընտրելի չենք համարել։

Հատուկ անունները տառադարձելիս խուսափել ենք միասնական սկզբունք կիրառելուց, որովհետև դա կամ անճանաչելի կդարձներ վրացերենի կախումը հունարեն բնագրից, կամ, նույնությամբ պահելու դեպքում, դժվար կլիներ հայերեն համապատասխանությունը հեշտությամբ գտնել։ Ուստի **Կուսար** (კუ ორ-ი) *անձնանվան կողքին փակագծում գրել ենք* **Խոսրով**, *դրանով իսկ հուշելով, որ հաջորդ գործածությունները ևս այդպես են ընկալվելու (հմմ. նաև՝* **Կուսարողուխտ**—*Խոսրովադուխտ,* **Օրքանե**—*Վրթանես,* **Արոստակե**—*Արիստակես և այլն)։ Բայց միաժամանակ ավելորդ խրթնացում կլիներ վրացերենի* გუთნი-*ն պահել նույնությամբ և ոչ՝* **գոթեր**՝, *Կապադովիա և ոչ՝* **Կապադովկիա**, *Իոնա և ոչ՝* **Հովնան** *և այլն։*

Երբ վրացերենում առկա տառադարձությունը չի համապատասխանել հունարենին և առանձին պրպտելու առիթ կարող է տալ, ապա պահպանել ենք նույնությամբ, թեկուզ հայերեն այլուստ քաջ հայտնի է այդ անվան ընտանի գրությունը։ Այսպես, վրացերենի აშხანვარი-*ն պահել ենք նույնությամբ՝* **Աշխանավր**, *թեև հայտնի է, որ Տրդատի կնոջ անունը* **Աշխեն** *էր։ Վրացերենն այս դեպքում տարբերվում է և հունարենից՝* 'Ασχήνη.

* * *

Գեորգի Սուրբսարեցու աշակերտ Թեոփիլոսը, բացի սեպտեմբեր ամսվա մետափրասյան վարքերից, վրաց մատենագրության պատմության մեջ հայտնի է իր այլ վաստակներով ևս. նրա անունով պահպանվել են հունական շարականների ու ներբողների, դավանաբանական-ջատագովական, ճգնակեցական ու մեկնողական երկերի թարգմանություններ[35]*։ Թարգմանական վարքերի մատենագիտություն կազմելիս ակադ. Կ. Կեկելիձեն բավարար հիմք չի ունեցել Աթոսի մայրավանքում պահվող ձեռագրի տեքստը նույնական համարելու մեզ արդեն ծանոթ հրատարակության հետ, ուստի դրանք դիտել է*

[35] კ. კეკელიძე, ქართული ლიტერატურის ისტორია, I, თბ., 1960, გვ. 243—246, *հմմտ. նույնի՝* ეტიუდები ძველი ქართული ლიტერატურის ისტორიიდან, V, თბ., 1957, გვ. 211.

առանձին[36]*։ Հետագայում առավել որոշակի է ասվել, թե վրաց մատենագրության մեջ Սիմեոն Մետափրաստի (Լոգոթետոսի)*[37] *կազմած «Գրիգորի վարքի» երկու թարգմանություն կա։ Վերջերս լույս տեսած Անտոն Բագրատիոնիի «Վկայարանքի» («Մարտիրիկա») հրատարակիչները ուղղակի գրում են, թե «Գրիգոր Լուսավորչի վարքի վրացերեն թարգմանությունը երկու խմբագրությամբ է պահպանվել և կատարված է Սիմեոն Մետափրաստի հունարեն գրված երկից՝ XI դարի երկու տարբեր թարգմանիչների կողմից»*[38]*։ Կարծում ենք, բազմերախտ Կ. Կեկելիձեն առանց հիմքի նման տարբերակում չէր կատարի։*

Միանգամայն այլ իրողություն է հունական «Մեծ հայսմավուրքի» Գեորգի Սուրբսարեցու թարգմանությունը՝ կատարված 1042—1044 թվականներին, ուր վրացերենի է վերածված Գրիգորի, Հռիփսիմեի ու Գայանեի վարքի հունական հայսմավուրքային բավականաչափ ընդարձակ խմբագրությունը[39]*։ Գրիգորի «Վարքի» վերջին վրացական խմբագրություն-բնագիրը կազմված է Անտոն Բագրատիոնիի ձեռքով (1769 թ.)՝ որպես վերոհիշյալ «Վկայարանքի» 20-րդ ճառ*[40]*։ Նրանում իբրև աղբյուր օգտագործված են թե Գեորգի Սուրբսարեցու և Թեոփիլոսի(?) թարգմանությունները և թե Հովհան Ոսկեբերանին վերագրված պարականոն քարոզի հին վրացական խմբագրությունը*[41]*։*

Այսպիսով, ապագայում անհրաժեշտ կլինի ի մի հավաքել Գրիգորին վերաբերող վրացերեն ներբողյանները, Սուրբսարեցու թարգմանությունը, Ոսկեբերանին վերագրված ճառը և Անտոնի կազմած վարքը, օժտել հայերեն թարգմանությամբ ու ուսումնասիրությամբ և հրատարակել առանձին հատորով։ Այստեղ կքննարկվեն նաև Ագաթանգեղոսի հետքերը Արսեն Սափարացու, «Վրաց դարձի», Լեոնտի Մրովելու, Ջուանշերի և այլոց երկերում[42]*։*

* * *

Ստորև ներկայացվող վրացերեն բնագիրը կազմված է ըստ երեք գրչագրի, որոնց մանրաժապավենը ակադ. Լ. Խաչիկյանի միջնորդությամբ շնորհակալությամբ ստացել ենք ՎՍՍՀ ԳԱ Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտից։

1. S—384=T *2. Քութայիսի № 4*=K *3. Սինայի № 91*=S

K-*ին բնորոշ է* უ-*ից հետո* ჳ *գրելը, որ անհրաժեշտ չհամարեցինք տարընթերցումներում արտացոլել։ Ջանց ենք առել այդ կարգի ուրիշ մանր զանազանություններ ևս։*

[36] კ. კეკელიძე, ეტიუდები..., V, 166.

[37] *Սիմեոնի և նրա շարունակող Քսիֆիլինոսի մասին տե՛ս Կ. Կեկելիձեի հիշյալ աշխատության 212—241 էջերում։*

[38] „ძველი ქართული აგიოგრაფიული ლიტერატურის ძეგლები" VI, თბ., 1980, გვ. 521.

[39] *Ավանդված է երկու ձեռագրով՝* Athos—30; H—2211.

[40] *Տես 38-րդ ծանոթության գրքի 370—448 էջերը։*

[41] *Այդ երկի հրատ. տես* ლეონ მელიქსეთ-ბეგი, ქართული ვერსია გრიგოლ პართელის სახელობის აპოკრიფიულ ჰომილიისა, რომელიც იოანე ოქროპირს მიეწერება, „ლიტ. ძიებანი", II, 1944, გვ. 39—61.

[42] *Թեոփիլոսի թարգմանության բնույթը կարոտ է քննության։*

ცხორებაჲ და მოქალაქობაჲ და წამებაჲ წმიდისა მღდელ-მოწამისაჲ გრიგოლი დიდისა სომხეთისა [ეპისკოპოსისაჲ]*

I რაჟამს იგი მეფობაჲ სპარსთაჲ პართთადმი იცვალა და მპყრობელობამან პართთამან ესოდენი ძლიერებაჲ მიიღო, ვიდრემდის არა ხოლო სპარსთაჲ დაიპყრა მთავრობაჲ, არამედ სომხთაჲცა და ჰინდოთაჲ მათ, რომელნი მკჳდრ არიან[1] აღმოსავალით სპარსეთისა, ამათ თანა კუალად მაშაგეტნიცა[2] ყვნეს ნაწილ თჳსისა სამთავროჲსა[3]. და[4] მძიმე იყო ესოდენთა მათ[5] სამთავროთა[6] პყრობაჲ და განგებაჲ ერთისა მიერ[7], ამისთჳსცა ოთხთა ძმათა ნათესავით პართთა სახელით არშაკუნიანთა მეფობაჲ იგი ოთხთა მათ სამთავროთაჲ ოთხად განყვეს[8]. რამეთუ პირველმან ძმამან ზოგადი იგი ოთხთა სახელი თჳსად მოიხუეჭა და სახელ იდვა არშაკ და დაიპყრა მეფობაჲ პართთაჲ, რათა ვითარცა ჰმატს მათ დღეთა სიმრავლითა, ეგრეთვე აღემატოს მოხუეჭითა და მიმძლავრებითა. ხოლო მეორე იგი ძმაჲ[9] მეფე იქმნა სპარსთა. და მესამემან მიიღო მთავრობაჲ ზემოჴსენებულთა მათ[10] ჰინდოთაჲ. ხოლო მეოთხემან მაშაგეტნი[11] ყვნა საბრძანებელ თჳსსა. და ესრეთ ჟამთა არამცირედთა ფრიადი დიდებაჲ[12] აქუნდა არშაკუნიანთა მათ.

II ხოლო არტავან ძე ვაღარშაკისი ზემოჴსენებული, რომელმან იგი-სახელსა თანა არშაკუნიანთასა მიიხუეჭა მეფობაჲცა პართთაჲ და სახელ იდვა არშაკ, იყო განსწავლულ სიბრძნითა ქალდეველთაჲთა[1] ვარსკულავთ მრაცხუველობითა[2] და ისწავა რაჲმე ჴელოვნებისა მისგან[3] და უთხრა იგი ცოლსა თჳსსა, რაჟამს ერთბამად განისუენებდეს ცხედარსა ზედა[4], ვითარმედ „ვითარ ესე მასწავებენ მე მოქცევ<ა>ნი ვარსკულავთანი, განიზრახავს ვინმე რათა აღუდგეს მბრძოლად თჳსსა უფალსა ცხორებასავე ამას, და ვითარ ჰგონებ არა განცრუვნეს იგი სასებისაგან თჳსისა“. ესე თქუა და მეყსეულად ძილითა შეპყრობილ იქმნა.

*Խորագիր. ცხორებაჲ და მოქალაქობაჲ და ამისსა შემდგომად წამებაჲ წმიდისა მღდელ-მოწამისა გრიგოლი პართეველისაჲ T; ცხორებაჲ და მოქალაქობაჲ და წამებაჲ წმიდისა მღდელ-მოწამისაჲ გრიგოლი დიდისა სომხითარისა K.

I 1 არიან] T 2 მაშშაგეტნიცა T 3 ჴელმწიფებისაჲ K 4 და] ვინაჲთგან K 5 ამათ T 6 სამთავრო K 7 + რომელიცა და ვინცა იყოს T 8 განიყვეს K 9 + და შემდგომი პირველისაჲ T 10 მათ] K 11 მაშშაგეტნი T 12 + და კეთილსა შინა საწუთროჲსასა წარმატებაჲ T.

II 1 + და T 2 მრაცხველობითა K 3 + უცნებით T 4 + ხოლო თხრობაჲ იგი ესე იყო, რამეთუ ეტყოდა T.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԵՎ ՓԱՌԱՎՈՐՅԱԼ ՆԱՀԱՏԱԿ ԳՐԻԳՈՐԻ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

I Երբ Պարսից թագավորությունը փոխվեց Պարթևներին, Պարթևաց տիրակալը այնքան զորություն առավ, [որ] մինչև իսկ ոչ միայն Պարսից իշխանությունը գրավեց, այլ նաև Հայոցն ու Հնդկացը, որոնք (հնդիկները) բնակվում են Պարսկաստանից արևելք։ Սրանց հետ սպա՝ Մաշագեթներին ևս իրենց տիրության մաս դարձրին։ Եվ դժվար էր այսքան իշխանությունների տիրելն ու վարելը մեկի կողմից։ Ուստի և ցեղով պարթև, անունով՝ Արշակունյաններ չորս եղբայրները այդ չորս իշխանությունների թագավորությունը չորսի բաժանեցին։ Քանի որ առաջին եղբայրը չորսի ընդհանուր անունը իրեն սեփականեց՝ Արշակ հորջորջվեց և վերցրեց Պարթևաց թագավորությունը, որպեսզի ինչպես որ նրանցից ավելի է տարիքով, այդպես էլ գերազանցի ձեռք բերածով ու տիրակալությամբ։ Իսկ երկրորդ եղբայրը Պարսից թագավոր դարձավ։ Երրորդն ստացավ վերոհիշյալ Հնդկաց իշխանությունը, իսկ չորրորդը Մաշագեթներին դարձրեց իր տիրություն։ Եվ այսպես ոչ սակավ ժամանակ հույժ փառք ունեին Արշակունյանները։*

II Իսկ Վաղարշակի որդի վերոհիշյալ Արտավանը, որը Արշակունյանց անվան հետ ձեռք բերեց նաև Պարթևաց թագավորությունը և անվանադիր եղավ Արշակ, կրթված էր քաղդեացիների իմաստությամբ ու աստղահմայությամբ, այդ արվեստից ինչ-որ խրատ առավ և ասաց այդ մասին կնոջը, երբ միասին հանգստանում էին մահճին, թե. «Ինչպես ինձ ցույց են տալիս աստղերի պտույտները, մեկը խորհում է ըմբոստանալ՝ կռվելու իր տիրոջ դեմ այս իսկ կյանքում, և ինչպես կարծում եմ, նա հուսախաբ չի լինում»։ Այս ասաց ու անմիջապես քնով բռնվեց։

* Բնագրում՝ վաստակեց։

III ხოლო ერთი ვინმე მჴევალთაგანი დედოფლისათაჲ[1] იყო[2] ასული[3] კაცთა დიდთა და წარჩინებულთაჲ, და თანაზრდილი ჭორცთა ზრახვითა[4] კაცისა ვისიმე მთავართაგანისა და ყოველთა შორის წარჩინებულისაჲ, და უწყოდა განზრახვაჲ მისი. ხოლო ეწოდებოდა მთავარსა მას არტაშირ და იყო იგი ქუეყანით ასურეთით, ხოლო დედაკაცსა მას მჴევალსა დედოფლისასა არტადუხტ, რომელსა ასმიოდა პირველ არტაშირისგან, ვითარ იგი განდგომილებასა განიზრახავნ და სარწმუნოთა მეგობართა თჳსაგან მიუთხრობნ. ხოლო საქმით გამოცხადებასა ვერ იკადრებდა შიშითა ვერ მიმთხუევისათა. ამისთჳსცა მივიდა მისსა და უთხრა მას ჩუენებაჲ იგი მეფისაჲ, რომელსა უთხრობდა მეუღლესა თჳსსა, და ამით სახითა აღშჭურვიდა არტაშირს. და გულსმოდგინე ჰყოფდა[5] საქმისა მიმართ და სიტყუასა მოჰჴდიდა, რათა უკუეთუ დაიპყრას მეფობაჲ პართთაჲ, ყოს იგიცა თანაზიარ მეფობისა თჳსისა საქმით და სახელით და დედოფლობაჲ მას მიანიჭოს. ხოლო იგი აღუთქუმიდა და ეფუცებოდა ღმერთთა თჳსთა მამულთა, რათა აღუსრულოს თხოვაჲ მისი აღსრულებასავე თანა ნებისა თჳსისასა.

ესე რაჲ ითხოვა არტადუხტ და სიმტკიცე მიიღო აღსრულებისაჲ, მსწრაფლ მიიქცა სადედოფლოდვე და სწრაფითა მიქცევისაჲთა მოსწრაფე იყო დაფარვად მის მიერ ქმნულისა მის საქმისა.

IV მიერითგან უკუე არტაშირ გულსა დაიდვა სიტყუაჲ იგი დედაკაცისაჲ მის და განილეოდა მწარედ სურვილითა მეფობისაჲთა და შეკრიბნა მთავარნი სპარსეთისა და ასურეთისანი, რომელთაცა მიმართ უეჭუელ იყო, და მიუთხრა მათ განზრახვაჲ იგი პართთა ზედა განდგომილებისა. და ეპოვნეს შეკრებულნი იგი თანაზიარ ნებისა მისისა, რამეთუ იგინიცა სურვიელ იყვნეს განთავისუფლებად პართთა მძლავრებისაგან და რათა თჳსითა სისხლითა მიიტაცონ ჴელმწიფებაჲ სპარსთაჲ. ამას თანა კუალად ეტყოდეს არტაშირს, რათა ვითარცა იქმნა თავ განზრახვისა მათისა, ეგრეთვე იქმნას წინამძღუარ საქმისაცა მათისა.

V და მიავლინნეს მოციქულნი არტავანისსა სწავლად[1], რათა დაუტევოს[2] მეფობაჲ თჳსით ნებსით, თჳნიერ ყოვლისა ჭირისა და განსაცდელისა ბრძოლათა მიერ მოწევნულისა. ხოლო მას ესე რაჲ ესმა, მცირედ ჟამ მოიდრიკა თავი და განიზრახა ჴელოვნებითა გრძნებისაჲთა და უქმად წარგზავნნა მივლინებულნი იგი და ექადოდა მათ, ვითარმედ უკუეთუ კუალად მივიდენ თხრობად მისსა ესევითარისა, პირველად მათ მიიღონ[3] პატიჟი ესევითარისა მისთჳს შეურაცხებისა. ხოლო იყო სახელი მივლინებულთაჲ მათ ზიკას და კარინას.

III 1 დედოფლისათა T 2 იყო] რომელი იყო T 3 ასული იყო K 4 ჭორცთა ზრახვითა] და მეგობარი T 5 და გულისმოდგინე ჰყოფდა] K.

IV 1 ნებასა K.

V 1 სწავლად] T 2 დაუტეოს K 3 მიღონ K.

III Իսկ թագուհու սպասավորուհիներից ինչ-որ մեկը մեծ ու ավագանի մարդկանց դուստր էր և մարմնավոր խորհրդով սանակից իշխանավոր և բոլորի մեջ ավագանի ինչ-որ մարդու և գիտեր նրա մտադրությունը։ Այդ իշխանի անունը Արտաշիր էր, Ասորստան երկրից, իսկ թագուհու սպասավոր կնոջը՝ Արտադուխտ։ Նա սկզբում Արտաշիրից էր հաղորդում՝ ինչպես է նա ապստամբություն խորհում ու պատմում իր վստահելի բարեկամներին, սակայն գործով երևան գալ չէր կարող հանդգնել՝ դիպվածի գալու վախից։ Այդ պատճառով էլ գնաց նրա մոտ և ասաց նրան թագավորի տեսիլի մասին, որ նա իր կնոջն էր պատմում։ Եվ այս կերպ զինում էր Արտաշիրին, հոժարացնում արարքի հանդեպ և խոսք առնում, որ եթե գրավի Պարթևաց թագավորությունը՝ նրան նույնպես մասնակից անի իր թագավորությանը գործով ու անվամբ և թագուհությունը նրան պարգևի։ Իսկ նա խոստանում էր և երդվում իր հայրենի աստվածներով, որպեսզի կատարի նրա պահանջը՝ իր կամքի կատարմանը միաժամանակ։

Արտադուխտը երբ այս պահանջեց և կատարման հաստատում ստացավ, շուտափույթ վերադարձավ թագուհարան և շտապ վերադառնալով՝ ձգտում էր թաքցնել իր կողմից կատարված գործը։

IV Այնուհետև արդեն Արտաշիրը սիրտն էր առել այդ կնոջ խոսքը և դառնորեն տառապում էր թագավորության ցանկությամբ. հավաքեց Պարսկաստանի ու Ասորեստանի իշխաններին, որոնց հանդեպ վստահ էր, և պատմեց նրանց Պարթևաց վերաբերմամբ ապստամբելու մտադրությունը։ Իսկ հավաքվածները նրան կամակիցներ գտնվեցին, որովհետև նրանք ևս ցանկանում էին ազատվել Պարթևաց բռնակալությունից և որ՝ իրենց արյամբ գրավեն Պարսից իշխանությունը։ Միաժամանակ նաև ասացին Արտաշիրին, որպեսզի ինչպես որ նրանց նպատակադրության գլխավորողը եղավ, այդպես էլ նրանց գործի առաջնորդ լինի։

V Արտավանի մոտ դեսպաններ ուղարկեցին խրատելու, որպեսզի ինքնակամ թողնի թագավորությունը՝ առանց կռվից հասնող ամենայն նեղության ու փորձության։ Իսկ նա երբ այս լսեց, մի քիչ ժամանակ գլուխը հակեց ու խորհեց կախարդական արվեստով, և դատարկ ուղարկեց դեսպաններին. սպառնաց նրանց, որ եթե նորից գնան իրեն այսպիսի բաներ ասելու՝ առաջինը նրանք պատիժ կստանան՝ իրեն այդպես արհամարհելու համար։ Իսկ ուղարկվածների անունը Զիկաս և Կարինաս էր։

VI და მი-რაჲ-იქცეს მოციქულნი იგი, მიუთხრეს არტაშირს და მისთანათა ყოველი, რაოდენი თქუა მეფემან და რაოდენსა ექადოდა. ამისსა შემდგომად იწყეს ორკერძოვე კრებად ერისა და განმზადებად ბრძოლისა. და უწინარეს ერის კრებისა წარავლინნა არტაშირ კაცნი და მოიყვანა არტადუხტ თჳს თანა და შეიყვანა იგი ციხესა შინა მაგარსა[1] ყოვლით სიმდიდრით მისითურთ. ხოლო ვითარცა შეკრბა სიმრავლე ერისაჲ პართთა და სპარსთაჲ და ეწყვნეს ურთიერთას და მოსწყდა ორთავე კერძოთაგან ერი ფრიადი და მიემადლა ძლევაჲ არტაშირს.[2]

VII კუალად იქმნა წყობაჲ მეორე და მოისრნეს მახჳლითა ერნი პართთანი, ვიდრელა თჳთ[1] არტავან ძლით განერა სივლტოლითა, გარნა ეგრეთცა არავე[2] დასცხრა ბრძოლად, არამედ შეიკრიბა ერი და ვიდრე აღსრულებამდე წელიწადისა ეწყვებოდეს ერთიერთას, და ოდესმე პართნი სძლევდეს და ოდესმე სპარსნი, ვიდრემდის იქმნა ორკერძოვე მოწყუედაჲ ერისა ფრიადისაჲ, რამეთუ მრავლით-კერძო მოსწრაფე იყვნეს ძლევად ერთი-ერთისა.

VIII დასასრულსა ვინაჲთგან ორკერძონივე იგი ბანაკნი ურთიერთას მიახლნეს, თქმულ არს, ვითარმედ მაშინ[1] მიუვლინა არტაშირ და ჰრქუა მეფესა არტავანს, ვითარმედ „ნუ დაშურები ცუდად და განხრწნი ერსა პართთა და სპარსთასა, რამეთუ მეფობაჲ ამიერითგან არღარა არტავანს, არამედ არტაშირს მიელის. ხოლო შენ, უკუეთუ ისმინო ჩემი, სცხოვნდე[2] უჭირველად, რამეთუ მოგცე შენ სოფლები, რათა მიერ გაქუნდეს ყოველი კეთილი უხუებით და არა მოგაკლდეს საჭმარი შენი და უკუეთუ გიჴმს რათა ისწავო, ნუ სხჳსა ვისგან ეძიებ, არამედ შენ ზედა მოწევნული იგი[3] კმა იყავ მასწავლელად და ჩუენებაჲ იგი მოიჴსენე, რომელი იგი ღამით მიუთხარ დედოფალსა". და არტაშირის სიტყუაჲ ესე იყო.

IX ხოლო არტავან მიიხილა თჳსთა მიმართ მთავართა და სახლეულთა და ჰრქუა: „ეჰა ვითარღა ბოროტ არს დედაკაცი და სიყუარულსა[1] მეუღლებისასა მავნებელ ექმნების უფროჲს, ვიდრე არა ძარგებელ". ესე თქუა და აღვსებულმან რისხვითა უბრძანა ვიეთმე მახჳლოსანთა წარყვანებაჲ და მოკლვაჲ დედოფლისაჲ, რამეთუ მას ჰგონებდა განმაცხადებელად საიდუმლოსა მას ჩუენებისასა. ხოლო თჳთ მოექცა[2] და ჰრქუა მისსა მოვლინებულთა მათ: „ფრიად უადვილეს არს ჩემდა სიკუდილი, ვიდრე მონისა ჩემისა არტაშირის მიცემად მეფობაჲ ჩემი".

VI 1 მაგარსა] T 2 + და წარიოტა არტავან T.
VII 1 თჳთ] K 2 არავვე K.
VIII 1 დასასრულსა... მაშინ] ამისსა შემდგომად T 2 სცხონდე K 3 იგი] K.
IX 1 + მის T 2 მოექცა K.

VI Երբ դեսպանները վերադարձան, Արտաշիրին ու նրա հետիններին պատմեցին ամբողջը, ինչ ասաց թագավորն ու ինչքան սպառնաց։ Այնուհետև երկուստեք սկսեցին զորք հավաքել և կռվի պատրաստվել։ Զորք հավաքելուց առաջ Արտաշիրը մարդիկ ուղարկեց և իր մոտ բերեց Արտադուխտին և նրան իր ողջ ունեցվածքի հետ անառիկ բերդ մտցրեց։ Իսկ երբ Պարթևաց ու Պարսից զորքի բազմություն հավաքվեց՝ հարձակվեցին միմյանց, երկուստեք հույժ [բազմաթիվ] զորք կոտորվեց, ու հաղթությունը շնորհվեց Արտաշիրին։

VII Կրկին երկրորդ մարտ եղավ, և Պարթևաց զորքերը կոտորվեցին սրով, մինչև իսկ ինքը Արտավանը հազիվ ազատվեց փախուստով։ Սակայն այդպես էլ կռիվը չհանդարտվեց, այլև զորք հավաքվեց, ու մինչև տարեվերջ մարտում էին միմյանց դեմ, երբեմն պարթևներն էին հաղթում, իսկ երբեմն՝ պարսիկները, մինչև որ երկու կողմում էլ շատ զորքերի կոտորում եղավ, որովհետև բազմակի էին ջանում հաղթանակել միմյանց։

VIII Ի վերջո, երբ երկուստեք բանակները միմյանց էին մոտեցել, ասվում է, թե այն ժամանակ Արտաշիրը [դեսպան] ուղարկեց և ասաց թագավոր Արտավանին, թե «Իզուր մի աշխատիր և խեղիր Պարթևաց ու Պարսից զորքը, որովհետև թագավորությունը այսուհետև այլևս ոչ թե Արտավանին, այլ Արտաշիրին է սպասում։ Իսկ դու, եթե ինձ լսես, կապրես անհոգ, որովհետև քեզ տիրույթներ (գյուղեր) կտամ, որ այնտեղից առատությամբ ամենայն բարիք ունենաս և չպակասի քո պիտույքը։ Եվ եթե խրատ կուզես առնել՝ ուրիշ ոքից մի որոնիր, այլև քեզ վրա հասածը բավական համարիր ի խրատումն և այն տեսիլը հիշիր, որը գիշերով պատմեցիր թագուհուն»։ Եվ այս էր Արտաշիրի խոսքը։

IX Իսկ Արտավանը դիմեց յուրային իշխաններին ու տնականներին և ասաց. «Ահա թե որքան չար է կինը և ամուսնական սիրուն ավելի շատ վնասում է, քան օգտակար է»։ Այս ասաց և զայրույթով լցված հրամայեց ինչ-որ սրակիրների տանել ու սպանել թագուհուն, որովհետև կարծում էր, թե նա է հայտնի դարձրել տեսիլի գաղտնիքը։ Իսկ ինքը դարձավ ու նրա ուղարկած [մարդկանց] ասաց. «Ինձ համար հույժ դյուրին է մահը, քան թագավորությունս իմ ծառա Արտաշիրին տալը»։

X ესე თქუა და მყის წარემართა სპარსთა ზედა- სიბორგილით და გულის-წყრომით და ფრიადნი მოსწყჳდნა მათგანნი და უმრავლესნი დასცნა და მიიწია ვიდრე თჳთ არტაშირისამდე და იჴადა[1] მის ზედა მახჳლი, ხოლო იგი რამეთუ ჴელოვან იყო და ფრიად სწავლულ საქმესა მოისრობისასა, იჩემა უკუე სივლტოლაჲ და ეგრეთ სტყორცა მდევარსა მას ისარი და ძლიერებითა მტყორცებელისაჲთა განვლო ფარი და განეწონა გულსა და განვლო ზურგი მისი და მეყსეულად მკუდრად გამოაჩინა არტავან და სრულიად უსულო იქმნა.

XI და ესრეთ შემოკრბეს ყოველნი იგი[1] ერნი პართთანი და აღიარეს მეფედ ყოველთა არტაშირ[2]. ხოლო მან[3] ფრიადი კაცთ-მოყუარებაჲ და წყალობაჲ აჩუენა ყოველსა მას ერსა და დაიპყრა[4] მეფობაჲ და მოიყვანა თავისა თჳსისა ცოლად დედაკაცი იგი არტადუხტ და სრულ ყო აღთქუმაჲ იგი, რომელი პირველ აღეთქუა ფიცით, და განაჩინა იგი დედოფლად სამეუფოჲსა თჳსისა.

XII ხოლო კუსარს ძმასა არტავან მეფისასა ეპყრა მეფობაჲ სომეხთაჲ და ეუწყა რაჲ ყოველი ესე ყოფილი, ვითარმედ ძმაჲ მისი მოიკლა და ვითარმედ მთავრობაჲ პართთაჲ თანაშეერთო სპარსთა, შეწუხნა მწუხარებითა დიდითა და შეკრიბა მჴედრობაჲ ძლიერი ალვანთაგან და ქართველთა და სხუათა ნათესავთაგან თითო სახეთა და ყოველსა მას წელიწადსა მოსწრაფე იყო შეკრებად ერისა მბრძოლთაჲსა და ფრიადი ერი თჳს თანა წარიყვანა და წარემართა სპარსეთად თჳთ თავადისა არტაშირის მიმართ. ხოლო არტაშირ, რომელსა იგი ახლად მიეღო მეფობაჲ სპარსთაჲ, განეწყო არა ნეფსით, არამედ უნებლიებით კუსარს მეფესა სომეხთასა, და იქმნა წყობასა მას შინა მოწყუედაჲ ფრიადისა ერისა სპარსთაჲსა. და ივლტოდა არტაშირ და მისდევდეს მას მბრძოლნი და დაჰფარვიდეს პირსა ქუეყანისა მის სპარსეთისასა სიმრავლითა მას ზედა მოკლულთაჲთა. და მრავალნი წარიყვანნეს ტყუედ და ფრიადი წარმოტყუენეს ნატყუენავი, და ესრეთ განმარჯუებულნი მეფითურთ თჳსით და ურიცხჳთ სიმდიდრით ქუეყანად სომხითისა უკუმოიქცეს[1].

XIII ხოლო მოქცევასა წელიწადისასა კუალად მეფემან სომეხთამან კუსარ მოვლო ქუეყანაჲ ასურეთისაჲ და მოუწოდა ერსა სარკინოზთასა თანაშემწედ თჳსსა და წარმოტყუენა ქუეყანაჲ სპარსეთისა და ასურასტანისაჲ და ტყუე ყო ყოველი მას შინა მყოფი და ნატყუენავითურთ კუალად პირველისაებრ ძლევაშემოსილი მოიქცა საბრძანებელად თჳსსა და ამით ესევითარითა წარმატებითა და სიქველითა საკჳრველ იყო თანამბრძოლთაგან და შესაძრწუნებელ წინააღმდგომთაგან და ესრეთ აღასრულნა ათისა წლისა ჟამნი. ვინჲცა მეფე სპარსთაჲ აღსავსე იყო უნუგეშინისცემოჲთა მწუხარებითა და უფროჲს აღაორძინებდა მწუხარებასა მას, რა-

X 1 აიხადა T.

XI 1 იგი] T 2 არტაშირ] K 3 მან] მეფემან T 4 + რაჲ T.

XII 1 K-ի *մանրամասնությունը պակասում է, ուստի տեքստը տրվում է ըստ* T-ի, *առանց միջամտության։ Այդ վերաբերում է և հաջորդ պարբերության առաջին կեսին։*

X Այս ասաց ու անմիջապես բարկությամբ ու ցասումնալից ուղևորվեց Պարսից դեմ և նրանցից շատ-շատերին կոտորեց, բազումներին տապալեց և գնաց հասավ մինչև իրեն՝ Արտաշիրին ու սուրը քաշեց նրա վրա։ Բայց քանի որ նա վարժ էր և հույժ գիտակ նետաձգությանը, այլևս փախուստ ձևացրեց և այդպես հալածողին նետահարեց, և հարման ուժգնությունից [նետը] անցավ վահանն ու ճեղքեց սիրտը և անցավ թիկունքը։ Արտավանն անմիջապես մահվան հանձնվեց ու բոլորովին անշունչ դարձավ։

XI Եվ այսպես՝ հավաքվեցին Պարթևաց բոլոր զորքերն ու բոլորի թագավոր ճանաչեցին Արտաշիրին։ Իսկ թագավորը հույժ մարդասիրություն ու ողորմածություն ցույց տվեց ողջ զորքին և, երբ գրավեց թագավորությունը, իրեն կնության բերեց այն Արտադուխտ կնոջը և կատարեց այն խոստումը, որը սկզբում երդմամբ էր խոստացել։ Նրան իր թագավորության թագուհի կարգեց։

XII Իսկ Արտավան արքայի եղբայր Կուսարը (Խոսրովը) տիրում էր Հայոց թագավորությանը և երբ տեղեկացավ այս ամենայն եղելությանը, թե իր եղբայրը սպանվեց և թե՝ Պարթևաց իշխանությունը միակցվել է Պարսիցին, տխրեց մեծ տրտմությամբ, աղվաններից, վրացիներից և մյուս ժողովուրդներից (ցեղերից) մեկ առ մեկ ուժեղ զորք գումարեց ու այդ ողջ տարին ջանում էր մարտող զորք հավաքել։ Իր հետ բազմաքանակ զորք տարավ ու ուղևորվեց Պարսկաստան, անձամբ իր՝ Արտաշիրի, հանդիման։ Մինչ Արտաշիրը, որը նոր էր ստանձնել Պարսից թագավորությունը, Հայոց թագավոր Կուսարին (Խոսրովին) դիմակայեց ոչ հոժարակամ, այլև հարկադրված։ Եվ մարտի ընթացքում Պարսից շատ զորքերի կոտորած եղավ։ Փախավ Արտաշիրն, ու նրան հետապնդեցին կռվողները։ Պարսկաստան երկրի երեսը ծածկեցին սպանվածների բազմությամբ։ Շատերին գերեվարեցին ու հույժ [առավել] ավարակալեցին և այսպես հաղթանակած՝ իրենց թագավորով ու անհամար հարստությամբ, վերադարձան Հայոց երկիր։

XIII Իսկ [մեկ] տարի անց նորից Հայոց թագավոր Կուսարը անցավ Ասորեստան երկիրը, կանչեց սարակինոսների զորքին իրեն օժանդակության ու ասպատակեց Պարսկաստան և Ասորեստան երկր[ներ]ը և գերեց նրան[ց]ում եղածներին ու նորից առաջվա պես ավարով հաղթանակած դարձավ իր տերություն և սրանով՝ այսպիսի հաջողությամբ ու խիզախությամբ զարմանք էր հարուցում մարտակիցներին և սարսուռ՝ հակառակորդներին։ Եվ այսպես անցկացրեց տաս տարի ժամանակ։ Մինչդեռ պարսից թագավորը լի էր անմխիթարելի տխրությամբ և առավել էր նորոգվում նրա տխրու-

მეთუ ულონო იყო ქმნად რაჲსამე, ამისთჳსცა შემოკრიბნა[1] მთავარნი და განაზრახებდა მათ თუ რომლითა სახითა განიძარცონ უპატივოებაჲ[2] გინა თუ ვითარ განიჴსნნენ ზოგადისა მის ჭირისაგან ყოველთა ზედა მოწევნულისა. ამას[3] თანა კუალად აღუთქუმიდა და ეტყოდა, ვითარმედ: „რომელმანცა[4] ჴეროვანი განზრახვაჲ განაზრახოს საქმისა მისთჳს შემდგომი მეფობისაჲ[5] მიენიჭოს პატივი და დიდებაჲ“[6].

XIV ხოლო იყო ვინმე კაცი სახელით ანაკ, რომელი თჳს ეყვოდა კუსარს მეფესა სომეხთასა. აღდგა კრებულისა მისგან და სიმჴნით შეწევნასა უქადებდა არტაშირს, ვითარმედ: „ესრეთ მოსწრაფე ვიქმნე, რათა უმჴობესად და მძლედ გამოვაჩინნე ძლეულნი ესე ერნი სპარსთანი, რათა ისაჴონ მათ წინააღმდგომთა თჳსთაგან“. ხოლო არტაშირ მიუგებდა, ვითარმედ: „უკუეთუ ჰყო რომელსა ეგე იტყჳ, მეორედ[1] განგაჩინო შემდგომად ჩემისა სპარსთა მეფობისა და გჳრგჳნი მეფობისაჲ[2] დაგადგა შენ და მეფობაჲ პართთაჲ მოგანიჭო“. კუალად მიუგო ანაკ და ჰრქუა: „ჯერეთ ჩემი აღსასრული უცნაურ არს თუ რაჲ შემემთხუევის და არა ცხად[3] ოხჭანი საქმისაჲ. გარნა ამას ხოლო გევედრები, რათა არა უგულებელს ჰყვნე თჳსნი ჩემნი, არამედ მოიჴსენნე ამის ხოლო გულსმოდგინებისათჳს, რომელსა მე ვაჩუენებ შენდა მიმართ, და შენ მათ მიაგო მისაგებელი კეთილი“.

XV ესე რაჲ ჰრქუა მეფესა, წარიყვანა ძმაჲ თჳსი თანაშემწედ თჳსსა და წარვიდეს სახითა რეცა განდგომილთაჲთა და თანა წარიყვანნეს ცოლი და შვილნი თჳსნი და ყოველნი სახლეულნი[1] და მივიდეს კუსარისსა მეფისა სომეხთაჲსა. ხოლო მან შეიწყნარნა იგინი პატივით და სიყუარულით და მოიკითხნა[2] ნიჭთა და მისაცემელთა სიმრავლითა და ყოვლითურთ სრულებითა კეთილთაჲთა. მაშინ ანაკ და ძმაჲ მისი ლიქნასა და სიცბილსა აჩუენებდეს მისსა[3] მიმართ და ყოვლითურთ ერთგულობასა და სახლეულობასა იჩემებდეს და საკუთარ მისსა იქმნებოდეს და უფროჲსღა, რამეთუ ცოლით და შვილითურთ მისრულ იყვნეს მისსა ვითარცა სრულიად წარვლტოლვილნი.

ამისთჳსცა ანაკს შემდგომობაჲ მეფისაჲ მიემადლა პატივად და იყოფოდა მის თანა ვიდრეცა იყოფოდიან, რამეთუ ჟამსა ზამთრისასა და[4] განძლიერებასა სომხეთს ყინულისასა ფრიად განისუენებდიან ადგილთა მათ რასტონისათა და[5] შუენიერებაჲ იგი არეთაჲ მიანიჭებდა მათ სიტკბოებასა. და კუალად ჟამსა მკისასა, რაჟამს იგი ჰბერავნ ქარი ცხელი, მიიცვალის მეფე მთასა არარატისასა, სადა იგი ზაფხულ ყოველ გაზაფხულსა შინა შეზავებით აქუნდის სიტფოჲ და სიგრილე[6].

XIII 1 შემოიკრიბნა T 2 უპატიოებაჲ K 3 ამის K 4 რომელნიცა T 5 მეფისაჲ T 6 + ღირსად სიტყჳსა და საქმისა რომელიცა აჩუენოს ღონიერებაჲ T.

XIV 1 + მეფედ T 2 მეფობისაჲ] თავსა K 3 + არს T.

XV 1 + თჳსნი T 2 + იგინი T 3 მისს K 4 და შვილითურთ-ից մինչև ზამთრისასა და հասածը K մանրամասնությունում խաթարված է, ուստի համեմատություն չենք անում, 5 ფრიად... რასტონისათა და] K 6 სადა იგი... სიგრილე] რათა განერეს სიცხისაგან და ივლტოდის და მიერ კუალად ჟამსა სთულისასა მიიცვალებოდის T.

թյունը, որովհետև անկարող էր որևէ բան անել։ Ուստի ի մի հավաքեց իշխաններին և խորհրդածում էր, թե ինչ կերպ թոթափեն այս անպատվությունը կամ թե՝ ինչպես ազատվեն բոլորի վրա հասած այս նեղությունից։ Միաժամանակ նորից խոստանում էր ու ասում, թե. «Ով որ պատշաճ խորհուրդ տա գործիս համար՝ թագավորին հաջորդող պատիվ ու փառք [կշնորհվի]»։

XIV Անակ անունով ինչ-որ մարդ կար, որը հայոց Կուսար թագավորի յուրայինն էր։ Նա վեր կացավ հավաքվածների միջից և քաջաբար օգնություն էր խոստանում Արտաշիրին, թե «Ես այնպես վստահանում եմ, որպեսզի բարվոք ու հաղթանակով դարձնեմ պարսից այս պարտված զորքերը, որպեսզի նրանք պարտեն իրենց հակառակորդներին»։ Իսկ Արտաշիրը պատասխանում էր, թե. «Եթե անես՝ ինչ ասում ես, ինձանից հետո քեզ կկարգեմ Պարսից թագավորության հաջորդ և արքայության թագ կդնեմ քո [գլխին] ու կպարգևեմ Պարթևաց թագավորությունը»։ Անակը նորից պատասխանեց ու ասաց. «Դեռևս իմ վերջն անորոշ է՝ թե ինչ կպատահի ինձ, և գործի վախճանը անհայտ է։ Բայց միայն այս եմ խնդրում, որ անտես չանես իմ յուրայիններին, այլև հիշիր նրանց այս ջանադրության համար, որ ես ցուցաբերում եմ քո հանդեպ, և կհատուցես նրանց բարի հատուցումով»։

XV Երբ այս ասաց թագավորին, իր եղբորը տարավ իրեն օգնակից, և ըմբոստացյալների անունով գնացին ու հետները տարան իրենց կանանց ու երեխաներին և բոլոր տնեցիներին։ Եվ գնացին Հայոց թագավոր Կուսարի մոտ։ Իսկ նա պատվով ու սիրով ընդունեց նրանց և ողջունեց պարգևների ու շնորհումների բազմությամբ և ամենայն կատարյալ բարվոք։ Այն ժամանակ Անակն ու նրա եղբայրը խաբեություն և մոլորեցում էին ցուցաբերում նրա հանդեպ, բոլորակի հավատարմություն ու տնեցիություն էին հանդես բերում, նրա յուրային* դառնում և դեռ ավելին, որովհետև կին ու երեխայով էին գնացել նրա մոտ՝ որպես կատարյալ փախստականներ։

Ուստի և Անակին թագավորի հաջորդության պատիվ շնորհվեց և նրա (թագավորի) հետ էր՝ որտեղ էլ լինեին. ուստի ձմեռ ժամանակ ու Հայաստանում խիստ սառնամանիքները սաստկանալիս հանգստանում էին հարմարավետ վայրերում, և եղանակների հաճելիությունը նրանց տաքություն էր պարգևում։ Իսկ հնձի ժամանակ, երբ տաք քամին է փչում, թագավորը վերստին փոխվում է Արարատյան լեռ, ուր ողջ ամառը գարնան տաքն ու հովը ընդխառն է լինում։

* Բառացի՝ սեփական, մտերիմ։

XVI ამათვე უკუე ადგილთა მთისათა იქცეოდა მეფე და წყობად სპარსთა განემზადებოდა. ხოლო ანაკს მოეჴსენა ფიცი იგი, რომელ ეფუცა არტაშირს, და დაიწუებოდა ჴსენებითა მის და აღთქუმულთა მათ ნიჭთაჲთა. ამისთჳსცა გამოითხოვა მეფისაგან, რათა თჳსაგან ეზრახოს მას საიდუმლოჲ თანა ძმითურთ მისით; რეცა მიზეზ ჰყოფდა, ვითარმედ „მაქუს რაჲმე საიდუმლოჲ[1] თხრობად შენდა“. და ვითარცა შეიყვანნა იგინი მეფემან მარტოებით, მოკლეს იგი მახჳლითა ანაკ და ძმამან მისმან. და ვიდრემდის განითქუმოდა ერსა შორის სიკუდილი მეფისა კუსარისი, ივლტოდეს იგინი[2] აღმჴედრებულნი ცხენთა დაუყენებელად[3].

XVII ხოლო ერნი იგი სომხითისანი მოსწრაფედ მონადირე იყვნეს და გამოეძიებდეს მაღნართა და ყოკლით-კერძოთა გზათა, რათა ეწინენ მათ და შეიპყრნენ. ვინაჲცა არა ცუდ იქმნა მოსწრაფებაჲ მათი, რამეთუ ივლტოდეს რაჲ ანაკ და ძმაჲ მისი და მიიწინეს კიდსა რასმე ზედა, მეყსეულად ეწინეს მათ მდევარნი და მოაშთვნეს[1] იგინი სიღრმესა მას შინა მდინარისასა და მო-რაჲ-იქცეს მოკლვისაგან მათისა, ყვეს ვითარცა იგი ემცნო მათ და მეფესა მათსა, რამეთუ უკუანაჲსკნელსა აღმოფშჳნვასა ესე ჴოლო აღმოთქუა[2], რათა ნათესავი მკლველთა მისთაჲ სრულიად აღმოიფხურას და წარწყმდეს. ამისთჳსცა მოსრნეს ყოველნი სახლეულნი მათნი.

XVIII ესრეთ უკუე წარწყმდეს ანაკ და ძმაჲ მისი და ყოველნი თჳსნი მათნი. და არავინ დაშთა მათგანი, გარნა ხოლო ორნი ძენი ანაკისნი და იგიცა ჩჩჳლნი ყრმანი, რომელნი ჯერეთ სახუეველთა შინა ძუძუჲს[1]-მწოვარნი იყვნეს, რომელნი იგი წარიყვანნეს მუნ მყოფთა ვიეთმე მჴედართა[2], ერთი იგი კერძოთა სპარსეთისათა და მეორე იგი[3] საბრძანებელსა ბერძენთასა. ესე არს გრიგოლი ყოვლად-საკჳრველი, რომელი მიეცა აღზრდად ქუეყანასა ბერძენთასა. და ამისთჳს წარმოვთქუთ ყოველი ესე პირველითგან თქმული, რათა საცნაურ ვყოთ თუ ვინ იყვნეს მშობელნი ამის ნეტარისანი.

XIX ხოლო ვითარცა ესმა არტაშირს მეფესა სპარსთასა სიკუდილი კუსარ სომეხთა მეფისაჲ, მსწრაფლ გამოვიდა აღშფოთებულთა[1] სომეხთა ზედა და განლაღებულმან[2] ძლევითა მრავალნი მათგანნი მოსწყჳდნა და უმრავლესნი ტყუე ყვნა და ნატყუენავი ფრიადი წარმოიღო და ბრწყინვალედ ძლევაშემოსილი კუალად უკუმოიქცა[3] სამეუფოდვე თჳსსა. ხოლო პოვა ტყუეთა მათ შორის ყრმაჲ ერთი, ძე კუსარ სომეხთა მეფისაჲ, და ეწოდებოდა მას თრდატ, რომელი იგი არა მოკლა სიჩჩოჲსათჳს ჰასაკისა მისისა, არამედ წარდევნა იგი ქუეყნად საბერძნეთისა.

XVI 1 საიდუმლოჲ] საჭიროჲ K 2 იგი T 3 + და დაუმჭირველად T.

XVII 1 მოაშთვეს K 2 ეთქუა K.

XVIII 1 ძუძუის K 2 წარიყვანნეს... მჴედართა] წარიპარნა მუნ მყოფმან ვინმე თჳსთაგანმან და წარგზავნნა K 3 იგი] K.

XIX 1 აღშფოთებულთა] T 2 განლაღებულმან ძლევითა] T 3 უკმოიქცა K

XVI Այս նույն լեռնային վայրերն էր դառնում թագավորը և Պարսից դեմ կռվի պատրաստվում։ Իսկ Անակը հիշեց այն երդումը, որ երդվեց Արտաշիրին, և վառվում էր նրա հիշումով ու խոստացված այն պարգևներով։ Ուստի խնդրեց թագավորից առանձին, որպեսզի անձամբ գաղտնի խորհրդակցի նրա հետ՝ իր եղբոր ներկայությամբ։ Իբրև պատճառ էր բերում, թե «Ինչ-որ գաղտնիք ունեմ քեզ ասելու»։ Երբ մենակ թագավորը նրանց ներս տարավ, Անակն ու իր եղբայրը սպանեցին նրան սրով։ Եվ մինչև զորքի (ժողովրդի) մեջ կտարածվեր Կուսար թագավորի մահը, նրանք ձիեր հեծած անհապաղ փախան։

XVII Իսկ Հայաստանի զորքերը շտապ հետամուտ եղան և որոնում էին անտառուտներում և բոլորակողմյան ճանապարհներին, որպեսզի հասնեն նրանց և բռնեն։ Իրոք էլ իզուր չեղավ նրանց շտապելը, որովհետև երբ Անակն ու նրա եղբայրը փախան՝ գնացին հասան մի ինչ-որ կամրջի։ Իսկույն հասան հետապնդողները և նրանց խորտակեցին գետի խորքում։ Եվ երբ վերադարձան նրանց սպանելուց, կատարեցին [այնպես], ինչպես իրենց հաղորդել ու թագավորն էր ասել նրանց, քանի որ վերջին շնչի ժամանակ այս միայն արտասանեց, որ այդ սպանողների ցեղը լիովին բնաջնջվի և ոչնչացվի։ Այդ պատճառով էլ կոտորվեցին նրանց բոլոր հարազատները։

XVIII Այսպես, ուրեմն, ոչնչացան Անակը, նրա եղբայրն ու նրանց բոլոր յուրայինները։ Նրանցից ոչ ոք չմնաց, բացի Անակի երկու որդուց, այն էլ փոքրիկ մանուկներ, որոնք դեռևս խանձարուրի մեջ [ու] ծծկեր էին։ Նրանց տարան այնտեղ գտնվող ոմն զորականներ՝ մեկը Պարսկաստանի կողմերը և երկրորդը՝ Հունաց տիրապետություն։ Սա ամենահրաշ Գրիգորն է, որ սնուցման տրվեց Հունաց երկրում։

Եվ այս ամբողջը սկզբից սկսած նրա համար պատմեցինք, որպեսզի հայտնի դարձնենք, թե ովքեր էին այս երանելու ծնողները։

XIX Իսկ երբ Պարսից թագավոր Արտաշիրը լսեց Հայոց արքա Կուսարի մահը, շտապ դուրս եկավ շփոթի մատնված հայերի դեմ և հաղթանակից հպարտացած՝ նրանց շատերին կոտորեց և բազմաթիվ [մարդկանց] գերեց ու մեծ ավար վերցրեց և փայլուն հաղթապանծ՝ նորից վերադարձավ իր թագավորությունը։ Իսկ այդ գերիների մեջ գտավ մի մանուկ՝ Հայոց Կուսար թագավորի որդուն. նրա անունը Տրդատ էր, որին փոքրահասակության պատճառով չսպանեց, այլ արտաքսեց նրան Հունաստան երկիրը։

ესე არს თრდატ, რომელმან უკუანაჲსკნელ ჟამთა რაოდენთამე შეწევნითა და თანამბრძოლებითა ბერძენთაჲთა დაიპყრა მეფობაჲ სომეხთაჲ და განძლიერებულ იქმნა და ნეტარი გრიგოლ სატანჯველთა სასტიკთა შთააგდო და[4] არა ხოლო თუ იგი ვერ განაყენა ღმრთისმსახურებისაგან, არამედ თჳთ იგიცა ზეშთა ბუნებისა ხილვითა მისისა მოთმინებისაჲთა და წყლულებითა ზეგარდამო განგებულებით ქმნილისა ტანჯვისაჲთა მისისა მიმართ სარწმუნოებისა შეიცვალა. გარნა ესე ყოველი შემდგომად მცირედისა სიტყუამან თითოეულად მიგითხრას, ხოლო აწ კუალად ვიწყო შემდგომსა პირველთქმულისასა[5].

XX რამეთუ მაშინ შემდგომად სიკუდილისა[1] კუსარ სომეხთა მეფისაჲსა დაიპყრა სომხითი არტაშირ სპარსთა მეფემან, ხოლო ძე ანაკისი კუსარის მკლველისაჲ მიივლტოდა ძმისა* თჳსისა გრიგოლის თანა კესარიას კაპადუკიისასა. და ისწავეს სწავლაჲ იგი გარეშეთაჲ და იზარდებოდეს წესითა ქრისტეანეთაჲთა. ხოლო თრდატ, რომელი იგი იყო ძე კუსარისი, აღიზარდა ერსა თანა ბერძენთასა და თანა აღირაცხა პატივსა მათსა, და არა უმეცარ იყო გრიგოლი რაჲ იგი ექმნა ანაკს მამასა მისსა და ვითარ იგი მის ძლით განძებულ იყო თრდატ, ამისთჳსცა აქუნდა შიში და მწუხარებაჲ გულსა შინა თჳსსა, გარნა ეგრეთცა კადნიერ იქმნა და მოუჴდა მსახურებასა მისსა და დაემორჩილა[2] მას ყოველსა მონებასა მისსა. ხოლო თრდატ იყო სარწმუნო მისსა[3] მიმართ და არა იჭუნეულ და მისცა მან[4] მსახურებაჲ გულსავსე ყოფისათჳს მისისა. გარნა ეუწყა რაჲ, ვითარმედ წესსა ქრისტეანეთასა ჰმონებს, ფრიად ძნელ უჩნდა ესე თრდატს, და[5] დაღაცათუ ჟამსა მას არა განაცხადა, არამედ ეგრეთცა გულსა შინა აქუნდა რისხვაჲ მისთჳს.

XXI ხოლო მათ ჟამთა შინა სოფლები იგი ბერძენთაჲ წარიტყუენვოდა მბრძოლთა მიერ და იღევნებოდა ნათესავისაგან გუთთაჲსა, ამისთჳსცა მის ჟამისა მეფემან ბერძენთამან შეიკრიბა სიმრავლე ერისაჲ დიდძალი და განემზადა მჴედრებითა თჳსითა ბრძოლად და წარდევნად გუთთაჲ მათ, და კუალად იგინი განეწყვნეს ბერძენთა მიმართ ყოვლით მჴედრებითურთ მათით და ორნივე იგი მწყობრნი განწყობილ იყვნეს[1]. ხოლო ჯერეთ არა მიახლებულ იყვნეს ურთიერთას, და ეძიებდა მეფე გუთთაჲ მეფესა ბერძენთასა, რათა მარტოებით ეწყვნენ ურთიერთას, არამედ რაოდენცა მჴნე იყო მეფე ბერძენთაჲ, არა ჯერ[2] იყო თავისა თჳსით განსლვად წინააღმდგომისა, და ეძიებდა თუ ვინ იპოვოს, რათა სახე მეფისაჲ შეიმოსოს[3] და მის წილ განვიდეს წყობად მეფისა მის გუთთაჲსა.

XXII მაშინ ლიკინიანოს[1] ვინმე კაცი ღირს ქმნული მის ჟამისა მის მჴედართ-მთავრობასა ნუგეშინის-სცემდა მეფესა და ეტყოდა, კითარმედ არს ჩუენ შორის კაცი ძუელ ოდესმე აღრიცხული მჴედართა თანა ჩემთა, სახელით თრდატ, რომელი ლტოლვილ არს სომხითით შემდგომად

4 + მოუთმენელითა გუემითა განცადა და T 5 პირველთქმულისა K.
XX 1 სიკუდილისაჲ K 2 ემორჩილა K 3 მისა T 4 მას T 5 და] K.
XXI 1 იყვნეს] K 2 ჯერ] კმა K 3 შემოსოს T.
XXII 1 ლიკინოს T 2 იყო T 3 წყობად და] K.

Սա [այն] Տրդատն է, որը որոշ ժամանակ հետո հույների օժանդակությամբ ու մարտակցությամբ գրավեց Հայոց թագավորությունը, զորեղացավ և երանելի Գրիգորին սաստիկ տանջանքների մեջ գցեց, բայց ոչ միայն չկարողացավ նրան հեռացնել իր աստվածապաշտությունից, այլև հենց ինքը ես գերբնական դիտելով նրա կրածը (համբերությունը) և, վերին նախախնամության կատարումով, վերքատանջ լինելը՝ նրա հավատի կողմը դարձավ։ Սակայն այս ամենը մի փոքր հետո [լինելիք] խոսքը մեկ առ մեկ կպատմի։ Իսկ այժմ նորից սկսեմ նախօրոք ասվածի շարունակությունը։

XX Ուստի այն ժամանակ՝ Հայոց թագավոր Կուսարի մահից հետո, Հայաստանին տիրեց Պարսից Արտաշիր թագավորը, իսկ Կուսարին սպանող Անակի որդին փախավ իր եղբայր Գրիգորի մոտ Կապադովկյան Կեսարիա. [այնտեղ նրանք] սովորեցին արտաքին ուսմունքը և մեծացան քրիստոնյաների ծեսով։ Իսկ Տրդատը, որը Կուսարի որդին էր, դաստիարակվեց Հունաց զորքի մոտ և համաստիճան եղավ նրանց։ Գրիգորը անտեղյակ չէր, թե ինչ է արել իր հայր Անակը և թե ինչպես այդ պատճառով հալածվել է Տրդատը, ուստի և իր սրտում վախ ու տրտմություն ուներ, բայց այնուամենայնիվ՝ հանդգնեց ու մտավ նրան ծառայության և նրան ենթարկեց իր ողջ հնազանդությունը։ Իսկ Տրդատը վստահ էր նրա հանդեպ և ոչ կասկածավոր և նրան գոհացնելու համար ծառայություն տվեց։ Բայց երբ իմացավ, թե քրիստոնյաների ծեսին է հետևում՝ այս հույժ դժվար թվաց Տրդատին ու թեպետ այդ ընթացքում չհայտնեց, բայց այնուամենայնիվ՝ սրտում նրա հանդեպ վայրույթ ուներ։*

XXI Իսկ այդ ժամանակներում Հունաց աշխարհները գերվում էին թշնամիների կողմից և հալածվում գոթերի ցեղից։ Ուստի և Հունաց այն ժամանակվա թագավորը զորքի մեծ բազմություն գումարեց ու իր զորքերով կռվելու և գոթերին հալածելու պատրաստվեց։ Նրանք իրենց ողջ զորքով նորից արշավեցին հույների հանդեպ, և այս երկու մարտողները մարտաշարվել էին։ Բայց դեռ չէին մոտեցել միմյանց, և գոթերի թագավորը որոնում էր հույների թագավորին, որպեսզի մենությամբ հարձակվեն միմյանց վրա։ Սակայն որքան էլ խիզախ էր հույների թագավորը՝ պատշաճ չէր անձամբ իրեն դուրս գալ ընդդիմության և փնտրում էր, թե ով կգտնվի, որ թագավորի կերպարանք հագնի և նրա փոխարեն դուրս գա գոթերի թագավորի հետ մարտնելու։*

XXII Այնժամ նրա զորապետության արժանացած ոմն Լիկինիանոս մխիթարում էր թագավորին և ասում, թե «Մեր մեջ վաղուց մի մարդ կա՝ երբևէ իմ զորքերի մեջ հաշված, Տրդատ անունով, որը իր հոր սպանությունից հետո փախել է Հայաստանից։ Նա զորեղ ու բազուկով անպարտ մարդ է,

* Բառացի՝ արտաքինոց։

** Իմա՝ գավառները (բառացի՝ գյուղերը)։

მოკლვისა მამისა მისისა და არს იგი კაცი ძლიერი და უბრძოლელი ჴელითა, რამეთუ ფრიად და მრავლითკერძო მაქუს მე გამოცდილებაჲ სიმჴნისა მისისაჲ, ხოლო აწ იყოფების პალატსა შინა". ესე რაჲ ესმა მეფესა, ბრძანა მოყვანებაჲ მისი. და შემოიყვანეს თრდატ წინაშე მეფისა და შთააცუა მეფემან შესამოსელი თჳსი და ყოველივე სასწაული მეფობისა თჳსისაჲ, რათა საგონებელ იყოს[2] ყოვლითურთ მეფედ, და ესრეთ წარავლინა წყობად და[3] მარტოებით ბრძოლად მეფისა მის გუთთაჲსა.

XXIII ხოლო იწყეს რაჲ[1] ბრძოლად და მიეტევნეს ურთიერთას მეფედ ბერძენთა[2] სახილველი იგი[3] თრდატ და მეფე იგი გუთთაჲ, ესოდენ განძლიერდა თრდატ ბარბაროზისა მის ზედა, ვიდრეღა ყოვლად არა იჴუმია მას ზედა საჭურველთა გინა მახჳლთაგანი, არამედ მსწრაფლ აღიტაცა იგი ჴელითა და წინაშე მეფისა წარადგინა ცხოველი, ვინაჲცა[4] არცა მისგან ჴუებულ იქმნა მისაგებელთაგან[5] ღირსთა ღუაწლისათა, რამეთუ ფრიადი სიმდიდრე საჴმართაჲ მიანიჭა მას მეფემან ბერძენთამან და პორფირი შეჰმოსა და სამეუფოჲთა გჳრგჳნითა განშუენა თავი მისი და დააწესა იგი მეფედ მამულსა მას მისსა ზედა სამეუფოსა სომხითისასა.

ხოლო გუთთა მათ იხილეს რაჲ საქმე, რომელსა არა ესვიდეს ყოფად, და მთავარი იგი მათი ეგრეთ მყის აღტაცებული და შეპყრობილი წარივლტოდეს სახიდ თჳსსა და მცირედნი მათგანნი მიიწინეს თჳსთა მათ[6] თანა თხრობად საქმესა მას მოწევნულსა მათ ზედა. და ესრეთ მოიქცა მეფე ბერძენთაჲ ბრწყინვალებასა[7] მას თანა ძლევისასა კეთილად შეულლებული.

XXIV მიერითგან უკუე მეფობდა თრდატ სომეხთა ზედა, ხოლო არა განყენებულ იყო მამულისა მის ეშმაკეულებისაგან, რამეთუ სხუათაცა კერპთა უზორვიდა, არამედ უფროჲს ყოველთა არტემიდის უმეტეს პატივსცემდა და ღმერთ[1]-მოყუარედ მისდა[2] გამოჩნდებოდა, და ენება ნეტარისა გრიგოლისი, რათა თანაზიარ იყოს მისსა მას კერპთ- მსახურებასა, რომელსა იგი თრდატ პატივ-სცემდა და ჰმადლობდა მას სხუათა ყოველთა მსახურებათა მისთათჳს და ვედრებით ეტყოდა[3], რათა ვითარცა იგი თანაზიარ მისსა არს ყოვლითა ნებითა და განზრახვითა, ეგრეთვე არა განეყოს მას შჯულითაცა და სამსახურებელითა, არამედ უგოს ღმერთთა.

XXV ხოლო ნეტარი გრიგოლი მიუგებდა და ეტყოდა: „მსახურებაჲ[1] ჴორციელთა და რომელნი არა იყვნეს განმხრწნელ სულისა და საჴმარ უფალთა ჩუენთა, მისდა დაუყენებელად მორჩილებად გუამცნებს ზოგადი იგი მეუფე ჩუენი და ეგევითარისათჳს არაოდეს მიზეზ გიყავთ უცალოებაჲ, არცა უდებებით გმონებთ[2], ხოლო ოდეს იქმნებოდის სავნებელი სულისაჲ და განშორებაჲ დამბადებელისაგან, მაშინ არღარა თავს-იდებს მასწავლელი ჩუენი, რათა ზიარ ვიქმნნეთ დაღაცათუ მეუფე იყოს მბრძანებელი იგი, გინა თუ მეფე ანუ თუ უფალი თჳთ ამის ცხორებისაცა ჩუენისაჲ".

XXIII 1 რაჲ] K 2 ბერძენთად T 3 იგი] K 4 ვინაცა K 5 მისაგებელთა T 6 მათთა K 7 ბრწყინალებასა K.

XXIV 1 ღმერთთ T 2 მისდა] T 3 იტყოდა K.

XXV 1 მსახურებათა T 2 გმონეთ T.

քանի որ ես բազմակողմանիորեն փորձել եմ նրա քաջությունը, իսկ այժմ գտնվում է պալատում»։ Թագավորը երբ այս իմացավ, հրամայեց բերել նրան։ Ներս բերին Տրդատին թագավորի առաջ, և թագավորը հանեց իր զգեստն ու իր թագավորական ողջ հանդիսանիշը, որպեսզի [հագնի ու] ըստ ամենայնի թագավոր կարծվի։ Այսպես ուղարկեց մարտնելու և մենկուսի կռվելու գոթերի թագավորի հետ։

XXIII Իսկ երբ սկսեցին կռվել և հույների թագավոր ներկայացող Տրդատը և գոթերի թագավորը հարձակվեցին միմյանց վրա, Տրդատն այնքան զորացավ այդ բարբարոսի հանդեպ, որ նրա վրա զենք կամ սուր* անգամ չգործադրեց, այլև ձեռքով անմիջապես փախցրեց նրան ու կենդանի ներկայացրեց թագավորի առաջ, մինչև իսկ նրա կողմից չզրկվեց արժանավոր վաստակների հատուցումից, ուստի Հունաց թագավորը նրան հույժ մեծաթիվ պիտանիք պարգևեց, ծիրանի հագցրեց, թագավորական թագով զարդարեց նրա գլուխը և նրան իր հայրենիքի՝ Հայաստանի, տիրության վրա թագավոր կարգեց։

Իսկ երբ գոթերը տեսան եղելությունը, որի կատարմանը չէին ակնկալում, իսկ իրենց գլխավորը՝ այդպես հանկարծակի փախցրած ու բռնված, իրենց կերպով փախան, և նրանցից քչերը հասան յուրայինների մոտ՝ իրենց վրա հասած եղելությունը պատմելու։ Եվ այսպես, Հունաց թագավորը [վերա]դարձավ փայլուն հաղթությամբ բարվոք պսակված։

XXIV Այնուհետև արդեն Հայոց թագավոր էր Տրդատը։ Սակայն չէր պաղել իր հայրենիքի դիվությունից, ուստի վերստին կուռքերին էր զոհաբերություն անում, այլև բոլորից առավել Արտեմիդին էր ավելի պատիվ տալիս և նրա աստվածապաշտ հանդես գալիս։ Եվ [նա] կամեցավ, որպեսզի երանելի Գրիգորը, որին Տրդատը հարգում էր, հաղորդակից լինի իր կռապաշտությանը, և գոհություն էր հայտնում նրան՝ մյուս բոլոր ծառայությունների համար ու աղերսանքով ասում, թե ինչպես որ նա հաղորդակից է իրեն ամենայն կամքով ու խորհուրդով, այդպես էլ չզատվի նրանից հավատով և պաշտությամբ, այլև հատուցի աստվածներին։

XXV Իսկ երանելի Գրիգորը պատասխանում էր և ասում. «Մարմնավոր ծառայությանը և [այնպիսիներին], որոնք չեն եղծում հոգին ու պիտանի են մեր տերերին՝ անդադրում հնազանդում է ուսուցանում նորին ինքը՝ հանուր մեր տերը։ [Ուստի] նման [ծառայության] համար երբեք անպարապությունը պատճառ չարի, ոչ էլ ծուլությամբ ծառայեցի։ Բայց երբ այն դառնա հոգուն վնասող և հեռացում արարչից, այնժամ մեր խրատիչը այլևս չի հանդուրժում, որ հաղորդվենք՝ թեկուզ նա տեր-տիրակալ լինի կամ թագավոր, կամ թե մեր այս կյանքի իսկ տերը»**։

* Բառացի՝ սրեղեն։

CII Իսկ ինքն անձամբ մտնում էր ժողովված բազմության մեջ ու իր աղոթքները հղում տիրոջը, և բոլորի կողմից սրտառուչ էր կատարվում աղոթքը, որպեսզի Հայոց թագավոր Տրդատը վերստին իր կերպարանքին

* Բառիս գրաբարյան իմաստով։

დეს თრდატ მეფე იგი სომხეთაჲ. ხოლო ღმერთი, რომელი იგი მოშიშთა მისთა სწყალობს, ვითარცა მამაჲ, აქაცა განამრავლა ყოფაჲ წყალობისაჲ და უჩინო ყო გარეშემოსილი იგი თრდატის და სახე ღორებრივი და შინაგან მისსა დამკჳდრებული იგი განდევნა ბოროტი ეშმაკი და არა ამისსა მიმართ ხოლო განჰფინა მოწყალებაჲ, არამედ მსახურთაცა და მთავართა და მჴედართა მისთა დაიჴსნნა იგინი მძლავრებისაგან ბოროტთა ეშმაკთაჲსა და მშჳდობაჲ და დაწყნარებაჲ შეჰმოსა სულთა მათთა.

CIII ამათ ყოველთა თანა სიმრავლემანცა სხუათა ბევრთამან ჰპოვა ცხორებაჲ, რამეთუ კეთროვანნი და წყლით-მანკიერნი და დაჴსნილნი და განრღუეულნი და რომელითაცა[1] ვინ იპოვა[2] ბოროტითა სენითა შეპყრობილთაგანი ყოველნი განიკურნნეს[3] და სენთაგან სიმრთელედ შე ცვალნეს და[4] ნ-გუემთა თანა ჴორციელთა არა უნაკლულევანეს განიყარნეს[5] ნაგუემნიცა სულისანი. და ფრიადი მიიღეს შესაძინელი და უმრავლესი საშუებელი, რამეთუ[6] არა ხოლო ჴორცთაჲ, არამედ სულთაჲცა მიიღეს კურნებაჲ.

CIV მიერითგან[1] უკუე შემოკრებოდეს წმიდისა ყოვლით-კერძო მომავალითა ერთა სიმრავლენი და სწავლად ღმრთის-მსახურებისა ევედრებოდეს მას და უეჭუელად და მტკიცედ მიემთხუეოდეს კურნებასა სენთა თჳსთასა. ხოლო მეფე თრდატ და მთავარნი და მჴედარნი მისნი და რაოდენნი იყვნეს მკჳდრ ქუეყანასა მას სომხითისასა, რომელთა იგი ბრწყინვალებაჲ ღმრთის-მეცნიერებისაჲ შეეწყნარა სიღრმესა შინა გულისსა და მიხედვიდეს თუალითა მით კეთილად მხედველისა სულისაჲთა, არა თავს-იდვეს აღშენებულად დგომაჲ იგი საცთურთა[2] საყოფლებისაჲ[3] და მითვე თუალითა ხედვაჲ მათიცა, რომლითა ხედვიდეს წმიდათა ეკლესიათა[4]. ამისთჳსცა წარვიდეს ნეტარისა გრიგოლის თანა და გარემოადგეს და მოიცვნეს ტაძარნი იგი კერპთანი და ბომონნი დააქცინეს, და[5] დაამტურინეს და საფუძველნი მათნი აღმოთხარნეს და შთაჴდეს ადგილთა მათ, სადა იგი დაუნჯებულ იყვნეს საფასენი, და ყოველივე იგი სიმდიდრე იავარ ყვეს და ყოველივე გამოიძიეს და უჩინო ყვნეს საუნჯენი იგი, რათა არა დაუშთეს მათ არცათუ მცირე ნაწილი უღმრთოებისაჲ.

CV ამისსა შემდგომად აღაშენნეს ეკლესიანი ღმრთისანი და ტაძარნი მოწამეთანი და გარეშე ზღუდნეს იგინი ლა სიმდიდრე იგი კერპთა ტაძრებისაჲ და სამოსლები იგი დიდფასისაჲ და ყოველნივე საჭმარნი და ნაქონებნი მათნი ღმრთისა ეკლესიათა შეწირნეს და პირველ უპატივოჲ[1] იგი ნივთი და ნამეტნავი[2] ჭეროვან და პატიოსან საჭმარ ყვეს.

CVI ესრეთ უკუე ვერღარა ჰპოვეს[1] განსუენებაჲ ბოროტად დამკჳდრებულთა მათ ეშმაკთა ბომონთა მათ შინა, რამეთუ ვერ თავს-იდვეს მძლავ-

CIII 1 რომელიცა KT 2 იპოვა] იყო ვითარცა T 3 *Հրատ. մեջ վրիպմամբ՝* იგინი კურნნეს 4 და] K 5 განყარნეს KT 6 რამეთუ] რათა T.

CIV 1 ამიერითგან KT 2 საცთურთა] კერპთა KT 3 საყოფლებისაჲ] ტაძრებისაჲ KT 4 ხედვიდეს წმიდათა ეკლესიათა] იხილეს ჭეშმარიტებაჲ S 5 და] KT.

CV 1 უპატიოჲ S 2 და ნამეტნავი] S.

CVI 1 ჰპოეს

դառնա։ Իսկ աստված, որ ողորմած է իրենից երկնչողներին՝ որպես հայր, այստեղ էլ բազմացրեց ողորմածությունը և անտես չար սատանային հալածեց։ Ու ոչ միայն նրա հանդեպ ողորմածություն տարածեց, այլ նաև՝ նրա սպասավորներին, իշխաններին ու զորացն ազատեց չար սատանաների բռնությունից և խաղաղություն ու անդորր պարգևեց նրանց հոգուն։

CIII Այս բոլորի հետ շատ այլ բազմություններ էլ կենդանություն գտան, ուստի բորոտները, ջրգողյալները, անդամալույծները, գոսացյալները և չար ախտով բռնված ովքեր կային՝ բոլորը բուժվեցին և ախտավորներից առողջների փոխվեցին, մարմնական ապիներից ոչ պակաս զատվեցին նաև հոգևոր ապիներից։ Եվ հույժ օգտություն ու բազում վայելում ստացան, քանի որ ոչ միայն մարմիններին, այլ նաև հոգիներին բժշկում գտան։

CIV Այնուհետև արդեն սրբին շրջապատում էին ամեն կողմից եկող բազմությունները ու աղերսում աստվածապաշտություն սովորեցնել, իրենց ցավերին անկասկած ու հաստատ բժշկում գտնում։ Իսկ Տրդատ թագավորը, նրա իշխաններն ու զորքերը և Հայաստան երկրում ինչքան բնակիչներ կային, որոնք սրտի խորքում աստվածճանաչության պայծառություն ընկալեցին ու տեսնում էին հոգու բարետես աչքով, չհանդուրժեցին կռոց կացարանների կանգուն մնալն ու նույն աչքերով նրանց տեսնելը, որոնցով տեսնում էին սուրբ եկեղեցիները։ Ուստի գնացին երանելի Գրիգորի հետ և շրջապատեցին ու պաշարեցին կռոց տաճարները, փլատակեցին զոհարանները, փշրեցին ու նրանց հիմքերը քանդեցին, ներխուժեցին այն տեղերը, ուր գանձեր էին կուտակված, և այդ ողջ հարստությունը ավարառեցին, ամբողջությամբ խուզարկեցին ու վերացրին այդ գանձերը, որպեսզի անաստվածության փոքրիկ մասն անգամ նրանց չմնա։

CV Այնուհետև սուրբ եկեղեցիներ ու վկաների տաճարներ կառուցեցին, պարսպապատեցին դրանք ու կռոց տաճարների հարստությունը, մեծագին հանդերձները և նրանց բոլոր պիտույքներն ու ունեցվածքը սուրբ եկեղեցիներին նվիրեցին, առաջվա անարգ իրն ու ավելորդությունը պատշաճ ու պատվական գործածելի դարձրին։

CVI Այսպես այլևս հանգստություն չկարողացան գտնել զոհարաններում չարությամբ հաստատված սատանաները, որովհետև այդ բռնությունը

რებაჲ იგი მეზობელთაჲ, არამედ დევნულებითა სასტიკითა განიჭადებოდეს და შეძრწუნებულნი[2] და ყოვლად-ზარგანჭდილნი ძალისაგან ღმრთისა უბრძოლველისა ღაღადებით აღიარებდეს მისსა ძლიერებასა და თჳსსა უნდოებასა. და არა ხოლო თუ[3] სომხითი ესრეთ ყუაოდა ღმრთის-მეცნიერებითა და[4] აღემატებოდა, არამედ სხუათაცა მომზღვრეთა[5] თჳსთა წარმართთა ჴელსა აღუპყრობდა და[6] მსგავსებად და შურად თჳსსა მოიზიდვიდა, ხოლო კერძოთა თანა ღვთისმსახურებად მოიცვალა თჳთ მეფეცა და[7] წინაშე ყოველთასა[8] განაქიქებდა თჳსსა მას პირველსა[9] ცთომილებასა და უწყალოებასა, რომელი აჩუენა ნეტარისა გრიგოლის მიმართ, და კუალად მოწყუედასა მას შინა წმიდათა მოწამეთა და ღირსთა ქალწულთასა და თჳსსა მას ბოროტსა ტრფიალებასა და სასჯელსა მას ღმრთისსა, რომელი მოიწია მის ზედა, და კუალად[10] სიმდიდრესა მას მადლთა და ნიჭთასა, რომელი უკუანაჲსკნელ მოიწია მის ზედა[11] ვედრებითა და მეოხებითა გრიგოლი საკჳრველისაჲთა.

CVII ამათ ესევითართა სიტყუათა მეფე იგი თითოეულად წარმოიტყოდა და სახე ექმნებოდა და საბაძველ სათნოებისა მრავალთა და შურად თჳსსა აღსძრვიდა მათ. რამეთუ ესევითარი არს ჴელმწიფებაჲ და მარადის მოსწრაფე არს საბრძანებელთა თჳსთა, რათა თანახატ და მსგავს თჳსსა ყვნეს იგინი ყოველსა შინა და მისდა[1] მიმართვე აღსძრავნ მათ სიყუარულად და მასვე ტრფიალებად, რომელსა ზედა საცნობელნი მისნი იხარებდეს[2].

CVIII ესრეთ უკუე[1] თქმულისა მისებრ[2] წყრთეულად აღორძნდებოდა და წარემატებოდა ღვთისმსახურებაჲ მათი[3], ვინაჲცა განიზრახეს ნეტარისა გრიგოლისი, რათა განაჩინონ წინამძღურად და მთავრად ეკლესიისა მათისა, რათა რამელი იგი ეპოვა მათ განმგებელ და მასწავლელ ცხორებისა, იგივე ექმნას მათ[4] მმართებელ და საჭეთა-მპყრობელ. და ესრეთ მიაწინეს იგინი ნავთ-სადგურსა ღმრთისასა[5]. ხოლო მან ნეტარმან უწყოდა სიმაღლე იგი საყდრისაჲ და სიმძიმე ზრუნვათაჲ და რამეთუ ჯერეთ ჩჩჳლთა იყო მცენარე იგი ნერგი სარწმუნოებისაჲ და ფრიადი უჭმდა მოღუაწებით შრომაჲ და უშურველად რწყვაჲ, ამისთჳსცა სცონოდა[7] წინამძღურობისათჳს ეკლესიისა და გარემიაქცევდა მას, ვიდრემდის ეჩუენა ანგელოზი უფლისაჲ მეფესა[8] თრდატს და დიდსა გრიგოლის[9] და ამცნო ერთსა მას მტკიცედ პყრობაჲ განზრახვისაჲ, ხოლო მეორესა არწმუნა[10] მიღებაჲ მღდელთ-მოძღურებისაჲ[11].

S 2 შეძრწუნებული T 3 თუ] KT 4 და] K 5 მოზღვრეთა S 6 და] K 7 ხოლო კერძოთა... მეფეცა და] და ესრეთ დიდ იყვნეს ნაწილნი ღმრთისა მსახურებისანი და საზღვარნი. ხოლო მეფე თრდატ KT 8 ყოველთასა] ყოვლისა ერისა KT 9 პირველ KT 10 კუალად S 11 ზედა] S.

CVII 1 მისსა S 2 იხარებდენ S.

CVIII 1 უკუჱ KS 2 ესრეთ... მისებრ] ესრეთ უკუე იყვნეს იგინი და ესრეთ KT 3 და წარემატებოდა... მათი] სათნოებაჲ მათი, ვითარ იგი იგავი ძუელთაჲ მეტყუელებაჲ KT 4 მათ] S 5 ღმრთისსა T 6 ხოლო] T 7 სცნობდა K 8 მეფესაცა KT 9 თრდატს... გრიგოლის] და თჳთ წმიდასა მას KT 10 არწმუნა] S 11 მოძღრებისაჲ K.

չկարողացան հանդուրժել [նաև] հարվածները, այլ սաստիկ հալածմամբ թոթափեցին և անպարտ աստծո զորությունից ահաբեկված ու լիովին սարսափած՝ բարբառումով խոստովանում էին նրա զորությունն ու իրենցինի ոչնչությունը։ Եվ ոչ թե միայն Հայաստանն էր այսպես ծաղկում աստվածաճանաչությամբ ու զորանում, այլև իր մյուս հեթանոս սահմանակիցներին էլ ձեռք էր բռնում ու իրեն նմանության և նախանձախնդրության ձգում։ Այսպես մեծ էին աստվածպաշտության վիճակներն ու սահմանները։

Իսկ կողմերի հետ ինքը թագավորը ևս աստվածպաշտության էր դարձել և բոլորի առաջ քակտում էր իր նախկին մոլորությունն ու անգթությունը, որ ցուցաբերեց երանելի Գրիգորի հանդեպ, նաև՝ [հիշում] այդ ընթացքում սուրբ վկաներին ու արժանավոր կույսերին կոտորելը, իր այն չար տրփանքն ու աստծո այն պատուհասը, որ հասավ իր վրա։ Եվ դարձյալ՝ այն շնորհների ու պարգևների հարստությունը, որ վերջում Գրիգոր Սքանչելու խնդրանքով ու բարեխոսությամբ հասավ իրեն։

CVIII Թագավորն այսպիսի խոսքերը մեկ առ մեկ էր արտասանում ու շատերին հաճո նմանելի օրինակ դառնում, նրանց իրեն նախանձախնդրության էր շարժում, քանի որ այսպիսին է իշխան[ավոր]ությունը՝ միշտ ջանում է, որ իր հպատակներին ամեն ինչում իրեն համակերպ ու նման դարձնի և նրա՛ հանդեպ սիրելու ու ակնածության շարժի, որի վերաբերմամբ իր զգացումներն են խրախուսում։

CVIII Այսպես արդեն՝ ասվածի պես հաջողությամբ էր ծավալվում և աճում նրանց աստվածպաշտությունը, երբ խորհեցին երանելի Գրիգորին առաջնորդ և իրենց եկեղեցու գլխավոր կարգել, որպեսզի ով նրանց նախախնամ ու կենաց ուսուցանող գտնվեց՝ նա էլ լինի նրանց կառավարիչն ու ղեկավարը։ Եվ այսպես առաջացան նրանք աստծո նավահանգիստ։ Իսկ այն երանելին գիտեր աթոռի բարձրությունն ու հոգածությունների ծանրությունը, և որովհետև հավատատունկ բույսը տակավին մատղաշ էր և նրան տքնության հույժ խնամք էր անհրաժեշտ ու անդադրում ցողել, ուստի հապաղում էր եկեղեցու առաջնորդության համար և խուսափում դրանից, մինչև որ տիրոջ հրեշտակը երևաց թագավոր Տրդատին և մեծն Գրիգորին ու մեկին հայտնեց ամուր պահել մտադրությունը, իսկ երկրորդին համոզեց ընդունել քահանայապետությունը։

CIX და ესრეთ მეფემან ვინაჲთგან იხილა წმიდისა მის რწმუნებაჲ, რომელი იგი პირველ არა ირწმუნებდა[1], გამოარჩინა მთავართა თჳსთაგან კაცნი რიცხჳთ ათექუსმეტნი და თანაწარეყვანნა[2] ნეტარსა გრიგოლისა[3] და წარავლინნა კესარიად კაბადუკიისა, რათა ლეონტის მიერ, რომელი იგი იყო მაშინ მთავარეპისკოპოსი კესარიისაჲ, ჴელთ-დასხმულ[4] იქმნეს ნეტარი გრიგოლი პატივითა ეპისკოპოსობისაჲთა, და მიწერა მისსა ებისტოლე რომელს- წერილ იყო ესრეთ:

CX „ბნელსა მოვეცვენით[1] ჩუენ უკუნსა და სიმრავლესა თანა ცოდვათასა[2] ულმრთოებისაცა ბნელითა დანთქმულ ვიყვენით და მის მიერ ვერ შეუძლებდით მიხედვად ჭეშმარიტებასა, ვერცა ცნობად ზოგადსა მას ყოველთა დამბადებელსა, არამედ მან სხუაჲცა მზე აღმომიბრწყინვა ჩუენ ქუეყანასა ზედა, დიდი გრიგოლი, და ქალწულნი გამოაჩინნა წმიდანი, რათა მათ მიერ მიმიძლუეს ჩუენ ცნობად სიტკბოებასა და კაცთ-მოყუარებასა მისსა[4]. ხოლო ჩუენ, ჵ ჩემდა, რამეთუ დიდებულიცა[5] ესე გრიგოლი და პატიოსანნი იგი ქალწულნი უწყალოებით და მჴეცებრივ ვტანჯენით და იგინი სასტიკებით მოვსწყჳდენით, ეჰა უბადრუკებასაღა ჩუენსა. ხოლო ესე უბრძოლელითა[6] მით ძალითა და შეწევნითა ღმრთისაჲთა განძლიერებული, ვიდრე აღსასრულამდე ზეშთა[7] ექმნა და სძლო მძლავრებასა ჩუენსა და განველურებ⌐ლსა მას სივერაგესა.

CXI არამედ არცა ესრეთ თავს-იდვა ხილვაჲ წარწყმედულებისა ჩუენისაჲ განუცდელმან მან უფსკრულმან ღმრთისა სახიერებათამან, გარნა მოძღურებითა და ლოცვითა ამის ნეტარისა გრიგოლისითა[1] და მეოხებითა კეთილ[2]-მძლეთა მათ ქალწულთა მოწამეთაჲთა აღმძარცუა ჩუენ ზრქელი იგ საბურველი და ნისლი თუალთა მათ სულისათაჲ და მიმიძლუა ჩუენ ნათლისა მიმართ ჭეშმარიტისა[3] და მისსა მიმართ ცნობისა და სარწმუნებისა[4]. ვინაჲცა მიზეზი იგი და ესევითართა კეთილთა მომატყუებელი ჩუენი და წინამძღუარი უცთომელი და განმგებელი ცხორებისა ჩუენისაჲ ღმრთივ განბრძნობილი ესე გრიგოლი არა ხოლო ჩუენ გამოვირჩიეთ მოძღურად და მწყემსად ნეშტთა ამათ დღეთა ჩუენთათჳს და წინამძღურად სათნოებისა, არამედ საღმრთომანცა ჩუენებამან ზეგარდამო განზრახვასა ჩუენსა დაჰბეჭდა და ამას მორჩილებაჲ ჩუენი უბრძანა, რომლისათჳსცა წარმოვავლინეთ[5] ესე ღირსებისა თქუენისა, რათა ჴელითა და ენითა შენითა სრულ ჰყო ესე პატივითა მღდელთ-მოძღურებისაჲთა და მსწრაფლ მოავლინო[6] მწყემსად სამწყსოჲსა ამი⌐".

CXII ესე და[1] ესევითარი რაჲ ებისტოლე[2] მიიღო მთავარეპისკოპოსმან ლეონტი, პატივით და სიყუარულით შეიწყნარა დიდი გრიგოლი და მოცი-

CIX 1 + და S 2 წარაყვანნა ST 3 გრიგოლის ST 4 დასმულ K.

CX 1 მოვეცენით K 2 + მრავალჟამეულსა S 3 აღმოგჳბრწყინვა S 4 სიტკბოებისა და კაცთმოყუარებისა მისისა S 5 დებულიცა KS 6 უბრძოლველითა S 7 ზესთა S.

CXI 1 ნეტარისა გრიგოლისითა] ნეტარისაჲთა S 2 კეთილად S 3 ჭეშმარიტებისა T 4 სარწმუნოებისა T; ჭეშმარიტისა... სარწმუნებისა] ცნობისა და სარწმუნებისა K 5 წარმოვალინეთ KT *(հրատարակիչը ուղղել է)* 6 + ესე KT.

CXII 1 და] S 2 ებისტოლე S

CIX Եվ այսպես, քանի որ թագավորը տեսավ սրբի համաձայնությունը, որն առաջ չէր հոժարում, իր իշխաններից թվով տասնվեց մարդ հատկացրեց ու նրանց երանելի Գրիգորի հետ դրեց և ուղարկեց Կապադովկիական Կեսարիա, որպեսզի Կեսարիայի արքեպիսկոպոս Լեոնտիոսի (Ղևոնդի) կողմից երանելի Գրիգորը եպիսկոպոսական պատվի ձեռնադրվի։ Նրան թուղթ գրեց, որի մեջ գրված էր այսպես.

CX «Հավիտենական խավարում էինք մենք խարխափում ու մեղքերի բազմության հետ նաև՝ անաստվածության խավարով խեղդված էինք և այնտեղից չէինք կարողանում տեսնել ճշմարտությունը, ոչ էլ ճանաչել այն հանուր բոլորի ստեղծողին։ Սակայն նա, այնուամենայնիվ, արև վառեց մեր երկրի վրա՝ Մեծն Գրիգորին, և սուրբ կույսերի կարգեց, որպեսզի նրանց կողմից շնորհվի մեզ իր ջերմությունն ու մարդասիրությունը ճանաչելը։ Իսկ մենք, վա՜յ ինձ, և՛ փառավորն այս Գրիգորին, և՛ այն պատվական կույսերին անգթությամբ ու գազանաբար տանջեցինք և դրանց սաստկությամբ կոտորեցինք։ Վա՜յ մեր անտերուշությանը։ Իսկ սա (Գրիգորը), անպարտ այն զորությամբ և աստծու օգնությամբ հզորացած, մինչև վերջ վերին [կամոք] եղավ ու հաղթեց մեր բռնությանն ու վայրենի նենգությանը։

CXI Սակայն աստծո անքննելի և անհատնում բարեգթությունը ոչ էլ դրանով հանդուրժեց մեր կործանումը տեսնել, այլև այս երանելի Գրիգորի վարդապետությամբ ու աղոթքով և այն բարեհաղթ վկա կույսերի բարեխոսությամբ աղատեց մեզ թանձր ծածկոցից և հոգու աչքերի խավարից և առաջնորդեց դեպի ճշմարիտ լույսը, ճանաչումն ու հավատը նրա հանդեպ։ Իբրև պատճառ ու մեզ այսպիսի բարյաց տվողի և անմոլոր առաջնորդի ու մեր կենաց վարողի, այս աստվածաշունչ Գրիգորին ոչ միայն մենք ընտրեցինք իբրև վարդապետ ու հովիվ մեր մնացած օրերի համար և առաջնորդ հաճության, այլև վերուստ աստվածային տեսիլն էլ հաստատեց մեր մտադրությունը և մեզ հրամայեց հնազանդ լինել նրան։ Ուստի և ուղարկեցինք նրան ձերդ արժանավորության մոտ, որպեսզի քո ձեռքով ու բերանով** օծես*** նրան քահանայապետության պատվով և շուտ ուղարկես՝ այս հոտը հովելու»։*

CXII Երբ արքեպիսկոպոս Լեոնտիոսը այս ու այսպիսի թուղթ ստացավ պատվով ու սիրով ընդունեց մեծն Գրիգորին և նրա հետ առաքվածներին ու

* *Բառացի՝ զերծեց։*
** *Բառացի՝ լեզվով։*
*** *Բառացի՝ կատարես։*

ქულნი იგი მის თანა და მყის შეკრებულთა მათ თანა მისთანათა[3] ეპისკოპოსთა ჴელნი დაასხნა და პატიოსნად და დიდებულად წარმ<ო>გზავნა[4] იგი. ხოლო აღმო-რაჲ-ვიდოდა მიერ ნეტარი გრიგოლი[5], იხილნა ქალაქთა მათ შინა მგზავრ დამთხუეულთა კმასაყოფელნი მღდელობად და მარჯუენი რწმუნებად სიტყუასა მოძღურებისასა[6]. ასწავა მათ სიტყუაჲ[7] ჯეროვანი და[8] თანაწარმოიყვანნა იგინი, რათა აქუნდეს შემწედ[9] ღმრთის-მსახურებისა და მსახურად სამღდელოთა წესთა ქუეყანასა მას სომხითისასა და ქალაქებსა მათსა.

CXIII და ვითარცა მიიწია საზღვართა სომხითისათა, ეუწყა[1] მუნ ტაძარი ერთი დაშთომილი საკერპოდ შესაკრებელად ირაკლეოჲსთჳს, აღშენებული მდინარესა ზედა ევფრატსა. და იყვნეს მას შინა ბომონნი აღმართებულნი, სადა იგი შეიწირვოდეს მსხუერპლნი ირაკლე[2] კერპისა და მის თანამკჳდრთა ეშმაკთა<ჲ>. ამას ტაძარსა მოუჴდა დარღუევად არა ჴელითა კაცობრივითა, არამედ ლოცვითა ხოლო ჯერ იჩინა დაქცევაჲ მანქანებასა მას ეშმაკთასა მყოფსა მას შინა, და საფუძველითურთ აღმოთხარა იგი და სხუაჲ აღუშენა მის წილ ეკლესიაჲ საუფლოჲ და დასხნა მას შინა ნაწილნი, რომელ მის თანა აქუნდეს, იოვანე წინამორბედისა და ნათლის-მცემელისაჲ და მღდელმოწამისა ათინოგენისი. და აღჰმართა საკურთხეველი და მას ზედა შეწირა მსხუერპლი იგი საუფლოჲ და პირველად ნათელ-სცა მისთანათა მათ მთავართა.

CXIV და ამისსა შემდგომად დაადგრა მუნ ოც დღე და სრულ ყვნა ნათლის-ღებითა ერნი უმრავლეს ათერთმეტისა ბევრისა და განაჩინა მუნ დღესასწაული შჳდსა ოკტომბერისასა[1], სადა იგი პირველად აღუმართა საკურთხეველი უფლისა და დაადგინნა მღდელნი და ლევიტელნი და თითოეულთა მათ სოფლებისა ეკლესიათა ხუცესნი და დიაკონნი.

CXV ხოლო მეფესა სომეხთასა თრდატს ეუწყა რაჲ მოახლებაჲ მღდელთ-მოძღურისა თჳსისაჲ, მიეგება[1] მას მდინარესა ზედა ევფრატსა სიმრავლითა ერისაჲთა, მეუღლისა თანა და დისა თჳსისა და სურვილით შეიტკბნეს და სიხარულით მოიკითხნეს[2] ურთიერთას, და იგი მოციქულებრსა აჩუენებდა მოძღურებასა. ხოლო იგინი მოსწრაფებით ისმენდეს და მჴურვალედ შეიწყნარებდეს თქუმულთა მისთა, და ამცნო მათ წმიდამან, რათა იმარხვიდენ ოც და ათ დღე და ილოცვიდენ. და ამისსა შემდგომად იწყო თჳთ მეფისაჲთ და დედოფალსა და დასა მეფისასა და ყოველთა მთავართა ნათელ-სცა მდინარესა შინა ევფრატსა და გამოაჩინნა იგი-

3 მისთანა S 4 წარმგზავნა KT; წარგზავნა S 5 + რომელნიცა S 6 ქალაქთა მათ.., მოძღურებისასა] ქალაქნი იგი გზისანი, რომელნიცა წარმართებულ იყვნეს ჯეროვნად სარწმუნეობითა და სიმრავლითა მღდელთაჲთა, და შემწყნარებელ სიტყუასა მოძღურებისასა KT 7 სიტყუაჲ] S 8 და] K 9 თანაშემწედ KT.

CXIII 1 ეუწყა] პოვა KT 2 ირაკლი S.

CXIV 1 ოკტომბერისა KT, ოკდონბერისასა S.

CXV 1 მოეგება KT 2 მოიკითხეს KT

անմիջապես իր մոտ ժողոված եպիսկոպոսների հետ ձեռնադրեց և պատվարժանությամբ ու փառոք ուղարկեց նրան:

Իսկ երբ երանելի Գրիգորը դառնում-գալիս էր, ճանապարհին հանդիպած քաղաքներում քահանայության ընկալողներ և վարդապետության խոսքի հաղթական հավատավորներ տեսավ: Նրանց հարկի խոսք խրատեց ու հետը բերեց, որպեսզի օգնական լինեն աստվածապաշտության և ծառայեն Հայաստան երկրի ու նրանց քաղաքների քահանայական կարգերին:

CXIII *Եվ երբ հասավ Հայաստանի սահմաններին, այնտեղ հանուն Հերակլեսի կուռքի հավաքվելու մնացած մի տաճարի մասին տեղեկացավ, Եփրատ գետի վրա կառուցված: Նրանում զոհարաններ էային կանգնեցված, ուր Հերակլեսի կուռքին ու նրան համարնակ սատանաներին զոհեր էին մատուցում: Այս տաճարն ավերվեց ոչ թե մարդկային ձեռքով, այլ միայն աղոթքով, իսկ [Գրիգորը] հարկ համարեց խորտակել նրանում գտնվող սատանաների մեքենայությունը: Հիմնահատակ քանդեց այն ու նրա փոխարեն սուրբ տերունական եկեղեցի շինեց ու նրա մեջ զետեղեց իր հետ ունեցած Հովհաննես կարապետի ու մկրտչի և սուրբ նահատակ Աթինոգենի (Աթանագինես) նշխարները: Խորան կանգնեցրեց ու տերունական զոհ մատուցեց և առաջինը մկրտեց իր հետ եղած իշխաններին:*

CXIV *Այնուհետև այնտեղ մնաց քսան օր և տասնմեկ բյուրից ավելի բազմություն մկրտեց ու այնտեղ հոկտեմբերի յոթին տոն կարգեց, ուր առաջինը կանգնեցվեց տիրոջ խորանը, նշանակեց քահանաներ ու ղևտացիներ*, իսկ յուրաքանչյուր գյուղի եկեղեցիներին՝ երեցներ ու սարկավագներ:*

CXV *Իսկ Հայոց թագավոր Տրդատը երբ տեղեկացավ իր քահանայապետի մոտենալը, ժողովրդի բազմության, իր կնոջ ու քրոջ հետ միասին նրան դիմավորեց Եփրատ գետի վրա. կարոտով ողջագուրվեցին և ուրախությամբ հարցափորձ արին միմյանց, և նա (Գրիգորը) առաքելանման վարդապետություն էր քարոզում: Իսկ նրանք փութաջանությամբ լսում էին և ջերմագին ընդունում նրա ասածները: Սուրբը հայտնեց նրանց, որպեսզի երեսուն օր պաս պահեն և աղոթեն: Իսկ այնուհետև՝ անձամբ թագավորին, թագուհուն, թագավորի քրոջն ու ամենայն իշխաններին մկրտեց Եփրատ գետում և նրանց*

* *Իմա՝ հոգևոր սպասավորներ:*

ნი ძედ ნათლისა და დღისა, და კუალად სხუაჲ ეკლესიაჲ აღაშენა კიდესა მდინარისასა და მას შინა აღასრულა საღმრთოჲ საიდუმლოჲ[3] და ყოველივე წესი სამღდელოჲ.

CXVI ხოლო ღმერთმან არცა აქა დააცადა ყოფად საკჳრველებათა თჳსთა, რამეთუ ვითარცა შთაჴდეს იგინი ნათლის-ღებად მდინარესა მას შინა ევფრატსა[1], იხილვებოდა სუეტი ნათლისაჲ დადგრომილი წყალთა მათ ზედა, რომლისა ბრწყინვალებაჲ დაჰფარვიდა შარავანდედთა მზისათა, და თავსა მისსა ზედა აღმართებულ იყო ჯუარი და ხილვაჲ იგი მისი იყო საკჳრველ, რამეთუ დღე ყოველ იხილვებოდა იგი წინაშე თუალთა ერისა მის ნათელღებულისათა. ხოლო სიმრავლისა მათისა რიცხჳ იყო უცილობელად და ჭეშმარიტად ათხუთმეტი ბევრი.

CXVII ესრეთ უკუე დაყო შჳდი დღე სხუაჲ ადგილსა მას ნეტარმან გრიგოლი და ნათელ-სცა კაცთა უზეშთაესთა[1] რიცხჳსათა, და ჯერ არს თუ რწმუნებაჲ მრავალთა შორის განსმენილსა სიტყუასა[2] იყო რიცხჳ რვა დღე ნათელღებულთაჲ მათ ოთხას ბევრ, და მერვესა დღესა წარმოვიდეს მიერ და იწყეს შენებად ეკლესიათა ყოველსა შინა ქუეყანასა სომხითისასა. და წმიდამან გრიგოლი დაადგინნა მათ შინა მღდელნი[3]. ჰმსახურებდა საჭმარსა ეკლესიათა მეფეცა თრდატ არა სულმოკლებით, არცა უდებებით, არამედ მიანიჭებდა მათ რაოდენი კმა ეყოფვოდა[4] სოფლებსა და დაბნებსა სახელოვანსა ჴელითა უხჳთა და ნიჭების მოყუარითა[5].

CXVIII ვინაჲცა ეპისკოპოსმან გრიგოლი არა ამას ხოლო ზედა კმა იყო ქველის მოქმედებაჲ თჳსი, არამედ მუსიკთა ჴელოვნებისა და ყოველთა მოძღურებათა[1] ჴელოვნებისა[2] სასწავლოჲ განჰმზადა შორის ქალაქისა და განაწესნა მათ შინა მოძღუარნი და მასწავლელნი. და ამას ებაძვა მეფეცა და ერთკერძომანცა განჰმზადნა[3] ეგევითარნივე ვითარ იგი სთნდა[4] წმიდასა მას. და განვიდეს ქადაგნი ბრძანებითა გრიგოლისითა[5], რათა ყოველთაგან ქალაქთა მოიყვანებდენ მისსა შვილთა მათთა სომეხნი იგი და ასწავებდენ წერილსა და წურთასა საღმრთოთა წიგნთასა.

CXIX ესრეთ უკუე არა ხოლო სომხითი გარეშეიცვა მის მიერ ქადაგებამან ცხორებისამან, არამედ სპარსეთი და ასურეთი და მიდნი და რომელთა იგი უნნონ[1] უწოდიან. ამათ ყოველთაგანნი ტკბილსა მას უღელსა ქრისტესსა მოიყვანნა ერნი მრავალნი. ხოლო დაღაცათუ ღმრთის-მეცნიერებად მოყვანებისათჳს ერთაჲსა[2] ესრეთ მოსწრაფე იყო, არამედ არცა ამას ზედა უდებ იქმნებოდა, რათამცა ჭირთა და განსაცდელთა მათთათჳს არა ელმოდა და ძჳრთა მათთათჳს[3] არა თანაზრუნვიდა, არცა შეწევნად

3 საჲდუმლოჲ S.

CXVI 1 ევფრატსა] KT.

CXVII 1 უზესთაესთა S 2 მრავალთა... სიტყუასა] სმენილსა მრავალთა მიერ მოწაფეთა წმიდისათა KT 3 + ხოლო ST 4 ეყოფოდა T 5 ჴელითა... მოყუარითა] რათა უხუებით და სიმდიდრით ცხოვნდებოდიან KT.

CXVIII 1 მოძღურებაჲთა K 2 ჴელოვნებისა] სიმრავლისა KT 3 განმზადნა KT 4 Հրամ. մեջ վրիպմամբ՝ სათნო და 5 Հրամ. մեջ վրիպմամբ՝ გრიგოლისა[ჲ]თა.

C XIX 1 ონნონ S (հունարենում՝ Οὔννων) 2 ერთაჲსა] ყოველთაჲსა T 3 მათთჳს S

լույսի ու զորվա ժառանգ կարգեց, գետափին էլ այլ եկեղեցի կառուցեց և նրանում աստվածային խորհուրդ և քահանայական ամենայն կարգ կատարեց։

CXVI Իսկ աստված ոչ էլ այստեղ դադարեց իր հրաշագործությունները անել, ուստի երբ նրանք մկրտության մտան Եփրատ գետի մեջ, լույսի սյուն էր երևում՝ կանգնած ջրերի վրա, որի պայծառությունը ծածկում էր արևի պսակներին, իսկ նրա գլխին խաչ էր խոյացած, ու նրա տեսքը զարմանահրաշ էր, քանի որ ամբողջ օրն այն երևում էր մկրտված ժողովրդի աչքերի առաջ։ Իսկ նրանց բազմության թիվը անվարան ու ճշմարտորեն տասնհինգ բյուր էր։

CXVII Այսպես արդեն, երանելի Գրիգորը յոթ էր մնաց այլ տեղում և անքանակ թվով մարդկանց մկրտեց, և թե պարտ է հավատալ բազում մարդկանց մեջ լսված խոսքին՝ ութ օրվա [ընթացքում] մկրտվածների թիվը չորս հարյուր բյուր էր։ Ութերորդ օրը մեկնեցին այնտեղից և սկսեցին ողջ Հայաստան երկրում եկեղեցիներ կառուցել։ Եվ սուրբ Գրիգորը նրանցում քահանաներ կարգեց։ Թագավոր Տրդատը ևս պիտանիորեն ծառայում էր եկեղեցիներին ոչ դժկամությամբ, ոչ էլ անգործությամբ, այլև շռայլ ձեռքով ու շնորհասիրությամբ նրանց պարգևում էր, որքան կբավեր, նշանավոր գյուղեր ու ավաններ։

CXVIII Մինչդեռ եպիսկոպոս Գրիգորը միայն դրանով չէր բավականանում իր ողորմածագործությունը, այլև քաղաքում երաժշտությանց արվեստի և ամենայն ուսմունքի արվեստի կրթարան հիմնեց* և նրանցում վարդապետներ ու ուսուցիչներ կարգեց։ Թագավորը և ընդօրինակեց նրան և անձնապես էլ այդպիսիք հիմնեց, որպիսին հավանում էր սուրբը։ Եվ Գրիգորի հրամանով քարոզիչներ ելան, որպեսզի բոլոր քաղաքներից հայերն իրենց զավակներին նրա մոտ բերեն և աստվածային Գրոց գրել ու կարդալ սովորեցնեն։

CXIX Այսպես արդեն նրա կենաց քարոզը ոչ միայն Հայաստանը բովանդակեց, այլ նաև Պարսկաստանը, Ասորստանը, Մարաստանը և որ՝ Հոններ են կոչվում։ Այս բոլորից բազում ժողովուրդներ Քրիստոսի քաղցր լծի բերեց։ Ու թեև ժողովուրդներին աստվածաճանաչության բերելու համար այսպես ջանում էր, սակայն ոչ էլ դրանով էր հանգստանում, որ նրանց նեղությունների ու փորձությունների համար չցավեր և չհոգար նրանց դժվարությունները, ոչ էլ օգնության ջանար և դրանով՝ պակասավոր անփութությամբ

* Բառացի՝ պատրաստեց։

* Բառացի՝ ցեղերից, տոհմերից։

მოსწრაფე იყო და ამას ზედა უნაკლულევანესმცა განაგებდა დაჭსნილობით. არა ესრეთ ჰყოფდა, ნუ იყოფინ, არამედ ჴორცთა ვნებასაცა განმზადებულ[4] მკურნალ იქმნებოდა და სენთა სულისათა განსდევნიდა და ბრძოლასა მათსა ურთიერთას დაამშჳდებდა[5] და იყო უმოსწრაფეს თხოვისა მინიჭებაჲ იგი მვედრებელთა სათხოველისაჲ და იგი შერაცხილ იყო მის მიერ მწყემსად კეთილად, რომელმან არცალამცა[6] სულსა თჳსსა ჰრიდა მიცემად ცხოვართა თჳსთათჳს.

CXX ამას თანა და საპყრობილენიცა მის მიერ დაცარიელდებოდეს[1] და ჴელით-წერილნი თანანადებთანი განიხეთქებოდეს და მშჳდობასა დიდსა მოეცვა ყოველი სომხითი და შუებით ცხოვნდებოდეს[2]. და ესრეთ დაუბრკოლებელად[3] და დაუყენებელად[4] ვიდოდეს გზასა ღმრთის-მსახურებისასა და ყოველი სათნოებაჲ და მადლი მათ შორის წარემატებოდა და მრავალნი მონაზონებისა ცხორებასა აღირჩევდეს და თითოსახეთა ადგილთა მონასტრებსა აღაშენებდეს[5] და[6] დაყუდებასა შეიყუარებდეს, ხოლო შვილთა მათთა პირველ ურწმუნო ყოფილთა აღილებდა ნეტარი გრიგოლი და უზრუნველითა ცხორებითა და კეთილად-სწავლულებითა აღჰზრდიდა[7] მათ. და სულიერსა მოქალაქობასა და მადლსა მიანიჭებდა მათ და ესოდენსა სისრულესა სათნოებათასა მოიყვანნა იგინი, ვიდრემდის[8] ღირს იქმნნეს დიდსა მასცა საყდარსა მღდელთ-მოძღურებისასა. რამეთუ ერთი იგი კიდეთა ევფრატისათა ეპისკოპოსად[9] განაჩინა, რომელსა ალვინოს ეწოდებოდა, ხოლო მეორე, რომელსა ერქუა ევთალიოს, სოფელსა ზედა ბასიანელთასა[10], და მესამე მათი იყო ვასოს.

CXXI და ესრეთ რიცხჳ იგი ათად აღესრულებოდა. და მრავალნი სხუათაცა ნათესავთაგან განმგებელად ეკლესიათა განაჩინნა, რამეთუ ითქუმის, ვითარმედ ყოვლად[1] არა მრავლისა ჟამისა რიცხჳ მათ ყოველთაჲ ოთხას. ხოლო ალვინოს, რომელი იგი ჰმატჳა ყოველთა ვითარცა მოღუაწებითა და სათნოებითა, ეგრეთვე სიმშჳდითა და სიმდაბლითა, ინება მისთჳს დიდმან გრიგოლი რაჟამს თჳთ აღვიდოდა მთასა მაღალსა სომხითისასა ჩუეულებისაებრ უდაბნოს დაყუდებად, რათა სამეუფოთა ზედა დგომითა მან[2] მის წილ აღასრულოს ყოველი, რომელი ეხილვა მისგან, და თჳთ თავადი განეშორა მიერ და წარვიდა.

CXXII ხოლო მეფე სამწყსოჲთურთ[1] უნუგეშინიცემოჲთა აღსავსე იყო მწუხარებითა განშორებისათჳს ნეტარისა გრიგოლისსა, რომლისაგან არცა თუ მცირედ ენება განყენებაჲ, გარნა ნეტარსა მას ესოდენ აქუნდა

4 განმზადებულად KT 5 დამშჳდებდა (*հրատ. մեջ ուղղված է*) 6 არცალა T.

CXX 1 დაცალიერდებოდეს K 2 ცხონდებოდეს S 3 დაუბრკოლებელა (!) K 4 დაუყენებელად] უენებელად KT 5 აღიშენებდეს KT 6 და] K 7 აღზრდიდა K 8 *Հրատ. մեջ սխալմամբ՝* ფრიადის... 9 ეპისკოპოსად] მღდელ-მოძღურად S 10 ბალანელთასა (!) K.

CXXI 1 რამეთუ... ყოვლად] და იქმნა შემდგომად KT 2 რათა... მან] და დაუტევა იგი რათა KT.

CXXII 1 სამწყსოჲთურთ] KT

վարեր։ Այսպես չէր անում, մի լիցի, այլև՝ մարմնական չարչարանքին անգամ պատրաստակամ բուժող էր դառնում և հոգու ցավերն էր հալածում, խաղաղեցնում նրանց կռիվը միմյանց հետ, հոգածու էր աղավինողների խնդրանքին՝ խնդրածը պարգևել։ Նա իրեն համարում էր բարի հովիվ, որը հոգին անգամ չէր խնայի՝ իր ոչխարներին տալու։

CXX Միաժամանակ նրա կողմից դատարկվեցին նաև բանտերը, պարտապանների ստորագրությունները պատռվեցին և մեծ խաղաղություն պատեց ողջ Հայաստանին, ու ապրեցին խնդությամբ։ Այսպես անխոչընդոտ ու անդադրում գնացին աստվածապաշտության ճանապարհով, և նրանց մեջ բազմանում էր ամենայն հաճություն ու շնորհ, իսկ շատերը միանձնական կյանքն էին ընտրում ու առանձին տեղերում վանքեր կառուցում և ճգնության հետևում։ Իսկ առաջվա անհավատների որդիներին վերցնում էր երանելի Գրիգորն ու հոգածու կենոք և բարեկրթությամբ մեծացնում, նրանց հոգևոր գործունեություն ու շնորհ էր պարգևում և այնպիսի կատարյալ արժանավորությանց հասցրեց նրանց, որ մինչև իսկ արժանի եղան քահանայապետության բարձր աթոռի։ Ուստի մեկին Եփրատի կողմերի եպիսկոպոս կարգեց, որի անունը Աղբինոս էր, իսկ երկրորդին, որի անունը Եվթաղիոս էր՝ Բասենցիների աշխարհի, և նրանց երրորդը Բասոսն էր։

CXXI Եվ այսպես՝ նրանց թիվը տասով էր լրանում։ Այլ ժողովուրդներից[*] ևս շատերին եկեղեցիներ վարողներ կարգեց, ուստի ասվում է, թե ամենևին ոչ շատ ժամանակ անց նրանց բոլորի թիվը եղավ չորս հարյուր։ Իսկ Աղբինոսին, որը գերազանցում էր բոլորին ինչպես գործունեությամբ ու արժանավորությամբ, այնպես էլ հանդստությամբ ու համեստությամբ, Մեծն Գրիգորը, երբ ինքը բարձրանում էր Հայաստանի բարձր լեռը՝ սովորության համաձայն անապատում ճգնելու, կամեցավ ու թողեց, որպեսզի իր փոխարեն տիրության վերակացությամբ կատարի այն ամենը, ինչ նրանից տեսել էր։ Իսկ ինքն անձամբ հեռացավ այնտեղից ու գնաց։

CXXII Իսկ թագավորի հոգին լեցուն էր անմխիթարելի տխրությամբ՝ երանելի Գրիգորի հեռանալու պատճառով, որից կարճատև իսկ չէր կամենում բաժանվել։ Բայց այն երանելին այնքան ճգնության բաղձանք ուներ, [որ]

[*] *Բառացի՝ տոհմերից։*

სურვილი დაყუდებისაჲ ვიდრელა სძლევდა ვედრებასა მეფისასა. და წარვიდა ვიდრეცა ენება[2] და მცირედთა თანა მოწაფეთა თჳსთა დაეყუდა ნაპრალსა შინა კლდისასა და თჳსაგან ჰზრახვიდა სასურველსა მას და არცა თუ მცირედ მოიცლიდა ზრუნვისათჳს ჴორცთაჲსა, რამეთუ თჳთ საჰიროსა მასცა და ყოველთა თანა წარუვალად სასურველსა პურსა ორმეოცთა დღეთა შინა ერთგზის მიიღებდა.

CXXIII ხოლო მეფე თრდატ ფრიად განილეოდა მწუხარებისაგან წარსლვისათჳს ყოვლად ქებულისა გრიგოლისსა და იგლოვდა რაჲ მისსა მას განშორებასა[1], ესმა ვიეთგანმე, ვითარმედ არიან მისნი შვილნი ორნი, რომელნი ესხნეს მას შჯულიერისაგან მეუღლისა, ოდეს იგი ჯერეთ ჭაბუკლა იყო, რომელთაგანსა პირველსა ორთანე ეწოდების, ხოლო მეორესა აროსტაკე. და ორნივე[3] არიან ღმრთის-მსახურ და მოყუარე სათნოებისა, და პატივცემულ არს ორთანე პატივითა ხუცობისაჲთა, ხოლო აროსტაკე შემკულ მონაზონებითა და სიყრმითგან მეუდაბნეობითა და სრულიად უქორწინებლობითა, რომლისაჲ ერთითა მარტოდ სამოსლითა ქცევაჲ უდაბნოს ითქუმოდა, წყობად სიცხისა და ყინულისა, და ვითარმედ[4] მხალი ხოლო არს საზრდელ[5] მისსა, და სიყრმითგან თანაზრდილ მისსა არს[6] მღჳძარებაჲ და ლოცვაჲ ღამე და დღე და საღმრთოთა წერილთა[7] კითხვაჲ.

CXXIV ესე რაჲ ესმა მეფესა, პატივ-სცა სათნოებასა მათსა, რამეთუ ინანდა იგი პირველსა უგუნურებასა თჳსსა და სასწაულად სრულიადისა განთავისუფლებისა თჳსისა არა ხოლო თჳთ[1] წმიდასა გრიგოლის, არამედ შვილთაცა მისთა ყოვლითურთ პატივ-სცემდა და მყის სამნი კაცნი წარჩინებულნი კესარიად წარავლინნა ძიებად მათდა. ხოლო მი-რაჲ-ვიდეს[2] იგინი, პოვეს ორთანე განწესებულ რიცხჳსა[3] თანა ეკლესიისა მღდელთასა, ხოლო აროსტაკე დაყუდებით და უდაბნოს მჯდომარე, და ძლით არწმუნეს მას და მიიყვანეს იგი მეფისა. და იხილა რაჲ იგი მეფემან, სიხარულით შეიწყნარა და ევედრებოდა ნეტარსა გრიგოლის ყოვლით ერითურთ, რათა[4] სახედ და ხატად თჳსსა და ყოვლითურთ ნაცვალად თავისა თჳსისა მიანიჭოს მათ აროსტაკე და ჴელთ-უდვას მას პატივი მღდელთ-მოძღურებისაჲ.

CXXV ხოლო[1] წმიდამან მან არა თუ ესრეთ გარეწარად ყო საქმე იგი, არამედ რაჟამს იხილა ყოველივე სათნოებაჲ დანერგული სულსა შინა ძისა თჳსისასა, მეყსეულად დაასხნა წმიდანი ჴელნი თჳსნი და აკურთხა იგი ეპისკოპოსად და მის თანა მოვლო ყოველი იგი სოფლები და უფროჲსად[2] განამტკიცა მათ შორის სიტყუაჲ სარწმუნოებისასაჲ და თავადი კუალად იქცა თჳსავე სასურველსა დაყუდებასა.

ენე ბაჲ K.

CXXIII 1 განშორებასასა K 2 მისდა S 3 + იგი KT 4 რომლისაჲ... ვითარმედ] და მოხუცებულ ნაყოფიერებითა სულისაჲთა, რამეთუ KT 5 საზრდელად KT 6 მისსა არს] S 7 წერილითა K.

CXXIV 1 თჳთ] S 2 -ვიდეს]-იწინეს S 3 რიცხუსა K 4 რათა] და KT.

CXXV ხოლო] K 2 უფროსად KT.

հաղթում էր թագավորի աղերսանքին։ Ու գնաց ուր կամենում էր և իր սակավաթիվ աշակերտների հետ առանձնացավ ժայռի անձավում ու ինքյան խորհրդածում էր այն ցանկալուն, և սակավ մի պարապ իսկ չէր լինում՝ մարմնական հոգածության համար, ուստի պետքն անգամ ու բոլորի համար անհրաժեշտ ցանկալի հացը քառասուն օրվա մեջ մեկ անգամ էր ընդունում։

CXXIII Իսկ Տրդատ թագավորը ամենագովելի Գրիգորի գնալու պատճառով հույժ տառապում էր տխրությունից ու երբ ողբում էր նրա հեռանալը, ինչ-որ մեկից լսեց, թե կան նրա երկու որդիները, որոնց նա ունեցել է օրինական կնոջից, երբ նա դեռևս պատանի էր, որոնցից առաջինը Օրթանե (Վռթանես) է կոչվում, իսկ երկրորդը՝ Արոստակե (Արիստակես)։ Եվ երկուսն էլ աստվածապաշտ են ու արժանավորության սիրող. Օրթանեն պատված է աբեղայական պատվով, իսկ Արոստակեն զարդարված է միանձնությամբ և մանկությունից՝ անապականությամբ ու ամենայն կուսակրոնությամբ, որի մասին պատմվում էր, թե միայն մի շորով է մնում անապատում՝ դիմանալու շոգին ու ցրտին և որ նրա միակ սնունդը բանջարն է ու մանկությունից նրան սննդակից է արթնությունը, գիշեր-ցերեկ աղոթքը, աստվածային Գրոց ընթերցումը։

CXXIV Թագավորը երբ այս իմացավ՝ պատվեց նրանց արժանավորությունը, որովհետև զղջում էր իր նախկին անմտությունը և հրաշքով իր կատարյալ ազատման [համար] ոչ միայն Գրիգորին, այլ նաև նրա որդիներին էլ էր ամենայնիվ պատիվ տալիս։ Անմիջապես երեք ավագանի մարդ Կեսարիա ուղարկեց՝ նրանց փնտրելու։ Իսկ երբ նրանք գնացին՝ Օրթանեին գտան եկեղեցու քահանայության թվի մեջ կարգված, իսկ Արոստակեն՝ ճգնակեց ու անապատում նստած։ Հազիվ համոզեցին նրան և տարան թագավորի մոտ։ Թագավորը երբ տեսավ նրան՝ խնդությամբ ընդունեց և ամենայն ժողովրդի հետ աղաչում էր երանելի Գրիգորին, որպեսզի իբրև իր կերպ ու պատկեր և ըստ ամենայն իր անձի փոխարեն նրանց շնորհի Արոստակեին ու նրան քահանայապետության պատվի ձեռնադրի։

CXXV Իսկ այս սուրբը ոչ թե այնպես իմիջիայլոց արեց գործը, այլ երբ իր որդու հոգու մեջ ամենայն արժանավորություն ներդրված տեսավ, անմիջապես ձեռնադրեց իր սուրբ ձեռներով ու նրան եպիսկոպոս օծեց, նրա հետ անցավ բոլոր գավառները և նրանց մեջ առավել հաստատեց հավատի խոսքը, իսկ ինքը կրկին դարձավ իր իսկ սիրեցյալ ճգնությանը։

CXXVI ხოლო მათ ჟამთა შინა კოსტანტინე ძე კოსტაჲსი მეფე იქმნა ბერძენთა ზედა და ძალითა ჯუარისაჲთა და ქრისტეს კეთილად-მსახურებითა დასცნა წინააღმდგომნი და თჳთ მხოლომან დაიპყრა თჳთმპყრობელობაჲ ბერძენთაჲ. და ესე არს მეფეთა შორის, რომელი იწოდების ჩემ მიერ ერთად მოციქულთაგანად და ქადაგად ღმრთის-მსახურებისა, რომელმან დაარღჳნა შეგინებულნი იგი ტაძარნი და ბომონნი კერპთანი და აღაშენნა წმიდანი ეკლესიანი ღმრთისათჳს. და ქრისტეს მიმართ წმიდაჲ აღსაარებაჲ და მართალი სარწმუნოებაჲ წიგნებითა და ბრძანებითა განჰფინა ყოველსა სამეუფოსა თჳსსა. და ესევითარი მოსწრაფებაჲ მოიგო მისთჳს, ვიდრემდის სამას აჲრვამეტნი[1] მამანი შეკრიბნა წმიდასა მას კრებასა ნიკიისასა, სადა იგი აღმოჰფხურეს[2] ღუარძლი აღმოცენებული და განწმიდეს ჭეშმარიტი იგი იფქლი მართლმადიდებლობისაჲ.

CXXVII და იყვნეს ორნივე ესე ვარსკულავ ბრწყინვალე კოსტანტინე და თრდატ, კოსტანტინე კერძოთა დასავალისათა, ხოლო თრდატ აღმოსავალით, და ბრწყინვიდეს და განანათლებდეს, რამეთუ[1] თრდატცა მჴურვალე იყო სარწმუნოებისათჳს და მარხვითა და ლოცვითა არარაჲთ დაკლებულ უდაბნოს მყოფთა[2] მოღუაწეთა მონაზონთაგან.

ხოლო კრებასა მას ნიკიისასა[3] იხილვნეს ურთიერთას ორნივე ესე მეფენი და ჯეროვანი პატივი და ნიჭი აჩუენეს ურთიერთას და ღმრთისმსახურებისათჳს ერთობაჲ გონებათა მათთაჲ განაცხადეს.

CXXVIII და მთავარეპისკოპოსიცა სომხითისაჲ არისტაკე მიწოდებულ იქმნა კოსტანტინეს მიერ მეფისა და თანააღირაცხა კრებულსა წმიდათა მამათასა და მიიღო წიგნი იგი სარწმუნოებისაჲ ზოგადითა ნებითა და განზრახვითა ყოველთაჲთა აღწერილი და განმტკიცებული და თჳსადვე ქალაქად უკუმოიქცა და დიდად სურვიელთაგან სამწყსოთა და განშორებისათჳს მისისა[1] მწუხარეთა სიხარულით შეწყნარებულ იქმნა, და აღავსო სიხარულითა თჳთ მეფე იგი ღმრთის-მოყუარე თრდატ და[2] ყოველი სომხითი ერთობითა მით სარწმუნოებისაჲთა, რომელი იგი ეგრეთვე ეგო სიმრავლესა[3] ჟამთასა და მისცემდა ყოველთა სიმრავლესა კეთილად მსახურებისასა და ყოველთა მიერ იდიდებოდა ღმერთი მშჳდობისაჲ ქრისტეს იესუჲს[4] მიერ უფლისა ჩუენისა, რომლისა თანა მამასა შუენის დიდებაჲ და პატივი და სიმტკიცე თანა სულით წმიდითურთ აწ და მარადის და უკუნითი უკუნისამდე, ამინ.

CXXVI 1 ათურამეტნი S 2 + ყოველი KT.
CXXVII 1 რამეთუ] ხოლო T 2 მყოფთა] KT 3 ნიკიის S.
CXXVIII 1 განშორებისა მისისათჳს S 2 და] KT 3 სიმარვლესა (!) K 4 იესჳს K; იესჳჲს S.

CXXVI Մինչ այդ ընթացքում Կոստայի որդի Կոստանդինը Հունաց թագավոր դարձավ և խաչի զորությամբ ու Քրիստոսի բարեպաշտությամբ պարտության մատնեց հակառակորդներին և մենակ ինքը գրավեց Հունաց ինքնակալությունը։ Թագավորների մեջ նա է, որ իմ կողմից կոչվում է առաքյալներից մեկը և քարոզիչ աստվածպաշտության, որն ավերեց անարգված այն տաճարներն ու կուռքի զոհարանները և հանուն աստծո սուրբ եկեղեցիներ կառուցեց, իր ողջ տիրության մեջ գրով ու հրամանով Քրիստոսի հանդեպ սուրբ խոստովանություն և ուղիղ հավատք տարածեց։ Նա այնպիսի ջանադրություն ցուցաբերեց, որ մինչև իսկ երեք հարյուր տասնութ հայրեր գումարեց Նիկիո սուրբ ժողովին, ուր արմատախիլ արին հայտ եկած որոմը և մաքրեցին ուղղափառության ճշմարիտ ցորյանը։

CXXVII Եվ այս երկուսն էլ՝ Կոստանդինն ու Տրդատը, պայծառ աստղ էին՝ Կոստանդինը արևմտյան կողմերում, իսկ Տրդատը՝ արևելյան։ Փայլատակում էին ու լուսավառում, քանի որ Տրդատը նույնպես ջերմ էր դեպի հավատը, իսկ պահքով ու աղոթքով՝ ոչնչով պակաս անապատում գտնվող գործող վանականներից։

Նիկիո այդ ժողովում տեսան միմյանց այս երկու թագավորները և իրար պատշաճ պատիվ ու պարգև ցուցաբերեցին և հանուն աստվածպաշտության իրենց մտաց միասնությունը հայտարարեցին։

CXXVIII Հայաստանի արքեպիսկոպոս Արիստակեն նույնպես Կոստանդին թագավորի կողմից հրավիրվեց և սուրբ հայրերի ժողովին համակից համարվեց ու ստացավ հավատքի այն թուղթը՝ հանուր կամոք և բոլորի խորհուրդով գրված ու հաստատված։ Իր իսկ քաղաքը վերադարձավ և մեծապես կարոտած հոտից ու իր հեռացման համար տխրածների կողմից խնդությամբ ընդունվեց։ Ուրախությամբ լցվեց ինքը՝ աստվածասեր թագավոր Տրդատն ու ողջ Հայաստանը՝ հավատքի միասնությամբ, որը երկար* ժամանակ այդպես էլ պահվեց և ամենայն բազմության բարեպաշտություն էր տալիս։ Ու բոլորի կողմից փառաբանվում էր աստված՝ տերն մեր Հիսուս Քրիստոսի տված խաղաղությամբ, որին Հոր հետ զարդարում է փառքն ու պատիվը, հաստատությունը՝ սուրբ հոգու հետ, այժմ և ընդմիշտ և հավիտյանս հավիտենից, ամեն։

* Բառացի՝ բազում։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐԸ

Որքան էլ բանասիրական քննության միջոցով հնարավոր դիտվի վաղ շրջանի պատմական երկերի սկզբնական բնագրի վերականգնումն ու հետագա ընդմիջարկություններից զատումը՝ այդ ճանապարհով կատարված սրբագրումների ներմուծումը բնագիր շատ դեպքերում վերապահելի է։ Բոլոր պարագաներում, եթե խոսքը ակնառու վրիպում-սխալանքներին չի վերաբերում, նախընտրելի է ունենալ որևէ ձեռագրական կռվան, իսկ այդպիսիք ուշ շրջանի ընդօրինակություններից քիչ են ակնկալելի։ Ուստի՝ միանգամայն հասկանալի է այն հետաքրքրությունն ու վստահությունը, որ բանասիրությունը տածում է երկաթագիր պատառիկների նկատմամբ։ Ն. Ակինյանի բնութագրությամբ «այսպիսի պատառիկներու շատ քիչ ուշադրութիւն դարձուցած է առհասարակ, բայց յաճախ ասոնց մէջ թաղնուած կլլան մեր ամենէն հնագոյն գրչագիրներու եւ կանխագոյն շրջանի ցայժմ այլուստ անծանօթ կամ աղաւաղութեամբ ծանօթ մատենագրական մնացորդներ։ **Այսպիսեաց նմանահանական հրատարակութիւնը շատ օգտակար է եւ մեծ լոյս կրնայ սփռել մատենագրական եւ հնագիտական պէսպէս խնդիրներու վրայ»**[1]։

1845 թ. հայագետ Արսեն Այտընյանը նկատել է Վիեննայի № 351 ձեռագրի առաջին մասի կրկնագիր լինելը և ձեռնարկել «քանի մը թղթերու ընթերցման»[2]։ Մի փոքր անց, կրկնագրի ուսումնասիրությամբ զբաղվել է Եփրեմ Ջագրճյանը, հրապարակելով նրա բնութագրությունն ու հնագրական գնահատությունը[3]։ Հետագայում ձեռագրի կրկնագիր (=մագաղաթյա) մասը առանձնացվեց (էջ 2—199) իբրև ինքնուրույն միավոր՝ 56 թվահամարի տակ[4]։ Իրավամբ կարելի է ասել, որ Ագաթանգեղոսի Պատմության այս կրկնագրի

[1] *Նիւթեր հայ վկայաբանութեան ուսումնասիրութեան համար, հրատարակեց հանգերձ քննութեամբ* Ներսէս Ակինեան, *Վիեննա, 1914, էջ ԼԲ (ընդգծումը մերն է. Պ. Մ.)։*

[2] Յ. Տաշեան, *Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, Վիեննա, 1898, էջ 106։*

[3] Ե. Զագրճեան, *Տեղեկութիւն հայերէն հին ձեռագիրներուն վրայ, «Եվրոպա», 1848, № 6, 8, 9 (էջ 24, 34, 38), հմմ.* Յ. Տաշեան, *նշվ. աշխ., էջ 108—112։*

[4] *Ձեռագրի երկու հատվածների հանգամանալից նկարագրությունը տե՛ս* Յ. Տաշեան, *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 261—266 և 803—804։*

վերծանությունն ու ուսումնասիրությունը իր նշանակությամբ աննախադեպ էր հայագիտության պատմության մեջ։ Դժբախտաբար, ամբողջական Պատմության գիտական հրատարակության ժամանակ նշյալ կրկնագրից միայն աննշան հատակտորներ էին հրապարակված[5], և կազմողները հարկադրված էին սահմանափակվել այդ եղածի մի մասով[6]։ Կրկնագրի ամբողջական վերծանությունն ու հրապարակումը պատկանում է Գ. Գալեմքյարյանին[7]։

Պատմական երկերից պահպանված մագաղաթյա հնագույն հատակտորների նշանակությունն առավել պարզ դարձավ 1893 թ., երբ պրոֆ. Ֆ. Քոնիբիրը վերծանեց ու հրապարակեց Լիոնի մատենադարանի № 15 ձեռագրի (ծիսական նյութերի ժողովածու) կազմի մեջ գտնվող (պահպանակ) պատառիկները[8]։ Եղիշեի Պատմությունից պահպանված այդ չորս էջերը, թեկուզ ոչ մանրակրկիտ ուսումնասիրության պարագայում, գիտնականին բերին այն եզրակացության, որ «Եղիշեի բնագիրը յառաջ շատ տարբեր էր անկէ՝ զոր այսօր տպագրութիւնք մեր առջև կը դնեն», «հատակտորքը կը ցուցնեն՝ բաց ի մանր տարբերութիւններէն՝ նաև զայն, որ հեղինակիս գործքը պարունակող ձեռագիրք չափազանց կերպով կերպարանափոխ եղած ու ընդմիջարկութիւններ առած են՝ հաւանականօրէն Ժ դարէն ետքը»[9]։ Ուշագրավ է Ֆ. Քոնիբիրի վկայակոչած օրինակներից մեկը. չորրորդ հատակտորի 10—13 կարճառոտ տողերում «պատմված կը գտնենք այն՝ որ արդի հրատարակութեանց մէջ մեկուկէս մեծադիր էջ կը լեցընէ։ Այստեղ ուրեմն մեր (նորագոյն ժամանակի) ձեռագիրք անհեթեթ մեծութեամբ ընդմիջարկութիւն մը կը ներկայացնեն»[10]։

1894 թ. նույն Գ. Գալեմքյարյանը փորձեց վերծանել Տաթևացու «Քարոզգրքի» 1—10 էջերի կրկնագիրը[11]։ Հնարավոր եղավ ճշտել միայն, որ այն բովանդակում է Մովսես Խորենացու Պատմության՝ գրերի գյուտին վերաբերող

[5] *Այդպիսիք տես Յ. Տաշյանի «Ցուցակ»-ում (էջ 263—265, նաև՝ տախտակ Գ),* Գ. Զարբհանալեան, *Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 231—233 (այստեղ բերված հատվածները քաղված են Ե. Զագրճյանի հիշյալ աշխատանքից)։*

[6] *Զագրճյանի հրապարակումը ձեռքի տակ չունենալով, կազմողները քաղել են միայն Զարբհանալյանից, նշանակելով* p *ցուցիչով (տես Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ ԺԲ)։*

[7] Գ. Գալեմքեարեան, *Ագաթանգեղոսի կրկնագիր բնագիրը, «Յուշարձան», Վիեննա, 1911, էջ 67—160։*

[8] Փր. Կ. Կոնիբիր, *Եղիշէի պատմութեան հատակտորք, «Հանդէս ամսօրեայ», 1893, 5, էջ 129—133։*

[9] Փր. Կ. Կոնիբիր, *նշվ. աշխ., էջ 133։*

[10] *Նույն տեղում։ Հետագայում Եղիշեի Պատմությունից նոր պատառիկներ վերծանեց ու հրատարակեց Հ. Ասատուրյանը («Բազմավէպ» 1906, էջ 7—9, 59—64, 110—114), իսկ մինչ այդ «Բազմավէպի» 1851 թ. համարներից մեկում (էջ 226—230) հրապարակվել էր հնագույն «Ճաշոցի» երկթերթանոց պատառիկ, որ Վարդանի և այլոց նահատակությանն է վերաբերում և կարծես տարբերվում է Եղիշեի հայտնի տեքստից։*

[11] *Ձեռագրի նկարագրությունը տես Հ. Տաշյանի «Ցուցակ»-ում (էջ 975—978), հմմտ. նույնի՝ Ակնարկ մը..., էջ 112—113։*

մասը[12]։ Որքան մեզ հայտնի է, Գ. Գալեմքյարյանի կարդացած չորս տողից դուրս որևէ տող այս հատակոտորից այլևս չի վերծանվել, որովհետև «կարելի չէ այս կրկնագիր մասերը պայծառ յերեւան հանել՝ առանց մագաղաթեայ թղթերը փճացնելու քիմիական խիստ միջոցներով. վասն զի կրկնագրին թանաքը մրէ ըլլալով՝ պարզ եւ անվնաս միջոցներով անհնար է քիմիապէս ազդել»[13]։

1913 թ. Բ. Կյուլեսերյանը հրատարակեց Անկյուրո Կարմիր վանքի № 29 ձեռագրում (1622 թ. գրված Սաղմոսարան) գտնվող մագաղաթյա երեք թերթ-պահպանակ (վեց երես, տասներկու սյունակ), որ նորից գրերի գյուտին են վերաբերում[14]։ Դժբախտաբար, հրապարակումը նմանահանության էջ չունի, ուստի հնագրական տվյալներով պատառիկ-պահպանակների գրչության ժամանակը չենք կարող որոշել։ Հրատարակիչը նշել է միայն, որ այն մեսրոպյան տառերով է (իմա երկաթագիր), 27,3×20,6 սմ մեծության (գրությունը՝ 22×15,5 սմ, յուրաքանչյուր սյունակ՝ 7 սմ)։ Բովանդակության բացառիկ արժեքը նրանում է, որ սկզբի մասը (r1—v1) համապատասխանում է Մ. Խորենացու Պատմության III գրքի 47-րդ գլխին, ուր պատմվում է գրերի գյուտին նախորդող շրջանի մասին, իսկ շարունակությունը մերձ է Կորյունի համառոտ խմբագրությանը («Սոփերք», ԺԱ, էջ 9)։ Փաստորեն, ինչպես հրատարակիչն է նկատում, գործ ունենք Խորենացու և Կորյունի հաղորդումներից կազմված մի հին երկի հետ, որի արժեքը չափազանց բարձր է Կորյունի հեղինակած աշխատության սկզբնագիր խմբագրության տեսքը ճշտելու առումով[15]։

Խորենացու Պատմության որոշ պատառիկներ հայտնաբերվեցին Մաշտոցի անվան Մատենադարանում. այդ կապակցությամբ նախնական մի հրապարակում կատարեց Հ. Մանվելյանը[16]։ 1940 թ. ակադ. Ստ. Մալխասյանցը գիտական շրջանառության մեջ դրեց Խորենացու Պատմությունից մեկ այլ պատառիկի ունեցած այլընթերցումները, ուր պատմվում է Վրաց դարձի մասին (II, 86)[17]։ Մեկ տասնամյակ անց՝ 1950 թ., Ա. Աբրահամյանը հրատարակեց երկու պատառիկ (Մատենադարանի ձեռ. № 9324 և պատառիկ № 1221), միաժամանակ համեմատելով առկա գիտական հրատարակության

12 Գ. Գալեմքեարեան, *նշվ. աշխ., էջ 68*։

13 Յ. Տաշեան, *«Ցուցակ», էջ 975, հմմտ. նույնի՝ Ակնարկ մը..., էջ 113*։

14 *Բաբգէն եպիսկոպոս, Անկիւրոյ Կարմիր-վանքի թիւ 29 ձեռագրին մագաղաթեայ պահպանակները, «Հանդէս ամսօրեայ», 1914, էջ 655—666։ Պահպանակների վերահրատարակությունը տե՛ս* Բաբգէն *աթոռակից կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Անկիւրոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 175—184*։

15 *«Հրատարակելով այս մագաղաթներու բովանդակութիւնը ... գոնէ սա իրողութիւնը անգամ մըն ալ կը հաստատուի, թէ այս սքանչելի գիւտին համար (խոսքը գրերի գյուտի մասին է—Պ. Մ.) մեր ձեռքը հասած աղբիւրները շատ թերի են, եւ անոնք աւելի վիպաբանական արժեք մը ունին, քան թէ զուտ պատմական»* (Բաբգէն եպիսկոպոս, *նշվ. աշխ., էջ 658*)։

16 *«Գրական թերթ», 1938, № 51*։

17 Ստ. Մալխասյանց, *Խորենացու շուրջը, Երևան, 1940, էջ 126—127։ Վկայակոչումները կատարված են ձեռ. № 1875-ի պահպանակից*։

հետ։ Հրատարակիչը փորձել է անդրադառնալ երկաթագրի ինքնատիպություններին և հնագրական առանձնահատկություններին[18]։ Խորենացու Պատմությունից պահպանված հատակոտորների շահեկան հրատարակությունը պատկանում է բանասեր Ս. Քոլանջյանին։ Երեք տարի ի մասնավորի զբաղվելով Մատենադարանի պատառիկների հավաքածույի նկարագրությամբ և ուսումնասիրությամբ, նրան հաջողվում է պարզել մինչ այդ անորոշ մնացած բազմաթիվ հատակոտորների ինքնությունը և, մանավանդ, ի մի հավաքել երբեմնի մեկ ամբողջական ձեռագրից այս ու այնտեղ պահպանված բեկորները։ Ճիշտ այդ ճանապարհով ու սկզբունքով նա ճշտում և հրատարակում է Խորենացու ինչպես նորահայտ, այնպես էլ նախկինում հրապարակված հատակոտորները[19]։ Բավական է նշել, որ պատառիկի ընթերցման շնորհիվ պարզվեց էական ու կնճռոտ մի հարց՝ Դանիելյան նշանագրերի փորձարկման ժամանակի վերաբերյալ. վերջնականապես ճշտվեց, որ Կորյունի մոտ եղած «ամս երկուս» տեղությունը (իսկ բանասերները փորձում էին «ամիսս երկուս» վերականգնում առաջարկել) հետագա աղավաղման արդյունք է, որտեղից և փոխանցվել է Խորենացու Պատմության բնագիր («զամս սակաւս»), մինչդեռ պատառիկում առկա է նախնական վիճակը՝ «տղայս զամանս սակաւս» *(էջ 181)*։

Ինչպես հայտնի է, Փարպեցու Պատմության գիտական հրատարակության հիմքում ընկած է 1672 թ. ընդօրինակված մեկ ձեռագիր, որը զերծ չէ աղավաղումներից ու ընդմիջարկություններից։ Նշված հրատարակությունը գրախոսելու առիթով բանասեր Բ. Սարգսյանը վերծանեց ու իբրև տարբերակ հրապարակեց Պատմության հնագույն երկաթագիր մի պատառիկ, եզրակացնելով, թե «այս ձեռագիրս ծանոթ եղածներէն շատ տարբեր և ինքնուրույն խումբ մը կը կազմէր»[20]։ Փարպեցու Պատմության «ինքնուրույն խումբ կազմող» ձեռագրերի գոյության փաստը հաստատվեց Կ. Յուզբաշյանի և տողերիս հեղինակի հրատարակած պատառիկով, որը ակներև դարձրեց աղավաղումների առատությունը այսօր գիտությանը հայտնի ամբողջական բնագրում[21]։

Պատմական բովանդակության երկերի հատակոտորների գնահատությունն ու բերած նորույթների հիշատակումը մեզ հեռուն կտաներ, ուստի

18 Ա. Աբրահամյան, *Խորենացու Պատմության մագաղաթյա հնագույն պատառիկները, «Էջմիածին», 1950, № 1—2, էջ 44—57*։

19 Ս. Քոլանջյան, *Մովսես Խորենացու նորահայտ երկաթագիր պատառիկն ու Դանիելյան նշանագրերի օգտագործման ժամանակի հարցը, «Բանբեր Մատենադարանի» № 4, 1958, էջ 163—182*։

20 Բ. Սարգսեան, *Երկու խօսք Փարպեցւոյ նոր տպագրութեան առթիւ, «Բազմավէպ», 1905, էջ 61—62*։

21 Պարույր Մուրադյան, Կարեն Յուզբաշյան, *Ղազար Փարպեցու Պատմության նորահայտ պատառիկը, «Բանբեր Մատենադարանի», № 11, 1973, էջ 7—32։ Պատառիկի անգլերեն թարգմանությունն ու այլ տեսանկյունով քննությունը տե՛ս* **C. J. F. Dowset**, The Newly Discovered Fragment of Lazar of P^{c}arp^{c}s Histori, „Le Muséon", t. 89, fasc. 1—2, Louvain, 1976, pp. 97—122.

ընդմանը, թե Նոր կտակարանից պահպանված պատառիկների ուսումնասիրությունը գիտական նշանակալի հետաքրքրություն չի ներկայացնում՝ վաղ շրջանի ամբողջական ձեռագրերի գոյության պատճառով, Ն. Մառը գտնում էր, որ Ավետարանի տեքստը ևս կարիք ունի ճշգրտման, գոնե ուղղագրական առումով, ուստի «не может быть отказано ни одному, хотя бы и обрывочному, тексту той древности, на которую могут притязать пергаментные отрывки лапидарным письмом»[27]. Ի հաստատումն այդ դրույթի, Ն. Մառը վերծանեց, քննեց ու հրատարակեց Վանի ձեռագրական հավաքածոներից փրկված մի XIII դ. գրչության երկաթագիր պատառիկ (այն Մառին էր նվիրել կողոպուտին ականատես եղած Ա. Ֆլորենսկին)։ Նույնիսկ այդ ոչ մեծ պատառիկում (Ղուկ. ԻԳ., 20—29) Ն. Մառը բացահայտեց մի շարք ուշագրավ լեզվական իրողություններ։

Պատառիկ-պահպանակների վերջին տարիներս կատարված հրատարակությունների մեջ առանձնակի արժեք են ներկայացնում «Կանոնագրքի» բեկորները։ Հայագետ Վ. Հակոբյանը Մատենադարանի հավաքածույից ճշտել ու վերծանել է 9 պատառիկ-պահպանակ, միաժամանակ տալով նրանց հանգամանալից նկարագրությունը[28]։ Իբրև հավելված հրատարակելու պարագան մասամբ խանգարել է նրանց բնագրագիտական արժեքի բացահայտմանը, մանավանդ երբ պատառիկները չեն ուղեկցվում կարևոր տարընթերցումների մատնանշումով։ Սակայն առանց այդ էլ գիտնականը խոշոր աշխատանք է կատարել՝ նրանց բովանդակությունն ու պատկանելությունը որոշելիս։ Առհասարակ պատառիկների ինքնությունը ճշտելն ու վերծանելը չափազանց դժվար գործ է[29]. տեսական պրպտումով միայն հնարավոր է լինում պարզել, թե տվյալ բեկորը ինչ երկից է, մանավանդ որ երբեմն վկայակոչումների պարագան կարող է գայթակղեցնել ուսումնասիրողին։ Օրինակ՝ Մատենադարանի № 4861 ձեռագրի պահպանակը Ե. Լալայանը ժամանակին որակել է իբրև Ավետարան[30], մինչդեռ իրականում այն մի հատակոտոր է Կյուրեղ Երուսաղեմացու հիշյալ ձեռագրից[31]։ Կան և առկա վիճակի հետ կապված դժվարություններ. իբրև պահպանակ գործածելիս հին ձեռագրերի թերթ-պատառիկները համապատասխան նոր ծալման ու կտրման են ենթարկվում, որի հետևանքով կրկին խաթարում են ապրում (այլևս չենք հիշեցնում նրանց քայքայված ու ներկաթափ վիճակը[32])։ Ճիշտ այդպիսին էին Անանիա Շիրակացու «Խրախճանականք»-ից, «Բազմապատկման աղյուսակ»-ից ու «Բաժանման գործողություն»-ից պահպանված հատակոտորները, որոնց հմուտ և շահեկան հրապարակումը պատկանում է հայագետ Ա. Մաթևոսյանին[33]։

[27] **Н. Марр**, Отрывок армянского пергаментного Евангелия лапидарным писмом „Х. В.", т. IV, вып. II (1915), стр. 195—197 (մեկ աղյուսակով)։ Մառի անձնական արխիվի ուսումնասիրությունից պարզվում է, որ ինքը ևս մտադիր է եղել պատառիկների հավաքական մի հրապարակում կատարել՝ իր սան Թ. Շահումյանի գործակցությամբ։ Սակայն այլ նախագծումների հետ այս մեկն էլ անկատար մնաց։

[28] «Կանոնագիրք հայոց», աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, հ. Ա, Երևան, 1964, էջ 650—668, հ. Բ, Երևան, 1971, էջ 397—409։

[29] Համեմատաբար դյուրին է աստվածաշնչական պատկանելություն ունեցողների ճշտումը՝ Համաբարբառի օժանդակությամբ։ Հին ու Նոր կտակարաններից երկու պատառիկ վերծանել-հրատարակել է Ք. Քուչուկ-Հովհաննիսյանը, մեկը 10—11-րդ դարի (Ղուկ. ԺԲ, 34—48), մյուսը՝ 12—13-րդ դարի (Ծննդոց, Բ, 5—25, Գ, 1. այս պատառիկը հետագայում վերահրատարակվեց Մեսրոպ եպիսկոպոսի վերևում հիշատակված ժողովածույում), տե՛ս **Хр. Ив. Кучук Иоаннесов**, Два фрагмента из древних армянских рукописей, „Древности Восточные", т. IV, М., 1913.

[30] Ե. Լալայան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, պրակ առաջին, 1915, Թիֆլիս, էջ 581—582։

Ստորև տալիս ենք Ագաթանգեղոսի Պատմությունից պահպանված հատակոտորների (պահպանակ-պատառիկ) նկարագրությունը։ Քանի որ նրանց վերծանության հաջորդականությունը ներկայացրել ենք ըստ Պատմության բնագրի հաջորդականության, անհրաժեշտ նկատեցինք նույն սկզբունքին հետևել նաև նկարագրության ժամանակ, իսկ հնագրական վերլուծություն կատարելիս, բնականաբար, այդ պայմանականությունը վերանում է։

I Ձեռ. № 1287։ Բովանդակում է Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Մատթէի» աշխատությունը, ընդօրինակված «ընդ հովանեաւ բարձրահաւաց սբ Աստվածածնի Արղնոյ», 1720 թ., Պաղտասար աբեղայի ձեռքով։ Սկզբի և վերջի պահպանակները քաղված են երբեմնի մեծադիր թղթյա ձեռագրից։ Պահպանակների գրչությունը խոշոր բոլորգիր է, երբեմն անցման շրջանի երկաթագրի խառնումով, յուրաքանչյուր թերթը 21,8×16 սմ չափի։

Սկզբի և վերջի պահպանակները մայր ձեռագրի մեկ թերթ են ներկայացրել, իսկ ապա, օժանդակ գործածության համար միջին հորիզոնական գծով կտրվելով՝ վերածվել երկու մասի։ Վերին կեսը այժմ ներկայանում է իբրև սկզբի պահպանակ, ստորին կեսը՝ վերջի։ Ուրեմն՝ հատակոտորի մայր ձեռագիրն ունեցել է 43,6×32 սմ չափ, երկսյուն գրչությամբ։

Պահպանակի վերածելիս ծալումը կատարվել է սյունամիջյան լուսանցով, մասամբ վնասելով առաջին թերթի r—v էջ—սյունակները, մի դեպքում տողասկզբում (v), մյուս դեպքում՝ տողավերջում (r)։ Ստորին լուսանցը պահպանված է գրեթե ամբողջությամբ։ Միջին ծալման հետևանքով մայր ձեռագրի recto-ն այժմ համապատասխանում է 2v—1r-ին, իսկ միջին բացվածքը բնականոն վիճակում է։ Դժվար է կռահել՝ ինչ բովանդակություն է ունեցել մեզ չհասած այդ ձեռագիրը՝ ընդգրկել է ողջ Ագաթանգեղո՞սը, թե՞ ճառընտիր-ժողովածու է եղել՝ դրվագներ ամփոփելով մեզ հետաքրքրող եր-

[31] Ս. Քոլանջյան, նշվ. աշխ., էջ 216—217։

[32] Այդ իսկ պատճառով էլ պատառիկների նկարագրությունը մեծ հմտություն պահանջող գործ է. առ այսօր եղած փորձերի մեջ, անկասկած, լավագույնը Հ. Տաշյանի նկարագրությունն է (տե՛ս «Ցուցակ», էջ 927—930, 1041—1043), ուր միաժամանակ, անհրաժեշտության դեպքում, տրվում է և վերծանությունը, մատնացուցելով էական տարբերությունները, խմբագրության բնույթը։ Այդպես է ներկայացված, օրինակ՝ Թադեոսի և Սանդխտոյ վկայաբանության հատաբեկորը, որը և Ն. Ակինյանին պրպտումների առիթ է տվել (տե՛ս նրա «Մատենագրական հետազոտություններ» («Հանդէս ամսօրեայ», 1969, № 10—12, էջ 403 և շար.)։

[33] Տե՛ս Ա. Ս. Մաթևոսյան, Նորահայտ պատառիկներ Անանիա Շիրակացու թվաբանության դասագրքից («Լրաբեր հաս. գիտ.», 1974, № 6, էջ 65—76)։

կից։ Կարելի է վստահությամբ ասել, թե պահպանակները XII դ. գրչություն են, նկատի ունենալով, որ XII դ. 70-ական թվականներին գրված Ոսկեբերանի վարքի գրչությունը ևս ունի հնավանդ տառաձևեր[34] *և շատ ավելի վաղ գրություն է, քան, ասենք 1277 թ. բոլորգրի նմուշը, որ Հ. Տաշյանը կոչում է «բուն անցման բոլորգիր, կամ հնագույն բոլորգիր՝ խառն միջին-մեսրոպյան ձևերով»*[35]*։*

Պահպանակն ունի մի քանի հետաքրքիր տառաձևեր։ Ու-ը ամենուր գրված է Ւ։ Շարվածքի մեջ՝ ի շահ միօրինակության, ու ենք գրել։

Համապատասխանում է գիտական հրատարակության 57_{6}—60_{13} *էջերին։*

II ՎՍՍՀ ԳԱ ակադ. Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի հայկական հավաքածո Arm. № 18 (հին № 164)[36]: *Ավետարան, գրված 1307 թ., Մկրտիչ գրչի ձեռքով, Քաջբերունյաց Շինամեջ գյուղում։ Բավական ծավալուն գրչագիր է՝ 299 թերթ, 32×31,3 սմ մեծության, գրչությունը՝ խոշոր բոլորգիր։ Իբրև վերջի պահպանակ է ծառայում Ագաթանգեղոսի Պատմության ուղղագիծ երկաթագիր մագաղաթյա մեկ թերթ, երկսյուն գրչությամբ։ Պատառիկի* r *էջի ձախակողմյան լուսանցի վերին մասը քայքայված է,* r_2*-ի միջին մասում երեք տողի հասնող բացվածք է գոյացել։ Բնականաբար, նշված վիճակը վերաբերում է և* v*-ին։ Ըստ հնագրական տվյալների, պատառիկը X—XI դդ. է և համապատասխանում է գիտական հրատարակության* 88_{8}—90_{4} *էջերին։*

III Պատառիկ № 1195: *Միջին հաստության մագաղաթ է, ընդամենը մեկ թերթ։ Ժամանակին գործածվել է իբրև պահպանակ, այդ պատճառով էլ* r_1 *էջում (=*v_2*), ծալման հետևանքով, ուղղահայաց գծով առավել խունացել է և երեք տեղ ծակվել՝ կարելու համար։ Բարեբախտաբար, պատառիկս իբրև պահպանակ ունեցող ձեռագիրը շատ փոքրադիր չի եղել, ուստի կտրման են ենթարկվել միայն լուսանցները։ Պատառիկի ձախ (*r_1*) եզրամասը ժամանակին սոսնձվել է՝ կպցնելու համար. այդ մասը այժմ առավել դեղնավուն է, բայց բավականաչափ վերծանելի։ Պատառիկի չափը մեծ չէ՝ 22,8×20 սմ. եթե կտրված լուսանցը համարենք 5 սմ, ապա բուն ձեռագիրը պիտի լիներ 27,8×25 սմ։ Գրությունը երկսյուն է, մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով, սյունակը 20 տող։ Տողավերջերին սպասելի հավասարություն չկա. գրիչը բավականաչափ ազատ է վարվել, ինչպես երևում է՝ չհոգալով տեղի խնայումը։ Կան տողեր, որ ունեն 18 նիշ, և կան՝ 13։ Սակայն ակներև է բառերի ամբողջականացման գրչի ձգտումը, ուստի երբեմն, ընդհանուր համաչափությունը չխախտելու համար, որոշ նիշեր տեղավորված են տողամիջին, իսկ այլուր ազատ է թողած երկու-երեք նիշի տեղ։ Արհեստական խտացում կամ*

34 Նմանահանությունն տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, 82, հմմտ. Հ. Տաշյան, Ակնարկ մը..., էջ 79։

35 Տե՛ս նրա՝ «Ցուցակ», էջ 1045, նմանահանությունն՝ տախտակ՝ Բ₃։

36 Ձեռագրի նկարագրությունը և Ագաթանգեղոսի Պատմությունից քաղված պահպանակպատառիկի լուսապատճենը մեզ տրամադրեց բանասեր Ս. Լալաֆարյանը, որին մեր շնորհակալությունն ենք հայտնում։

նոսրացում չկա, եթե չհաշվենք տողահավասարի նպատակով որոշ վերջանիշերի հեռացումը։ Պատառիկի ստորին աջ և ձախ անկյունները պատռված են, ընդ որում՝ ձախինը անվնաս ու քիչ։ Նախապես մագաղաթը տողատվել է սուր ճնշումով, միաժամանակ գործածվելով և verso*-ի գրության ժամանակ։ Կարծում ենք, որ սխալված չենք լինի, եթե պատառիկը համարենք IX—X դդ. գրչություն, որովհետև դրա համար կան հնագրական որոշակի տվյալներ։*

Համապատասխանում է գիտական հրատարակության 110_{4}—112_{5} *էջերին։*

IV Պատառիկ № 1235: *Միջինից ավելի հաստ մագաղաթյա թերթի բեկոր է, գրված բոլորգծի տարրեր ունեցող ուղղագիծ երկաթագրով, մասնավոր թեքությամբ, Պահպանվել է* r_1 *(=*v_2*) սյունակը, 13 տող ընդգրկումով, եթե չհաշվենք 14-րդ տողի մեկ-երկու բառի վերնամասի առկայությունը։* Recto*-ն հիմնովին դեղնավուն է, իսկ* verso*-ն ժամանակի ընթացքում ներկաթափվել է, տեղ-տեղ սպիտակավուն դարձել։ Պատռված է վերին եզրի ձախընթեր մասը։ Երկու տեղ ուշ շրջանի տողամիջյան գրչափորձ կա (*r*)։ Պատառիկը 13×9 սմ չափի է։ Վարդապետությանը վերաբերող խորագիրը թեև նույն գրչությամբ է, բայց մանրագիր, բուն տեքստի հետ համեմատած ²/₃ հարաբերությամբ։ Ենթադրելի է, որ պատառիկը X—XI դդ. է, իսկ մայր ձեռագիրը ամբողջական Պատմությունն է ընդգրկել, որովհետև ճառընտիրային քաղումի դեպքում երկու անկախ հատվածների առկայությունը հավանական չէ։*

Համապատասխանում է գիտական հրատարակության 131_{17}—132_{3} *և* 133_{11}—134_{5} *էջերին։*

V Պատառիկ № 182: *Մեկ թերթանոց մեծադիր պատառիկ է, գրված XI—XII դդ. ուղղագիծ երկաթագրով, երկսյուն, 33×25 սմ չափի։ Մագաղաթը սովորականից ավելի բարակ է և ոչ կոշտացած։ Թերթի վերին մասի տողերից պակասում է, իսկ ձախ և ստորին լուսանցները գրեթե պահպանվել են, ընդ որում՝* r_2 *և* v_1 *սյունակները երկայնքով կիսված են ու բավականաչափ խաթարված։ Երևում է, որ ժամանակին թերթն իբրև պահպանակ է գործածվել։ Ագաթանգեղոսից քաղված հատվածը գտնվում է* v_2 *էջում։ Դժբախտաբար պահպանված մասը գոնե մեկ լրիվ սյունակ չի ներկայացնում. շարունակությունը գտնվել է հաջորդ էջում, որ չի պահպանվել։ Հատվածի խորագիրն է. «Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի Վարդապետութիւն», որ համապատասխանում է գիտական հրատարակության էջ* 156_{2-15}*-ին։ Գրչությանը հանդիսավորություն տալու մտադրությամբ գրիչը* r_1 *և* v_2 *սյունակները ավարտում է ներքև թեքվող եյուսների դեպի աջ սրտակարգ երկարությամբ, որոնք աջից-ձախ թեքված տառերի սռնղների հետ ուղիղ անկյուն են կազմում (գրչության այդ ձևը հաճախադեպ է վրացական նուսխուրի ձեռագրերում)*[36]*։*

36 *Սկզբում հակված էինք կարծելու, թե խորագիր բովանդակող էջը* recto *պետք է լինի, բայց հաջորդ էջի բնագրի ուսումնասիրությունը պարզեց, որ այն սպասելի շարունակությունը չէ, թեև կան Ագաթանգեղոսի Պատմության առանձին արտահայտությունների համապատասխանություններ (օրինակ. «...ոյ յառաջագոյն է, քան զամենայն արարածս, որ երեւին եւ որ*

VI Պատառիկ № 487: *Միջին հաստության դեղնավուն մագաղաթ է, երկու թերթ: Խոնավության հետևանքով պատառիկը ունի մի շարք կծկումներ, որոնք երբեմն լրացուցիչ դժվարություն են հարուցում որոշ տողեր վերծանելիս: Գրված է X—XII դարերի ուղղագիծ երկաթագրով, երկսյուն: Առաջին թերթից պահպանվել է* r_1 *սյունակը, աջակողմյան կեսից պակաս չափով, և* r_2*-ը՝ ամբողջությամբ:* Verso-*ում ընդհակառակը՝ լրիվ է* v_1*-ը, իսկ երկրորդ սյունակը (*v_2*)* r_1*-ի վիճակում է: Ներկա վիճակում առաջին թերթը 26,3×19 սմ չափի է, 25 տող ընդգրկումով: Պահպանվել է r-ի աջ լուսանցը: Երկրորդ թերթը համեմատաբար ամուր վիճակում է, բայց* r_1 *սյունակից սոսկ առանձին վերջնատառեր են մնացել, այն էլ խիստ եղծյալ՝ ծալքերի ու կորառկների պատճառով: Ստորին և աջակողմյան լուսանցները պահպանվել են ամբողջությամբ, ուստի կարելի է վերականգնել մայր ձեռագրի սկզբնական մոտավոր չափը. 26,3+8+[6]×19—5,5+4=40,3×28,5* սմ: *Թերթերից առաջինը համեմատաբար մաքուր վիճակում է, միայն տեղ-տեղ կան գրչափորձեր ու պարապ բառագրություններ, իսկ երկրորդ թերթի լուսանցները գրեթե ամբողջապես ծածկված են վայրիվերո գրչափորձերով, մեծ ու փոքր չափի խրզբզանքներով: 2*r_2 *լուսանցում մասամբ եղծված հիշատակագրություն կա. «Ես՝ Ամիր[ս] գնեցի [սբ աւետար]անս հ[ա]յր /// մայր իմ [Խօր]շանն եւ Ամիր զ //// պակ. և իսն (?) ...»: Թերևս XVII—XVIII դդ. ոչ վաղ գրչություն է, սակայն նշանակալի մեկ տեղեկությամբ. եթե ճիշտ ենք վերականգնել «[աւետար]անս», ուրեմն ներկա պատառիկները ժամանակին իբրև պահպանակ են գործածվել, այլապես Ագաթանգեղոսի ամբողջական Պատմությունը կամ նրանից հատված ներառող ճառընտիրը հիշատակագրողը ավետարան (?) չէր կոչի: Տարօրինակ է, սակայն, մեկ ուրիշ իրողություն. Ագաթանգեղոսի գիտական հրատարակության հետ բաղդատելիս պարզվեց, որ 2*v_1 *էջի սկզբնատողի և 1*v_1*-ի վերջի արանքում ընդամենը երկու տող է պակասում, որ անկասկած 2*v_1 *սկզբում պետք է լիներ: Ստացվում է, որ նույն ձեռագրի էջերից մեկը կարող էր 25—26 տող ունենալ, իսկ մյուսը՝ 19—20: Այդ պարագան կարելի էր վերագրել տեքստի ավարտին, բայց իրականում այն չի ավարտվում, և նման տողաքանակ ունի նաև 2r-ը: Կարծում ենք, որ գաղտնիքը հաջորդականության մեջ է. բնականոն 1*r_1*—*r_2*+1*v_1*+2*r_2*—*v_1 *հաջորդականությունը գիտական հրատարակության հետ համեմատելիս խախտվում է և այսպիսի տեսք ընդունում. 1*r_1*—*r_2*+2*r_2*+1*v_1*+2*v_1*+1*v_2*: Բացառված է կարծել, թե զույգ պատառիկի թերթերը նույն մայր օրինակին չեն պատկանում: Իրականում նրանք բստ ամենայնի նույնական են, ուստի մնում է եզրակացնել, որ գործ ունենք էական հաջորդականության հետ: Բայց քանի որ դա չի խանգարում բնագրի հաջորդական հրատարակությանը՝ որոշեցինք զանց առնել: Ներկա վիճակում անկարելի եղավ պարզել մեկ հարց. երկրորդ*

ոչն երևի»): Բայց դրանք կանոնական բնագրերից եկող ընդհանուր տեղիներ են: Ընդ որում՝ պատառիկի մեր վկայակոչած արտահայտության շարունակությունը կարելի է անգամ աղավաղել:

թերթի սկզբնամասից (r—v) իրականում քանի՞ տող է պակասում, արդյո՞ք տեքստային նույնքան տարբերություն պետք է այն բովանդակեր:

Պատառիկը համապատասխանում է գիտական հրատարակության 159_{7-17}*,* 162_2*—*163_{11}*,* 163_{13}*—*166_4 *էջերին:*

VII Ձեռ. № 2326: *Գրչության ավյալների համաձայն XIV դ. բոլորգիր ձեռագիր է, գրչի անունն անհայտ է, թեև նրա սակավախոս հիշատակարանը գտնվում է 240r էջում: Ստացողն է բաբերդցի Մինաս վարդապետը (էջ 87r, 422v): Ստացողի հիշատակագրությունը գրված է արտակարգ խնամքով գրչությամբ, բայց ժամանակակից բուն գրչությանը, քանի որ այլ ձեռքով նույն հիշատակագրությունը կրկնված է էջ 422v-ում, թվականի նմուշով՝ ՌՂ (1641): Բովանդակությամբ ժողովածու է կամ, ինչպես ստացողն է բնութագրում, «Փիլիսոփայական մատեան», ուր ի մի են հավաքված մի շարք երկեր (տես «Ցուցակ ձեռագրաց», Ա, էջ 775): Սկզբում և վերջում ձեռագիրն ունի մագաղաթյա պահպանակներ, յուրաքանչյուրը երկու թերթ, որոնք կարված են ձեռագրի գրչության հակառակ ուղղությամբ, այդ պատճառով էլ պատառիկների մեր էջակալումը չի համապատասխանելու հիմնական ձեռագրին: Մայր ձեռագիրը բովանդակությամբ «Ճառընտիր» է եղել. վերջի պահպանակի միջին բացվածքի երկրորդ սյունակում (2r) Ագաթանգեղոսի հատվածին հաջորդում է նոր բնագիր՝ «Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպաւղսի եպիսկոպոսի յաւետարանին Մեկնութենէ» խորագրով: Ընդ որում՝ խորագրից առաջ գրված է հատվածի թվահամարը՝ ԽԳ: Կարելի է նույնիսկ ավելին ասել. սկզբի պահպանակի* r_1 *էջում, վերին լուսանցի վրա, սյունամիջյան լուսանցի շարունակության ուղղությամբ՝ կրկնակի շրջանագծի մեջ (արտաքինը կանաչավուն, իսկ ներքինը՝ գրչության գույնի մուգ շագանակագույն) տեղադրված է Ժ թվանշանը, թիվ արտահայտող երկուստեք հորիզոնական գծիկներով, ինչպես ԽԳ-ի ժամանակ, որն անկասկած պրակի համարն է: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Ճառընտրում բավական մեծ քանակության նյութեր են ընդգրկվել: Ըստ ամենայնի մայր ձեռագիրը մեծադիր է եղել. սկզբի պահպանակի միջին բացվածքը 26 սմ է, յուրաքանչյուր սյունակի լայնությունը՝ 11 սմ, միջին լուսանցի լայնությունը՝ 3,4 սմ, իսկ վերին լուսանցը՝ 5,8 սմ: Թերթերի այժմյան երկարությունը 18 սմ է: Դատելով նկարագրական տվյալներից՝ պահպանված թերթերը մայր թերթի կեսի չափով են ներկայացված: Ուրեմն, մայր ձեռագիրը կարող էր 36×30 սմ չափ ունենալ, եթե ոչ ավելի: Պատառիկների գրչությունը ուղղագիծ երկաթագիր է, X—XI դդ. ոչ վաղ գրչությամբ, ընդ որում՝ գործածված են բոլորգրի որոշ տարրեր, մանավանդ գլխատառերի մեջ: Պատառիկների վիճակը բավականաչափ լավ է, եթե չհաշվենք ցեցկեր ծակծակումներն ու կազմի ներքին կողմի նախշազարդ կտավի հետ ունեցած միացումների խանգարումները:*

Տեքստը համապատասխանում է գիտական հրատարակության 200_{14}*—*201_2*,* 206_{1-6}*,* 206_{7-17}*,* 207_{4-9}*,* 207_{10}*—*209_2*,* 209_5*—*211_7*,* 220_{1-6} *էջերին: Քանի որ սկզբի և վերջի պահպանակների արտաքին և միջին բացվածքները հիմնականում կազմում են միմյանց շարունակություն (սկ. 1v+ վերջ 1r, սկ.*

1v+ վերջ 1v և այլն), հնարավոր է դառնում եզրակացնել, թե նույն մայր թերթը մեջտեղից երկու կես է արված և վերածած երկու պահպանակի։ Այս դեպքում, սակայն, սկ. 2r-ը պետք է վերջի 2r-ի սկզբնամասը կազմեր, բայց արդյոք հնարավո՞ր է այդքան մեծ կրճատում՝ 211_7—220_1, կամ՝ սկ. 2v-ն պետք է վերջի 2v-ի սկզբնամաս լիներ, բայց իրականում նրանք տարբեր հեղինակների գործեր են (մեկը Ագաթանգեղոս, մյուսը՝ Ոսկեբերան)։

VIII Ձեռ. № 820: Բովանդակում է Գրիգոր Տաթևացու «Հարցմանց գիրքը», ընդօրինակված, ինչպես «Ցուցակ ձեռագրաց»-ի կազմողներն են ենթադրում, XV դ., բավականաչափ մանր ու խտաշար բոլորգրով, Հովհաննես գրչի կողմից։ Վերջին թերթը կտրված լինելու պատճառով հիմնական հիշատակարանը չի պահպանվել։ Սկզբում և վերջում ունի երեք թերթ պահպանակ, նույն մայր ձեռագրից պոկված։ Ձեռագիրը մեծ չափի չէ (18,5×14 սմ), ուստի երկսյուն գրչություն ունեցող մագաղաթյա պահպանակը մեծապես տուժել է՝ համապատասխանեցվելով ձեռագրի չափին։ Սկզբի պահպանակը մեկ թերթ է, ճիշտը՝ մայր ձեռագրի թերթի ստորին կեսն է։ Բացառված չէ կարծել, որ պահպանակի վերածելիս թերթը ամբողջական է եղել, իսկ հետագայում երկրորդ կեսը կտրվել-ընկել է։ R_1 և V_2 սյունակները կտրված են 3 սմ խորությամբ, իսկ ամբողջական սյունակի չափը 8,5 սմ է։ Մասամբ պահպանվել են թերթի ստորին և աջակողմյան լուսանցները։ Մագաղաթն ունի կծկումներ, իսկ կազմընթեր տողերը ամբողջապես աղարտվել են։ R_1 սյունակի վերին մասը խիստ ներկաթափ է ու սոսնձակուր, մինչդեռ V էջը համեմատաբար անվթար է մնացել։ Վերջի պահպանակը երկթերթ է, միջին մասի ծալումով։ Թերթի ամբողջական բացվածքի տողերի քանակը 28 է եղել, որից 27-ը պահպանվել է։ Վերին լուսանցի հետ կտրված է նաև մեկ տող։ Վերջի պահպանակի սյունակներից մեկը ևս, ինչպես և սպասելի էր, կտրված է 3 սմ խորությամբ (արտաքին բացվածքի r_1 և միջին բացվածքի V_2)։ Եթե թերթին ավելացնենք կտրված տողը և ենթադրելի լուսանցները, ապա նախապես այն կունենար 27+1+4+3×18+3+4+3=35×28 սմ չափ, որ միանգամայն սովորական է երկաթագիր ձեռագրերի համար։ Արտաքին բացվածքի երկկես էջերը խիստ ներկաթափ են, իսկ որոշ մասում՝ խոնավության թե մոմի ազդեցության տակ մուգացած։ Կազմընթեր էջամասը սոսնձվելու հետևանքով երեք տողի սահմանում խիստ աղարտված է։ Պատառիկների գրչությունը բոլորագիծ երկաթագիր է, ոչ շատ ուղղաչափ, այժմ կարմրավուն դարձած։ Դատելով արտաքին տվյալներից՝ XII դդ. ոչ վաղ գրված թերթեր են, պոկված, ինչպես ասացինք, նույն մայր ձեռագրից։ Առաջի պահպանակը համապատասխանում է գիտական հրատարակության 412_{13-16}, 413_{6-9}, 413_{14}–414 և $414^7{}_{-11}$, իսկ վերջինը՝ 385_1—386_{18} էջերին։ Որևէ հիմք չկա կասկածելու, որ մայր ձեռագիրը Ագաթանգեղոսի Պատմությունն է ընդգրկել։

IX Ձեռ. № 1569: Գրված է Հայոց ՊՁ (1431) թվականին, «ի գեաւղաքաղաքս, որ Անկեղակոյտ յորջորջի» (էջ 282), Մաթեոս Երիցի ձեռքով, ստացողն է Հովհաննես Վարագեցին (էջ 102r)։ Բովանդակում է Գրիգոր Նարեկացու «Աղօթից գիրք»-ը (=«Մատեան ողբերգութեան»)։ Սկզբի և վերջի

պահպանակները միջին հաստության ողորկ մագաղաթ են, պոկված միևնույն ձեռագրից։ Պահպանակները, բուն ձեռագրի գրչության համեմատությամբ, կարված են հակառակ (գլուխն ի վայր) ուղղությամբ, ներկայացնելով երկու թերթի վերին կեսը։ Թերթի ծալումը կատարված ոչ միջին լուսանցով, ուստի երկսյուն գրչության երկրորդ սյունակը (r) տողասկզբում մաշվել ու ներկաթափ է եղել, իսկ verso-ի առաջին սյան տողավերջերը մասամբ մնացել են կազմի հետ կարված մասում, մասամբ էլ անցել հաջորդ երես։ Այժմյան թերթերի չափն է 15,7×10,5 սմ, իսկ յուրաքանչյուր սյունակի լայնությունը՝ 8,5 սմ: Մայր ձեռագիրը ամբողջական է եղել տակավին 1501 թ., որովհետև սկզբի պահպանակի միջին բացվածքում ունենք այսպիսի հիշատակագրություն. «Ես Շահամիրս առի զՃառընդ[իրս] ի հալալ ինչից (resp. ինչից) ումոց (resp. իմոց), յիշատակ [ինձ] և իմ ծնաւղացըն և ամենայն ազգակ[ան]աց իմոց, և ընդանեաց իմոց [...], ի թվին ՋՂ, նաւասարդ [...], ի դռանն սուրբ Ձուեփանոսին»։ Այստեղից հետևում է, որ ժողովածուն «Ճառընտիր» է եղել, ներառելով Ագաթանգեղոսից մի հատված։ Պահպանակներից միայն վերջինն է Ագաթանգեղոսին պատկանում է, իսկ սկզբում կարվածը այլ բնագիր է (ունենք երկու խորագիր. «[Ի] երկրորդ թղթոյն որ առ Տիմոթեոս»[37] և «Աղեղու ձև»), ուստի սկզբի պահպանակի նկարագրությունը մեր նպատակից դուրս է։ Ագաթանգեղոսից քաղվածը համապատասխանում է գիտական հրատարակության 449_{13}—450_4, 450_9—451_5, 452_{2-8}, 452_{11}—453_5 էջերին։ Գրված է մեսրոպյան բոլորգիծ երկաթագրով, տառերի շեշտակի ուղիղ կեցվածքով ու համաչափությամբ։ Թերևս մեր ուսումնասիրած պահպանակ-պատառիկներից առավել հստակն ու պարզն է։ Թե մայր ձեռագրում թերթն ինչ մեծություն է ունեցել՝ դժվար է ասել, բայց դատելով միջին բացվածքի լայնությունից ու պահպանված երկու լուսանցների տարածքից, կարելի է ասել, որ այն շուրջը 25 սմ լայնություն է ունեցել, իսկ նման պարագայում թերթի երկարությունը կարող էր 40 սմ-ից անցնել։ Ճառընտիր լինելու պարագան էլ արդեն այդ է թելադրում։

ՏԵՔՍՏԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Հրատարակվող-համեմատվող պատառիկը, անկախ նրա վկայած ընթերցման նախընտրելի կամ ոչ նախընտրելի լինելուց, ներկայացվում է առանց որևէ միջամտության։
2. Համեմատության մեջ դրված Վիեննայի նշանավոր կրկնագիրը ներկայացված է W ցուցիչով։
3. Ագաթանգեղոսի Պատմության վերջին գիտական հրատարակությունը (Տփղիս, 1909) նշանակված է C-ով։
4. Նշված գիտական հրատարակության տողատակի ընթերցումները համեմատության ենք առնում բացառապես փակագծերում, ընդ որում՝ ցույց տալու համար մեր ներկայացրած պատառիկին հատուկ ընթերցումների առկայությունը ուշ շրջանի ձեռագրերում։

[37] 2v էջում եղածը համապատասխանում է տպագրի՝ Ա

5. W-ի հրատարակիչը, ինչպես հայտնի է, կրկնագրի չվերծանված որոշ տողեր ու բառեր վերցրել է C-ից և ներկայացրել այլ շարվածք-դրչությամբ։ Բոլոր այն դեպքերում, երբ կրկնագիրը (W) համեմատելիս գործ ենք ունենում քննականից (C) եկող բառերի կամ արտահայտությունների հետ, իրավիճակը հարազատորեն արտացոլելու համար՝ նշանակում ենք C^{W}, որ նշանակում է, թե W-ի նույնական ընթերցումը գալիս է C-ից։
6. Երբ համեմատվող բնագրում այս կամ այն բառը բացակայում է՝ գործածում ենք ուղղանկյուն մեկ փակագիծ, ձախից գրելով բացակայող միավորը ....]։
7. Փակագծերում տրվող C-ի տարընթերցումներում 6-րդ կետում նշված դեպքում էլ հղման կարգը չի փոխվում։
8. Բառական ետևառաջությունները արտացոլում ենք ~-ով, հղման ցուցումը դնելով կապակցության վերջին բառի վրա։
9. Ավելորդ կրկնությունից խուսափելու համար հավելում-տարընթերցումը արտացոլում ենք գումարման նշանով՝ +, հղում կատարելով այն բառից, որից հետո գալիս է հավելվողը։
10. Երբ C-ի ունեցած տողատակի ընթերցման մեջ բացակայում է այն բառը, որ մեր պատառիկի համեմատությունը հավելում է, շարունակում ենք փակագծերում արտացոլել այդ իրողությունը, միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում ևս ցուցիչները նախորդում են, իսկ փակագիծը դառնում է կրկնակի՝])։
11. Հրատարակվող տեքստի այս կամ այն բառի կասկածելի վերծանության մասին խոսվում է տողատակում, նման ծանոթությունն առնելով մեծ փակագծի մեջ—{}։
12. Փակագծային ընթերցումների ժամանակ նկատի են առնված մեկ անմիջականորեն հետաքրքրող նույնությունները, իսկ նույն բառի մյուս տարբերությունները տվյալ դեպքում նկատառելի չեն։
13. Երբ C և W-ն տալիս են նույն ընթերցումը, այլևս W-ի ու ունենալը հարկ չենք համարում առանձնացնել, որովհետև C-ի օ-ի դիմաց W-ն միշտ էլ ու պիտի ունենա։
14. Փակագծով տրվող տարընթերցումներում անհրաժեշտության դեպքում պահպանում ենք C-ի հրատարակիչների՝ անկյունավոր փակագծով տրվող տարբերակը։
15. Պատառիկների չպահպանված բառերն ու տողասկիզբ-տողավերջերը անկյունավոր փակագծերով լրացնում ենք C-ից քաղելով։
16. Եթե վերծանվող պատառիկի C-ով լրացված տողը չի լրացնում տողի ամբողջականությունը, փակագծերի ներսում կետերով ցույց ենք տալիս ենթադրելի լրացուցիչ բառի գոյություն պատառիկի չպահպանված մասում։
17. C-ի ունեցած ծավալուն հավելումները W-ի հետ հարաբերելիս իբրև W-ի սկզբնավորման նշան ուղղահայաց երկու գիծ ենք գործածում //, իսկ է նշան W-ի ընդհատման-ավարտի՝ մեկ գիծ /

Ձեռ. № 1287

Աղ. 1—2

$57_6—58_5$

Սկզբի պահպանակ

1v [. . . . . ԲԱՐԵՐ-]
ԱՐՈՒԹԵԱՆ[1] ՇՆՈՐՀԻ ՔՈ[2], ՈՐ
ԱՌ ԱՄԷՆԷՍԻՆ[3] Է։
ԱՅԼ ՈՐ ԱՌԱՏԱՆԱՍԴ
ԱՄԷՆԷՑՈՒՆ[4] ՏՈՒՐ ՄԵԶ,
ԶԻ ԼԻՑՈՒՔ ՎԿԱՅՔ ԱԾՈՒ-
ԹԵԱՆ[5] ՔՈՒՄ[6]. ԶԱՐԶԱՐԵԼ
ՎԱՍՆ ԱՆՈՒԱՆ ՔՈ[7], ԵՒ ՄԵ-
ՌԱՆԵԼ ՎԱՍՆ ՃՇՄԱՐՏ-
ՈՒԹԵԱՆ ՔՈ[7], ԵՒ ՆՈՐՈԳԵԼ Ի ՄԻ-
ԻՍ ԱՆԳԱՄ[8] ԳԱԼՍՏԵԱՆ
ԱԾՈՒԹԵԱՆ[9] ՔՈ[7], ԶԻ ԴՈՒ ԷԿԻՐ[10]
ԵՒ ՄԵՌԱՐ Ի ՎԵՐԱՅ ԱՐ-
ԱՐԱԾՈՑ ՔՈՑ ԵՒ ԽԱՌ-
ՆԷՑԵՐ[11] ԶՄԱՀԿԱՆՈՒԹԻՒ-
ՆՍ[12] ՄԵՐ ՅԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ ՔՈ։
ՎԱՍՆ ԱՅՍՈՐԻԿ ԵՒ ՄԵՔ ՄԻ-
ՆՉԵՒ Ի ՄԱՀ ԼԻՑՈՒՔ ՎԿԱՅՔ
ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ՔՈ[7], ԶԻ ԽԱ-
ՌՆԵՍՑՈՒՔ Ի ԹԻՒ ՎԿԱՅԻՑ
[ՔՈՑ։ ԶԻ ԱՅԼ ԶԻՆՉ ԻՆՉ ԿԱՐԻ-
ՑԵՄՔ]*

Վերջի պահպանակ

2v [ԱՌՆԵԼ ԴԱՐՁՈՒԱԾՄ՝ ՓՈԽԱՆ]-
ԱԿ[1] ԲԱՐԵԱՑՆ, ՈՐ Ի ՔԷՆ,
ԵԹԷ[2] ՈՉ ՏԱՅՈՒՔ ԶԱՆՁ-
ԻՆՍ ՄԵՐ՝ ՓՈԽԱՆԱԿ ՊԱ-
ՏՈՒԻՐԱՆԱՑ ՔՈՑ, Ի ՀԱ-
ՃՈՒԹԻՒՆ ԿԱՄԱՑ ՔՈՑ, ԶԻ
ԼԻՑՈՒՔ ԺԱՌԱՆԳԱՒՈՐ[3]
ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՔՈՒՄ ԸՆԴ
ԱՅՆՈՍԻԿ, ՈՐՔ[4] ՀԱՃՈ[5] ԵՂ-
ԵՆ ԱՌԱՋԻ ՔՈ, ԶԻ ՄԱՏ-
ՈՒՍՑՈՒՔ ԶԱՆՁԻՆՍ ՄԵՐ
ՊԱՏԱՐԱԳ ԱԾՈՒԹԵԱՆ
ՔՈՒՄ, ԶԻ ԿՈՐՈՒՍՑՈՒՔ
ԶԱՆՁԻՆՍ, ԶԻ[6] ԴԱՐՁԵԱԼ
ԳՏՑՈՒՔ ԶՍԱՅ[7] ՅԱՒՈՒՐՆ[8]
ՅԱՐՈՒԹԵԱՆ։ ԿԱՑՑՈՒՔ ԸՆ-
Դ ԱՋՄԷ ՔՈՒՄՄԷ՝ ԶԱՆՄ-
ԵՂՈՒԹԻՒՆ ԶԳԵՑԵԱԼ ԸՆԴ
ԳԱՌԻՆՍ ԱՋՈՑ ԿՈՂՄԱՆ[9]

---

* W-ն սկսվում է այստեղից։

1 Բարերարութեանդ—C (αβabdԱ—ԴՁ բարերարութեան) 2 քոյ—C(αβad քո) 3 ամենեսին—C 4 ամենեցուն—C 5 աստուածութեանդ—C (αaԱ—ԴՁ աստուածութեան) 6 քոյ—C (α քում) 7 քոյ —C 8+ի —C 9 ածութեան]—C (αβabdsԱԲԴՁ+ածութեան) 10 երկիր—C 11 խառնեցեր— C 12 զմահկանութիւնս| զմահկանացու բնութիւնս —C (βbd Բ ԴՁ զմահկանութիւնս, Ա զմահկանութիւն, Դ զմահկանացութիւնս)։

1 փոխարէն C (b փոխանակ), փոխարեն —W 2 եթե —W 3 ժառանգորդք —C (բոլոր ձեռ-երը, բացի α-ից՝ ժառանգաւորք), ժառանգաւորք —W 4 որ CW (bԴ որք) 5 հաճոյ—CW 6 զի] եւ—C (αβabd զի, Ա—ԴՁ զի]) 7 զնա—C^{W} (Դ զսա) 8 յաւուր—CW 9 աջակողմեան —C (d աջոյ կողման)։

Աղ. 3—4

58₅—59₃

Սկզբի պահպանակ

2r [Դ]ԱՍՈՒՆ ԿԱՄԱՐԱՐԱՑ
[Ք]ՈՑ, ՅՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ՝ ՍՐԲ-
[Ո]ՑՑ ՔՈՑ, ՈՐ ՍԻՐԵՑԻՆ ԶԱ̅Ծ̅-
ՈՒԹԻՒՆ ՔՈ[1], ՈՐ ԵՂԵՒ ԳԱՌՆ
ՃՇՄԱՐԻՏ ԵՒ ՄԱՏՈՅՑ Զ-
ԱՆՁՆ ԻՒՐ ՔԵԶ ՊԱՏԱՐ-
ԱԳ՝ ՎԱՍՆ ՄԵՂԱՑ ԱՄԵՆ-
ԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ, ԶԻ ԼԻՑԻ
ՀԱՃԵՑՈՒՑԻՉ ԵՒ ԲԱՐԷ-
ԽԱԻՍ[2] ԸՆԴ ԱՐԱՐԻՉ[3] ԵՒ ԸՆ-
Դ ԱՐԱՐԱԾՍ։
ԻՍԿ ՈՐՔ[4] ՅԱՅՍ ՀԱՃՈՒԹԻՒՆ
ԸՆԹԱՑԱՆ՝[5] ՄԵՐՁԵՑԱՆ,
ՊԱՏՐԱՍՏԵԱՑ ՆՈՑԱՑ[6]
ԱԻԹԵՒԱՆՍ[7] ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ[8]
Ա̅Ծ̅ՈՒԹԵԱՆ[9] ԻՒՐՈՑ[10]։ ԻՍԿ ՈՐՔ[11]
ՈՉՆ[12] ԿԱՄԵՑԱՆ ՄՏԱՆԵԼ
Ի ՀԱՃՈՒԹԻՒՆ ՀՆԱԶԱՆԴՈՒ-
ԹԵԱՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՆՈՐԱ՝ [Ց?—]
[ԱԻԻՏԵՆԻՑ ՏԱՆՋԱՆՍ ԽՈՍՏԱ-
ՑԱՒ][13]։

1 + և զմիածին որդիդ, զտէր մեր Յիսուս Քրիստոս—C(βabd])2 բարէխօս—C, բարէխաւս W 3 արարիչդ —C (t արարիչ) 4 որք] որ—CW (Գ որք) 5 ընթացեալ —C (βabd Ա—ԴՋ ընթացան) 6 նոցա —CW 7 օթեվանս —C (b ութեւանք), ութեվանս —W 8 յարքայութեան —CW 9 ա̅ծ̅ութեանն —C (βabd ա̅ծ̅ութեան) 10 իւրոյ —CW 11 որ—W 12 ոչ—W 13 + և արդ տէր—C (βabd և]), արդ տէր—W։

Վերջի պահպանակ

1r ԲԱՐԵՐԱՐ, ՈՐ ԷԿԻՐ ԵՒ ԽՈՆ-
ԱՐՀԵՑԱՐ. ԵՒ ԱՌԵՐ ԶԿԵ-
ՐՊԱՐԱՆՍ ՄԱՐԴԿԱՆ, ԵՒ
ԷՏՈՒՐ[1] ԶԱՆՁՆ ՔՈ ԱՄԵՆ-
ԱՅՆ ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ[2], ԵՒ ՈՉ
ԴԱՐՁՈՒՑԵՐ ԶԱՆՁՆ ՔՈ
ՅԱՆԱՐԳԱՆԱՑ ԸՆԴ ԷՐ-
ԵՍՍ[3] ԹՔԱՆԵԼՈՑ, ԵՒ ՄԱՏՈՒ-
ՑԵՐ ՀԱՐԿԱՆԵԼԵԱՑ Զ-
ԾՆԱԻՏ[4] ՔՈ ՔԱՑԱԽ ԵՒ
ՂԵՂԻ[5] ԴԱՌՆՈՒԹԵԱՆ, ՎԱՍՆ
ՄԵՐ ԱՐԲԵՐ, ՔԱՂՑՐԱՑ-
ՈՑ[6] ԶՍԻՐՏՍ[7] ԱՄԵՆԱՅՆ* ՄԱ-
ՐԴԿԱՆ Ի ՊԱՇՏԱՒՆ ՔՈ,
ԶԻ ՀՆԱԶԱՆԴԵՍՑԻՆ ԸՆԴ
ԱՄԵՆԱՀԵՇՏ ԼԾՈՎ ՔՈՎ
ԵՒ ԱՊՐԵՍՑԻՆ Ի ՅԱԻԻՏԷՆ-
[Ի]Ց[8] ՏԱՆՋԱՆԱՑՆ։ ԶԻ ԼՑԱՒ
ԻՍԿ ԵՐԿԻՐ Ա̅Ծ̅ՊԱՇՏՈՒԹԵԱՄԲ

* W-ն այստեղ ընդհատվում է ամեն-ով։
1 եսուր —CW 2 համբերութեանն —W 3 երեսս CW 4 գծնօտ—C, գծնոտ—W 5 լեղի C 6 քաղցրացո —CW 7 գոիրսա —C (βd ԱԲԴՋ գուիրսս) 8 յաւիտենից —C։

Աղ. 5—6

59₃—18

Սկզբի պահպանակ

2v ՔՈՎ, ԵՒ ՈՐ ՄՆԱՑԵԱԼՔՍ
ԵՆ՝ ԶԻ ԵՒ ՍՈՔԱ ՄԻ ՎՐԻՊԵՍ-
ՑԵՆ[1] Ի ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՃԱՆ-
ԱՊԱՐՀԱՑ ՔՈՑ, ԵՒ ՀՐԱԻ-
ԻՐԵՍՑԻՆ ՅԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ
ՍԵՂԱՆԴ. ԵՒ ՎԱՅԵԼԵՍՑԵՆ
Ի ՀԱՄԲԵՐՈՒԹԷՆԷ[2] ՔՈՒՄՄԷ։
ՈՐՊԷՍ[3] ՎԱՍՆ ԱՄԷՆԷՑՈՒ-
Ն[4] ԷԿԻՐ[5] Ի ՍՊԱՆՈՒՄՆ՝ ՈՐ-
ՊԷՍ[6] ԳԱՌՆ[7], ԵՒ ՈՒՐԱԽ ԱՐ-
ԱՐԵՐ Ի ՄԱՐՄԻՆ ՔՈ, ԶՈՐ
ԵՏՈՒՐ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ԱՄԷՆ-
ԷՑՈՒՆ[4], ԵՒ ԶՈՒԽՍ[8] ՓԱՓԿ-
ՈՒԹԵԱՆ ՔՈ[9], ԵՏՈՒՐ ԸՄՊԵԼ
ԶԱՐԻՒՆ ՔՈ՝ ՎԱՍՆ ԿԵՆ-
ԱՑ[10] ԱՇԽԱՐՀԻ։ ԳԹԱՑ[11], ԶԻ
ՅԻՇԵՍՑԵՆ ԵՒ ԴԱՐՁՑԻՆ, ԵՒ
ԷԿԵՍՑԵՆ[12] ԱՌ ՔԵԶ ԱՄԵՆ-
ԱՅՆ ԾԱԳՔ ԵՐԿՐԻ[13]։ ԵՐԿԻՐ
[ՊԱԳՑԵՆ ԱՌԱՋԻ ՔՈ ԱՄԵ-]
[ՆԵՔԵԱՆ. ՈՅՔ ԻՋԱՆԵՆ Ի ՀՈՂ*,]

1 վրիպեսցին C 2 համբերութենէ C 3 որպէս] որ —C 4 ամենեցուն —C 5 եկիր—C 6 որպէս] իբրև—C 7 զգառն—C 8 զուգիս —C (բոլոր ձեռ—երը, բացի dԴ, զուխս) 9 քոյ—C 10 + ամենայն —C (βabd ամենայն]) 11 գթա—C 12 եկեսցեն—C 13 + և—C(βad և])
* Հմմտ. Սաղմ. ԻԱ, 30

Վերջի պահպանակ

1v ԶԻ ԴՈՒ[1] ԿԱՐՈՂ ԵՍ ՄԻԻՍ
ԱՆԳԱՄ ԿԱՆԳՆԵԼ, ԿԵՆ-
ԴԱՆԱՑՈՒՑԱՆԵԼ ԵՒ ԱՌՆ-
ԵԼ ԱՐԺԱՆԻ[2] ՄԱՐԴԱՍԻՐ-
ՈՒԹԵԱՆ ՔՈ[3], ԶԻ ՔՈ ԻՍԿ
ԱՐԵԱՄԲ ԵՆ ՓՐԿԵԱԼ[4] ԵՒ
ԱԶԱՏԵԱԼ[5] ՅԻՇԽԱՆՈՒԹ[Ե]-
ՆԷ ԽԱԻԱՐԻ։
ԱՐԴ, ԾԱՆԻՑԵՆ ԶՔԵԶ՝
ՅՈՐՈՑ ՎԵՐԱ[6] ՄԵՌԱՐ ԴՈՒ,
ԶԻ ՔՈ ԻՍԿ ԵՆ ԾԱՌԱՅՔ
ԵՒ ՔԵԶ ԼԻՑԻՆ ԵՐԿՐՊԱԳ-
ՈՒՔ՝ ԶԻ ՄԻ ԷԿԵՍՑԷ[7] Ի ՎԵՐ-
ԱՑ ՄԱՐԴԿԱՆ ԲԱՐԿՈՒԹԻՒՆ
ՍՐՏՄՏՈՒԹԵԱՆ ՔՈ[8]։ ԱՐԱ
ԶՄԵԶ ՈՐԴԻՍ ԼՈՒՍՈՅ ԵՒ ՈՐԴ-
ԻՍ ՏՈՒԸՆՋԵԱՆ[9], ԶԻ ՓԱՌ-
ԱԻՈՐԵՍՑԻ ԱՆՈՒՆ ՔՈ Ի ՎԵ-
ՐԱՑ ԱՄԵՆԱՅՆ ՏԻԵԶԵՐԱ[Ց]։

1 դու]—C (βabd ԱԲԴՋ դու) 2 արժանիս —C (Ա—ԴՋ արժանի) 3 քոյ —C 4 փրկ-եալք—C (βd փրկեալ) 5 ազատեալք—C 6 վերայ —C 7 եկեսցէ —C 8 քոյ —C 9 տուն-ջեան—C։

Աղ. 7—8

59_{18}—60_{13}

Սկզբի պահպանակ

1r ԶԻ ԴՈՒ ԵՍ ՓԱՌԱՒՈՐԵԱԼ[1]
ՄՇՏԸՆՋԷՆԱՒՈՐ[2] ՅԱՐՔԱՅ-
ՈՒԹԵԱՆԴ[3], ՈՐ ԵՍԴ ՅԷՈՒԹԵԱՆԴ,
ՅԻՍԿՈՒԹԵԱՆԴ, ՅԱՆՔՆՆՈՒ-
ԹԵԱՆԴ[4], ՈՐ ԵՏՈՒՐ ԱՒՐ-
ԻՆԱԿ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ՔՈ-
ՈՎՔԴ[5] ՉԱՐՉԱՐԱՆԱՒՔ, ԽՈ-
ՆԱՐՀՈՒԹԵԱՄԲ՝ ՔՈՈՅ[6] ՍԻՐԵԼԵԱՅ,
ԵՒ ՅՈՒՑԵՐ ՀԱԼԱԾԱՆՍ՝ ՔՈ-
ՈՎ[7] ՀԱԼԱԾԵԼՈՎ[8], ԵՒ ՅՈՒՑԵՐ
ՏԱՆՋԱՆՍ ՔՈՅ ՍՐԲՈՅ՝ Ի
ՔՈ ՄՏԱՆԵԼ ՏԱՆՋԱՆՍ ԿՈՓ-
ԱՀԱՐՈՒԹԵԱՆ[9]։
ԻՍԿ ՄԵՔ ՀՈՂԵՂԷՆՔՍ ԲՆԱՒ
ԻՍԿ ԶԻ՞ՆՉ ԲԵՐԻՑԵՄՔ Ի ՀԱՄ-
ԱՐ ԶՄԵՐ ՆԵՂՈՒԹԻՒՆ[10] ՉԱՐՉ-
ԱՐԱՆԱՑ, ԶԻ ԴՈՒ, ՏԷՐ, ԽՈՆ-
ԱՐՀԵՑԱՐ ԵՒ ԱՌԵՐ ՅԱՆՁ-
Ն ԶԱՄԵՆԱՅՆ[11], ԲԱՐՁԵՐ
[ԶՎԻՇՏՍ ԵՒ ՉԱՐՉԱՐԱՆՍ]
[ԱՄԵՆԱՅՆ ՏԻԵԶԵՐԱՑ։]

1 + ի—C b ի]) 2 մշտնջենաւոր —C 3 արքայութեանդ —C (b յարքայութեանդ) 4 յանքննութեանդ] յինքնութեանդ—C(ℑabdg յանքնութեանդ) 5 քոյովդ—C (a քոով) 6 քոյոյ—C(ad քոոցդ) 7 քոյով—C 8 հալածելովդ —C 9 կոփահարութեանդ—C (ℑabdg կոփահարութեան) 10 նեղութիւնս —C (Ա—ԴՁg նեղութիւն) 11 + և —C (ℑadg և])

Վերջի պահպանակ

2r ԱՐԴ, ԶԱՒՐԱՅՈՅ[1] ԶԻՄ[2] Ի ԺՈՒ-
ԺԿԱԼՈՒԹԻՒՆ ՊՆԴՈՒԹԵԱՆ ՆԵՂ-
ՈՒԹԵԱՆՍ՝ ՈՒՐ ԿԱՄՍ, ԶԻ ՅԵՐԿ-
ԱՐԵՍՑԻ ԻՄՍ ՊԱՐԾԵԼ Ի ՆԵ-
ՂՈՒԹԻՒՆՍ ՏԱՆՋԱՆԱՑ, ԶԻ
ՀԱՒԱՍԱՐԵՑԻՑ[3–4] ԸՆԴ ՍԻՐ-
ԵԼԻՍ ՔՈ ՅԱՒՈՒՐ[5], ՅՈՐԺԱՄ[6]
ՀԱՏՈՒՑԱՆԻՑԵՍ ԶԱՆՊ-
ԱՏՈՒՄ ԲԱՐԻՍԴ, ՈՐ ԿԱՅ
ՊԱՀ Ի ՅՈՒՍԱՑԵԼՈՑ ՔՈՅ, ՈՐ
ՅԱՒԻՏԷՆԻՑ[7]։
ԵՎ ԱՐԴ[8], ՄԻՆՉ ԴԵՌ ՆԱՅ
ԿԱՅՐ[9] ԿԱԽԵԱԼ ԱՅՆՊԷՍ՝
ԽԱՒՍԵՑԱՒ[10] ԶԱՅՍ ԱՄԵՆ-
ԱՅՆ ԵՒ ԳՐԵՑԻՆ ԱՏԵՆԱԿ-
ԱԼ ԴՊԻՐՔՆ ՆՇԱՆԱԳՐԱՑՆ·
ԶԻ ԱՌ ՈՉԻՆՉ ՀԱՄԱՐԵԱԼ
ԶԿԱԽԱՂԱՆՆ, ԵՒ ՈՉ ԶԲՐԱ-
ԾԵԾ ԳԱՆԻՆ ԳՐԵԱՑ ԻՆՉ ՎԻՇ-
[ՏԸՍ … . . . .]

1 զօրացո —C 2+ տէր—C (bՁ տէր]) 3 հաւասարեցայց —C (բոլոր ձեռ-երը, բացի Գ-ից՝ հաւասարեցից) 4 + եւ եւ—C 5 յաւուրն —C բոլոր ձեռ-երը, բացի b-ից՝ յաւուր 6 յորում—C (t յորժամ) 7 յաւիտենից —C 8 արդ] C (bԱԲ—Գg արդ) 9~կայր նա —C 10 խօսեցաւ—C։

Arm. № 18

Աղ. 9

Վերջի պահպանակ

88_8—89_6

1r [· . . .] ԳՏԱՒ ՆՄԱՆ

[ՆՄԱ] Ի ՄԷՋ ՅՈՒՆԱՑ[1].
[ՈՂՋ] ԼԵՐ ԴԻՑՆ ՊԱՇՏ-
[ՄԱ]ՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՊԱՏՈՒՈՎ։
[ԵՂ]ԵՒ[2] ԻԲՐԵՒ ԸՆԹԵՐՑ-
[ԱՆ Զ]ԹՈՒՂԹ[3] ՀՐԱՄԱՆԱՑ
[ՀՐ]ՈՎԱՐՏԱԿԻՆ ԱՅՆԱՒՐ-
[ԻԿ], ՀՐԱՄԱՆ ՏԱՅՐ ԹԱ-
[ԳԱ]ՒՈՐՆ ՄԵԾԱՒ ՍԱՍՏԿ-
[ՈՒ]ԹԵԱՄԲ ՊԱՏՈՒԻՐԱՆ-
[ԱՒ] ԶԻ ԶԱՄԵՆԱՅՆ ՏԵ-
[Ղ]ԻՍ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԻՒՐ-
[ՈՅ] ՔՆՆԱՅՈՅՋ[4] ՓՈՒԹ-
ՈՎ ԽՆԴՐԵՍՑԵՆ ՎԱՂ-
[ՎԱ]ՂԱԿԻ ԴԷՍՊԱՆՍ ԱՐՁ-
[Ա]ԿԷ[5] Ի[6] ԿՈՂՄԱՆՍ-ԿՈՂՄԱ-
ՆՍ, ԶԻ[7] ԳՏՑԵՆ Ի ՄԷՋ ԱԾ-
ՑԵՆ ՎԱՂՎԱՂԱԿԻ* ԵՒ Ո-
Ր ԳՏՑԷ ԶՆՈՍԱ՝ ՄԵԾԱՄԵ-
Ծ ՊԱՐԳԵՒՍ ԽՈՍՏԱՆԱ-
ՅՐ ՀԱՏՈՒՑԱՆԵԼ[8]։ ՄԻՆՉ-
[ԵՒ] ԱՅՆ ԴԵՌ[9] ՅՈՅԶՔ[10] ՔՆՆ-
ՈՒԹԵԱՆ ԷԻՆ ՅԱՇԽԱՐ-
ՀԻՆ ՍԱՀՄԱՆԱՑՆ ՀԱՅՈՑ,
[ՍՈՒՐԲ] ՎԿԱՅՔՆ ԱՅՆՈ[Ք]ԻԿ

[ԵԿԵԱԼ] [ՂԱՒՂԵԱԼ] [ԷԻՆ[1]
ՅԱՐ-]
ՔԱՅԱԿԱՆ ԿԱՅԵ[ՆԻ[2]] [Ի ՆՄ-]
ԻՆ ԹԱԳԱՒՈՐԱՑ[3] Ի ՎԱՂ[ԱՐ-]
ՇԱՊԱՏ ՔԱՂԱ[Ք]Ի։
ԵՒ ՅԵՏ ՍԱԿԱՒ ԻՆՉ[ԱՒՈՒՐ][4]
ԱՅՆՈՑԻԿ ՎԱՂՎԱՂԱԿ-
Ի Ի ՄԷՋ ԵԿԵԱԼ** ԽՈՒ[ԶԻ][ԻՔ]
ԻՐՔՆ ՅԱՅՏՆԷԻՆ։ [ԱՅԼ]
ՈՉ ԻՍԿ ԷՐ ՊԱՐՏ [ԹԱԳ-]
ՉԵԼ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱ[ՆՆ ԵՒ]
ՎԿԱՅԻՑՆ ԱՌԱՔԻՆՈՒԹ[ԵԱՆ]
Ե[Ւ ՈՉ] ԼՈՒՍՈՅ ՃՐԱԳ[ԱՐ]-
ԱՆ[5] Ի ՆԵՐՔՈՅ[6] ԳՐՈՒԱ[Ն]-
ԱՑՆ[7] ԾԱԾԿԵԼ ԵՒ ՈՉ Ի
ՆԵՐՔՈ[8] ՍՏՈՒԵՐԱՑՆ[9] ԿԱ-
ԹԷԴՐԱՑՆ ԱՆԵՐԵՒ-
ՈՅԹ ԼԻՆԵԼ, ԱՅԼ[10] Ի ՎԵ-
ՐԱՅ ՈՍԿՈՅ ԱՇՏԱՆԱԿ-
ԱՑՆ[11] ԶԱՐԴԱՐԵԼՈՅ
ԵՒ ՈՍԿԱՒՔ[12] ՃՐԱԳԱՐԱ[Ն]-
ԱՒՔ ԶԵՒՂ[13] ՊԱՐԱՐՏՈՒԹ-
ԵԱՆ ԱՆՈՒՇՈՒԹԵԱՆ, [Զ]-
ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՒԱ-
ՏՈՑՆ ՎԱՌԵԱԼ ԶԼՈ-
ՅՍՆ ՀԱՄԱՊԱՅԾԱՌ

* W-ն սկսվում է այստեղից։

1 + աշխարհիս—C(abd աշխարհիս]) 2 եղեւ] եւ եղեւ—C 3 զթուղթն—C 4 խուզել—C (ԱԲԴՁt խուզել]) 5 արձակէր C 6 ի] ընդ C (ad ի) 7 զի] + ուր և —C (ad ուր և]) 8 ~ հատուցանել խոստանայր —CW (ad խոստանայր հատուցանել), հատուցանել] + եւ —W 9 մինչեւ այն դեռ] մինչդեռ յայն C (b մինչև այն դեռ) 10 յոյզ—C։

** W-ն վերջանում է այստեղ։

1 էին-W 2 կայանին —C (b կայենին) 3 թագաւորականին —C (ԱԲԴՁ թագաւորացն, t թագաւորաց) 4 աւուրցն —CW 5 ճրագին —C (a ճրագարանի, b ճրագարանին, dh ճրագարանի) 6 ի ներքոյ] ընդ —C (abdh ի ներքոյ) 7 գրուանաւ —C (b գրուանաց, a գրուանացն, dh գրուականացն) 8 ներքոյ—C 9 ստուերաց —C (abd ստուերացն) 10 այլ —C 11 ոսկոյ աշտանակացն] աշտանակացն ոսկւոց—C (t ոսկւոյ աշտանակացն) 12 ոսկւովք —C 13 զիւղն C (b զեւղն)։

Աղ. 10

89_5—90_4

1v [ՈՐՊԷՍ ԵՒ] [ԻՆՔԵԱՆՔ] ԻՍԿ ՅԱՌԱՋԻՆ ԱՂԱՒԹ[ՍՆ] ԻՒՐԵԱՆՑ ԱՂԱՉԷԻՆ, ՈՐՊԷՍ Տ̅Ր̅[2] ԻՍԿ ԱՍԷՐ ԱՌ ԻՒՐ ՍԻՐԵԼԻՍՆ, ԹԵ[3]՝ ՏԵՍՑԵՆ ԶԳՈՐԾՍ ՁԵՐ ԲԱՐԻՍ ԵՒ ՓԱՌԱՒՈՐԵՍՑԵՆ ԶՀԱՅՐ ՁԵՐ ՈՐ Ի ՅԵՐԿԻՆՍ[4]: ՏԵՍԱՆԵ՞Ս ԶԻ ՎԱՍՆ ԶԻ[5] ԳՈՐԾՈՑ[6] ԲԱՐՈՒԹԵԱՆ ՃՇՄԱՐԻՏ ՈՐԴԻՆ Ա̅Յ̅ ՈՉ ԳԱՐՇԻ [ՏԱԼ] ԶԻՒՐ ԶԺԱՌԱՆ[Գ]ՈՒԹԻՒՆ[7] ԻՒՐՈՑ ՍԻՐԵԼԵԱՑՆ ԾԱՌ[ԱՅ]ԻՑՆ, ՈՐ ԻՆՔՆ ԲՆՈՒԹԵԱՄԲ ԻՆՔՆ[8] ՈՐԴԻ Է. ԱՆՎԷՀԵՐ[9] ՄԱՏՈՒՑԱՆԷ ԶԻՒՐ ՊԱՏՈՒԻՐԱՆԱՊԱՀՍՆ ՅԻՒՐ ԲՆՈՒԹԻՒՆ[10]: ԲԱՅՑ ՄԻԱՅՆ Թ[Ե][3] ՈՔ ԻՑԷ ՈՐ ՊԱՀԻՑԷ [ԶԲԱ]ՆՍ ՆՈՐԱ, ԻԲՐԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ[11] ՊԱՏՈՒԱԿԱՆ ԳՏԵԱԼ ԽՆԴՈՒԹԵԱՄԲ ԳՆԱԼ[12] ԵՒ

ԶԳՈՒՇԱՑԵԱԼ Լ[ԻՆԻ ՆՄԱ] ԱՌԵԱԼ ԶՆՇԱՆ ՊԱՏՈ[ՒԻ][1], ԶՊՍԱԿՆ ԹԱԳԱՒՈ[Ր]ՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՐՔ[ԱՅ]ԱԿԱՆ[2] ՄԱՏՈՒՑԱՆԻ [ՈՐ]ՊԷՍ ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒ[Թ]ԻՒՆ ԼՈՒՍՈՅ[3] ԵՐԵՒ[Ե]ԱԼ ԱՌԱՋԻ ՀԵԹԱՆՈՍԱՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ[4] ԱԿԱՄԱՅ, ԻՍԿ ՓԱՌԱՒՈՐՈՒԹԻՒՆ[5] ԱՌ Ա̅Ծ̅ՈՒԹԻՒՆՆ ՀՆԶԻՒՔ ԼՑԻՆ ԶՏԻԵԶԵՐՍ:

ԱՐԴ, ԳՏԵԱԼ ԼԻՆԵԻՆ[6] ՆՈՔԱ Ի ՀՆԾԱՆՍ[7] ՇԻՆՈՒԱ[Ծ]ՈՑ[8], ՔԱՆԶԻ ԻԲՐԵՒ* ԵԿԻՆ ՀԱՍԻՆ ՀՐԱՄԱՆՔ ՀՐՈՎԱՐՏԱԿԱՑՆ Ի ՄԵԾ ԹԱԳԱՒՈՐԵՆ[9] ՅՈՒՆԱՑ[10] ԱՌ ՏՐԴԱՏ ԱՐՔԱՅՆ ՀԱՅՈՑ[11], ՈՉ ՍԱԿԱՒ ԻՆՉ ԽՌՈՎՈՒԹԻՒՆ ԵՂԵՒ Ի ՄԷՋ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ,[12–13] ԶԻ ՊԱՀԷԻՆ[14] ԶԱՄԵՆԱՅՆ ԱՆՑՍ ՃԱՆԱ-

1 աղօթս —C (a ԱԲՁ աղաւթսն, bd Դ յաղաւթսն) 2 տէր] և տէրն —C (t և]) 3 թէ —C 4 ի յերկինս] յերկինս է —C 5 զի] —C 6 գործոցն —C (ԲԴ գործոց) 7 ժառանգութիւն —C 8 ինքն] —C 9 անվեհեր —C 10 բնութիւնն —C 11 զմարգարիտ —C 12 գնալ] գնեալ —C (ԱԲԴՁ գնել):

*W-ն սկսվում այստեղից:

1 պատուին —C (ԱԲԴՁ t պատուի) 2 յարքայականն —C 3 լուսոյ] լուսոյն այսորիկ—C (abd այսորիկ]) 4 աշխարհիս —C (t աշխարհի) 5 փառաւորութիւնն —C 6 լինէին C 7 հնձանս —C 8 շինուածոցն—C 9 թագաւորէն CW 10 Յունացն—W 11 + Մեծաց— CW (dԱԲԴՁ մեծաց]) 12~աշխարհին հայոց —C (b ԱԲԴՁ հայոց աշխարհին) 13 աշխարհին —W 14 պահէին —W:

Պատառիկ № 1195

Աղ. 11

110_4—111_4

1r ՅԱ: ԵՎ ԶՆՈՅՆ ՅԱՃԱԽԵԱԼ ԲԱԶՄԱՑՈՒՑԱՆԷՐ*: ԱՐԴ[1], Ի ՎԱՂԻՒ ՄԱՏՈՒՑԵԱԼ ԱՆԴՐ[2] ԱՌՆՈՅՐ ՀՐԱՄԱՆ ԴԱՀՃԱ[ՊԵ]ՏՆ ՎԱՍՆ ՍՐՐԲՈՅՆ ԳԱՅԻԱՅՆԵԱՅ[3] ՍՊԱՆՄԱՆ[4]. ՆԱԽ ԶԼԵԶՈՒՆ ԸՆԴ ԾՈԾՈՐԱԿՆ ՀԱՆԵԼ ԵՒ ԱՊԱ ՍՊԱՆԱՆԵԼ, ՎԱՍՆ ԶԻ ԻՇԽԵԱՑ ՎՆԱՍԱԿԱՐ ԽՐԱՏՈՒՆ ԻՒՐՈՑ[5] ԿՈՐՈՅՍ[6] ԶԱՅՆՊԻՍԻՆ, ՈՐ ԶԴԻՑ[7] ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԷՐ Ի ՄԷՋ ՄԱՐԴԿԱՆ: ԻՍԿ ԴՈՐԻՆ ԽՐԱՏԴ ԱՆՇՆՈՐՀ ԱՐԱՐԵԱԼ[8] [ԶԴ]ԻՍՆ ԻՇԽԵԱՑ, ՈՐՈՑ ՆՄԱ[9] ԶԱՅՆ ԷՐ ՇՆՈՐՀԵԱԼ[10] Գ[Ե]ՂԵՑԿՈՒԹԻՒՆ, ՎԱՍՆ ՈՐՈՑ[11] ԶՆԱ ԿՏՏԱՄԱՀ ՍՊԱՆՑԵՆ:

111_{5-12}

ԱՐԴ, ԵԿԵԱԼ[1] ԴԱՀՃԱՊԵՏՆ ՊԱՐԾԵԼՈՎ՝ ԶԱՐԱՄԱՀ ԱՌՆԵԼ ԶՆԱ. ԵՒ ԵՏ ՀԱՆԵԼ ԶՆՈՍԱ ՇՂԹԱՅԻՒՔ Ի ՔԱՂԱՔԷՆ ԸՆԴ ԴՈՒՌՆՆ[2] ՀԱՐԱՒՈՅ, ԸՆԴ ԿՈՂՄՆ ՊՈՂՈՏԱՅԻՆ, ՈՐ ՀԱՆԷՐ Ի ՄԵԾԱՄԱՒՐԻ[3] ԿԱՄՈՒՐՋՆ, Ի ՏԵՂԻ[4] ՅԱՅՆ, ՈՒՐ ՍՈՎՈՐ ԷԻՆ ՍՊԱՆԱՆԵԼ ԶԱՄԵՆԱՅՆ ՄԱՀԱՊԱՐՏՍ, Ի* ՃԱՂՃԱԽՈՒՏ[5] ՏԵՂԻ ՄԻ, ՄԱՒՏ[6] Ի ՊԱՐԿԵՆ[7] ՓՈՍԻՆ, ՈՐ ՇՈՒՐՋ ԳԱՅՐ ԶՔԱՂԱՔԱՒՆ: ԵՒ ՎԱՐԵՑԻՆ ԶՈՐՍ-ԶՈՐՍ ՑԻՑՍ՝ ՄԻՈՒՄ-ՄԻՈՒՄ Ի ՆՈՑԱՆԷ[8]: ԵՒ[9] ՄԻՆ[Չ] ԴԵՌ ԿԱԶՄԵԻՆ ԶԱՅՆ՝ ՍԿՍԱՒ ԱՍԵԼ ՍՈՒՐԲ[Ն ԳԱՅ]ԻԱՆԷ[10] ԸՆԿԵՐԱՒ[ՔՆ[11] ՀԱՆԴԵՐՁ[12]]

* Համեմատությունն սկսում ենք 3-րդ տողից:

1 Արդ] իսկ C (abdh արդ) 2 ~ անդր մատուցեալ—C 3 Գայիանեայ—C 4+իսկ նա իբրև լուաւ՝ առ սէրն յեղեալ գեղեալ յիմարեալ ապշեալ և ոչ յիշեալ վասն մահուան սրբոյն Հռիփսիմեայ՝ համարեցաւ եթէ կենդանի իցէ: Մեծ աւագութեան, բարձի և պատուոյ պարգևս խոստանայր՝ եթէ յանկարծ ոք հնարեսցէ պատրել հանել զմիտս աղջկանն՝ գալ առ նա: Իսկ նա ասէ, թէ «Այնպէս կորիցեն ամենայն թշնամիք քո, արքայ, և որ զաստուածս անարգենն և զհրամանս ձեր թագաւորաց. այլ կայ կախարդն այն, որ ապականեաց կորոյս զչքնաղագեղն, և երկու եւս ընկերք նորուն»: Իբրև լուաւ, թէ մնաւ սուրբն Հռիփսիմէ՝ դարձեալ ի նոյն տրտմութիւն ընկղմաւ, և իջեալ նստէր ի վերայ գետնոյ և լայր և ի սուգ մտանէր: Դարձեալ հրաման տայր վասն առաքինւոյն Գայիանեայ, թէ—C 5 իւրով—C 6 կորուսանել—C (adt կորոյս) 7 զգիցն—C 8 արարեալ] առնել—C (bԴt արարեալ) 9 նմայն—C (ԲԴ նմա) 10 շնորհեալ էր—C 11 այնորիկ—C

* W-ն սկսվում է այստեղից:

1 եկեալ] ելեալ—C 2 դուռն—C (a դուռնըն) 3 Մեծամօրի—C 4 տեղին—C (b ի տեղի) 5 ճախճախուտ—C (dԱ ԲԴՁt ճաղճախուտ) 5 մօտ—C 7 պարկէն—C 8 նոցանէն—C (abd նոցանէ) 9 եւ]—W 10 Գայիանէ—CW 11 ընկերօքն—C 12+այսպէս—C (ad այսպէս])

Աղ. 10

89_5—90_4

1v [ՈԵՊԷՍ ԵՒ] [ԻՆՔԵԱՆՔ]
ԻՍԿ ՅԱՌԱՋԻՆ ԱՂԱՒԹ-
[ՍՆ] ԻՒՐԵԱՆՑ ԱՂԱՉԷԻՆ,
ՈՐՊԷՍ ՏՐ[2] ԻՍԿ ԱՍԷՐ ԱՌ
ԻՒՐ ՍԻՐԵԼԻՍՆ, ԹԵ[3] ՏԵ-
ՍՑԵՆ ԶԳՈՐԾՍ ՁԵՐ ԲԱ-
ՐԻՍ ԵՒ ՓԱՌԱՒՈՐԵՍ-
ՑԵՆ ԶՀԱՅՐ ՁԵՐ ՈՐ Ի Յ-
ԵՐԿԻՆՍ[4]։ ՏԵՍԱՆԵ՞Ս ԶԻ ՎԱ-
ՍՆ ԶԻ[5] ԳՈՐԾՈՑ[6] ԲԱՐՈՒ-
ԹԵԱՆ ՃՇՄԱՐԻՏ ՈՐԴ-
ԻՆ ԱՅ ՈՉ ԳԱՐՇԻ [ՏԱԼ] Զ-
ԻՒՐ ԶԺԱՌԱՆ[Գ]ՈՒԹԻՒՆ[7] ԻՒ-
ՐՈՑ ՍԻՐԵԼԵԱՑՆ ԾԱՌ-
[ԱՅ]ԻՑՆ, ՈՐ ԻՆՔՆ ԲՆՈՒ-
ԹԵԱՄԲ ԻՆՔՆ[8] ՈՐԴԻ Է.
ԱՆՎԷՀԵՐ[9] ՄԱՏՈՒՑԱՆ-
Է ԶԻՒՐ ՊԱՏՈՒԻՐԱՆԱ-
ՊԱՀՍՆ ՅԻՒՐ ԲՆՈՒԹ-
ԻՒՆ[10]։ ԲԱՅՑ ՄԻԱՅՆ Թ-
[Ե][3] ՈՔ ԻՑԷ ՈՐ ՊԱՀԻՑԷ
[ԶԲԱ]ՆՍ ՆՈՐԱ, ԻԲՐԵՒ
ՄԱՐԳԱՐԻՏ[11] ՊԱՏՈՒ-
ԱԿԱՆ ԳՏԵԱԼ ԽՆԴ-
ՈՒԹԵԱՄԲ ԳՆԱԼ[12] ԵՒ

ԶԳՈՒՇԱՑԵԱԼ Լ[Ի]Ն[Ի ՆՄԱ]
ԱՌԵԱԼ ԶՆՇԱՆ ՊԱՏՈ[Ւ-]
Ի[1], ԶՊՍԱԿՆ ԹԱԳԱՒՈ[Ր]-
ՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՐՔ[ԱՅ]-
ԱԿԱՆ[2] ՄԱՏՈՒՑԱՆԻ [ՈՐ]-
ՊԷՍ ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒ[Թ]-
ԻՒՆ ԼՈՒՍՈՅ[3] ԵՐԵՒ[Ե]-
ԱԼ ԱՌԱՋԻ ՀԵԹԱՆՈՍ-
ԱՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽ-
ԱՐՀԻ[4] ԱԿԱՄԱՅ, ԻՍԿ
ՓԱՌԱՒՈՐՈՒԹԻՒՆ[5] ԱՌ
ԱԾՈՒԹԻՒՆՆ ՀՆԶԻՒՔ
ԼՑԻՆ ԶՏԻԵԶԵՐՍ։
ԱՐԴ, ԳՏԵԱԼ ԼԻՆԵԻՆ[6] ՆՈ-
ՔԱ Ի ՀՆԾԱՆՍ[7] ՇԻՆՈՒԱ[Ծ]-
ՈՑ[8], ՔԱՆԶԻ ԻԲՐԵՒ* ԵԿ-
ԻՆ ՀԱՍԻՆ ՀՐԱՄԱՆՔ
ՀՐՈՎԱՐՏԱԿԱՑՆ Ի
ՄԵԾ ԹԱԳԱՒՈՐԵՆ[9] ՅՈ-
ՒՆԱՑ[10] ԱՌ ՏՐԴԱՏ ԱՐՔԱ-
ՅՆ ՀԱՅՈՑ[11], ՈՉ ՍԱԿԱՒ Ի-
ՆՉ ԽՌՈՎՈՒԹԻՒՆ ԵՂ-
ԵՒ Ի ՄԷՋ ՀԱՅՈՑ ԱՇԽ-
ԱՐՀԻ,[12–13] ԶԻ ՊԱՀԷԻՆ[14] ԶԱ-
ՄԵՆԱՅՆ ԱՆՑՍ ՃԱՆԱ-

1 աղօթս —C (a ԱԲՋ աղաւթան, bd Դ յաղաւթան) 2 տէր] և տէրն —C (t և]) 3 թէ —C 4 ի յերկինս] յերկինս է —C 5 զի] —C 6 գործոյն —C (ԲԴ գործոյ) 7 ժառանգութիւն —C 8 ինքն] —C 9 անվեհեր —C 10 բնութիւնն —C 11 զմարգարիտ —C 12 գնայ] գնեալ —C (ԱԲԴՋ գնել)։

*W-ն սկսվում այստեղից։
1 պատուին —C (ԱԲԴՋ t պատուի) 2 յարքայականն —C 3 լուսոյ] լուսոյս այսօրիկ—C (abd այսորիկ]) 4 աշխարհիս —C (t աշխարհի) 5 փառաւորութիւնն —C 6 լինէին C 7 հնձանս —C 8 շինուածոցն—C 9 Թագաւորէն CW 10 Յունացն—W 11 + Մեծաց—CW (dԱԲԴՋ մեծաց]) 12 ~ աշխարհին հայոց —C (b ԱԲԴՋ հայոց աշխարհին) 13 աշխարհին —W 14 պահէին —W։

Պատառիկ № 1195

Աղ. 11

110_4—111_4

1r ՅԱ։ ԵՎ ԶՆՈՅՆ ՅԱՃԱ-
ԽԵԱԼ ԲԱԶՄԱՑՈՒՑԱՆԷՐ*։
ԱՐԴ[1], Ի ՎԱՂՒՒ ՄԱՏՈՒՑԵԱԼ
ԱՆԴՐ[2] ԱՌՆՈՅՐ ՀՐԱՄԱՆ
ԴԱՀՃԱ[ՊԵ]ՏՆ ՎԱՍՆ ՍԲՐ-
ԲՈՅՆ ԳԱՅԻԱՅՆԵԱՅ[3] ՍՊԱՆ-
ՄԱՆ[4]. ՆԱԽ ԶԼԵԶՈՒՆ
ԸՆԴ ԾՈԾՈՐԱԿՆ ՀԱՆԵԼ
ԵՒ ԱՊԱ ՍՊԱՆԱՆԵԼ, ՎԱՍՆ
ԶԻ ԻՇԽԵԱՑ ՎՆԱՍԱԿԱՐ
ԽՐԱՏՈՒՆ ԻՒՐՈՅ[5] ԿՈՐՈ-
ՅՍ[6] ԶԱՅՆՊԻՍԻՆ, ՈՐ ԶԴԻՑ[7]
ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԷՐ Ի
ՄԷՋ ՄԱՐԴԿԱՆ։ ԻՍԿ ԴՈ-
ՐԻՆ ԽՐԱՏԴ ԱՆՇՆՈՐՀ ԱՐԱ-
ՐԵԱԼ[8] [ԶԴ]ԻՍՆ ԻՇԽԵԱՑ, Ո-
ՐՈՑ ՆՄԱ[9] ԶԱՅՆ ԷՐ ՇՆՈՐ-
ՀԵԱԼ[10] Գ[Ե]ՂԵՑԿՈՒԹԻՒՆ,
ՎԱՍՆ ՈՐՈՅ[11] ԶՆԱ ԿՏՏԱ-
ՄԱՀ ՍՊԱՆՑԵՆ։

111_{5-12}

ԱՐԴ, ԵԿԵԱԼ[1] ԴԱՀՃԱՊԵՏՆ
ՊԱՐԾԵԼՈՎ՝ ԶԱՐԱՄԱՀ
ԱՌՆԵԼ ԶՆԱ. ԵՒ ԵՏ ՀԱ-
ՆԵԼ ԶՆՈՍԱ ՇՂԹԱՅԻՒՔ
Ի ՔԱՂԱՔԷՆ ԸՆԴ ԴՈՒՌՆՆ[2]
ՀԱՐԱՒՈՅ, ԸՆԴ ԿՈՂՄՆ
ՊՈՂՈՏԱՅԻՆ, ՈՐ ՀԱՆԷՐ
Ի ՄԵԾԱՄԱՒՐԻ[3] ԿԱՄՈՒՐՋՆ,
Ի ՏԵՂԻ[4] ՅԱՅՆ, ՈՒՐ ՍՈՎՈՐ
ԷԻՆ ՍՊԱՆԱՆԵԼ ԶԱՄԵ-
ՆԱՅՆ ՄԱՀԱՊԱՐՏՍ, Ի*
ՃԱՂՃԱԽՈՒՏ[5] ՏԵՂԻ ՄԻ,
ՄԱՒՏ[6] Ի ՊԱՐԿԵՆ[7] ՓՈՍԻՆ,
ՈՐ ՇՈՒՐՋ ԳԱՅՐ ԶՔԱՂԱ-
ՔԱՒՆ։ ԵՒ ՎԱՐԵՑԻՆ ԶՈ-
ՐՍ-ԶՈՐՍ ՑԻՑՍ՝ ՄԻՈՒՄ-ՄԻ-
ՈՒՄ Ի ՆՈՑԱՆԷ[8]։ ԵՒ[9] ՄԻՆ[Չ]
ԴԵՌ ԿԱԶՄԵԻՆ ԶԱՅՆ՝
ՍԿՍԱՒ ԱՍԵԼ ՍՈՒՐԲ[Ն ԳԱՅ]-
ԻԱՅՆԷ[10] ԸՆԿԵՐԱՒ[Ք]Ն[11]
ՀԱՆԴԵՐՁ[12]]

* Համեմատությունն սկսում ենք 3-րդ տողից։
1 Արդ] իսկ C (abdh արդ) 2 ~ անդր մատուցեալ—C 3 Գայիանեայ—C 4 + իսկ նա իբրև լուաւ՝ առ սէրն յեղեալ զեղեալ յիմարեալ ապշեալ և ոչ յիշեալ վասն մահուան սրբոյն Հռիփսիմեայ՝ համարեցաւ եթէ կենդանի իցէ։ Մեծ աւագութեամբ, բարձի և պատուոյ պարգևս խոստանայր՝ եթէ յանկարծ ոք հնարեսցէ պատրել հաճել զմիտս աղջկանն՝ գալ առ նա։ Իսկ նա ասէ, թէ «Այնպէս կորիցեն ամենայն թշնամիք քո, արքայ, և որ դատաւորս անարգենն և զհրամանս ձեր թագաւորաց. այլ կայ կախարդն այն, որ ապականեալ կորոյս զգեղադէմն, և երկու եւ ընկերք նորուն»։ Իբրև լուաւ, թէ մեռաւ սուրբն Հռիփսիմէ՝ դարձեալ ի նոյն տրտմութիւն ընկալաւ, և իջեալ նստէր ի վերայ գետնոյ և լայր և ի սուգ մտանէր։ Դարձեալ հրաման տայր վասն առաքինւոյն Գայիանեայ, թէ—C 5 իւրով—C 6 կորուսանել—C (adt կորոյս) 7 զգիցն—C 8 արարեալ] առնել—C (bԴԿ արարեալ) 9 նմայն—C (ԲԴ նմա) 10 շնորհեալ էր—C 11 այնորիկ—C.

* W-ն սկսվում է այստեղից։
1 եկեալ] ելեալ—C 2 դուռն—C (a դուռնըն) 3 Մեծամօրի—C 4 տեղին—C (b ի տեղի) 5 ճախճախուտ—C (dԱ ԲԴՋt ճաղճախուտ) 5 մօտ—C 7 պարկէն—C 8 նոցանէն—C (abd նոցանէ) 9 եւ]—W 10 Գայիանէ—CW 11 ընկերօքն—C 12 + այսպէս—C (ad այսպէս])

Աղ. 12

111_{12-19}

1v ԳՈՀԱՆԱՄ[1] ԶՔԷՆ, ՏԷՐ, ՈՐ ԱՐ-
ԺԱՆԻ ԱՐԱՐԵՐ ԶՄԵԶ ՄԵ-
ՌԱՆԵԼ ՎԱՍՆ ՄԵԾԻ ԱՆՈՒ-
ԱՆԴ ՔՈ[2], ԵՒ ՅԱՐԳԵՑԵՐ
ԶՀՈՂԵՂԷՆ ԲՆՈՒԹԻՒՆՍ
ՄԵՐ, ԶԻ ԼԻՑՈՒՔ ԱՐԺԱՆԻ
ԱԾՈՒԹԵԱՆԴ ՔՈՒՄ, ԵՒ
ՀԱՂՈՐԴԵՑԵՐ ԶՄԵԶ[3] ՄԱ-
ՀՈՒՆ[4] ՍՐԲՈՑ ՔՈՑ ՎԿԱՅԻՑՆ
ՀՌԻՓՍԻՄԵԱՅ[5] ԵՒ ԸՆԿԵ-
ՐԱՅ[Ն] ՆՈՐԱ[6]։ ԵՒ ԱՐԴ՝ ՓՈՒ-
ԹԱՄ ԵՒ ԱՆԾԿԱՑԵԱԼ[7] ԵՄ
ՀԱՍԱՆԵԼ ՆՈՑԱ, ՈՐ ԶՔԵԶՆ
ՍԻՐԵՑԻՆ։ ԵՒ ՈՒՐԱԽ ԵՄ,
ԶԻ ԵՒ ԵՍ[8] ԺԱՄԱՆԵՍՑԻ[9]
ԶԿՆԻ ԴՍՏԵՐՆ ԻՄՈՑ ԵՒ ՈՐ-
[Դ]ԵԿԻՆ[10] ՀՌԻՓՍԻՄԵԱՅ[11]
[ԵՒ] ՔԵՐՑՆ ԻՄՈՑ ԵՒ ԸՆԿԵՐԱՑ[12]։
[ԱՐԴ], [ՅԻ]ՇԵԱՑ[13] ԶՄԵԶ, ՏԷՐ,
ՈՐ
[ՎԱՍՆ[14] ՔՈ][15] ՄԵՌԱՆԻՄՔ,

1 գոհանամք—C 2 քոյ—CW (ԱԲԴՁ քո) 3 զիս C^W (ad զմեզ) 4 մահուան —C^W 5 հռիփսիմեայ CW 6 նորա] —CW 7 անձկացեալ CW (ԱՁ անձկացեալ) 8 եւ ես]—C (b ԱԲԴՁ եւ ես) 9 ժամանեցից —CW 10 + իմոյ CW (ab ԱԲԴՁ իմոյ) 11 հռիփսիմեայ CW 12 ընկերացն —C (ԱԲԴՁ ընդերաց, abd ընկերաց) 13 յիշեա —CW 14 + անուան —C (abd անուան]) 15 քոյ—C

$111_{19}—112_5$

ԶԱՒՐ[1] ՀԱՆԱՊԱԶ ՀԱՄԱ-
ՐԵՑԱՔ ՈՐՊԷՍ[2] ԶՈՉԽԱՐՔ[3]
Ի ՍՊԱՆՈՒՄՆ։ ԱՐԴ[4], ՄԻ՛
ՄԵՐԺԵՐ ԶՄԵԶ ՎԱՍՆ ԱՆ-
ՈՒԱՆԴ ՔՈ[5], ԵՒ [ԴՈՒ] ՏՈՒՐ
ՄԵԶ ԶՅԱՂԹՈՒԹԻՒՆ[6] ՔՈ,
ԵՒ ԶԱՐՆ ԳՈՐԾԱԿՑԱՒՔՆ[7]
ՀԱՆԴԵՐՁ ՆԿՈՒՆ ԼԻՑԻ[8]։
ԵՒ ՅԵՏ ԱՅՍՈՐԻԿ ՄԱՏԵԱՆ[9]
ՊԱՏԱՌԵՍՑԻՆ[10] ԶՀԱՆԴԵՐ-
ՁՍ ՆՈՑԱ ՅԱՆԴԱՄՈՑ ԻՒ-
ՐԵԱՆՑ[11]։ ԵՒ Պ[ՐԿԵ]ՍՑԻՆ[12]
ԶՆՈՍԱ ՄԻ-ՄԻ Ի ՉՈՐՍ[13] ՑԻՑՍ,
ԵՒ ԾԱԿԵՍՑԻՆ[14] ԶՄՈՐԹ[15] ԵՒ[16]
ՊՃՂՈՒՆՍ ՆՈՑԱ, ԵՒ Ե-
ԴԻՆ ՓՈՂՍ[17] ՓՉԵԼ[ՈՎ] ԱՅՆ-
ՊԷՍ[18] ՄՈՐԹԵՍՑԻՆ[19] ԶՍՈՒ-
ՐԲՍՆ ԵՐԵՔԻՆ[20], [Ի] ՆԵՐ-
ՔՈՒՍՏ Ի ՎԵՐ ՄԻՆՉԵ[Ի] Ի Ս-
ՏԻՆՍՆ, ԵՒ ԾԱԿԵԱԼ ԶԾՈՐ-
[ԾՈՐԱԿՍՆ .. . .]

1 զօր —C 2 որպէս] իբրեւ CW (ab որպէս) 3 զոչխար —C (d զոչխարս), ոչխարք —W 4 արդ] արդ եւ —CW 5 քոյ —CW 6 զյաղթութիւնդ —CW (ad ԱԲԴ զյաղթութիւն) 7 գործակցօքն —C (b գործակցաւք) 8 + յահէ փառաց քոց—C (abd յահէ փառաց քոց]) 9 + եւ —C (abd և]) {Հրատարակված պատառիկում հստակ չէ՝ մատեան է, թե մատեալ} 10 պատառեցին —CW 11 իւրեանց] նոցա—C (bt իւրեանց) 12 պրկեցին —CW 13 + չորս CW ԱԲԴՁt — չորս) 14 ծակեցին C^W 15 զմորթսն C^W (a զմորթն) {W-ն գալիս է C-ից, բայց ունի՝ զմորթս} 16 եւ] ի —C^W 17 + եւ —CW 18 + կենդանւոյն —CW 19 մորթեցին —CW 20 երեւին — CW

Պ ա տ ա ռ ի կ № 1235

Աղ. 13—14

$131_{17}—132_3$*

1r [ՎԱՅ]ԵԼՉՈՒԹԻՒՆ** [ՊԱՏ]
[ՄՈՂ] ՄԱՐԳԱՐԷՔ ԱՆ[ՈՒ-]
[ԱՆԵՑԱ]Ն Ի ԴԱՐՍ ԱՌ[Ա-]
[Ջ]ԻՆՍ ՅԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏ
[Ա]ՋԳԷՆ[1] ՀՌՈՄԱՅԵՑ[ԻՈՑ][2],
ՅԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԶԱՒ[Ա]-
ԿԷՆ, ՈՐ ԱԾՊԱՇՏՈՒ-
ԹԵԱՄԲ[3] ԸՆՏՐԵԱԼ՝ Ա[ՄԵ]-
ՆԱՅՆ ԱԶԳԱՑ ՀԱՅՐ Ա-
ՆՈՒԱՆԵԱԼ, ԶԻ ԻԲՐԵ[Ւ][4]
ԳԼՈՒԽ ՀԱՒԱՏՈՑ ԱՐ[ԴԱ]-
ՐՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԵՑ[ՈՒՆ]՝
ԵԼԵԱԼ ՆՍՏԻՑԻ ՅԱՌԱ[ՋԱ]-
[ՀԱՒԱՏՆ . . . .]

* W-ում հատվածս պակասում է։

** Համեմատությունն սկսում ենք հաջորդ բառից։ Մանրամասնությունները տես՝ ուսումնասիրության մեջ։

1 յազգէն—C (Դ ազգէ) 2 հռոմայեցւոց] երրայեցւոց—C 3 աստուածպաշտութեամբն —C (a ԱԲԴ աստուածպաշտութեամբ) 4 իբրեւ] ի —C (ԱԲԴ զի իբրեւ զլուխ, t զի իբրեւ զգլուխ, b զի իբրեւ ի գլուխ)։

$133_{11}—134_5$

1v [ԵՒ][1] [ԱՐԴ՝ ՍԿՍՑՈՒ][Ք ՇՆՈՐ-]
[Հ][ԱՒՔՆ ՔԻ[2] ՊԱՏՄ[ԵԼ][3],
[Ե][Ւ ԴՈՒՔ ՈՒՆԿՆԴ][ԻՐ
ԵՂԵԱԼ]
[ՍՐՏԻ ՄՏԱՒՔ ԼՈՒԻՋԻՔ]։
[Վ]ԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ[4] ՍՐԲՈՅ[5]
ԳՐԻ-
[ԳՈ]ՐԻ ԱՌՆ ԱԾՈՅ[6]
[ՏԷՐ] ԱԾ, [ՈՐ ՆԱ ՄԻԱՅՆ]
ԻՆՔՆ-
ՈՒԹԵԱՄԲ, ԵՒ ՈՉ ՈՔ ՅԱ-
[Ռ]ԱՋ[7] ՔԱՆ ԶՆԱ, ԶԻՔ[8] ԱՅՂ[9]
[Ա]ՐԱՐԻՉ ԱՄԵՆԱՅՆԻ, [ՈՐ Ե-]
[Ր]ԵՒԻ ԵՒ ՈՐ ՈՉ [ԵՐԵՒԻՆ[10], ԲԱ-]
ՑՑ ՈՐԴԻՆ ՄԻԱԾԻՆ, [ՈՐ Ի Հ-]
[ԱՒ]ՐԷ ԾՆԵԱԼ, ԵՒ ՀՈԳԻ[11] [Ն-]
[ՈՐԻՆ][12] . . . .

1 եւ] —CW 2 + ձեզ —CW (t ձեզ]) 3 + մի բան միայն մանրապատում նշանակօք—CW 4 + տեառն—W 5 որբոյն—C (p որբոյ) 6 առն աստուծոյ] —CW (ԲԳԵ ԷԸklv + առն (Բ առնն) աստուծոյ) 7 յարաջ —W 8 + որ —CW 9 այլ —C (p այդ) 10 ոչն երեք —CW (ad ոչ) 11 + ի —W 12 նորուն —C (abd նորին)։

Պատառիկ № 182

Աղ. 15

156_{2-15}

1ր₂ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ*

ԱՐԴ, ԱՅՐ ՄԻ[1], ԱԾԵՂԷՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՄԲ[2] ԶԱՐԹՈՒՑԵԱԼ**, ԷՐ[3] ԵՐԱՆԵԼԻ ԱՄԵՆԵՑՈՒՆ[4], ԱԲՐԱՀԱՄ ԱՆՈՒՆ ՃԱՆԱ-[5]: ՉԻՒՐ[5]: ՃՇՄԱՐԻՏ[6] ԱՅ ՈՒՂՂԵԿԻՑ[7] ԼԵԱԼ՝ ԵՐԹԵԱԼ ԶՀԵՏ ՀՐԱՄԱՆԱՑ[8] ՀՆԱԶԱՆԴԷՐ, ԱՌ ՈՐ ԵՒ[9] ԲԱՐԲԱՌԵԱԼ[10] ԱՅ՝ ԵԼԱՆԷՐ[11–12] Ի ՀԱՅՐԵՆԵԱՑ[13] ԻՒՐՈՑ, ՔԱՆԶԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԳՏԱՆԻ ԱԾ ԽՆԴՐԱԿԱՆԱՑ ԻՒՐՈՑ[14]: ԶՀԵՏ ԱՅ ՀՐԱՄԱՆԱՑ[15] ԳՆԱՑԵԱԼ՝ ՀԱՒԱՍՏՈՎՔ ՎԱՐԵՑԱՒ, ՈՐ ԶՄԵԾ ԱՒԵՏԻՍՆ[16] ԱՐԺԱՆԻ ԵՂԵՒ ՏԵՍԱՆԵԼ[17], ԶԿԱՄՍ ԱՐԱՐՉԻՆ ԻՒՐՈՑ ԿԱՏԱՐԷՐ, ՈՐ [...] ԵԼԵԱԼ՝ Ի ՄԷՋ [ԱԶԳ]ԱՑ ՀԵԹԱՆՈՍԱՑ[18] ՊԱՆԴԽՏԵՑԱՒ, ԸՍՏ ԱՍՏԱՊԱՇՏ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆՆ[19]՝ ԲԱԶՈՒՄ ԱՄԱՒՔ ԶՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ ԱՆՁԻՆ ԻՒՐՈՒՄ[20] ԿՐԷՐ: ԱՐԴ, ԻԲՐԵՒ ԼՑԱՆ ԱՒՈՒՐՔ ԱՄԱՑ ՆՈՐԱ[21] ԻՆՍՈՒՆ[22] ԵՒ ԻՆՆ, ԵՐԵՒԵՑԱՒ[23] ԱԾ ԱԲՐԱՀԱՄՈՒ. ՈՒԽՏ ԵԴԵԱԼ ԽԱՒՍԷՐ ԵՒ ՎԵՐԱՑԵԱԼ[24] ԴԱՐՁԵԱԼ ՀՐ[ԵՇ]ՏԱԿԱՒՔ[25] ԵԿԵԱԼ[26] Ի ՄԱՄԲՐԵ[Ա] ԶՊԱՐ-

* Խորագիրը վերաբերում է ողջ «Վարդապետությանը», ուստի նրանով օժտել ենք և ներկա քաղվածը:

** «Զարթուցեալ» բառը հետագայում փորձել են «զարդարեալ» դարձնել, բայց «ու»-ն մնացել է անփոփոխ:

1 +ոմն—C (ԱԲt ոմն]) 2 իմաստութեամբ] աղեղութեամբն C 3 էր]—C 4+որոյ—C (adԱԲt որոյ]) 5 ճանաչի—C 6 ճշմարտին—C (b ճշմարիտ) 7 ուղեկից—C (ab ուղղեկից) 8+նորին—C (abd նորին]) 9 եւ]—C 10 բարբառեալ] բարբառ արձակեալ—C 11 ելանել —C 12 + նմա —C (ad ԱԲt նմա]) 13 հայրենեացն—C (ԱԲt հայրենեաց) 14 + Արդ՝ ելեալ Աբրահամ ի հայրենեացն իւրոց—C 15 ~ հրամանացն աստուծոյ —C (b այ հրամանացն) 16 զաւետիսն—C] 17 տեսանել] ընդունել,—C (ad հասանել, ԱԲt ճանաչել) 18 ի մէջ ազգաց հեթանոսաց] ի մէջ օտար ազգացն հեթանոսաց —C (ab օտար]) 19 սովորութեանցն C 20 իւր —C 21 աւուրք ամաց նորա] նորա ամք —C 22 իննսուն —C 23 երեւեալ—C 24 վերացեալ] վերանայր և—C 25 հրեշտակօքն—C (ԱԲt հրեշտակօք) 26 եկելովք —C 27 Մամբրէ—C:

Պատառիկ № 487

Աղ. 16

159_{7-17}*

1ռ [. . . . . Ե]Ի[1] ԱՅՆՈՒ-[ՀԵՏԵՒ ԿՈՉԵՑԵ]ԱԼ** ԶԸ-[ՄՈՎՍԷՍ՝ ՅԱՆԴ]ԻՄԱՆ [ԱՌՆԵԼ ԱԾԿԵՐ]Պ ՏԵՍԼ-[ԵԱՆՆ[2], ԵՒ ՇՈՒ]ՐՋ ԶՆՈՎԱՒ [ՇՈՒՔ (. . . . .)[3] Ա]ՀԻ[4] ՀՐՈՎ [ԲՈՐԲՈՔԵԱԼ]:

[ԱԾ, ՈՐ ԱՄԵ]ՆԱՅՆԻՒ [ԼՈՅՍ Է, ԱՄԵ]ՆԱՅՆԻՒ [ԼՈՒՐ Է, ԱՄԵՆ]ԱՅՆԻՒ

*W-ում պակասում է:

** Անկյունավոր փակագծերով տրված վերականգնումները քաղված են C-ից, ուստի այդ մասը համեմատելիք չունի: Միայն հավելում-պակասումներն են առնվում C-ի վերահամեմատությամբ:

1 եւ] անդր C 2 + որոյ յառաջադոյնս նկատեալ և զպատուանդան ոտիցն՝ կապուտակաձև ականակերպ աղիւսանման, զուտ երկնագոյն ջինջ, առ ի յիշեցուցանել զզարդ կաւոյն և զծովուն, և զլերինն սիրտ խառնբախ ժողովրդեանն. և ի փառաց աթոռոյն —C 3 ? 4 + իբրև —C (կարծում եմ, որ 3-ի հարցականի փոխարեն պատառիկում այն իբրև-ը պիտի լինէր՝ իբրև ահ)

$162_2—163_{11}$

[.....]ՈՒԹԵԱՄԲ[1]: ԱՐԴ՝ Ի ՎԵՐԱՅ ՆՈՑԱ ԱՅՐ ՄԻ ԸՆՏԻՐ[2] Ի ԶԵՌԱՆԷ ՄՈՎՍԷՍԻ[3–4], Ի ՀՐԱՄԱՆԷ[5] ԱԾՈՅ ԶԱՒՐԱՎԱՐ[6] ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ԿԱՑՈՒՑԵԱԼ, ՈՐՈՅ ԱՆՈՒՆ ՅԵՇՈՎ ՃԱՆԱՉԻՒՐ[9], ՈՐՈՅ[10] ԱՌԵԱԼ ՅԱՆԱՊԱՏԻՍ[11] ԶՈՐԴԻՍՆ ԻՍՐԱԷՂԻ[12–13] ԶԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԶԱՒԱԿՆ[14] ԽԱՂԱՑ ԳՆԱՑ

1 + փոխանակ բարերարին աստուծոյ՝ որթ կանգնեալ, աստուած անուն եդեալ և փրկիչ կարդացին. վասն որոյ բարկութիւնն աստուծոյ ի վերայ նոցա եկեալ՝ սատակեաց անթիւ զօրս բազմութեան ի ժողովրդենէ անտի. վասն որոյ հրաման ելանէր՝ չմտանել յերկիրն խոստացեալ: Եւ անդէն անկեալ սատակեցան յանապատի անդ ամենեքեան առ հասարակ ազգն անօրէն զառնացողաց որդւոցն Իսրայէլի (W Իղի): Եվ մեծ մարգարէէն Մովսէս հրամանաւ աստուծոյ (W հրամանաւ աստուծոյ]) ելեալ ի լեառն (W լերինն) և անդ (W և անդ]) մեռանէր (W + հրամանաւ աստուծոյ) որ մինչև ցայսօր զգերեզման նորա ոչ ոք գիտել կարաց: Եւ (W արդ) սերեալք բազմացան յանապատին (W յանապատի անդ)՝ որք ոչ գիտէին (W գիտէին) ամենեքին զչարին (W զչարի) զսնունդ (W սնունդ) ինչ մեղաց—CW 2 ի վերայ նոցա այր մի ընտիր] —W 3 Մովսիսի —C, Մովսեսի —W 4 + նոցա—W 5 ի հրամանէ] հրամանաւ —C 6 զօրավար —C 7 ~ Յեշով անուն— CW 8 Յիշով—W 9 ճանաչէր CW (a ճանաչիւր) 10 որ—CW 11 յանապատէն —C 12 Իսրայելի —C 13 + եւ W 14 յանապատիս զորդիսն Իսրաէղի զԱբրահամեան զաւակն] յանապատէն զԱբրահամեան զաւակն զորդիսն Իսրայելի—C (ab յանապատէն, d յանապատէ զորդին [a զորդւոյն] Իղի [ad-և] Աբրահամեան զաւակն)

[ՏԵՍ Է[5], ԱՄԵՆԱ]ՅՆԻԻ ԶԱՒ-
[ՐՈՒԹԻՒՆ Է, Ա]ՄԵՆԱՅՆԻԻ
[ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ] [Է, ՀՈԳԻ]
[ԿԵՆԴԱՆԻ, ՀՈՒ][Ր ԿԻԶԵ-]
[ԼՈՑ, ԼՈՅՍ ԱՆՓ]ՈՓՈԽ[6],
[ՓԱՌՔ ԱՆՊԱՏՈՒ]Մ, ԱՆ-
[ՔՆԻՆ ՏԵՍԻԼ[7] ԵՐ]ԵՒԵԱԼ[8–9],
[ԶԻ ՆՈՔԱ Կ]ԱՐԵԻՆ[10]
[ՀԱՆԴԱՐՏԵԼ] ՆՈՐ-
[Ա ՏԵՍԼԵ]ԱՆՆ:

Ի ԽՈՍՏԱՑԵԱԼ ԵՐԿԻՐՆ
ՊԱՐԳԵՒԱՑ[15–16]:
ՅԵՏ ԱՅՍՈՐԻԿ[17] ԽՆԴՐ-
ԵՑԻՆ ԻՒՐԵԱՆՑ[18–19] ԹԱԳԱՒ-
ՈՐՍ: ԵՒ ԵՏ ՆՈՑԱ ԹԱԳԱՒ-
ՈՐ[20], ՅՈՐՈՑ ՄԻՋԻ ՅԱՐ-
ՈՑՑ ԶԴԱՒԻԹ, ՈՐ ԼԻ ԷՐ
ՀՈԳԻՈՎ ՍՐԲՈՎ, ՈՐՈՒՄ
ԵՒ ՎԿԱՅԵԱՑ[21], ԹԵ[22] ԳՏԻ
ԶԴԱՒԻԹ ՈՐԴԻ[23] ՅԵՍՍԵԱ[24],
ԱՅՐ ԸՍՏ ՍՐՏԻ ԻՄՈՅ[25], ՈՐ
ԱՐԱՍՑԷ ԵՒ ԿԱՏԱՐԵՍՑԷ
ԶԱՄԵՆԱՅՆ ԶԿԱՄՍ ԻՄ:
ԵՒ ԿԱՆԳՆ[ԵԱՑ......]

5 + ամենայնիւ բան է—C (բացառված չէ, որ պատառիկում կարող էր բացակայել ոչ թե բերված արտահայտությունը, այլ՝ ամենայ-նիւ տես է-ն, քանի որ վերջինս չկա և b-ում) 6 + է—C(b է]) 7 + անբաւ մեծութիւն—C 8 երևէր C 9 + նոցա որչափ —C 10 կարասցեն —C

15 պարգեւաց]—CW (b + պարգևաց) 16 + խլեաց քակեաց (W խլեաց քակեաց] ած փակեաց, abd ած քակեաց) այգս եօթն (W եւթ + նմի) յամբարշտացն (Wd ամպարշտացն), և (W և]) զնոսա ածեալ (Wb ածեալ]) բնակեցոյց (Wb բնակեցուցեալս, b ս]): Ուր և տեղի երևեցուցեալ՝ նախ յանուն տեառն (W յաստուած անունն, abd յաստուծոյ [d աստուծոյ] անուն [a անունն] տաճար շինեցին. և յայտ իսկ էր ի հրամանէ (Wb հրամանէն) աստուծոյ՝ անդ միայն իշխել մատուցանել նմա զողջակէզսն (WԱԲ զողջակէզս) պատարագաց, ուր բնակեալ էր աստուած ի մէջ մարդկան: Եւ անդ յարուցեալ նոցա զատաւորս, որք ըստ աստուծոյ կամացն զատէին զնոսա (Wad զնոսա զատեին, [ad զատէին]) որ և (W ԱԲ և որ) լի էին (W լինեին, b լինէին) հոգւով (W ԱԲt հոգւովն) մարգարէութեան. և էր զի ամամէջս արարեալ նոցա, իբրև մեռանէին (W մեռանեին) զատաւորքն՝ դարձեալ ամբարշտեալ (W ամպարշտեալ) յաստուծոյ՝ զից պաշտօն տանէին (C^W տանեին) և պատկերաց երկիր պագանէին (W պագանեին): Վասն որոյ անդրէն (Waba ԱԲ անդէն) մատնեալ զնոսա ի ձեռս օտար ազգաց և հեթանոս թագաւորօք խրատէր զնոսա —CW 17 + ինքեանք իսկ —C, + ինքեանք —Wad 18 իւրեանց] C (b + իւրեանց) 19 + յաստուծոյ—C (b յաստուծոյ]) 20 թագաւոր] —C (bԱԲ + թագաւոր, թագաւորս—Wb) 21 ~ վկայեաց ես—C (b և վկայեաց) 22 թէ—C 23 զորդի—C (adtԱԲ որդի) 24 Յեսսեայ —C 25 իմում—C:

163_{13}—164_{6}*

Աղ. 17

$2r_2$ [ԴԱՐՁԵԱԼ՝ ԱՆԴ ԷՐ ՏԵՍԱ-]
[ՆԵԼ Ի ՊԱՐԳԵՒԱԿԱՆ]
ԵՐԿՐԻՆ ԳՈՒՆԴՍ[1] ՄԱՐ-
ԳԱՐԵԱԿԱՆՍ, ՈՐՔ ԵՒ ՏԵ-
ՍԱՆԱՒՂՍ[2] ԿՈՉԵԻՆ[3] ՎԱՍՆ
ԱՃԱԿԵՐՊ ՅԱՅՏՆՈՒ-
ԹԵԱՆՑՆ ՊԱՀԵԼՈՑ[4], ՈՐՔ
ԵՒ ԲԱՐՁՐԱՁԱՅՆԻՍ[5] Կ-
ՊԱՏՄԵԻՆ[6] ԻՒՂԱԿԱՆ[7]
ՏՈՀՄԻՆ ԸՍՏ ԻՒՐԱՔԱՆ-
[Չ]ԻՒՐ ԿԱՐԳԻ, ՈՐՊԷՍ
[ԵՒ]ԱՐՔԱՅՆ ԴԱՒԻԹ ԶԸ-
ՀԱՄԱՇԽԱՐՀ[ԱԿԱ]Ն ՏԵՐ-
ՈՒԹԻՒՆՆ[8] ԵՐԳԵԱՑ[9]. «ՏՐ,
[ՏՐ] ՄԵՐ ԶԻ ՍՔԱՆՉԵԼԻ Է
ԱՆՈՒՆ ՔՈ Ի ՎԵՐԱՅ[10] ԵՐ[Կ]ՐԻ:
ԶԻ Է, ԶԻ[11] ՈՐՈՒՄ[Ն]
[Կ]ԱՌՈՒԱԾՔ ՏԵՍԵԱԼ ԻԲ[ՐԵՒ]

Աղ. 18

$1v_1$ [ԶԱՒՐԱՎԱՐ ՊԱՅԾԱ-]
ՌԱԳՈՅՆ, ՈՐՈՒՄՆ[1]
ԻԲՐԵՒ ԶԱՅՐ ՄԻ ԴԱՏԱՒ-
ՈՐ՝ Ի ԴԱՏԱՒՈՐԱԿԱՆ[2]
ԱԹՌՈ ՀԻՆ ԱՒՈՒՐՑՆ
ԵՒ[3] ՈՐՊԷՍ[4] ՈՐԴԻ ՄԱՐԴԻ-
ՈՅ՝ ԸՆԴ ԱՄՊՍ[6] ԹՌՈՒ-
ՑԵԱԼ[7] ՏԵՍԱՆԷ ԶՀԻՆ
ԱՒՈՒՐՑՆ[8]:
ԻՍԿ ԱՅԼ[9] ՈՄՆ՝ ԻԲՐԵՒ
ԶԱՅՐ ՄԻ Ի ՎԵՐԱՅ ՍԵ-
ՂԱՆՈՅՑ[10], ԶՈՐՄԷ[11], ԵՒ ԱՍ-
ԷՐ[12] ԻՍԿ, ԹԵ[13] ՏԵՍԻ ԶՏԷՐ,
ԶԻ ԿԱՅՐ Ի ՎԵՐԱՅ ՍԵՂԱ-
ՆՈՅՑ[14]: ՏԵՍԱՆԷ՞Ս, ԶԻ
ԹԵՊԷՏ[15] ԵՒ ԱՅՐ ՏԵՍԱՆԻ՝
ՏԷՐ ՃԱՆԱՉԻ: ԵՎ ՄԻՒՍ-
ՈՒՄ[16] ԵՒՍ ՍՔԱՆՉԵԼԱ-
ԿԵՐՊ, ԹԵ[17] ՏԵՍԻ ԶՏԷՐ
Ի ՎԵՐԱՅ ԱԹՌՈՅ ՎԵՐ-
ԱՑԵԼՈՅ ԵՒ[18] ԲԱՐՁՐԱՑԵ-
ԼՈՅ, ԵՒ ՎԵՑԹԵՒԵԱՆ
ՔԵՐՈՎԲԵԱԳՈՒՆԴՔ[19] ՇՈՒՐՋ
ԶԱԹՌՈՎՆ[20]: ՈՒՍՏԻ
[ԵՒ ԶԱՄԵՆԱՅ]ՆՆ[21] ԱՃԵՂԵ-[22]
[. . . . .]

*W-ում բացակայում է:

1 + զունդս—C (b զունդս]) 2 տեառնողոք —C 3 կոչէին —C 4 պահելոց] պատահելոց —C 5 բարձրաձայնիս] բարձրագոյն —C 6 պատմէին—C 7 խորայելական—C 8 տէրութիւնն—C (b տէրութիւնն) 9 + թէ—C 10 ի վերայ] յամենայն—C (b ի վերայ) 11 զի]—C

